ԼՈՒՍԱՎՈՐ

1966

ԱԲԳ

Am146

ԽԵ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունուար-Փետրուար-Մարտ

1988

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի Սուրբ Ծննդյան քարոզը՝ արտասանված Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում 3

Ամանորի և Փրկչի Հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները 8

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանյայց Եկեղեցու Episkoposական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական հավատացյալներին 9

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պետական բարձրաստիճան անձնավորությունների միջև փոխանակված հեռագրեր Նոր տարվա առթիվ . . 10

Ընդունելություն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդում 14

Տ. ԱԲՐԱՀԱՄ ԱԲՂ. ՄԿՐՏՉՅԱՆ—Ամանորյա և Սուրբ Ծննդյան հանդիսություններ Մայր Աթոռում 15

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՎՎԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԵՎ ԿԱՆԱԴԱ

Մեկնում Էջմիածնից 26

Վեհափառ Հայրապետը Մոսկվայում 27

Վեհափառ Հայրապետը Ամերիկայի Միացյալ Նահանգներում

Ժամանում Նյու Յորք 31

Վեհափառ Հայրապետը Վաշինգտոնում 75

Վերադարձ Նյու Յորք 90

Վեհափառ Հայրապետը Նյու Ջերզիի Նահանգի Էլիզոն քաղաքում . . 88

Վեհափառ Հայրապետը Նյու Ջերզիի Նահանգի Նյու Ռոշլի քաղաքում . . 97

Կրկին Նյու Յորքում 98

Վեհափառ Հայրապետը Ֆրեզնոյում 125

Վեհափառ Հայրապետը Լոս Անջելոսում 132

Վեհափառ Հայրապետը Սան Ֆրանցիսկոյում 174

Վեհափառ Հայրապետը Կանադայում

Մեկնում Կանադա 183

Ժամանում Տորոնտո 185

Վեհափառ Հայրապետը Մոնրեալում 202

Այցելություն Սեն Լորանսի քաղաքապետարան 218

Վեհափառ Հայրապետը կրկին Միացյալ Նահանգներում
Ժամանում Բոստոն 219
Վեհափառ Հայրապետը Ուոտերտաունում 221
Վեհափառ Հայրապետը Դետրոյտում 225
Վեհափառ Հայրապետը կրկին Նյու Յորքում 249
Վեհափառ Հայրապետը Փարիզում 246
Մեկնում Մոսկվա 247
Վերադարձ Մայր Աթոռ 248
Մաժուլի արձագանքներ 252
ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ—Խոսք սղջույնի 264
ՇԱՀՆԱԶԱՐ ՔԵՌԹԱՀՅԱՆ—Վեհափառն է... 264
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 267
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin 268
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine . . . 269

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 24.02.1988 թ.: Ստորագրված է տպագրության 29.09.1988 թ.:
Տպագրական 17 մամուլ+2 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 919

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1988 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 հունվար 1988 թ.)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Հարազատ զավակներ Մայր Եկեղեցու ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Այս առավոտ Սուրբ Էջմիածնի բարձունքից Մայր տաճարի զանգերը վերստին ղողանջում են ազատ ու հաղթական, ավետելով մեր ժողովրդին Քրիստոսի հրաշալի Ծնունդը և նրա հայտնությունը երկրի վրա իբրև Որդին Աստուծո, որ իջավ երկնքից մարդկային աշխարհը փրկելու մեղքի ու մահվան կապանքներից: Քրիստոսի Սուրբ Ծննդյան առաջին իսկ պահին, երկնքի հրեշտակները ավետեցին մեծ հրաշքը՝ «խաղաղության և ի մարդիկ հաճության» պատգամով: Դա պատահական պատգամ չէր, այլ բացահայտում էր Հիսուսի մարդեղության իմաստը և առաքելությունը, այն է՝ փրկել մարդկությանը մեղքի և մահվան ճիրաններից «խաղաղության և ի մարդիկ հաճության» իրագործումովը մարդկային աշխարհում:

Հետագայում, Հիսուս իր քարոզության ողջ ընթացքում մարդկանց միջև սեր, համերաշխություն, խաղաղություն պատգամեց և նույնիսկ խաչափայտի վրա իր թևերը տարածած՝ վերջին մի անգամ բացականչեց՝ «խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ»:

Մարդկանց միջև սիրո և խաղաղության քրիստոսապարգև պատգամը հանդիսացավ մի պայծառ լուսո առավոտ աշխարհի բոլոր խոնարհ մարդկանց հոգիների համար, որոնք ծարավի էին դարեր ու դարեր շարունակ՝ այդ լույսին, այդ հրաշքին: Մեղքի ու մահվան, անարդարության և չա-

ոիքների կապանքների մեջ տառապող բազմությունների երազանքն էր, որ անա Քրիստոսի Ծննդյամբ շեփորվում էր երկնքի հեռուներից:

Երկու հազար տարիների պատմության հորիզոնի վրա, միշտ նույն հզորությամբ, նույն քաղցրությամբ հնչեց Քրիստոսի Ծննդյան պատգամը մահախուճապ սերունդների հուսալից սրտերում:

Լսենք հուզիչ հրավերը Սուրբ Օգոստինոսի՝ «Խաղաղությունը Աստուծո կտակն է, որ բոլոր ազգերը, որոնք ապրում են երկնքի ներքո, կոչված են իրագործելու, լինեն նրանք քրիստոնյաներ կամ ոչ քրիստոնյաներ, վասնզի խաղաղությունը թանկ է բոլորին հավասարապես»:

Նաև մեր օրերին, մարդիկ և ազգություններ աշխարհի, Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսը դիմավորում են նույն հույզերով, նույն սպասումներով, նույն երազանքով, այն է՝ վերջապես տեսնել իրագործումը սիրո և համերաշխ հարաբերությունների մարդկանց ու ազգությունների միջև, իրագործումը խաղաղ մի կյանքի համայն աշխարհի վրա, զի պատերազմները, ցեղասպանությունները, ավերումները գործիքներն են մահվան և համագումարը բոլոր չարիքների, բոլոր մեղքերի:

Սուրբ Հովհաննես Ոսկեբերանը գոչում է՝ «Խաղաղությունը մայրն է ամենայն բարյաց»:

Քրիստոս իջավ երկնքից և ծնվեց իբրև մարդ, քարոզեց ու տառապեց, մահը ճաշակեց խաչափայտի վրա, փրկելու համար մարդկությանը մեղքերից ու մահվան գործիքներից:

Այսպես է, որ այսօր էլ, մեզ բոլորիս և համայն մարդկության համար գուցե ավելի քան երբեք այժմեական և հրամայական, Սուրբ Ծննդյան պատգամը:

Հայաստանյայց մեր Առաքելական Եկեղեցին ու ազգը մեր Հայկազյան, որ պատմության ընթացքում բազում դարեր տնապես տառապել ու հաճախ նահատակվել են մեր հայրենի երկիրը հրով և սրով ներխուժած բռնակալների ձեռքով, և ապրել են մանավանդ պատմության մեծագույն ողբերգությունը՝ 1915 թվականի ցեղասպանությունը, այսօր ավելի մեծ իղձ ու սպասում չունեն, քան վերջնական հաստատումը խաղաղ մի աշխարհի, ամրապնդումը համերաշխ գործակցության ազգությունների միջև և ընդմիշտ հեռացումը պատերազմների ուրվականի, ընդհանուր զինաթափումը բոլոր պետությունների:

Մեր օրերին այս է մանավանդ այժմեական իմաստը մեր Փրկչի Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան:

Մենք՝ հայերս, ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի, այս օրերին, այս սպասումներով ոգևորվում ենք, հրճվում և առավել լավատես դառնում դեպի մեր Եկեղեցու ու դեպի մեր ազգի ապագան, ոգևորվում մեր մայր երկրի, մեր Մայր Հայաստանի ներկա կյանքով, որ խաղաղ ու անվտանգ պայմաններում քայլ առ քայլ աճում է և զարգանում, քայլ առ քայլ կառուցվում է ու ծաղկում, քայլ առ քայլ ընթանում է դեպի իրագործումը իր արդար երազանքների:

Մենք՝ Հայրապետ Ամենայն Հայոց և առաջին սպասավորը մեր Մայր Եկեղեցու, Սուրբ Ծննդյան այս առավոտյան աղոթում ենք առ Փրկիչն մեր Քրիստոս, որ խաղաղություն բերող իր շնորհները առատապես բաշխվեն համայն աշխարհին, բոլոր ազգություններին անխտիր, բաշխվեն նաև մեր Մայր Եկեղեցուն, մեր հավատացյալ զավակներին բոլոր, բաշխվի մեր վե-

ռածնված Մայր Հայրենիքին, որ գերագույն ստուգությունն ու ապավենն է համայն մեր ազգի:

Այո, բոլոր հայերի սեպուհ պարտքն է իրենց հայրենանվեր նպաստը ընծայաբերել, որ մեր մայր երկիրը հետզհետե ավելի բարգավաճի և զորանա, ու աճի նաև նրա բնակչության թիվը, վասնզի հայ ազգի ապագան այստեղ, միայն այստեղ, Արարատի ստորոտին է կերտվում:

Արդի ապրող ու շնչող և օրեցօր վերաշինվող մեր երկիրը՝ Սովետական Հայաստանը, արգասիքն է ավելի քան հարյուր տարիների ազատագրական հերոսական մաքառումների, արգասիքն է Սարդարապատի քաջարի մարտիկների հաղթանակի, արգասիքն է մոտ յոթանասուն տարիների հայրենաշեն իրագործումների:

Ահա թե ինչու դժվար է Մեզ համար հաշտվել արտագաղթի գաղափարի հետ: Դժվար է հաշտվել, որ հայեր լքեն իրենց հայրենի տունը, հայեր, որ հրաժարվին իրենց քաղաքացիական ինքնությունից, հայեր, որ մերժեն իրենց աշխատանքի ու զոհաբերության բաժինը բերելու՝ մեր վերածնված Հայրենիքի առավել լուսավոր ապագայի կերտման:

Մայր հողի վրա, հայ ժողովրդի համախմբման ու գոյատևման հրամայականը, գերագույն՝ մարդկային ու ազգային իրավունքն է ամեն հայ մարդու:

Սիրելիներ Մեր, այս հավատամքով, այս սպասումներով դիմավորենք ավետիսը Քրիստոսի Սուրբ Ծննդյան և երկնառաք պատգամը խաղաղության և ի մարդիկ հաճության:

Մեր այսօրվա քարոզը կամենում ենք վերջացնել այն աղոթքով, որ արտասանեցինք անցյալ տարի հոկտեմբերին Նյու Յորքում, Միացյալ Ազգերի Կազմակերպության բեմից՝ «Աստված մարդասեր, Աստված ստեղծիչ տիեզերաց, Աստված արդար դատավոր, տուր աշխարհիս խաղաղություն և բարի կամեցողություն մարդկանց»:

Շնորհք, սեր և խաղաղություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, այժմ և հավիտյան: Ամեն:

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Քահանայապետ, Նորին Սրբություն
ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ (Հռոմ),
Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԵՄԵՏՐԻՈՍԻՆ (Ստամբուլ),
Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Սրբություն
ՊԻՄԵՆԻՆ (Մոսկվա),
Երուսաղեմի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԴԻՈԴՈՐՈՍԻՆ (Երուսաղեմ),
Ղպտի Ուղղափառ Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ՇԸՆՈՒԴԱ Գ-ԻՆ (Կահիրե),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Սրբություն
ԱԲԲԱ ԹԵՔԼԵ ՀԱՅՄԱՆՈԹԻՆ (Ադիս Աբեբա),
Հնդկաստանի և Արևելքի Մալաբար Եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ Ա-ԻՆ (Քոթայամ),
Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
ԻԼԻԱ Բ-ԻՆ (Թբիլիսի),
Ռումին Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԹԵՈԿՏԻՍՏԻՆ (Բուխարեստ),
Բուլղար Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
ԻԳՆԱՏԻՈՍ ՋԱՔՔԱ Ա ԻՎԱՍԻՆ (Դամասկոս),

Անտիոքի և համայն Արևելքի Հույն Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Դամասկոս),
Անտիոքի Ասորի Կաթոլիկ Եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵՔ Բ-ԻՆ (Բեյրութ),
Անտիոքի և համայն Արևելքի Հույն Օրթոդոքս Եկեղեցու Պատրիարք, Նորին ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԳՆԱՏԻՈՍ Գ-ԻՆ (Դամասկոս),
Քենթրբերիի Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Ռոբերտ ՌԷՆՍԻԻՆ (Լոնդոն),
Աթենքի և համայն Հելլադայի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ՍԵՐԱՖԻՄԻՆ (Աթենք),
Սերբիայի և համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն ԳԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
Վարշավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՎԱՍԻԼԻԻՆ (Վարշավա),
Պրագայի և համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ԴՈՐՈՖԵՅԻՆ (Պրագա),
Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն ԽՐԻՍՈՍՏՈՄՈՍԻՆ (Նիկոզիա),
Անտիոքի Մարոնիտ Պատրիարք, Նորին Ամենապատվություն ՄԱՐ ՆԱՍՐԱԼԼԱ ԲՈՒՏՐՈՍ ՍՖԵՅՐԻՆ (Բքերքե),
Նորին Ամենապատվություն կարդինալ ՌՈԺԵ ԷՉԵԳԱՐԱՅԻՆ (Վատիկան),
Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն Դոկտ. ՀԵՐՄԱՆ ԳՐՈՒԵՐԻՆ (Վիեննա),
Քրիստոնեական Միության Քարտուղարության նախագահ, Նորին Ամենապատվություն կարդինալ Ժ. Գ. Մ. ՎԻԼԼԵԲՐԱՆԴՍԻՆ (Վատիկան),
Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն ԺԱՆ ՄԱՐԻ ԼՅՈՒՏԻԺԵԻՆ (Փարիզ),
Լիոնի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն կարդինալ ԱԼԲԵՐ ԳԵԿՈՒԻՐՏԵԻՆ (Լիոն),
Լատվիական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԷՐԻԿ ՄԵՍՏԵՐՍԻՆ (Ռիգա),
Էստոնական ՍՍՀ Ավետարանական-Լութերական Եկեղեցու Արքեպիսկոպոս, Նորին Գերազանցություն ԿՈՒՆՈ ՊԱՅՈՒԼԱՅԻՆ (Տալլին),
Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՉԻՆԻԻՆ (Երուսաղեմ),
Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի նախագահ, Նորին Սրբազնություն ԿԱՐՈԼԻ ՏՈԹԻՆ (Պրագա),
Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. ԷՄԻԼԻՈ ԿՈՍՏՐՈՅԻՆ (Ժնև),
Մխիթարյան ուխտի մեծավոր Հայր ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբահայր, Գերապայծառ Հայր ԳՐԻԳՈՐԻՍ վարդապետ ՄԱՆՅԱՆԻՆ (Վիեննա).

Հայոց քրիստոնեական հավատի բազմադարյան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուրախ ենք Ձերդ Սրբությանը բերելու Մեր եղբայրական

հարգալից սիրո ողջույնը մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի Ծննդյան ավետիսով:

Թող մեր Տիրոջ խաղաղության պատգամը և հրեշտակների երգը քաղցրությամբ իջնեն համայն աշխարհի վրա և բոլոր մարդկանց հոգիներին, որպեսզի խաղաղության և արդարության բաղձալի շնորհները առատապես բաշխվեն ողջ մարդկությանը:

Այս տոնական սուրբ օրերին մաղթում ենք Ձերդ Սրբությանը լիակատար առողջություն և աստվածահաճո իրագործումներ Ձեր հովվապետական սուրբ առաքելության ճանապարհին:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ ստիպիվ ուղարկած ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Ուրախ ենք Ձերդ Ամենապատվությանը հղելու մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան ավետիսը՝ մաղթելով Ձեզ արևշատ երկար տարիներ, երջանիկ գահակալությամբ և եկեղեցաշեն իրագործումներով։

Սուրբ Ծննդյան խաղաղության պատգամը հորիզոնից հորիզոն թող բարձր հնչի հավայն աշխարհի և բոլոր մարդկանց հոգիներում, որպեսզի մարդկությունը հասնի քաղաքի նավահանգիստը արդարության և խաղաղության։

Տոնական սուրբ զգացումներով կմնանք աղոթող ի խնդիր մեր Մայր Եկեղեցվո անսասանության ու պայծառության և հավայն մեր ժողովրդի հոգևոր ու ազգային կյանքի շինության։

«Փառք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից։

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆԻՆ

Երևան

Նոր տարվա սեմին երջանիկ ենք հանում Հայաստանյայց Եկեղեցու շնորհավորել Ձեզ ջերմ մաղթանքով, որ միշտ քաջառողջ, բարձր հեղինակությամբ շարունակեք Ձեր հայրենանվեր առաքելությունը ի բարօրություն և ի շինություն մեր մայր երկրի ու ժողովրդի՝ եղբայրական հանրապետությունների մեծ ընտանիքում, աշխարհի խաղաղության պայմաններում:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Երևան

Ձերմ զգացումներով Ձեզ ենք ներկայացնում Մեր բարի մաղթանքները՝ շնորհավորելով Ձեր Նոր տարին և մաղթելով, որ անսասան քաջառողջությամբ շարունակեք Ձեր բարձր հեղինակությամբ ատարել մեր Մայր Հայրենիքի բարօրության ու ծաղկման՝ աշխարհի խաղաղության պայմաններում:

Ողջ լերուք միշտ զորացյալ անսպառ եռանդով ու շինարար ոգով:

Խորին հարգանք՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ, ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎԻՆ

Մոսկվա

Դիմավորելով Նոր տարին, երջանիկ ենք զգում Մեզ Հայ Եկեղեցու կենտրոն Սուրբ Էջմիածնից Ձեզ ներկայացնելու Մեր սրտագին շնորհավորանքը, մաղթելով նաև Ձեզ քաջառողջություն և անսպառ բարի եռանդ՝ ի հաջողություն Ձեր հայրենանվեր գործունեության:

Այս ուրախ առթիվ Մեր անկեղծ գոհունակությունն ենք հայտնում նաև Ձեր հույժ բարյացակամ վերաբերմունքի համար Հայ Եկեղեցու և անձամբ Մեր հանդեպ:

Թող Աստված միշտ ծաղկյալ պահպանի սովետական մեծ երկիրը աշխարհի խաղաղությամբ և ազգությունների համերաշխ գործակցությամբ:

Խորին հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՄԵԾԱՀԱՐԳ ՆԱԽԱԳԱՀ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Երևան

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքը Նոր տարվա սեմին՝ մաղթանքով բարի, որ մշտական եռանդով ու քաջառողջությամբ շարունակեք Ձեր հայրենանվեր աշխատանքը Ձեզ հատուկ հեղինակությամբ:

Թող Նոր տարին լինի նաև խաղաղության տարի համայն աշխարհի և բոլոր ժողովուրդների համար:

Ամենաջերմ հարգանքով՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք իմ շնորհակալությունը Նոր տարվա առթիվ Ձեր շնորհավորանքի և բարի ցանկությունների համար: Իմ կողմից ես ջերմորեն շնոր-

հավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ: Թող 1988 թվականը մեր հայրենիքի համար լինի հետագա ծաղկման, բարգավաճման ու երջանկության տարի: Թող հաղթանակի բանականությունը և 1988 թվականը լինի կայուն խաղաղության տարի:

Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և մեծ հաջողություններ խաղաղության, ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման համար Ձեր ազնիվ գործունեության մեջ:

ՀՐԱՆԴ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Նոր՝ 1988 տարվա հաճելի առիթով հղում ենք Ձեզ ջերմագին շնորհավորանքներ՝ մաղթելով երկար կյանք, քաջառողջություն և հաջողություններ Ձեր մարդասիրական, մշակութային և խաղաղասիրական արդյունավետ գործունեության անդաստանում:

Համոզված ենք, որ 1988 թվականը կհանդիսանա աշխարհի ժողովուրդների միջև խաղաղության ու մերձեցման մի նոր տարի:

ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ընդունեցեք սրտագին շնորհավորանքներ և ամենաբարի ցանկություններ Նոր տարվա առթիվ:

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԽԱՐՉԵՎ
ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Մոսկվա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆԻՆ

Ս. Էջմիածին

Ձերդ Սրբություն,

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա առթիվ:

Թող գալիք՝ 1988 թվականը լինի մեր հայրենիքի հետագա բարգավաճման, խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման տարի:

Կրտանց ցանկանում ենք Ձեզ առողջություն, քաջառողջություն և նորանոր հաջողություններ Ձեր խաղաղասիրական և հայրենանվեր գործունեությունում:

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հունվարի 8-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Նոր տարվա առթիվ այցելություն տվեց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ տիար Ֆադեյ Սարգսյանին:

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի մեծահարգ նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ ամանորյա փոխադարձ բարեմաղթություններով:

Վեհափառ Հայրապետը անդրադարձավ նաև վերջերս ԱՄՆ և Կանադա կատարած հայրապետական այցելությանը, պատմեց այդ երկրներում ապաստան գտած հայերի ու պետական կարևոր պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումների մասին: Նորին Սրբությունը հատկապես ընդգծեց հայրենասիրական այն ջերմ զգացումը, որ սփյուռքահայությունը տածում է Մայր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ:

Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի գործերի կառավարիչ տիար Հրաչիկ Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը:

ԱՍԱՆՈՐՅԱ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Յուրաքանչյուր տարի պատմության մեկ էջն է, հավերժի մի ակնթարթը: Այն իր անջնջելի հետքն է թողնում պատմության ուղեծրի վրա, դառնում պատմության շղթայի մի օղակը: Անսահման ժամանակի իմաստավորված մի հատվածն է այն:

Յուրաքանչյուր Նոր տարի բազում մտորումների տեղիք է տալիս: Հետադարձ հայացք ձգելով անցնող տարվա 365 օրերի վրա, ամեն մարդ ճշարի վրա է դնում այդ օրերից յուրաքանչյուրի արժեքը: Ճիշտ թե սխալ, արդյունավետ թե ապարդյուն, այդ օրերն անպայման թողնում են իրենց հետքը մեր կյանքում, թողնում են, որպեսզի օգնեն մեզ չկրկնելու թույլ տրված սխալները կամ առավել ամրապնդելու և գործադրելու այն լավն ու բարին, որ եղել է անցնող տարվա ընթացքին:

Ահա այս մտորումներով է, որ այս տարի ևս Մայր Աթոռի միաբանները, գլխավորությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, սաները ու բազմաթիվ հրավիրյալներ հավաքվել էին Մայր Աթոռի սեղանատանը:

Խմբովին արտասանված Տերունական աղոթքից հետո հնչում է ճեմարանի քայլերգը: Նոր տարվա երեկոյի բացման և շնորհավորական խոսքով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը.

«Վեհափառ Տեր, գերաշնորհ սրբազան հայրեր, հարգարժան անդամք Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի, հոգեշնորհ և արժանապատիվ հյուրեր, սիրելի դասախոսներ և սաներ:

«Ջիարդ սրընթաց են թռիչք ամաց... Ո՞ ըզմտաւ ած, թէ այսքան վաղանց աւուրք հին տարւոյն սրացեալք ի բաց մեկնէին ի մէնք...»:

Այո, երեկ էր կարծես, որ հավաքվել էինք այստեղ, նվիրական այս հարկի տակ՝ դիմավորելու 1987 տարին: Իսկ այսօր, նույն կազմով և նույն հոգեկան հուզումներով հրաժեշտ ենք տալիս նրան: Ինչքան շուտ անցավ: Մի պահ ափսոսում ես, տրխրում, ցավում: Այո: Երանի: Չէ՞ որ արագ են անցնում լավ տարիները: Իսկ եթե այդ տարիները նաև արդյունավետ են, ապա մեզ թվում է, թե դրանք չեն անցնում: Դրանք մնում են, մնում են իրենց արդյունքներով: Ահա այդպիսի մի տարի էր անցնող տարին թե՛ ողջ մարդկության և թե՛ հայ ժողովրդի ու Հայ Եկեղեցու, մասնավորապես Ս. Էջմիածնի համար:

Տարին նախ հատկանշվեց երկու գեր-

հզոր երկրների և նրանց ժողովուրդների միջև բարեացակամության ու սիրո հաստատումով:

Իսկ Հայ Եկեղեցու և ի մասնավորի Ս. Էջմիածնի համար «ամենակարևոր իրադարձությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հովվապետական այցելությունն էր Հյուսիսային Ամերիկայի երեք հայկական թեմերին: Այդ այցելության ընթացքում մի անգամ ևս հաստատվեց, որ հայը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի զավակը, ուր էլ որ գտնվելիս լինի, նրա հայացքը ուղղված է դեպի Ս. Էջմիածինը, նրա սիրտը թրթռում է Մայր Հայաստանի կարոտով, և նրա հոգու ճշմարիտ սնունդը Լուսավորչի հաջորդի օրհնությունն է միայն: Մենք այդ ամենը գիտենք: Այդ ամենը գիտի ամեն ոք, ուր էլ որ ապրելիս լինի: Անհրաժեշտ է սակայն, որ այդ ճշմարտությունը երբեմն-երբեմն աղաղակվի, որպեսզի ճշմարտության թշնամիների որոգայթները ամլանան իսպառ: Եվ վստահ եմ, որ խորը ճշմարտություն կա ամերիկահայ նշանավոր դեմքերից մեկի հետևյալ հայտարարության մեջ. «Եթե Վազգեն կաթողիկոսը երկու անգամ էլ մեզ այցելի, Անթիլիասն այլևս այստեղ գոյություն չի ունենա»:

Նոր տարվա սեմին չպետք է միայն ներշնչվենք անցյալով, այլ նաև պետք է ծրագրենք ապագան: Երկու կարևոր իրադարձություններ հույս ունեմ, որ կարժևորեն Մայր Աթոռի և հոգևոր ճեմարանի 1988 տարին:

1987—88 ուսումնական տարին հոբելյանական է հոգևոր ճեմարանի համար: Ուղիղ 350 տարի առաջ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը Մայր Աթոռի ուսումնարանը, որ գտնվում էր Հովհաննավանքում, փոխադրեց Ս. Էջմիածին, որը կարճատև ընդմիջումներով, մինչև այսօր շարունակում է Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին տալ արժանավոր հոգևորականներ:

Իսկ 1991 թվականը Մայր Աթոռի՝ Սսից Ս. Էջմիածին տեղափոխության 550 ամյակն է:

Հոգևոր ճեմարանի ուսումնական խորհուրդը ծրագրել է այս տարվանից սկսյալ մինչև 1991 թ. տարեկան գիտական սեմինարներ անցկացնել, հիմնականում ուսումնասիրելով Ս. Էջմիածնի վերջին 550 տարիների և հոգևոր ճեմարանի 350 տարիների գործունեությունը:

Երկրորդ կարևոր իրադարձությունը, վստահաբար, լինելու է Հին Կտակարանի աշխարհաբար թարգմանությունը, որ պատրաստ կլինի 1988 թ. աշնանը, իբրև նվեր մեր սիրելի Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյակին:

Վեհափառ Տեր, այս ամենի իրագործման համար մենք խիստ կարիք ունենք Ձերդ Սրբության օրհնությանը և գնահատանքին: Օրհնությանը, որպեսզի մեր հոգիները միշտ լի լինեն եռանդով և ուժով, և գնահատանքին, որպեսզի չընկճվենք կողմնակի, սակայն հավանաբար անիուսափելի, խոչընդոտներից»:

Տեր Եզնիկ քհն. Պետրոսյանի խոսքից հետո բոլոր ներկաները հոտնկայս երգում են «Հայրապետական մաղթանքը»: Ապա ճեմարանի նախապատրաստական լսարանի ուսանող Հովհաննես Սարգսյանը այտասանում է Սիամանթոյի «Կաղանդի իրիկուն» բանաստեղծությունը:

Արտասանությունից հետո ճեմարանի սաները, ղեկավարությամբ շարականագիտության դասախոս պրն. Խորեն Պալյանի և երաժշտագիտության դասախոս պրն. Կոմիտաս Քեշիշյանի, կատարեցին Ներսես Շնորհալու «Ամոլոք հաւատոյ» և Մովսես Խորենացու «Ով գերահրաշ ծաղիկ» շարականները: Ապա Մայր Աթոռի միաբանության անունից խոսք ասաց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի պարոնայք, սիրելի ուսուցիչներ, սիրելի ուսանողներ և պաշտոնյաներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Այսօր կրկին տարեմուտ է: Եվ այս տարեմուտի պահին կրկին ու կրկին կանգնած տառաձության մեջ՝ մտածում ենք ժամանակի մասին: Ծանր և քաղցր պարտականություն է, Վեհափառ Տեր, Ձեր միաբանության բոլոր անդամների անունից այսօր խոսք առնել և շնորհավորել Ձերդ Սրբության հառաջացող Նոր տարին և նրան հաջորդող Քրիստոսի Ս. Ծնունդը: Աստվածաշնչի սրբազան տողերը ակնարկում են այն մասին, թե Արարիչն Աստված ստեղծեց երկինքը և երկիրը, և այն ամենը, որ երևում է, մենք զգում, հասկանում ենք այն մեր զգայարանների միջոցով: Աստված ստեղծեց և այն ամենը, ինչ անտեսանելի է, ոչ զգայական, սակայն հավերժական: Արարիչն Աստված ստեղծեց ամենայն ինչ՝ երևելի և աներևույթ: Դա արարչագործության ժամանակն է: Ամենտարանի սրբազան տողերը վկայում են մեզ, որ եղավ լրումն ժամանակի և տեղի ունեցավ մարդեղությունը: Մարդեղությանն խորհրդով սկիզբ դրվեց մի նոր ժամանակի, և Գողգոթայի վրա բարձրացող խաչը

դարձավ ամենակարևոր և ամենաէական ժամացույցը, որ ցույց տվեց միաժամանակ և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապառնին: Քրիստոնյա Եկեղեցվ. լուսապսակ հայրերից մեկը՝ Մեծն Օգոստինոս, իր «Խոստովանություններ» գիրքը կազմելիս, անդրադարձավ այս հարցին և ասաց. «Եվ ի՞նչ է ժամանակը: Երբ ինձ չեն հարցնում, թվում է ինձ, թե ես գիտեմ, սակայն երբ հարցնում են, ես այլևս չեմ կարողանում պատասխանել: Զարմանալի է, ինչը անցել է, այլևս չի դառնալու, ինչը որ չի եկել, ինձ տակավին չի հետաքրքրում, իսկ ինչը ներկա է՝ չեմ հասկանում»: Այսպիսի խորհրդածություններ կատարել են բոլոր ժողովուրդների մեծ մտածողները, և այսպիսի եզրահանգումներ կատարել են շատ իմաստուններ: Ինչպիսի զուգադիպություն: 1956 թվականին, Միացյալ Սուրբ Խորանի առջև կանգնած, Սուրբ Գրիգոր Լուսավորչի գահի 130-րդ գահակալը արտաբերել է հետևյալ բարոյափիլիսոփայական հոյակապ դատումը ժամանակի մասին. «Մեր տեսակետով էականը այն չէ, թե ինչ է ժամանակը ինքն իր մեջ, թե առարկայական իրականության կհամապատասխանե՞ ան, թե պարզապես մարդկային զգայականության մեկ կերպն է: Այլ էականը այն է, թե անսկիզբ ու անվախճան ժամանակի հավիտենական տևողության մեջ ամեն մեկս մեր ժամանակը ունինք: Եվ ահա մեծ հարցումը՝ ինչպե՞ս ապրիլ մեր ժամանակը»: Թող տարօրինակ չթվա, եթե եզրակացնենք, որ այս խրատը իր մեջ ամփոփում է ողջ մարդկության մեծ մտածողների կենսափիլիսոփայությունը: Մեզ կմնա այսօր Միացյալ Ս. Խորանի առջև վերանորոգման ահեղ խորհրդի մեծ տեսիլներով մեկս մյուսին շշնջանք՝ սիրելի եղբայր, զգույշ քայլիր Էջմիածնում, որովհետև ամեն տեղ սրբազան մասունք է հանդչում, քանի որ Արարատի և Արագածի ճիշտ մեջտեղում մի փոքրիկ ժողովուրդ կարողացավ հասկանալ Արարչագործության վեհ իմաստը, և Արարչի առաքած Որդու մեծ շնորհաբերությունը, կենսական հաղորդության վեհ իմացականությունն ու երկնքի ժառանգորդ դառնալու ահեղ ճշմարտությունը: Եվ քանի որ Աստված ստեղծեց ամենայն ինչ՝ երևելի և աներևույթ, մարդը կարծում ենք, թե ժամանակը միայն տեսանելի իրերի չափումն է, շարժումը, կշիռը, տարածությունն ու ձգողությունը: Սակայն մեզանից վեր, մեր իմաստությունից վեր գտնվում է անտեսանելին, անչափելին և անկշռելին, որ է Արքայությունը Փրկիչ Հիսուս Քրիստոսի:

Ձերդ Վեհափառության ուխտի բոլոր ամդամների կողմից, Հայրապետ մեր, թույլ տվեք մատչել Ձեր Ս. Աջին որպես նախախնամությունից սահմանված առաջնորդը շատ կարևոր քրիստոնեական այս կենտրոնին, և միասնական աղոթքով շշնջալ, որ այն ժամանակը, որ դուք ապրեցիք այս անցնող տարիների ընթացքում, իր կենսական ցողերը շռայլորեն սփռելու է մեզ վրա և ցույց է տալու այն ճանապարհը, որ բխում է մեկ ընդհանրական Ս. Խորանից, այն վեմը Լևստվածային, որի վրա կառուցվեց Քրիստոսի Եկեղեցին:

Շնորհավոր Նոր տարի և Ս. Ծնունդ, Վեհափառ Տեր»:

Հայր սուրբի բովանդակալից խոսքից հետո «Հայաստան» և «Տալվորիկի կըտրիճ» երգերի ոգեշունչ կատարմամբ նորից հանդես են գալիս ճեմարանի սաները: Ապա Դ. լսարանի ուսանող Գարսևան Երանյանը արտասանում է Հովհաննես Շիրազի «Նվեր Սփյուռքի հայության» բանաստեղծությունը, որը մեծ տպավորություն է թողնում ներկաների վրա: Հետո հոգևոր ճեմարանի սաները կատարում են «Ճառագայթ և կերպարանք» և «Արևելք գերարփի» շարականները, որից հետո ուսանողության անունից խոսք է ասում Ե լսարանի ուսանող Սարգիս Ղանդիլյանը.

«Վեհափառ Տեր.

Հարգարժան անդամներ Գերագույն Հոգևոր Խորհրդի, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր, հարգելի դասախոսներ, սիրելի ուսանող եղբայրներ և ներկաներ,

Եվս մի երկու ժամ և ժամացույցը կազդարարի Նոր տարվա գալուստը: Ավետաբեր այս ազդականշով կփոխվի թվականը՝ 1987-ը կգնա պատմության գիրկը, և նրան կհաջորդի Նոր, 1988-ի այգաբացը՝ իր գալիքի պայծառ շողերով: Հնի և նորի եզրագծում յուրաքանչյուր անհատ սովորաբար խորհում է հավիտենական, անսկիզբ ու անվախճան ժամանակի մասին: Որպեսզի այս անցավոր աշխարհում մեր ժամանակավոր կյանքը լինի իմաստալից ու հետաքրքրական, բոլորիս վեմ նպատակն ու ձգտումը պետք է լինի այն լցնել նվիրական, օրինական և ազգանվեր գործերով: Ամեն տարի, ժամանակի այս տոնին պետք է ներանձնական, հաշվետվություն կատարել խղճի առջև. հանրագումարի բերել մեր կյանքը, ուրախանալ ձեռք բերած հաջողություններով, ափսոսալ կրած հուսախաբությունների համար, զղջալ կատարած թյուր գործերի համար, մեղքերին քավություն ստացած, սրբազան ու վեհ զգացումներով, նորոգված կյանքով ոտք դնել Նոր տարվա սեմին մեկ վճռակամությամբ՝

հավատարմորեն, անձնուրացաբար նվիրվել և անմնացորդ սիրով խոնարհաբար ծառայել ազգին ու Եկեղեցուն:

Ամեն Նոր տարվա հետ առաջադեմ ողջ մարդկության իղձն ու ցանկությունն է եղել տեսնել խաղաղություն երկրի վրա և համերաշխություն ազգերի միջև: Խաղաղության պահպանման սրբազան գործում անընկուն մասնակցություն ցուցաբերեց մեր ազգընտիր գահակալը՝ մեր ժողովրդի հույսի ու լույսի օրրան Միածնաէջ Սուրբ Էջմիածնի խաղաղության Ջահակիրը:

Վեհափառ Տեր, թույլ տվեք հոգեբորոգ, ուրախարար, հուսառատ ակնկալություններով, ճեմարանի ուսանողության անունից ի խորոց սրտի շնորհավորել Ձեր Նոր տարին, ցանկանալ Ձեզ արնշատություն, քաջառողջություն և երկար-երկար տարիների թեղմնավոր կյանք: Տարեմուտի այս խորհրդավոր երեկոյին ճեմարանականներս նաև բարեմաղթության խոսք ենք հղում մեր սիրելի տեսչությանը, դասախոսական կազմին՝ նրանց ցուցաբերած հոգատար և բարյացակամ վերաբերմունքի համար:

Թող շնորհավոր լինի Ձեր բոլորի Ամանորը, սիրելի դասախոսներ և հարգելի ներկաներ: Թող 1988-ը լինի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու համար հոգևոր նոր վերազարթոնքի, բարգավաճման, խաղաղ ու հոգեշահ աշխատանքի և ազգային եկեղեցական միասնականության տարի:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն...»: Սարգիս Ղանդիլյանի խոսքից հետո երգչախումբը կատարում է «Կենաց երգը»-ը, որից հետո իր «Տարեվերջի գիշերվա խոհեր» բանաստեղծության արտասանությամբ հանդես է գալիս Տ. Արամ վրդ. Բոյաջյանը: Ապա Ռուբեն սարկավագ Հարությունյանը կարդում է Վաչագան Հովհաննիսյանի «Նավավարը» բանաստեղծությունը, նվիրված Վեհափառ Հայրապետին: Այս բանաստեղծություններից հետո ճեմարանի սաները երգում են «Փրկչի ծնունդը»:

Սեղանատանը ուրախություն ու խանդավառություն է տիրում, երբ կարդացվում են ավանդություն դարձած «Կաղանդչեքերը»: Կաղանդչեքերի ավարտին բաժանվում են վիճակահանության տոմսերը. խաղարկվում են տասնյակ նվերներ:

Ապա իր օրհնության ու շնորհավորանքի խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Շնորհավոր Նոր տարի:

Բերում եմ իմ օրհնությունը 1988 Նոր տարվան և ձեզ բոլորիդ, մաղթելով ամենքիդ քաջառողջություն և նորանոր ներշնչանքներ, որպեսզի շարունակեք ձեր աշխատանքը մեր ընդհանուր առաքելության ճանապարհի վրա: Շատ գոհ եղա՝ ներկա լինելով այս հանդեսին: Դրագիրը, իմ կարծիքով, բավական հաջող էր և շատ լավ համարներ կային: Ինձ մասնավոր հուզում պատճառեց Հովհաննես Շիրազի բանաստեղծությունը, որ արտասանվեց քիչ առաջ՝ «Խոսք Սփյուռքի հայության»: Ես, որ նոր եմ վերադարձել Սփյուռքից՝ Հյուսիսային Ամերիկայից, շատ այժմեական և հուզումնալի հնչեց ինձ համար Հովհ. Շիրազի այդ թանավոր բանաստեղծությունը, որ իր բովանդակությամբ շատ մոտիկ է իմ սրտին: Ես հաստատում եմ ճշմարտացիությունը Հովհ. Շիրազի մի քիչ հոռետես արտահայտությունների Սփյուռքի հայության նկատմամբ: Իմ արտասահման եղած ընթացքին բազում առիթներով ես ելույթներ ունեցա: Սակայն երբեք, որևէ առիթով, որևէ ձևով չեմ արտահայտված այնպիսի ոգով, թե Սփյուռքի հայության գոյությունը ողբերգություն է: Ինչո՞ւ հուսահատություն մը ևս ավելացնեի ես, իբրև Ամենայն Հայոց կաթողիկոս: Ընդհակառակը, իմ խոսքերով փորձում էի ընդգծել, որ տվյալ պայմանների մեջ կացությունը պետք է ընդունենք իրապաշտորեն, ինչպես կա, և ազգովին աշխատենք, նույնիսկ գուցե օգուտ քաղել այդ ցրվածությունից: Պատմության լայն հորիզոնի վրա մենք փաստորեն Սփյուռքի հայությունը քայլ առ քայլ կորցնում ենք և պիտի կորցնենք հետզհետե: Պիտի մնա միայն կենդանի սյունը հայ ազգի՝ Մայր Հայրենիքը: Թեև ոմանք արհամարհում են Մայր Հայրենիքը, նույնիսկ փախչում են մեր Հայրենիքից, ավելի ճոխ կյանք ապրելու համար: Ճշմարիտ է, այնտեղ՝ Ամերիկայում, անշուշտ, կյանքը ավելի ճոխ է և մարդիկ հարստանալու ավելի հնարավորություններ ունեն: Բայց արդյոք հայ մարդը, որ ինքզինքը քիչ-շատ հայրենասեր է նկատում, մի՞թե այդ տվյալներով պետք է առաջնորդվի...

Ռումինիա 1948-ին, երբ նոր էի վարդապետ ձեռնադրվել, առիթը ունեցա ծանոթանալու ռումինացի մի գնդապետի հետ, որի ազգանունը՝ Նավասարդ, ծագումով հայ, Անիի գաղթականության սերունդներից: Հետը մի քիչ վիճեցինք: «Մի ժողովուրդ,—ասաց նա,—որ հեռանում է իր մայր հողից, նա ժողովուրդ չէ, արժանի չէ ազգություն կոչվելու»: Մի քիչ չափազանցված, բայց ինչ-որ ճշմարտություն էր անշուշտ: Մենք՝ այստեղ ապրողներս, մենք՝ հայ հոգևորականներս մանավանդ, մեր

ճակատագիրը կապած ենք այս երկրի հետ: Եվ մեր կյանքի նպատակը դարձրել ենք ծառայել մեր Եկեղեցուն: Մեր Եկեղեցուն, որ մեր օրերին Մայր Հայրենիքում վերազարթոնքի շրջան է ապրում: Դուք բոլորդ ականատես եք լինում, թե ինչպես մեր ժողովուրդը սիրով, հարգանքով և նվիրումով նույնիսկ մոտենում է մեր Եկեղեցուն: Նույնիսկ ոչ հավատացյալները հարգում են մեր Մայր Եկեղեցին, աշխատում են մեր Եկեղեցվո զորացման համար այստեղ: Եվ այդ ընթացքի մեջ ենք մենք այսօր: Դա շատ մխիթարական է և ոգևորիչ մեզ համար: Եվ մենք պետք է մեր ուժերը կենտրոնացնենք՝ առավելապես մեր հայրենիքի մեջ մեր Եկեղեցին զարգացնելու, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը զորացնելու, մեր ճեմարանը զորացնելու, ավելի և ավելի պատրաստված, լուսամիտ, հավատավոր միաբաններ պատրաստելու և ճակատաբաց դիմելու դեպի մեր ապագան: Եվ վստահ եղեք, որ արտասահմանի հայությունը հետևում է այս երևույթներին: Նրանք էլ ոգևորված են:

Ահա այս ուրախությամբ, այս հավատքով և այս լավատեսությամբ կխորհիմ, պետք է դիմավորենք Նոր տարին և աղոթենք, որ Աստված խաղաղություն պարգևի աշխարհին, որպեսզի մեր կյանքը չխանգարի և ապահովության պայմանների մեջ շարունակենք մեր առաքելությունը նորանոր եկեղեցաշեն իրագործումներով: Ամեն:

ԱՄԱՆՈՐՅԱ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հունվարի 1-ին, ուրբաթ.—Կաղանդ, տարեմուտ:

Նոր տարվա առաջին օրը ս. պատարագով սկսելը Հայ Եկեղեցու ավանդություններից մեկն է դարձել:

Նոր տարվա առաջին օրն է, առավոտյան ժամը 10.30-ը: Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, Ամանորյա ս. պատարագ է մատուցում հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանից հավուր պատշաճի քարոզ է խոսում պատարագիչ տեր հայրը՝ «Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և երթ նախ հաշտեա ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսցիր զպատարագն քո» (Մատթ. Ե 23—24) բնաբանով:

Քարոզից հետո, Իջման ս. սեղանի առջև, հանդիսավորությամբ կատարվում է Հայրապետական մաղթանք:

Հավարտ արարողությանց, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի ընդունելության սրահ, ուր ընդունում է Մայր Աթոռի միաբանության շնորհավորանքները: Միաբանության անունից Հայոց Հայրապետի Նոր տարին շնորհավորում է Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը ջերմագին շնորհավորում է Մայր Աթոռի միաբանության Նոր տարին և տալիս իր հայրական օրհնությունները:

Ս. ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունվարի 5-ին, երկուշաբթի.—Մրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յուրաքանչյուր տարի մեծ շուքով են նշվում Ս. Ծննդյան հանդիսությունները Մայր Աթոռում: Այդ օրը բազմահազար հավատացյալներ են ուխտի գալիս Ս. Էջմիածին, հոգեկան ցնծություն ու բերկրանք ստանալու սրբազան արարողություններից:

Այս տարի ևս, հունվարի 5-ին, Մայր տաճարը լի էր հավատացյալներով: Օրվա մեծ տոնի առթիվ, ժամը 17-ին, Մայր տաճարում տեղի ունեցան «Ճաշու» և «Երեկոյան» ժամերգություններ: Եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Օրվա տոնին համապատասխան կարդացվում են Ս. Գրոց համապատասխան հատվածներ: Հոգևոր ճեմարանի չորս ուսանողներ Ավագ խորանից ընթերցում են Դանիել մարգարեի «Երից մանկանց» օրհներգությունը:

Ընթերցումներից հետո սկսվում է Մրագալույցի ս. պատարագը: Ավագ սեղանի վրա հոգեպարար ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսում:

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի: Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասն մեր մարմնացաւ» (Շարական):

Սիրելի հավատացյալներ,

Ծրագալույցի այս լուսափայլ երեկոյան խոսքերում բազմությամբ հավաքվել ենք Սուրբ Էջմիածնի լուսո խորանների ստվեր, տոնախմբելու մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան և մարդեղության խորհուրդը:

Այս երեկո վերստին ուրախ լողանջում են մեր դարավոր Եկեղեցու զանգակները, ավետելով ամենուր մեր Փրկչի Ծննդյան ավետիսը սրբազան շարականագրի բառերով. «Ծնվեց նոր արքա Բեթղեհեմ քաղաքում. որդիք մարդկան օրհնեցեք, որովհետև նա մեզ համար մարմնացավ»:

Մտովին հետևում ենք այս պահին ավետարանիչ Ղուկասի պատումին, այնտեղ կարդում ենք Մեսիայի Ծննդյան մանրամասնությունների և հատկապես նրա Ծննդյան առթիվ կատարված զարմանալի հրաշքի մասին: Աստվածահայտնության առթիվ կատարված հրաշքի միակ ականատես վկաներն են դառնում, տարօրինակ կերպով, պարզ ու խոնարհ հովիվները, որոնք Բեթղեհեմի շրջակայքում գտնվող արոտավայրերում իրենց հոտի գիշերային պահպանությունն էին անում:

Մարդեղության խորհուրդը տելի էր ունենում այն օրերին, երբ Հռոմի Օգոստոս կայսրը հրաման էր արձակել մարդահամար կատարելու իր կայսրության սահմաններում, այն օրերին, երբ Ասորիքի դատավորն էր Կյուրենիոսը: Համաձայն մարդահամարի հրամանի, ամեն անհատ պետք է հաշվառման ենթարկվեր իր նախնիների քաղաքում, և որովհետև Հովսեփը՝ Մարիամի խոսեցյալը, Դավթի ցեղից էր, ըստ օրենքի պետք է Բեթղեհեմ գար՝ այնտեղ արձանագրվելու համար:

Այն ժամանակ մարդիկ ճամփորդում էին նախնական փոխադրամիջոցներով, այդ իսկ պատճառով, շատ հավանաբար, Գալիլիայի Նազարեթ քաղաքից մինչև Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքը հասնում էին նվազագույնը չորս կամ հինգ օրից: Այս առթիվ Հովսեփին ընկերակցում էր նրա խոսեցյալը՝ Մարիամը, որ հղի էր և նրա հղության վերջին օրերն էին:

Երբ նրանք հոգնաբեկ հասնում են Բեթղեհեմ, Մարիամը երկունքի վերջին ցավերի մեջ էր: Փորձում են տեղում մի օթևան գտնել, բայց իզուր. բոլոր օթևանները զբաղեցված էին նախօրոք: Ստիպված նրանք քաղաքի ծայրամասում գտնվող մի քարայր են մտնում, ուր ընտանի կենդանիներ էին մակաղում, և այնտեղ են ապաստանում: Ահա այս քարայրում էլ ծնվում է աշխարհի Փրկիչը՝ Հիսուս:

Հիսուսի շնորհաբեր Ծննդյան պահին, Բեթղեհեմի շրջակա դաշտերում իրենց հոտի պահպանությունը կատարող պարզունակ հովիվների աչքի առաջ պարզվում է մի փառահեղ հրաշք: Բացվում են դրախտները երկնքի, որտեղից հորդում են լույսի հեղեղներ, որոնք ավելի պայծառ էին, քան մինչ այդ երկնքում շողարձակող Բեթղեհեմի աստղը, և երկնքից գունդ-գունդ հրեշտակներ ցնծագին երգերով իջնում են երկիր և ավետիս բերում մարդկությանը՝ ասելով. «Փառք ի բարձունս Աստուծո, երկրի վրա խաղաղություն, մարդկանց մեջ եղբայրություն»:

Անտեղյակ և ապշահար հովիվները, ականատես այս տեսիլքի հայտնությունից սթափվելուց հետո, որոշում են գնալ Բեթղեհեմ՝ այնտեղ տեղեկանալու կատարված հրաշքի ստուգության մասին: Հասնելով Ծննդյան այրը, նրանք երկյուղածությամբ երկրպագում են Փրկչի մսուրի առաջ և փառաբանում Աստծուն իրենց շնորհված այս պարգևի համար:

Սիրելի հավատացյալներ, մեր Տիրոջ Ծննդյան օրվանից անավասիկ անցել են շուրջ երկու հազարամյակներ: Սակայն նրա ծննդյան լուսաշող իրականությունը դեռ մնում է ամեն մի քրիստոնյայի համար իբրև մշտանորոգ խորհուրդ փրկության: Հիսուսի անձով Աստված ինքը մարմնացավ, երբ հասել էր աստվածահայտնության պահը, երբ մարդկությունը իր բոլոր հնարավոր միջոցները կորցրել էր ճանաչելու իրականությունը, կորցրել էր փրկության հույսը և խարխափում էր անհուսության բավիղներում: Մարդեղության խորհրդով Աստված իր լուսավոր դեմքն է բացահայտում մարդկությանը իբրև արդյունք նրա հանդեպ իր ունեցած անսահման սիրո:

Այսպիսով՝ իրականանում և մարմին են զգենում Հին Կտակարանի իմաստուն մարգարեների կանխագուշակությունները Մեսիայի գալստյան մասին. «Ահա կույս յղացցի, ծնցի որդի և կոչեսցես զանուն նորա Էմմանուէլ» (Եսայի):

Հիսուս իր կյանքը տվեց մարդկության համար: Նրան սովորեցրեց կյանքի և ճշմարտության ճանապարհը, քարոզեց եղբայրսիրություն, կատարեց բազում հրաշքներ՝ տալով ապեղանի տառապող մարդկության բոլոր ցավերին, ապա նույն մարդկանց կողմից, իբրև մեղապարտ, դատապարտվեց մահվան և խաչի վրա իր անմեղ արյունը թափեց մեր մեղքերի քավության համար, այսինքն՝ ի սեր մարդկության:

Դարեր են անցել, երկար դարեր աստվածահայտնության այն երջանիկ օրերից: Թվում էր, թե մարդկությունը կփոխվեր,

աստվածճանաչությունը նոր ուղի կբացեր դրա առաջ, բայց այդ տեղի չունեցավ. անարդարությունն ու ընչաքաղցությունը իրենց արմատները խորն էին խրել մարդկանց սրտում, քենն ու ատելությունը ճյուղավորվել էին, պատերազմների, կոտորածների, ցեղասպանությանց թիվը գնալով աճելացել էր: Մարդիկ այնպիսի ահավոր զենքեր էին պատրաստել, որ դրանցով թշնամու հետ նաև իրենք իրենց կարող էին ոչնչացնել:

Աստվածային կյանքը, որպես պարգև տրված մարդկությանը, արդեն կանգնել էր առհավետ կորստյան ահավոր վտանգի առաջ: Ո՞վ պիտի դադարեցներ այս գինարշավը, ո՞վ զգաստության պիտի հրավիրեր մարդկությանը, և ո՞վ հաշտության սերմեր պիտի ցաներ հակառակորդ կողմերի ղեկավարների սրտերում:

Վերստին հրաշքը կատարվեց: «Թուլացան կորովիգ հաստաձիգ աղեղաց»: Զինարշավը նվազեց, մարդասիրությունը ընձյուղեց, հակամարտ կողմերի միջև շարվածության տեղատվություն սկսվեց, և ահա մոլորակի մարդկությունը ցնծագին բացականչություններով ողջունեց անցյալ դեկտեմբերի 7-ի հանդիպումը Վաշինգտոն քաղաքում Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Ռոնալդ Ռեյգանի և Սովետական Միության Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի միջև:

Սիրելի հավատացյալներ, Հայաստանյայց Եկեղեցին, աշխարհի բոլոր քրիստոնեական Եկեղեցիների հետ ջերմորեն ողջունեց բարձր մակարդակի սույն հանդիպումը՝ մաղթելով, որ առաջիկա ամիսների և տարիների ընթացքում հնարավոր դառնա ամբողջական զինաթափությունը, և մարդիկ ապրեն այս աշխարհում իբրև հավասար իրավունքներ վայելող եղբայրներ և քույրեր՝ խաղաղության և սիրո հովանու ներքո:

1987 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսները Հայաստանյայց Եկեղեցու և ընդհանրապես ամբողջ հայ ժողովրդի և ի մասնավորի ԱՄՆ-ի ու Կանադայի հայության համար եղան խանդավառության և հոգևոր յիցքավորման ամիսներ: Այդ շրջանում Ամենայն Հայոց Հայրապետը՝ Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը, հովվապետական այցելությամբ գտնվում էր ԱՄՆ-ում և Կանադայում:

Սույն հովվապետական այցելության ընթացքում, Հայոց Հայրապետը մի շարք կարևոր հանդիպումներ ունեցավ պետական պաշտոնական անձնավորությունների հետ, այդ թվում՝ ԱՄՆ-ի մեծարգո նախագահ Ռեյգանի, Միացյալ Ազգերի Կազմակերպության գլխավոր քարտուղար Պերես Դե Կուելյարի, Կալիֆոռնիայի նահանգապետ Ջորջ Դեռքմեջյանի, Նյու Յորքի քաղաքագլուխ Էդվարդ Քոչի, Կանադայի Օթթարիո նահանգի վարչապետ Դեվիդ Պետերսընի և այլ պետական կարևոր անձնավորությանց հետ:

Վեհափառ Հայրապետը իր հովվապետական այցելության ընթացքում նաև հնարավորություն ունեցավ ամրապնդելու էկումենիկ միջեկեղեցական կապերը Հայ և քրիստոնեական քույր Եկեղեցիների ներկայացուցիչների միջև: Առանձնապես սիրալիր հանդիպումներ տեղի ունեցան օրթոդոքս, եպիսկոպոսական, կաթոլիկ և ավետարանական Եկեղեցիների ղեկավար անձանց հետ:

Հովվապետական սույն այցելության ընթացքում, Հայոց Հայրապետը ԱՄՆ-ում և Կանադայում ավելի քան տասը քաղաքներ շրջեց, իր հոգևոր զավակներին այցելեց, իր օրհնությունը բաշխեց, խաբրիկներ տարավ վերածաղկող Հայաստան աշխարհից և հայրենի մեր ժողովրդից, ի սփյուռս աշխարհի ցրված հայ ժողովրդի տարաբախտ զավակներին: Այսպիսով մեր ժողովրդի մեկությունը մի անգամ ևս վերահաստատվեց, և դա արտահայտվեց խանդավառության, ուրախության արցունքների, ծափերի և սիրազեղ աջահամբույրների միջոցով: Հայոց Հայրապետը նմանվեց նոր ժամանակների Նոյան աղավնու, որը խաղաղության ոստը իր շրթին՝ այցելության է գնում իր տարաստիյուռ պանդուխտ զավակներին:

Սիրելի հավատացյալներ, այսօր խորհրդապես Բեթղեհեմի այրի փոխարեն՝ մեր սրտերում ծնվում է Աստվածորդին: Սուրբ Ծննդյան այս երջանկաբեր պահին, փառք տանք միասնաբար առ մարմնացյալն Աստված և վերստին հայցենք նրանից, որ մեր աշխարհին շնորհի խաղաղություն և ժողովուրդների միջև հաստատի եղբայրություն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:
Զեզ և մեզ մեծ ավետիս: Ամեն:

Այնուհետև, ս. պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Ս. Ծննդյան նախատոնակի կարգը:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ» և «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականները հավատացյալ ժողովրդին ավետում են Քրիստոսի Ս. Ծնունդը:

Նախատոնակից հետո Վեհափառ Հայրապետը թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր Մայր Աթոռի միաբանությունը

Նորին Սրբությանը շնորհավորում է Ս. Ծննդյան մեծ տոնի առթիվ:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Ղազարապատի միաբանական սեղանատանը հավաքվում է Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը: Ավանդությանն համաձայն, օրվա մեծ տոնի առթիվ, օրհնվում են Մայր Աթոռի աղն ու հացը, ապա ներկաները վայելում են Ծննդյան ավանդական նավակատիքը:

Հունվարի 6-ին, չորեքշաբթի.—Տօն Ծննդեան և Աստվածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի Ծննդյան և Աստվածհայտնության մեծ տոնի առթիվ Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Մայր տաճարը լեփ-լեցուն է հավատացյալների խուռներամ բազմությամբ, որոնք եկել են մեկ անգամ ևս լսելու ուրախ ավետիսը՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Ս. պատարագի ընթացքում ս. սեղանին և Վեհափառ Հայրապետին սպասարկում էին Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, Ասողիկ վրդ. Սրիստակեսյանը, Սերովբե աբգ. Խաչիկյանը և սարկավագաց դասը:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Վեհափառ Հայրապետը Ս. Ծննդյան և Աստվածհայտնության տոնի առթիվ սրտառուչ քարոզ խոսեց, շնորհավորելով ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի բովանդակ հայության Նոր տարին և Ս. Ծնունդի տոնը (տես էջ 3):

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը Ավագ խորանի վրա կատարում է Ջրօրհնյաց հանդիսավոր կարգը՝ ոգեկոչելով հիշատակը Ս. Հովհաննես Մկրտչի ձեռքով Հորդանան գետում Քրիստոսի մկրտության:

Հավարտ եկեղեցական արարողությանց Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով հանդիսավորությամբ առաջնորդվում է Վեհարան, ուր ընդունում է բազում շնորհավորանքներ Ս. Ծննդյան տոնի առթիվ:

Տ. ԱԲՐԱՀԱՄ ԱԲՂ. ՄԿՐՏՉՅԱՆ



Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը, ընդառաջելով Ամերիկայի Միացյալ Նահանգների արևելյան և արևմտյան թեմերի հայոց թեմական առաջնորդներ Տ. Թորգոմ և Տ. Վաչե արքեպիսկոպոսների, Կանադայի հայոց նորակազմ թեմի առաջնորդ Տ. Վազգեն արքեպիսկոպոսի հրավերներին, հովվապետական այցելություն տվեց Միացյալ Նահանգների և Կանադայի հայկական եկեղեցական համայնքներին ի Նյու Յորք, Վաշինգտոն, Բոստոն, Դետրոյտ, Լոս Անջելես, Սան Ֆրանցիսկո, Ֆրեզնո, Տորոնտո և Մոնրեալ՝ անձամբ տանելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենարար օրհնությունը Սփյուռքի հեռավոր ափերին ապրող իր բոլոր հոգևոր զավակներին՝ համբարձումն մեր նախնյաց սուրբ հավատքի, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սիրով միության և ազգային միասնականության։

Վեհափառ Հայրապետի հմայիչ անձնավորության և հեղինակության մեջ հայ ժողովրդի տարաստիյուռ զավակները շոշափելիորեն մարմնացած տեսան Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու վերածնված Մայր Հայրենիքը և շուրջ երկու ամիս ապրեցին հոգևոր և ազգային ճշմարիտ հպարտության և ցնծության օրեր։

Ամենայն Հայոց Հայրապետի սույն ուղևորությունը պատմական մեծ իրադարձություն հանդիսացավ՝

ա. Հոգևոր-եկեղեցական կյանքի շինության և ազգային գիտակցության արթնացման իմաստով.

բ. Միջեկեղեցական հանդիպումների մակարդակի վրա էկումենիկ ոգու ամրապնդման իմաստով, և՝

գ. Պետական լայն շրջանակների մեջ։

Այս առթիվ Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և Մայր Աթոռի միաբան Տ. Նավասարդ աբեղա Կճուչանը՝ որպես գավազանակիր։

Նորին Սրբությունը իր մեկնումից առաջ հարցազրույց ունեցավ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի թղթակցի հետ (տես «Էջմիածին» ամսագիր, 1987 թ., № № ԺԱ—ԺԲ, էջ 3)։

ՄԵԿՆՈՒՄ ԷՋՄԻԱԾՆԻՑ

1987 թվականի հոկտեմբերի 5-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Միածնաէջ Մայր տաճար: Քաղցրահնչուն ղողանջում են Մայր տաճարի զանգերը:

Ողջ միաբանությունը աղոթում է Իջման ս. սեղանի առջև Նորին Սրբության բարեհաջող, խաղաղ և ապահով ուղևորության համար: Աղոթում է նաև Վեհափառ Հայրապետը:

Աղոթքից հետո Մայր Աթոռի միաբանների անունից Վեհափառ Հայրապետին և նրա շքախմբի անդամներին բարի ճանապարհ է մաղթում Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունները տալուց հետո Մայր Աթոռի միաբանությանը, ավտոմեքենաների շարասյան ուղեկցությամբ, ուղևորվում է դեպի Երևանի «Զվարթնոց» օդանավակայան, որտեղ Նորին Սրբությանը ճանապարհելու համար եկել էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի միաբանությունն ու պաշտոնեությունը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ են մաղթում նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղակալներ Անդրանիկ Հասրաթյանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

«Զվարթնոց» օդանավակայանից ինքնաթիռը ուղղություն է վերցնում դեպի Մոսկվա: Երկու և կես ժամ տևող բարեհաջող թռիչքից հետո օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորում և բարի գալուստ են մաղթում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը ու Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Բեռլինում պատրիարքական պատվիրակ Նիկոլայ արքեպիսկոպոսը:

Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էր եկել նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի աշխատակից Սերգեյ Կուզնեցովը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Կոսմոս» հյուրանոց:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 8-ին, Վեհափառ Հայրապետը «Կոսմոս» հյուրանոցի իր հարկաբաժնում ընդունում է Մոսկվայում հրատարակվող «Նովոյե վրեմյա» («Նոր ժամանակ») շաբաթաթերթի (որը լույս է տեսնում ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իսպաներեն, պորտուգալերեն, իտալերեն, լեհերեն, չեխերեն լեզուներով) թղթակից Եվգենի Անդրիանովին: Վեհափառ Հայրապետի հարցազրույցը լույս տեսավ վերոհիշյալ շաբաթաթերթի Հոյեմբեր ամսի 43-րդ համարում (տես «Էջմիածին» ամսագիր, 1987 թ., № № ԺԱ—ԺԲ, էջ 6):

Հոկտեմբերի 9-ին, ուրբաթ օրը, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով «Կոսմոս» հյուրանոցից տեղափոխվում է «Սովետսկայա» հյուրանոց:

Նույն օրը Հայոց Հայրապետը ենթարկվում է բժշկական քննության՝ մի քանի օրերից ի վեր համեցող հոդացավերի պատճառով:

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հոկտեմբերի 14-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով Մոսկվայի «Շերեմետևո—2» միջազգային օդանավակայանից ուղևորվում է Նյու Յորք:

Այս առիթով Հայոց Հայրապետին և նրա շքախմբի անդամներին ճանապարհելու համար օդանավակայան էին եկել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ տիար Ն. Կուզնեցովը, Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը, եկեղեցական խորհրդի անդամներ և հավատացյալներ:

Նյու Յորք մեկնման ճանապարհին ինքնաթիռը կարճ դադար է ունենում Արևմտյան Գերմանիայի Ֆրանկֆուրտ-ամ-Մայն քաղաքում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Հոկտեմբերի 14-ին, յոթժամյա խաղաղ ու ապահով թռիչքից հետո, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանում է Նյու Յորքի Ջոն Քենեդիի անվան միջազգային օդանավակայան և դիմավորվում ժողովրդի բարիգալըստյան խանդավառ և ցնծագին ողջույններով:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը՝ հոգևորականների իր շքախմբով, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանը, Վեհափառ Հայրապետի այցելության առիթով կազմված ընդունելությանց հանձնաժողովի կենտրոնական մարմնի անդամները՝ գլխավորությամբ ատենապետ տիար Սուրեն Ֆեսճյանի և տիար Էդվարդ Մարտիկյանի, ինչպես նաև եկեղեցական և աշխարհական բարձրաստիճան անձնավորություններ:

Հայոց Հայրապետը ողջագուրվում է ներկա եղող հոգևորականների հետ, ողջունում թեմի ազգային-եկեղեցական իշխանությանց ներկայացուցիչներին:

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը տեղափոխվում է «Պրեսբիթերյան» հիվանդանոց՝ բժշկական որոշ քննությունների համար, ուր և խնամքի առարկա է դառնում մինչև հոկտեմբերի 20-ը:

Նյու Յորքը բնակչությամբ աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկն է և Միացյալ Նահանգների տնտեսական, արդյունաբերական, ֆինանսական, բաղաքական և մշակութային կարևորագույն կենտրոնը: Քաղաքը հիմնադրվել է 1626 թ. հոլանդացիների կողմից և անվանվել Նոր Ամստերդամ, իսկ 1664 թ. անգլիացի զաղութարարները գրավել են այն և վե-

բանվանել Նյու Յորք։ 1783 թ. երբ Ամերիկան ձեռք բերեց անկախություն, Նյու Յորքը դարձավ ամերիկյան կառավարության կենտրոն։

Քաղաքն ընդարձակվեց և զարգացավ հատկապես 19-րդ դարում։ Քաղաքի ամենահայտնի մասը կազմում է Մանհեթենի կղզին, որտեղ գտնվում են Ուոլ Սթրիթը՝ իր երկնաքեր շենքերով, Սեյնտ Պատրիկ Մայր տաճարը, Կոլումբիա համալսարանը, հռչակավոր Մետրոպոլիտեն օպերան, համանուն թանգարանը և այլն։ Նյու Յորքն ունի վեց համալսարան, քսան հասուն կոլեջ, գիտությունների ակադեմիա, պատմության և արվեստի թանգարաններ, երաժշտական ակադեմիա և մշակութային ու գիտական բազմաթիվ այլ հաստատություններ։ Այստեղ է գտնվում նաև Միավորված Ազգերի Կազմակերպության կենտրոնակայանը։

Հայերի զանգվածային գաղթը դեպի Միացյալ Նահանգներ սկսվել է 1894—1896 թվականների կոտորածներից հետո։ Արտագաղթողների ճնշող մեծամասնությունը կազմել են արևմտահայ աշխատավորները։

Նյու Յորքի հայ համայնքը սկսել է ձևավորվել 1870 թվականի վերջին, ստվարացել է 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին, հատկապես 1915 թ. Մեծ եղեռնից հետո։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Արևմտյան Եվրոպայից, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներից այստեղ են գաղթում մեծ թվով հայեր, և ստեղծվում է խայտաբղետ մի համայնք։ Այժմ Նյու Յորքում բնակվող հայերի թիվը ավելի քան 70 հազար է։

Նյու Յորքը ամերիկահայ Եկեղեցու արևելյան թեմի կենտրոնն է։ Այստեղ գործում են հինգ առաքելական, մեկ հայ կաթոլիկ և երկու հայ ավետարանական եկեղեցիներ, որոնց կից հաստատվել են մեկօրյա դպրոցներ։ 1976 թ. այստեղ հիմնվեց հայկական ամենօրյա վարժարան։

Համայնքի ազգային կյանքը կազմակերպում և ղեկավարում են հայրենակցական, բարեգործական, մշակութային, մարզական և այլ միություններ, ինչպես՝ «Ադամյան», «Հայ դրամատիկ» թատերախմբերը, «Սևան» հայ ժողովրդական պարերի ընկերությունը, «Անդրանիկ», «Նաիրի» պարախմբերը, «Կոմիտաս», «Գուսան» երգչախմբերը և այլն։

Այժմ Նյու Յորքում լույս են տեսնում հայկական շուրջ 10 անուն պարբերականներ (հայերեն և անգլերեն լեզուներով)։ Այստեղ գործում են նաև հայկական երկու ռադիոժամ։

Հոկտեմբերի 20-ին, երեքշաբթի օրը, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետը հիվանդանոցից տեղափոխվում է «Ուալդորֆ Աստորիա» հյուրանոց՝ իրեն հատկացված մասնավոր հարկաբաժին։

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, Ամենայն Հայոց կաթողիկոսը հյուրանոցից ինքնաշարժերի շարասյունով ուղևորվում է դեպի Սեկընդ Ավենյուի վրա գտնվող Ս. Վարդան առաջնորդանիստ Մայր տաճար։ Այստեղ Նորին Սրբությունը հայ հոգևոր դասից և օտար բարձրաստիճան հոգևորականներից կազմված թափորով, խաչով ու խաչվառով, եկեղեցու ավետավոր զանգերի ղողանջի ներքո, «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր տաճար, ուր խուռներամ ժողովուրդը սպասում էր Հայրապետին։ «Վեհափա՜ռ, օրհնեցե՛ք, Վեհափառ» բացականչություններ էին լսվում Մայր տաճարի մուտքի շուրջ հավաքված հավատացյալներից։ Մայր տաճարի մուտքի Բրապարակի աջ և ահյակ կողմերում հայկական դպրոցների աշակերտներ, հայկական տարազներ հագած, ծաղկեփնջերով ու հայրենասի-



Վեհափառտ Հայրապետը ԱՄՆ-ի Ցայտ արքեպս Յակոբ Թեմի թեմական խորհրդի անդամների հետ

ական երգերով, դեպի երկինք ճերմակ աղավնիներ առաքելով, դիմավորեցին Նորին Սրբությանը:

Մայր տաճարում խմբված հավատացյալ բազմությունը իր որդիական սերն ու հավատարմությունն էր արտահայտում բարեմաղթանքներով ու բարիգալուստյան խոսքերով: Այս բոլորը արտահայտությունն էին հայրենակարոտ պանդուխտ հայ ժողովրդի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և նրա արժանընտիր գահակալի նկատմամբ տածած խոր սիրո և հարգանքի:

Տաճարում հավաքված հավատացյալների ներկայությամբ կատարվում է միջեկեղեցական արարողություն՝ հայերեն և անգլերեն լեզուներով, որին, բացի հայ հավատացյալներից, իրենց մասնակցությունն են բերում. Ղպտի Եկեղեցուց՝ Գաբրիել վարդապետ Աբդալ Սայիտը, ԱՄՆ-ի Ազգային Եկեղեցական Խորհրդի ընդհանուր քարտուղար հայր Արի Բրաուերը, Հույն Ուղղափառ Եկեղեցուց՝ Կլեման եպիսկոպոսը, Ռուս Պրավոսլավ Պատրիարքարանի ներկայացուցիչ հայր Կ. Չիչկովսկին, Եպիսկոպոսական Եկեղեցուց՝ հայր Ռոբերթ Ռայթը և հայր Վիլյամ Նորգրենը, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցուց՝ Հաբլրտ եպիսկոպոսը, Սիրիական Ուղղափառ Եկեղեցուց՝ Մար Աթանասիոս Սամուել արքեպիսկոպոսը, Անտիոքի Ուղղափառ Եկեղեցուց՝ Անտուան եպիսկոպոսը, Հայ Կաթոլիկ Եկեղեցուց՝ Ղևոնդ վարդապետ Խոշտեղյանը, Հայ Ավետարանական Եկեղեցուց՝ վերապատվելի Դանիել Ալպարյանը, Սիրիական Մալաբար Եկեղեցուց՝ Սայմոն վարդապետը, Ամերիկայի Օրթոդոքս Եկեղեցու պետ Թեոդորիոս միտրոպոլիտը, ռաբունապետ Արթուր Շնայդերը, Ժենի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդից՝ դոկտ. Կենադիոս Լիմուրիսը, Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցուց՝ Իսաակ արքեպիսկոպոսը, և Նյու Յորքի Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու կարդինալ Օ'Քոնորսի ներկայացուցիչ Մուր եպիսկոպոսը:

Հավարտ արարողության ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, հանուն թեմի ազգային-եկեղեցական իշխանությանց և բովանդակ հավատացյալ ժողովրդի, որդիական ակնածանքով և երախտագետ զգացումներով ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի ներկայությունը՝ բարի գալուստ մաղթելով նրան:

Այնուհետև, խորապես հուզված և զգացված սրտաբաց և ջերմ ընդունելությունից, Հայոց Հայրապետը տալիս է իր օրհնությունը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Այս պահում ես գոհություն կուտամ բարի Աստծուն, որ ինձ պարգևեց պատեհությունը, երրորդ անգամ ըլլալով, Սուրբ Էջմիածնեն այցի գալու ձեզի, սիրելիներ Մեր:

Ձեր սրբազան առաջնորդը, Տ. Թորգոմ արքեպիսկոպոս, բազում անգամներ գալով Սուրբ Էջմիածին, միշտ խոսած է ձեր համայնքի, ձեր թեմի եկեղեցական կյանքի մասին, բայց ես պարտականություն նկատեցի անձամբ ներկա գտնվիլ ձեր մեջ և կենդանի աչքով մոտեն տեսնել եկեղեցական և կրոնական կյանքը ու ձեր իրագործումները: Կխորհիմ, թե հետագա օրերուն բազում առիթներ պիտի ունենամ իմ այս բաղձանքը իրականացած տեսնելու:

Ինձ և Մայր Աթոռի համար կարևոր է հաստատել, թե մեր Եկեղեցվո կավակները, ուր ալ գտնվին աշխարհի վրա, կպահեն-կպահպանեն իրենց

նախահայրերու սուրբ հավատքը։ Մեր կրոնական հավատքը, մեր Մայր Եկեղեցին՝ մեր հոգին Տունն է և մեր հոգիներու պատկերը կներկայացնե այս աշխարհի վրա։ Եվ ես այս հաստատումները կկատարեմ ամուր համոզումով, որովհետև կգտնվիմ Միությյալ Նահանգներու մեջ, որ քրիստոսասեր երկիր մըն է և որ աշխարհի վրա Քրիստոսի լույսը տարածող փարոսներեն մեկը կհանդիսանա։ Այս պայմաններու մեջ է, որ, կկարծեմ, մեր Եկեղեցին, մեր Եկեղեցվո հավատացյալները առավել ևս ուժգնությամբ, առավել համոզվածությամբ և հպարտությամբ պետք է պահեն իրենց նախնյաց սուրբ հավատքը։ Մենք կբարոգենք սուրբ Ավետարանը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի, ուր ալ գտնվինք այս աշխարհի վրա, Հայաստանի մեջ և ամեն տեղ, ուր հայ հավատացյալներ հաստատված են։

Թող Աստված օրհնե Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և համայն մեր հավատացյալ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի։

Այս հանդիսավոր պահուն, որ ինձի բացառիկ հուզում կպատճառե, ես պարտք կզգամ իմ ողջույնը կրկին անգամ բերելու ձեզի ամենուդ ամենայն հայոց Սուրբ Էջմիածնեն։ Ես չափազանց զգացված եմ նաև, որ մեր մեջ կգտնվին քույր Եկեղեցիներու և այլ կրոնական հաստատություններու բարձրաստիճան հոգևորականներ։ Իմ եղբայրական ողջույնը և սերը կուղղեմ այս պահուն բոլորին։ Թող Աստված օրհնե մեր հոգևոր եղբայրությունը։

Շնորհք և սեր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսյանդ։ Ամեն։

Հայրապետական օրհնության խոսքի ավարտին երգվում է «Հայր մեր»-ը՝ հավատացյալ ժողովրդի ջերմեռանդ մասնակցությամբ։ Ապա հոգևորականների թափորը դուրս է գալիս տաճարից և առաջնորդվում դեպի «Հայկ և Ալիս Գավուքճյան» սրահ, ուր, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ընթրիք։

Ընթրիքի ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք են ասում Ամերիկայի Օրթոդոքս Եկեղեցու պետ Թեոդորիոս միտրոպոլիտը, Եպիսկոպոսական Եկեղեցուց՝ հայր Վիլյամ Նորգրեն, ռաբունապետ Արթուր Շնայդրը և Ազգային Եկեղեցական Խորհրդի ընդհանուր քարտուղար դոկտ. Արի Բրաուերը։

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԿ ԵՎ ԱԼԻՍ ԳԱՎՈՒՔՃՅԱՆ» ՍՐԱՀՈՒՄ

Սիրով կողջունեմ զձեզ և կփափաքիմ հատկապես շնորհակալություն հայտնել այն բարի խոսքերուն համար, որոնք ուղղվեցան իմ անձին, միտրոպոլիտ Թեոդորիոսի, հայր Վիլյամ Նորգրենի, ռաբունապետ Արթուր Շնայդրի և հայր Արի Բրաուերի կողմե։ Ինչպես գիտեք, իմ այցելության ծրագիրը այսօր կսկսի։ Ես երջանիկ եմ հաստատելու, թե իմ այս շրջանին բացումը կկատարվի էկումենիկ ուրախությամբ։ Իսկապես էկումենեն մեր դարաշրջանի ուրախություններեն մեկն է։ Էկումենեն մեր գործությունն է

և մեր ապագան: Ես ծանոթ եմ բազմաթիվ այն հարցերուն, որոնք էկումենիզմի հառաջընթացին որոշ դանդաղեցում կբերեն կամ որոշ հարցեր դժվարություններ կստեղծեն, հասնելու համար վերջնական նպատակին: Բայց այս բոլոր երևույթները ես կնկատեմ և՛ բնական, և՛ անցողական: Հիմնականը, իսկապես, այս եղբայրական սիրո մթնոլորտն է, որուն մեջ պետք է էկումենիզմը հետզհետե ծաղկի, աճի և հասնի իր աստվածահաճո լրումին:

Իմ նախորդներեն մին, այս դարու սկիզբին, Խրիմյան Հայրիկ կաթողիկոս, երբ էկումենիզմի գաղափարը չկար տակավին, հետևյալ ձևով կարտահայտեր քրիստոնեական Եկեղեցիներու միության գաղափարը: Ան կնմանեցներ քրիստոնեական Եկեղեցիները մեծ, հսկա ծաղկեփունջի մը, տարբեր ծաղիկներով, տարբեր գույներով, տարբեր բուրմունքներով, միահյուսված Քրիստոսի սիրո ժապավենով:

Հայաստանյայց Եկեղեցին, առաջին պահեն գրեթե, մասնակցություն բերած է էկումենիկ շարժումին, մասնակցելով իր ներկայացուցիչներով 1987-ին, Էդինբուրգի ժողովին: Այսօր, բնականաբար, արդեն էկումենիկ շարժումը իր լայն ճանապարհով առաջ կընթանա: Մեր փոքրիկ Եկեղեցին գործոն կերպով կմասնակցի այդ շարժումին, այդ հառաջընթացին: Իմ գահակալության 30 և ավելի տարիներուն, մեր հարաբերությունները չափազանց սիրալիր կերպով զարգացած են բոլոր քրիստոնեական Եկեղեցիներու հետ՝ թե՛ Օրթոդոքս-Պրավոսլավ Եկեղեցիներու, թե՛ Հռոմեական Կաթոլիկ, Անգլիկան, Բողոքական Եկեղեցիներու հետ և թե՛ մանավանդ մեր մասնակցությամբ Ծննի Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի գործունեությանը: Գրեթե ամեն տարի ընդունած ենք այցելությունները քույր Եկեղեցիներու պատրիարքներու և բարձրաստիճան հոգևորականներու: Կզգանք, որ նման էկումենիկ հանդիպումներով մեր Եկեղեցին աստեղ, Հայաստանի մեջ, ավելի կզորանա:

Սիրելի սեղանակիցներ, գիտեք, ես կուգամ երկրե մը, որ Սովետական Հանրապետություն է: Մեր Եկեղեցին անցյալի մեջ դժվարություններու շրջան ապրած է, սակայն ժամանակները շատոնց փոխված են և հետզհետե կփոխվին: Եվ ես ուրախ եմ հայտնելու, որ այս պայմաններու մեջ մեր գործունեության դաշտը հետզհետե կընդլայնի: Մենք այնտեղ քաղաքականությամբ չենք զբաղիր: Իմ և մեր պարտականությունն է տվյալ պայմաններու մեջ Քրիստոսի Ավետարանը քարոզել մեր ժողովրդի մեջ և Եկեղեցին զորացնել: Պետք է առանց կեղծ համեստության հայտնեմ ձեզի, որ, իրոք, Աստված ինձ օգնեց, որ կարողանամ կատարել եկեղեցաշեն իրագործումներ: Անշուշտ այս պահը հարմար չէ, որ ես երկար խոսիմ և այս երեսուն տարիներու իրագործումներու մասին արտահայտվիմ: Մեկ պարագա կուզեմ ընդգծել, որ իմ սրտին շատ մոտ է, և վստահ եմ, որ դուք ալ կգնահատեք: Խոսքը կվերաբերի Ս. Գրքի թարգմանության այսօրվա հայերեն լեզվով: Ինչպես գիտեք, մեր Եկեղեցին կօգտագործե մինչև այսօր գրաբար թարգմանությունը, որ կատարված է 5-րդ դարու սկիզբին հունարեն «Յոթանասնից» թարգմանության հիման վրա: Անցյալ դարուն բողոքական Եկեղեցիներ թարգմանություններ կատարած են հայերեն աշխարհաբարով, սակայն այդ թարգմանությունները այսօր կնկատվին անկատար լեզվական տեսակետով: Հետևաբար մեր առաջ խնդիր դրինք նոր թարգմանություն մը կատարելու այսօրվա գրական լեզվով, որպեսզի մեր ժողովուրդը հասկնա: Հանձնաժողով մը կազմած ենք տասը գիտնականներե,

Հայաստանի գրաբարագետ, լեզվագետ անձերե, որոնք չորս տարի է, որ կաշխատին այդ գործին վրա: Արդեն թարգմանությունը ամբողջությամբ վերջացած է և հույս ունինք, որ 1988 կամ 1989-ին կրնանք տպարան հանձնել: Այս վերջին քսանհինգ տարիներու ընթացքին Նոր Կտակարանը մենք երեք անգամ տպած ենք այնտեղ քսանական հազար տպաքանակով, որ սպառած է ամբող Հայաստանի մեջ: Ահավասիկ մեր գործունեության հաջողություններեն մեկը: Կուզեի նաև ձեզի վկայությունը բերել, որ այնտեղ՝ Սովետական Հայաստանի մեջ, Նոր Կտակարանները, զոր տպեցինք, կայծակի արագությամբ սպառեցան, և ժողովուրդը անհամբեր կսպասե, որ ամբողջ Ս. Գիրքը ունենա:

Թող Աստված օրհնե մեր եղբայրությունը և մեր սուրբ առաքելությունը: Ամեն:

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի հրավերով, Լոնդոնից Նյու Յորք է ժամանում Լոնդոնի Ս. Սարգիս եկեղեցու խնամակալության նախագահ և Մայր Աթոռի բարերար Ջորջ Քյուրքճյանը և մաս կազմում Նորին Սրբության շքախմբին:

ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 21-ին, չորեքշաբթի օրը, կեսօրից առաջ, ամերիկահայ և օտար մամուլի ներկայացուցիչներ հրավիրված էին Նյու Յորքի ազգային առաջնորդարան՝ հարցազրույց ունենալու Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա Հայրապետի հետ:

Մամուլի ասուլիսի բացումը կատարում և հարցազրույցը վարում է տիար Պերի Զորթյանը:

Մամուլի ասուլիսի ընթացքում հարց ու պատասխանի թարգմանությունը կատարում է արժանապատիվ Տ. Գրիգոր քահանա Մագսուտյանը:

Հայ թերթերից ներկա էին «Պայքար»-ի, «Արմինիոն Միրոր»-ի, «Հայրենիք»-ի, «Արմինիոն Ռիփորթոր»-ի, «Ամերիկայի ձայն»-ի, Բոստոնի հայկական պատկերասփյուռի խմբագիրները կամ ներկայացուցիչները: Ներկա էին նաև օտար մամուլի մի շարք ներկայացուցիչներ, որոնցից՝ «U. S. Today»-ի թղթակիցը:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ-ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հոկտեմբերի 21-ին, չորեքշաբթի օրը, հետմիջօրեին, ժամը 13-ին, Նյու Յորք քաղաքի քաղաքապետ Էդուարդ Քոչը, ի պատիվ Հայոց Հայրապետի, ճաշկերույթ է տալիս քաղաքապետարանի «Կրեյս Մենշընս»-ի մեջ: Այս առթիվ հրավիրված էին շուրջ ութսուն հայ և օտար պաշտոնական անձինք, որոնց կարգին՝ ամերիկացի երևելի անձնավորություններ: Դրանց թվում էր նաև 1915-ին Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպանի թոռը՝ Թոմ Մորկընթաուն:

Նույն օրը, կեսօրին, քաղաքապետ Էդուարդ Քոչը քաղաքավարական այցելություն էր տվել Վեհափառ Հայրապետին առաջնորդարանում:

Ճաշկերույթի սկզբում հրավիրյալները հերթով մոտենում են Հայոց Հայրապետին, ողջունում նրան և ստանում նրա օրհնությունը: Այնուհետև Հայոց Հայրապետը մեծարգո քաղաքապետի հրավերով ուղևորվում է սեղանատուն և օրհնում սեղանը:

Ընդունելության ընթացքում Նորին Գերազանցություն Էդուարդ Քոչը բարիգալստյան խոսքով հանդես է գալիս և ողջունում Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայությունը հանուն համայն նյույորքաբնակ ժողովրդի՝ նշելով, որ Նյու Յորք քաղաքի կողմից Վեհափառ Հայրապետին ուղղված սույն հրավերը արտահայտությունն է այն խոր զգացումի և բարի կամեցողության, որ Նյու Յորքը տածում է հանդեպ Ամենայն Հայոց կաթողիկոսի: Իր խոսքի մեջ հարգարժան քաղաքագլուխը հանձին Վեհափառ կաթողիկոսի մարմնավորված է տեսնում «Պատկերը հոգեկան շնորհքի»: Այնուհետև դրվատանքի խոսք է ասում հայ ժողովրդի հասցեին, ցավով մատնանշելով, որ թեև հայ ժողովուրդը ենթարկվել էր «Թուրքերի կողմից գործադրված ցեղասպանությանը», սակայն հարատևորեն պահում է «իր ինքնությունը, հավատքը, ավանդությունը, մշակույթը և հոգեկան եզակիությունը աշխարհում», ինչպես նաև «կամքը՝ պահանջելու և փրկելու իր սրբազան հողերը»: Նյու Յորքի քաղաքապետը գնահատանքի խոսք է ուղղում նաև թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանին:

Այս առթիվ, որպես գնահատանքի բարձրագույն արտահայտություն և ի հիշատակ Հայոց Հայրապետի Նյու Յորք այցելության, Նյու Յորքի քա-



Վեհափառ Հայրապետը Նյու Յորքի քաղաքապետ տիար Էդուարդ Գոչի հետ

ղաքագլուխը Նորին Սրբությանը նվիրում է բյուրեղապակյա մի հուշանվեր՝ Նյու Յորքի խորհրդանշանով շեշտելով, որ նման հուշանվեր ցարդ տրվել է և տրվում է միայն պետությունների գլխավորներին: Հուշանվերի վրա արձանագրված է. «Նվեր Նորին Սրբությունն Վազգեն Առաջինին, Նայրագույն Պատրիարքին և կաթողիկոսին Ամենայն Հայոց, ի պատիվ Նյու Յորք քաղաք նրա այցելության»:

Ապա խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և ասում.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Իբրև Հայաստանյայց Եկեղեցվո առաջին սպասավորը, մեծ պատիվը ունիմ այսօր, այս պատմական շքեղ կամարներուն ներքև հյուրը ըլլալու այս մեծ և հզոր քաղաքին և քաղաքապետին, մեծահարգ տիար Քոչ...չանի:

Երախտապարտ եմ մեծահարգ քաղաքագլուխին, և հուզումով Աստուծո օրհնությունը կբերեմ իրեն, այս շքեղ շենքին և Նյու Յորքին, որ ոչ միայն մեծագույն քաղաքն է Միացյալ Նահանգներու, այլ նաև մեծագույն և հզորագույն քաղաքներեն մեկը աշխարհի: Մեծ, կեդրոն քաղաք՝ նախ իր տնտեսական դերով, բացառիկ իբրև կեդրոն գիտության, արդյունաբերության և մշակույթի, նաև՝ արվեստներու: Այնպես որ մեր դարաշրջանի աշխարհի մեծագույն կեդրոններեն մեկն է:

Եվ այս մեծ կեդրոնին քաղաքապետ ըլլալ ոչ միայն մեծ պատիվ մըն է իրեն համար, այլ նաև՝ մեծ պատասխանատվություն: Տարիներե ի վեր ինչքան լսած եմ ձեզմե և ուրիշներե, քաղաքագլուխը իր պատասխանատվությունները ի գործ կդնե փայլուն կարողություններով, տաղանդով և աշխատանքով: Եվ իր բազմապիսի գործունեության ճանապարհին չի մոռնար նաև հայ եկեղեցական համայնքը Նյու Յորքի:

Ես գիտեմ. ոչ միայն այս այցելության առիթով, այլ նաև ուրիշ ատեններ, երբ Թորգոմ սրբազան ինձի կխոսեր Ս. Էջմիածնի մեջ, թե ինչպես քաղաքապետ Քոչին կողմե մեծ քաջալերանք կվայելե ինքը՝ Թորգոմ արքեպիսկոպոս անձնապես ու Հայ Եկեղեցին զանազան ձեռնարկներու առթիվ, ըլլա Ապրիլ 24-ի, Վարդանանցի թե Մեկ Աշխարհ փառատոնի առթիվ:

Հարգելի քաղաքագլուխ, ես այս առթիվ Ձեզի կդիմեմ խնդրանքով, որ շարունակեք միշտ Ձեր հոգածության տակ պահել Հայկական Եկեղեցին և համայնքը: Թույլ տվեք ավելցնել նաև, որ մեր Եկեղեցվո զավակները արժանի են այդ քաջալերանքին:

Ես կհիշեմ պատմությենեն, որ Բենճամին Ֆրանքլինը, երբ առաջին անգամ նոր կազմված Միացյալ Նահանգներու դեսպանն էր Ֆրանսայի մեջ, Ամերիկա գաղթողներու մասին կըսեր հետևյալը. «Մենք չենք հարցներ, թե ի՞նչ կրոնքի կպատկանին, չենք հարցներ, թե ի՞նչ տիտղոսներ ունին, չենք հարցներ, թե ինչքան դրամ ունին, բայց մենք մեկ բան կհարցնենք. ինչ գործ, ինչ աշխատանք կրնաք կատարել»: Այսպիսով, ժամանակի ընթացքին, հայ ժողովուրդի զավակները գաղթեցին Ամերիկա: Հատկապես անցյալ դարու կեսերեն մինչև վերջին շրջանին: Եվ անոնցմե շատեր եկան առանց դրամի, առանց ուսումի, և գործի մարդիկ եղան: Իրենց պարտականությունը ազնվությամբ կատարեցին այս մեծ երկրին մեջ, իրենց

տնտեսական, մշակութային նպաստը բերելով։ Մարդասեր Ամերիկան շատ անգամ անցյալի մեջ օգնության հասած է հայ ժողովուրդին, օսմանյան կառավարության հալածանքներու շրջանին։

Էջմիածնի արխիվներուն մեջ փաստաթուղթ մը գտա ուղղված Ն. ու Հորքեն նոյեմբեր 8, 1915 թվականին, երբ ցեղասպանությունը սկսած էր արդեն 3—4 ամիսե ի վեր (Տեր Գրիգոր Մագուտյան Լարդաց անգ. երեն գրված մի նամակ, որ ուղղված էր Ամենայն Հայոց Գեորգ Ե Կաթողիկոսին, և որտեղ ասվում էր, որ Ամերիկայի Հայ Համակիրները 100.000 տոլար հանգանակել և ուղարկել են Թուրքիա, դեսպան Մորկընթաուի, առ ի օգնություն հայ վերապրողներին։ Գեորգ Ե Վեհափառից խնդրվում էր, իրենց տեղյակ պահել Կովկասի հայ գաղթականների կարիքների մասին)։ Ստորագրված էր Հայ Համակիրների Հանձնախումբի ատենադպիր Արշակ Մահտեսյանի կողմից։

Թող Աստված օրհնե Ամերիկան։

Անավասիկ թե ինչպիսի զգացումներով տոգորված է հայ ժողովուրդը այդ օրերեն սկսյալ, մինչև մեր օրերը, գաղթել դեպի Միացյալ Նահանգները։

Հիշելով պատմական անցյալի այս տխուր դեպքերը, Մենք Մեր երջանկությունը կհայտնենք, սակայն, որ բարեբախտաբար հայությունը այն վիճակի մեջ չէ այսօր, ինչ որ կգտնվեր 1915—16 շրջանին։ Ե՛վ Սովետական Հայաստանի մեջ, և՛ արտասահմանի ամբողջ տարածքի վրա այսօր, հայ ժողովուրդը համախմբված իր եկեղեցիներուն շուրջ կապրի բարգավաճ կյանք մը, օգտակար ըլլալով իր բնակած հայրենիքին։

Կրկին անգամ շնորհակալություն կհայտնեմ տիսր քաղաքապետին և կաղոթեմ, որ այս մեծ երկիրը, Միացյալ Նահանգները, շարունակե իր առաքելությունը մերօրյա աշխարհին մեջ, և իր վճռական նպաստը բերե ապահովելու համար ապագայի խաղաղ, երջանիկ կյանք համայն աշխարհի ժողովուրդներուն համար։ Թող Աստված լսե մեր աղոթքը, և իր շնորհներով և ողորմությամբ զորավիգ ելլա մեր բոլոր բարի և խաղաղասեր գործերուն։

Այս առիթով կուզեմ տալ փոքրիկ նվեր մը։ Նոր գծված նվեր մըն է Հայաստանի երիտասարդ տաղանդավոր նկարիչներե մեկուն՝ Ա. պեր Ցարայանի կողմե։ Ս. Գրքեն տեսարան մըն է. պատկերը այն պահն է, երբ Մովսես կգտնվեր Այրվող Մորենիին առջև. մորենին բոցերու մեջ էր, սակայն չէր այրվեր։ Եվ այդ բոցերուն մեջեն Մովսես լսեց Աստուծո խոսքը։ Եվ Մովսեսի Աստվածը, մեր ալ Աստվածն է, անշուշտ, Հին Կտակարանը և Նոր Կտակարանը մեկ ամբողջություն կկազմեն։ Հայ Եկեղեցվո ավանդության և հոգեբանության համար, Հին Կտակարանը գրեթե նույնքան արժեք ունի, որքան Նորը։ Թույլ տվեք, որ այս փոքրիկ հիշատակը Ձեզի ներկայացնեմ։

Քաղաքապետը ողջագուրումով և շնորհակալությամբ ստանում է նկարը։ Քաղաքապետարանի սեղանատանը ստեղծված սույն ջերմ և խանդավառ մթնոլորտի պսակավորումը հանդիսացավ նյուորքաբնակ տաղանդավոր ջութակահարուհի Այտա Գավաֆյանի առինքնող նվագը Ռավելի ստեղծագործությունից։

Այս առթիվ ընթերցվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ի 11 նունվար 1916 թվակիր կոնդակը, որտեղ երանաշնորհ Հայրապետը անդ-

դադառնում է հայ ժողովրդի տառապանքներին ու չքավորությանը, իրրև հետևանք զանազանային կոտորածների, և գոնում ակտիվում հայտնում ջարդերից վերապրած հայերին օգնելու նպատակով Միացյալ Նահանգներում կազմակերպված հանգանակության համար:

ԳԷՈՐԳ ՄԱՌԱՑ ՅՈՒ ՔՈՒ

Գերապատիւ Տ. Արսէն Ծ. Վարդապետի վեհանտյ Առաջնորդի թեմին
2. Ամերիկայի ողջունիւ Հայրապետական և օրհնութեամբ խնդալ ի Տէր:

Ի գրութեանց Գերապատուութեանդ ողջունեալ առ Մեզ ի զանազան ժամանակս, որպէս և յայլ պաշտօնական հաղորդութեանց իրազեկ եղամ, եթէ որպիսի սրտագեղ իրամտութեամբ գան գործեն Ամերիկայի Քրիստոնեայ կրօնակից եղբարք Մեր ի Քս. Յս. ի Տէր Մեր, ըստ ներկայ հանգամանաց գալ հասանել յօգնութիւն Ծովացեալ Թշուառութեանց զաւակաց մերոց սիրելեաց, որ շուրջ զՄայր Աթոռովս կան փարեալ, որպէս զվերջին խարսխին ապափնի, յուսոյ և փրկութեան:

Եղբայրակիցք Մեր ի Քս. որպէս գլուխ և պաշտօնեայ եկեղեցեաց, նոյնպէս և հաւատացեալք առ հասարակ Քրիստոսաւանդ վարդապետութեանն Սիրոյ՝ Որ յատկական աղօթից սահմանեցին՝ Հայցել ի Տուողէն ամենայն բարեաց գրալ ի ժողովուրդ իմ և բազուկ փրկութեան կառկառել ապրեցուցանել զգաւակունս իմ հոգևոր ի սիրտ և ի հոգի կամք զգացեալ վասն աղօթիցդ հանրական, յորում զքրիստոնէականին տեսանեմք նշան համակրութեան որպէս և զմարդոյն ներքինցն առհաւատչեայ սիրոյ և տածողի փոքու եղբարց իւրեանց:

Հաւատամք եթէ չերմագին աղօթս վերառաքեալս առ Աթոռ Բարձրելոյն ի հազարաւոր եկեղեցիս, որպէս բուրումն անուշահոտութեան տարածեալի առ Գահոյիս Կենդանւոյն և ձայն հեծութեան, և հառաչանաց ազգիս ընդ պատարանաց ձայնի ի Քս. միացեալ եղբարցդ որ առ Ձեզ հանոյացի Տեառն և հովանի նորա տարածեսցի ի կանգնումն անկելոց փոքու ազգաց, ընդ որս և մերոյս նահատակի և մարտիրոսի:

Առանձին իմն նշան սիրոյ տեսանեմք և ի յորոշումն հանրական հանգանակութեան ի ժամ յատկական աղօթից առ ի փրկել զապրեալս ի ձեռաց որդւոյն անօրինին, տանել խնամ սրբոց և այրեաց, ծերոց և անկելոց, դեռատաց և անօրից, զի մարթասցուք բերեալ ոգի կենդանութեան փչել ի նոսա, ժողովել զցրուեալ հօտ մեր ի մի, կցել զցամաքեալ ոսկերս ընդ միմեանս և կանգնել նոր աղգ և նոր ժողովուրդ:

Զչափ կարօտութեան որոշել տառապեալ որդոցս մարթասցուք արդեօք Բանիւ, ո՞ նա զսահման ծովու և կամ ո՞ չափեաց զերկիր բլաւ զե և Մեք մարթասցուք դնել չափ և կշիռ և սահման թշուառութեանց հասելոց ի վերայ մեր և կամ ի կշիռ ածել զորքանութիւնս պիտոյից և կարօտութեան: Արդի՞ իմ ցրուեալ և վտարանդի է՞ որ յայսկոյս սահմանաց առ Մեօք, է՞ որ ի խորշակաապ վայրս Սիրիոյ և Միջագետաց, որք ակնկալու կան հանապազ օգնականութեան և զգթառատ հոգածութեան Մերոյ: Սահման կարօտութեանց նոցա անքաւ, այլ միջոցք մեր անքաւարար հասանել յօգնականութեան:

Վասն եղբայրսիրութեան եղբարց մերոց օտար ցեղից, որ ի Միացեալ Նահանգն Ամերիկայի, չէ՞ ինչ պիտոյ գրել առ Ձեզ, զի Դուք ինքնին իսկ քաջ

զիտէմ զայդ՝ զի ասատուածուսոյցմ են առ ի զտարս սիրելոյ և հոգ խնամարկութեան բառնալոյ: Այլ յորդորեմմ զՁեզ առաւել ևս հոգ անել զի եղբայրսիրութեան նոցա առաւել ևս առատասցի յեղբայրս նոցա և յորդիս մեր, որմ ի Միջագետս և յասորիս տառապին և որ առ Մեզ գտանին, զի ցաւմ և նեղութիւնմ որդւոցս անհնարին են ի տանել և կարօտութեան նոցա ոչ ոմ է որ կարէ լցուցանել զչափ: Յորդոր կարդամմ ե Մեմ եղբարց մերոց ի Քս. Յս., առաւել ևս առաւելով և առատանալ տրամ իւրեանց, զի զոր ինչ առնիցեն սրտի մտամ պարծեսցին իբրև Տեառն և ոչ մարդկան բղխեալ ի սուրբ սրտէ Քրիստոսասէր եղբայրակցութեան և յոչ այլ աղբերէ ինչ: Առ ի հաստատել զպակասութիւն պիտոյիցս, առ Զեզ իսկ մատուցանելով զտուրս իւրեանց և դում ջանգիր լիչիմ ընդ փոյթ յղել առ Մեզ, որպէս յառաջագոյն պատուիրեցամ:

Այլ մեմ բէև որբ մնացամ առ ժամանակ մի, այլ յուսամմ ի Փրկիչն Մեր, երէ ի ծագել լուսոյ փրկութեան ծագեսցի և առ որդիս իմ զուր մարդասիրութեան իւրոյ ի կանգնումն գլուխելոց ի նոր կեանս:

Ողջ լեռմ և զօրացեալ ի Տէր և օրհնեալ ի Մէնջ այնմիկ, որմ փութան տեսանել զերկոս կարօտելոյն: Ամէն:

Ի 11 յունուարի 1918 ամի,
№ 49

Ընդունելությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, առաջնորդարանի սրահում տեղի է ունենում հանդիպում Վեհափառ Հայրապետի և ԱՄՆ-ի արևելյան թեմի հոգևորականաց դասի միջև: Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքն է ուղղում Հայ Եկեղեցու սպասավորներին:

Հոկտեմբերի 22-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, «Ուալդորֆ Աստորիա» հյուրանոցի իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերտինգալի և տիար Ռոբերտ Կյուլպենկյանի՝ իրենց տիկնանց հետ: Հանդիպումն անցնում է ջերմ և սիրալիր մթնոլորտում:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ծամը 12-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Միավորված Ազգերի Կազմակերպություն: Շքամուտքի առջև Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում Պենոն Սևանը, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի օգնական-քարտուղարը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱԿ-ՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՅ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԵՏ

ՄԱԿ-ի սրահներից մեկում Հայոց Հայրապետը հանդիպում է ունենում զանազան գրասենյակներում պաշտոն ստանձնած հայորդիների հետ:

Հայոց Հայրապետի և հայ պաշտոնյաների միջև տեղի է ունենում ջերմ զրույց զանազան հարցերի շուրջ:

ՄԱԿ-ի հայ պաշտոնեության որդիական հարգանքի, սիրո և երախտագետ զգացմունքների և մտորումների թարգմանն է հանդիսանում Պենոն Սևանը իր հետևյալ ողերձով.

«Վեհափառ Տեր,

Ձեր այս սրբազան այցելության առիթով բախտավորություն ունիմ Ձեզի բարի գալուստ մաղթելու: Մեջ բերում մը ընեմ Վահրամ Մավյանե. «Գրեթե կես ժամ վերջ, երբ երաժշտական հայտագիրն ալ վերջ տվավ, նախքան կոնակս դարձնելը, ռադիոն երկու ափերուս մեջ բարձրացուցի՝ աչքերուս դիմաց, ու «Հոգիդ ուտեմ, Հայաստան» ըսի հայերենով՝ բարձրաձայն. «Ինչ լավ է, որ դուն կաս, գոնե կփնտրես, կգտնես մեզ՝ աստանդական կորսված զավակներդ, ուր ալ ըլլան անոնք, աշխարհագրականորեն որքան ալ հեռու ըլլան քեզմե, կգտնես և իմաստ կուտաս անոնց կյան-

ռին»: Այս կկարդամ, Սուրբ Հայր, քանի որ ասիկա գրված է իմ մասին, երբ Ինտոնեզիա կգտնվեի: Երեք-չորս տարի հոն մնացած էի, անտառներու մեջ, նախնի մարդոց հետ, որոնք տակավին քարե կացին կգործածեն, և երեք տարի ոչ մեկ հայերեն բառ լսած էի, բացի այն պահերեն, երբ կաղոթես և ինքզինքիդ հետ կխոսիս՝ ներհայեցողությամբ: Բախտով, այդ անգամ երբ ռադիոն բացի, Հայաստանեն լսեցի Հայաստանի ձայնը, որ կըսեր. «Հաղորդում ենք լուրեր արտասահմանի հայերի համար»: Եվ Վանրամին դասած էի, և գրած էր. «Հոգիդ ուտեմ, Հայաստան» պատմվածքը: Նույն զգացումն է հիմա ալ՝ փառք Հայաստանին և Հայաստանյայց Եկեղեցվո, քանի որ ունինք Վեհափառ մը, որ սիրո զգացումներ կտածե իր զավակներուն հանդեպ և իբրև առաջին սպասավոր Հայ Եկեղեցիին, Լուսավորչի կանթեղը կբերե մեզի՝ բոլորիս բաշխելու: Միայն այդ ձևով է, որ եւ ալ ըլլանք, կնայինք դեպի Ս. Էջմիածին, Արարատի ստորոտը, Երեվանի մոտ: Եվ հաճույք է մեզի համար տեսնել, որ անցյալ երեսուն տարիներու ընթացքին՝ Ձերդ Սրբության գահակալության ընթացքին, Հայաստանյայց Եկեղեցին տեսած է վերածնունդ, Մայր Հայաստանի վերածնունդին զուգահեռ: Հակառակ անոր, որ հոս ենք և տարբեր երկիրներու հպատակություններ ունինք, ինչ ալ ըլլա, հայ ենք ամեն ինչե առաջ: Հայ ենք, որովհետև Թեքեյանը ըսավ. «Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգվույս»: Մեզի համար հուզիչ և լուրահատուկ իմաստ մը ունի Ձեր այցելությունը, որովհետև միայն այդ ձևով է, որ սիյուռքահայությունը պիտի մնա հայ, պիտի հարատևե իբրև հայ, միայն Էջմիածնին նայելով է, որ պիտի կարենանք մեզ ամրապնդել հոգեպես:

Վեհափառ Տեր, հանուն աշխատակիցներուս, Ձեզի կմաղթեմ առողջություն և երկար կյանք: Շնորհակալություն»:

Ապա Վեհափառ Հայրապետը, խանդավառված նման համաշխարհային հեղինակավոր կազմակերպության մեջ աշխատող հայորդիների ներկայությունից, տալիս է նրանց իր հայրական պատգամը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԱԿ-Ի ՀԱՅ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Դուք սքանչելի խոսեցաք և խորապես հուզեցիք իմ սիրտը: Երջանիկ եմ: Ձեի սպասեր, որ Միացյալ Ազգերու Կազմակերպության այս հարկին տակ հանդիպիմ այսքան բազմաթիվ հայ ժողովուրդի զավակներու, որոնք կծառայեն այս միջազգային մեծ հաստատության: Սիրով և հուզումով լսեցի նաև ձեր հայրենասիրական ջերմ խոսքերը:

Երբ ճամփա կելլեի Սուրբ Էջմիածնեն, շատեր կային հավաքված ինձ բարի ճանապարհ մաղթող: Պահ մը, երբ դեպի Մայր տաճար կուղղվեի աղոթելու, ճանապարհին պառավ մայրիկ մը՝ 91 տարեկան, որ Հայաստան կապրի, նոր եկած Ամերիկայեն, բնիկ Սեբաստացի, որ դրացի եղած է Դանիել Վարուժանի ընտանիքին, տեսած է ամբողջ տառապանքը տեղահանության և ապրած 1915-ի ցեղասպանության աճավոր օրերը, երեսուներկու անձերե բաղկացած գերդաստանե մը միայն ինք և երկու հոգի փրկված,—ահա այդ ձերունի կինը դողդողալով ինձի մոտեցավ և ըսավ. «Վեհափառ, ուր ալ երթաս, Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղը գլխուդ վրա

ՐՐԱ»: Այսպիսի մաղթանք ես մինչև այդ լսած չէի: Եվ ես երջանիկ եմ, որ դուք այստեղ հավաքված, ձեր հոգիի աչքերով կտեսնեք իմ անձի վրա Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղի լույսը աներևույթ կերպով, այն լույսը, որ ճառագայթեց սկսավ Հայաստան աշխարհի վրա մոտ հազար յոթ հարյուր տարիներ առաջ, Ս. Գրիգոր Լուսավորչի օրոք:

Մենք հարազատ, վավերական քրիստոնյա ժողովուրդ ենք, տառապած ենք շատ, ցրված ենք աշխարհով մեկ, նահատակված ենք շատ անգամներ, նահատակված ենք մանավանդ 1915—16-ի սև տարիներուն, բայց հրաշքով մեր ժողովուրդի մեկ մասը փրկված է, և հայությունը այսօր խաղաղ և ապահով կապրի իր Մայր Հայրենիքի պատմական հողամասի մեկ մասին վրա: Այդ հազար և յոթ հարյուր տարիներու ընթացքին միշտ հայ ազգը հավատարիմ մնացած է Ս. Գրիգոր Լուսավորչի լույսին, Ս. Էջմիածնի լույսին: Եվ այսօր ալ Հայաստանի մեջ, Սովետական Հայաստանի մեջ, հետզհետե այդ լույսը ավելի ուժեղ կճառագայթե: Ինչ որ կըսեմ՝ ճըշմարիտ է: Դժվար օրեր այնտեղ եղան անցյալի մեջ, բայց ժամանակները փոխվեցան և հետզհետե կփոխվին, և մենք կհավատանք, որ մեր ժողովուրդը և մեր Եկեղեցին իրենց բոլոր արդար երազանքներու իրականացումը պիտի տեսնեն: Մենք կհավատանք արդարության և այդ արդարության զավակներն ենք:

Այս հաստատությունը՝ Միացյալ Ազգերու Կազմակերպությունը, որ միջազգային կազմակերպություն մըն է, իր հիմնադիրներու ուխտով ստեղծված է՝ աշխարհի վրա իրականացնելու համար արդարություն բոլոր մեծ և մանավանդ փոքր ազգերու համար և պահպանելու խաղաղությունը համայն աշխարհի: Այս կազմակերպության ուխտը հայ ժողովուրդի սրտին ջերմորեն կխոսի, և մենք կսպասենք այն օրվան, որ հայ ժողովուրդի համար ամբողջական արդարություն կատարվի:

Դուք՝ այս հաստատության մեջ աշխատողներդ, ամեն մեկդ, կմաղթեմ, որ այս հոգիով աշխատիք, ձեր պարտականությունները կատարեք, չմոռնաք, որ հայ ազգին զավակներն եք, զավակներն եք Սուրբ Գրիգոր Լուսավորչի լույսին: Ձեզի կմաղթեմ հաջողություններ, և ձեր ընտանեկան հարկի տակ երջանկություն: Բոլորիդ Աստուծո օրհնությունը Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնեն. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱԿ-ՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՎԻՆ

Ժամը 18-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ՝ նախագահությամբ ՄԱԿ-ի մոտ Կիպրոսի ներկայացուցիչ Կոնստանտին Մուշութասի և ներկայությամբ 54 երկրների դեսպանների և ներկայացուցիչների:

Սեղանը օրհնում է Հայոց Հայրապետը, և ապա ջերմ մթնոլորտում տեղի է ունենում սրտագին զրույց սեղանակիցների միջև:

Կիպրոսի ներկայացուցիչ Կոնստանտին Մուշութասը, հանուն բոլոր ներկա դեսպանների, բաժակ է բարձրացնում Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արևշատության համար և ասում,

«Իբրև Կիպրոսի մնայուն ներկայացուցիչ, մասնավոր սոսանձնաշնորհում և պատիվ եմ համարում հանուն բոլոր ներկաների բարի գալուստ մաղթելու Նորին Սրբություն Վազգեն Առաջինին, Գերագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, հոգևոր առաջնորդը բոլոր հայերի, հինավուրց, տաղանդավոր և ստեղծագործող մի ժողովրդի, որ սփռվեց աշխարհի չորս կողմերը, և որ դարձաւ հավատարիմ, ժրաջան և աշխատունակ քաղաքացիները իրենց բոլոր երկրին: Այն իրողությունը, թե այս ճաշկերույթին ներկա են գտնվում այնքան երևելի դեսպաններ և պետությանց ներկայացուցիչներ, ինչպես նաև ՄԱԿ-ի քարտուղարությունը, փաստում է իմ հաստատումի ճշմարտությունը:

Ձերդ Սրբություն, Միացյալ Նահանգներ Ձեր այցելության բնաբանն է «Հայաստանը՝ Ամերիկայի մեջ»: Այսուհանդերձ, Ձերդ Սրբությունը համաձայն պիտի գտնվի հայ ժողովրդի զավակ և մեծ գրող Վ. Մաղյանի հետ, որ գրեց. «Ամեն տեղ հայ կա», և կուզեի ավելացնել՝ «Ամեն տեղ հայեր կան՝ ներառյալ Միավորված Ազգերի Կազմակերպության մեջ»:

Անցյալ 17 դարերում հայերը իրենց հայացքը ուղղեցին դեպի Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղը, իրենց պատմական անցյալը և Ս. Էջմիածինը, որ գտնվում է վեհափառ Արարատ լեռան շուքի տակ, որպես ջահ՝ իրենց հոգեկան վերածնունդին, ինչպես նաև իրենց ավանդությունների առաջապահը: Վերջապես, ինչպես հայ ազգի ուրիշ մի մեծ բանաստեղծ զավակն է ասել. «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգույս»:

Ձերդ Սրբություն, իբրև արժանավոր հաջորդը Ս. Գրիգոր Լուսավորչի, Ձեր հոգևոր առաջնորդությունը երեսուն տարիների ընթացքում հատկանշվեց Հայ Եկեղեցու վերածննդով, զուգահեռաբար՝ Սովետական Հայաստանի վերածննդի, որ վերածնվեց իր իսկ մոխիրից՝ դարերի ավարարումից հետո, որտեղ այժմ վայելում եք պատիվն ու հարգանքը ձեր կառավարության և ժողովրդի:

Եզրակացնելու համար ուզում եմ պատմության համար արձանագրել, թե որքա՞ն բախտավոր և երանելի է կառավարությունս և ժողովուրդս՝ Կիպրոսի մեջ հայեր ունենալու համար, որոնք մեր ժողովրդի մեկ թանկագին և անբաժանելի մասն են՝ իրենք իրենց երևելի դարձնելով բոլոր բնագավառների մեջ՝ տնտեսական, ընկերային, քաղաքական, գիտական և մշակութային:

Մեծահարգ հյուրեր, ձեզ հրավիրում եմ միանալու ինձ, որ մեր բաժակը բարձրացնենք առողջության համար Նորին Սրբության, Վազգեն Առաջինի, Գերագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Նորին Սրբությունը, ողջունելով ներկայությունը հարգարժան դեսպանների, իր ջերմ շնորհակալությունն է հայտնում իրեն ի պատիվ կազմակերպված ընդունելության ներկա եղող բարձրաստիճան հյուրերին և իր ողջույնի պատասխան խոսքի մեջ ասում է.

Վեհափառ Հայրապետը խոսքը է ուղղում ՄԱԿ-ում զանազան պետությունների մերկայացուցիչներին՝ Նորին Սրբության դիտարկելով ծաշվեղության ժամանակ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱԿ-ՈՒՄ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒԹՅԱՆ

Pax vobiscum,

Մեծահարգ Տիարք և Տիկնայք, ներկայացուցիչներ աշխարհի ազգությունների,

Գոհունակություն Ամենակալին, որ պատեհությունը ունեմ հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և համայն հայ հավատացյալ ժողովրդի, ողջունելու ձեզ, և Միացյալ Ազգերի Կազմակերպությանը բերելու Աստուծո օրհնությունը սուրբգրական Արարատ լեռան ստորոտից, հայ քրիստոնեության կենտրոն Սուրբ Էջմիածնից, որ տասնյոթ դարերի բարձունքից այսօր էլ Քրիստոսի լույսն է բաշխում իր բոլոր զավակներին, որոնք բնակվում են Սովետական Հայաստանում և Սփյուռքում:

Ինձ համար իբրև Հայ Եկեղեցու զավակ և իբրև նրա առաջին սպասավոր, ինձ ընծայված այս պահը մի մեծ պատիվ եմ համարում, այլև մի պատմական պատեհություն՝ իմ հարգանքն ու գնահատանքը բերելու Միացյալ Ազգերի Կազմակերպության հիմնադիրներին, որոնք վերջին անհեղի պատերազմի ավարտին, Սան Ֆրանցիսկոյում 1945 թվի հունիսի 26-ին, պատմության մեծագույն ուխտը կնքեցին, հայտարարելով, թե՝ «Ուխտում ենք ցուցաբերել հանդուրժողություն, ապրել խաղաղությամբ մեկս մյուսի հետ բարիդրացիական ոգով, միավորել մեր ուժերը, պահպանելու համար միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը»:

Ահա իրավական և բարոյական անժամանցելի այն սկզբունքները, որով պարտավորված են առաջնորդվելու մեր օրերի պետությանց պատասխանատու բոլոր ղեկավարները:

Ես հավատում եմ այդ ուխտին, ոչ միայն իբրև մի քաղաքական փաստաթղթի, այլ մանավանդ իբրև մի մարդասիրական հանդիսավոր հայտարարության, որ խղճի ձայնն է և դարավոր երազանքը աշխարհի բոլոր ազգությունների լայն զանգվածների:

Ես հավատում եմ նաև, որ Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամ բոլոր պետությունները և նրանց ղեկավարները իրենց միջազգային գործունեության ճանապարհին, մեր օրերին ձգտում են սրբությամբ պահպանել և կենսագործել Սան Ֆրանցիսկոյի ուխտի խաղաղության ոգին՝ ամեն գնով, ամեն բանից առաջ և ամեն բանից վեր:

«Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին», պատգամում է մեր Տերը Հիսուս Քրիստոս:

Հետևաբար, երանի ձեզ, պարոնայք, և երանի ձեր պետությունների ղեկավարներին, որ կոչված եք կերտելու մի նոր աշխարհ առանց սրի և հրի, առանց ատոմական քաոսի:

Մանավանդ միջազգային պատկառելի այս հարկի տակ իմաստ և այժմեություն է ստանում մեր օրերի աշխարհի պետությանց այս առաքելությունը և պարտավորությունը:

«Խաղաղությունը աստվածային կտակն է, որը կոչված են իրագործել, երկնքի տակ ապրող բոլոր ազգությունները, լինեն նրանք քրիստոնյաներ թե ոչ քրիստոնյաներ, որովհետև «խաղաղությունը թանկ է բոլորի համար (Pax omnibus cara)», վկայում է Սուրբ Օգոստինոսը, իսկ Ս. Հովհան Ոսկեբերանը իր թղթերից մեկում բացականչում է. «Խաղաղությունը մայրն է ամենայն բարյաց»:

Ես հավատում եմ, որ մարդկությունը անցյալի տառապանքների և ողբերգությունների փորձից թելադրված պիտի գտնի իր մեջ սրբազան կամքը ու հերոսական ուժը՝ իրականացնելու հին և նոր մարգարեների մեծ իդեալները, իմաստության ու մարդասիրության լույսով առաջնորդված:

Իմ ջերմ աղոթքն է, որ Աստված այդ սրբազան կամքը և հերոսական ուժը պարգևի ձեզ բոլորիդ, Միացյալ Ազգերի Կազմակերպության այս արիսպագոսին և իմաստության և մարդասիրության լույսով առաջնորդի ձեր պետությանց ղեկավարներին:

Իմ ըմբռնումով, խաղաղության պահպանումն ու ամրապնդումը ոչ միայն մարդասիրական և բարոյական գերագույն հրամայականն է, այլ նաև առաջին պայմանն ու երաշխիքը մարդկության կյանքում արդարության և ազատության գաղափարները ապահովելու, ազգամիջյան թշնամանքներն ու բոլոր տեսակի խտրականությունները և աղքատությունը վերացնելու, որոնք վերջին տասնամյակներին ավելի ու ավելի են խորանում և ավերներ գործում շատ շրջաններում, քաղաքական լարվածության, սպառազինության ու պատերազմի սպառնալից մթնոլորտի պայմաններում:

Ես իմ պարտքն եմ համարում արտահայտել այս խոհերը, խաղաղ և արդար մի աշխարհի երազանքով, որպես հոգևոր սպասավորը և պատասխանատու ղեկավարը մի Եկեղեցու ու ժողովրդի, որը դարեր շարունակ տառապել է և զոհվել ռազմամոլ նվաճողների սմբակների տակ, մի Եկեղեցի և մի ժողովուրդ, որը ապրել է 1915—17 տարիների բոլորիդ ծանոթ ցեղասպանությունը Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության շրջանին:

Ահա թե ինչու Հայ Եկեղեցու և իր հավատավոր զավակների մշտատև աղոթքն է. «Մարդասէր Աստուած, ստեղծիչ տիեզերաց և դատաւոր արդար, տուր աշխարհիս խաղաղութիւն և հաճութիւն ի մարդիկ»:

Մեր Եկեղեցին ողջունում է Սովետական Միության զինաթափման ու ատոմական զենքերի արգելման առաջարկությունները ու ողջունում դրանք կենսագործելու ճիգերը, Միացյալ Նահանգաց ղեկավարության գործակցությամբ:

Մեծահարգ Տիարք, թույլ տվեք վերջացնել իմ խոսքը՝ ձեզ և ձեր միջոցով ձեր ազգություններին բերելու իմ մաղթանքը՝ ստեղծելու մի աշխարհ՝ խաղաղ ու ծաղկյալ կյանքի, լի արդար և ստեղծարար իրագործումներով:

Թող աշխարհի բոլոր մեծ ու փոքր ազգերը անխտիր ապրեն և զարգանան համերաշխ գործակցությամբ, ամեն մեկը իր նպաստն ու իր հանճարը բերելով ի խնդիր համամարդկային մեծ ընտանիքի բարօրության, և թող բարձր հնչի ֆրանսիացի բանաստեղծ Լամարտինի պատգամը՝ «Ավելի ուժեղների փառքը լինի ավելի տկարների ազատությունը»:

Pax vobiscum, Ամեն:

Հավարտ Վեհափառ Հայրապետի խոսքի, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Պերես դե Կուելյարը Միացյալ Ազգերի «Խաղաղության մեդալ»-ով պարգևատրում է Վեհափառ Հայրապետին:

Ընդունելության ավարտին Հայոց Հայրապետը Կիպրոսի հարգարժան դեսպանին նվիրում է հայկական օճիքից պատրաստված խաչ՝ ի հիշատակ օրվա հանդիսության և Միավորված Ազգերի Կազմակերպությանը տված իր պաշտոնական այցելության:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՊԵՐԵՍ ԴԵ ԿՈՒԵԼՅԱՐԻՆ

Նույն որը, ժամը 15.15-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Միավորված Ազգերի Կազմակերպության ընդհանուր քարտուղար Պերես դե Կուելյարին, որի հետ ունենում է ջերմ տեսակցություն և զրույց՝ սրտագին մթնոլորտի մեջ: Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը, դիմելով ընդհանուր քարտուղարին, ասում է.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՊԵՐԵՍ ԴԵ ԿՈՒԵԼՅԱՐԻՆ

Ես իմ հոգևոր պարտականություններու ճանապարհին այցելության կգտնվիմ Միացյալ Նահանգներ հայ եկեղեցիներուն, հայ եկեղեցական համայնքներուն: Երրորդ անգամն է, որ կայցելեմ: Ես կուգամ Սուրբ Էջմիածնեն, որ կգտնվի Սովետական Հայաստան և որ պատմական կեդրոնն է Հայ Եկեղեցվո չորրորդ դարու սկիզբեն ի վեր: Եվ ինչպես նախորդ անգամին, նաև այս անգամ պարտականություն ունեցայ և ինձ համար պատիվ՝ պատեհությունը ունենալ հանդիպելու Միացյալ Ազգերու Կազմակերպության ընդհանուր քարտուղարին հետ: 1988-ին զիս ընդունեց Նորին Գերազանցությունն Ու Թանը: Հիմա ուրախ եմ, որ Դուք ալ ժամանակ տրամադրեցիք, որպեսզի ես Ձեզի այցելեմ:

Ամեն բանե առաջ, իբրև քրիստոնյա Եկեղեցիի մը սպասավորը, Աստուծո օրհնությունը Ձեզի կբերեմ մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն, նաև իմ կողմե ջերմագին մաղթանք, որ Աստված միշտ մնա Ձեզի պահապան և օգնական, որպեսզի Ձեր բարձր պարտականությունները կատարեք փայլուն հաջողություններով: Եվ երբ փայլուն հաջողություններ կրսեմ, կհասկընամ, որ Դուք ծառայեք աշխարհի խաղաղության պահպանման սրբազան գործին, որու համար հիմնված է Միացյալ Ազգերու Կազմակերպությունը Սան Ֆրանցիսկոյի ակտով: Հետևաբար կմաղթեմ Ձեզի ուժ և կարողություն: Կմաղթեմ նաև Ձեզի համբերություն և երբեմն ալ հանդգնություն և միշտ լավատեսություն, որովհետև ես կհավատամ, թե վերջիվերջո արդարության և խաղաղության քրիստոնեական և համամարդկային սկզբունքները պիտի կենսագործվին այս աշխարհի վրա: Ահա այս մաղթանքներով կուգամ ես Ձեզի և կցանկամ Ձեզի քաջառողջություն, որպեսզի շարունակեք Ձեր առաքելությունը իմաստությամբ և հարատևության ոգիով:

Այս մաղթանքները ես կբերեմ Ձեզի Հայ Եկեղեցվո և հայ ժողովուրդի անունով, ժողովուրդ մը, որ պատմության ընթացքին, դարեր շարունակ, տառապած է ուրիշ պետություններու պատերազմներու պատճառավ, ոտքի կոխան ըլլալով անոնց կռիվներու ընթացքին: Մեր ազգի և մեր Եկեղեցիի վերջին ողբերգությունը եղավ 1915-ին, Օսմանյան կայսրության շրջանին, երբ տեղի ունեցավ ամբողջական բնաջնջումը, ցեղասպանությունը Արևելյան Անատոլիայի՝ բուն պատմական Հայաստանի հայության: Շուրջ երկու միլիոն հայ քրիստոնյաներ նահատակվեցան: Մենք միշտ կմնանք աղոթող անոնց հոգիներուն համար:

Ինձի համար, ամբողջ հայ ժողովուրդի համար մխիթարություն եղավ, երբ այս տարի, հունիսի 18-ին, Ստրասբուրգի մեջ Եվրոպայի պառլամենտը պաշտոնապես ճանաչում տվավ 1915-ի ցեղասպանության: Հայ ժողո-



Վեհափառ Հայրապետը ՄԱՀՎ-ի ընդհանուր քարտուղար տիար Պերես դե Կուելյարի հետ

վուրդը արդարորեն կսպասե, որ այդ ճանաչումը վերջնականապես նվիրագործվի Միացյալ Ազգերու Կազմակերպության հարկի տակ:

Ես իմ շնորհակալությունը կհայտնեմ Ձեր այս շատ ազնիվ ընդունելության համար:

Թող Աստված միշտ մնա Ձեզի զորավիգ: Ամեն:

Ի պատասխան Նորին Սրբության խոսքի, մեծարգո ընդհանուր քարտուղարն ասում է.

ՊԵՐԱՍ ԴԵ ԿՈՒԵԼՅԱՐԻ ԽՈՍՔԸ

Ծնորհակալություն, Ձերդ Սրբություն, Ձեր բարեմաղթությունների համար և նաև Ձեր խաղաղասիրական ջանքերի համար:

Ձերդ Սրբություն, մենք պետք է շարունակենք մեր պայքարը խաղաղության հաստատման ուղղությամբ: Եվ եթե ունենանք բոլոր Եկեղեցիների գործակցությունը, մենք կկարողանանք մեր նպատակները իրագործել աշխարհում: Ինչպես որ Ձերդ Սրբությունը գիտե, վերջին շրջանում քաղաքական կացությունը լարված վիճակում է: Այս տան մեջ մենք ջանք ենք թափում, որպեսզի խաղաղության միջոցներով կարելի դարձնենք համակեցությունը: Միջազգային հարցեր կան, որտեղ որ դարձնենք մեր աչքերը, Իրաք—Իրան, Կիպրոս, Հարավային Աֆրիկա և այլ տեղեր: Մենք ջանք ենք թափում միջոցներ որոնելու, բայց կարիքն ունենք նաև աղոթքների, և վստահ եմ, որ Ձերդ Սրբությունը կաղոթի և մեզ օգտակար կդառնա:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է. **«Մեր պարտականությունը կնկատենք այդ: Եվ վստահ ենք, որ Աստված պիտի ընության հասնի համայն մարդկության, որպեսզի խաղաղարար Կամքը կատարվի աշխարհի վրա»:**

Ձերմ մթնոլորտում Պերես դե Կուելյարը հույս է հայտնում, որ կկարողանա փոխադարձ այցելությամբ գալ Երևան:

Վեհափառ Հայրապետը այս առիթով ընդհանուր քարտուղարին նվիրում է հայկական մանրանկարչությունից ընդօրինակված գունավոր գեղարվեստական մի նկար՝ «Նոյը և Արարատը», իբրև հիշատակ Միավորված Ազգերի Կազմակերպության կենտրոն իր այցելության:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԱԽԿԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, առաջնորդարանի «Հայկ և Այիս Գավուքճյան» սրահում տեղի է ունենում սրտառուչ արեկո, որին մասնակցում են շուրջ 1000 ռումինահայեր ու բուլղարահայեր: Մասնակիցները, ի պատիվ իրենց նախկին առաջնորդի, հայրենակցի և մանավանդ ուսուցչի, եկել էին մասնավոր ջերմությամբ ու հպարտությամբ ողջունելու Ամենայն Հայոց Հայրապետին:

Այս առթիվ կազմակերպվել էր գեղարվեստական մի ծրագիր: Երեկոյին բացման խոսքով հանդես է գալիս ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Այնուհետև ռումինահայության անունից Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությունը ջերմ ուղերձներով ողջունում են դոկտ. Հարություն Գաբիկյանը, Հովհաննես Գալփաքյանը, Էդուարդ Պարսամյանը և ուրիշներ:

Երեկոյի խանդավառությունը իրենց ելույթներով ավելացնում են շնորհալի արվեստագիտուհիներ Արմինե Բոդոյանը (դաշնամուր), Սեդա Կարագաշյանը (դաշնամուր) և ուրիշներ:

Օրիորդ Ադրինե Բերբերյանը խոր ապրումով ընթերցում է Վեհափառ Հայրապետի խոսքը՝ արտասանված 1978 թվականի հոկտեմբերի 1-ին Վեհարանի գահասրահում:

Ապա Պետրոս Ջիվելեքյանի խոսքից հետո ուրախ ու ցնծագին ծափերի մեջ, խորապես հուզված ջերմ մթնոլորտից և սրտագին արտահայտություններից, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը՝ ոգեկոչելով անց,ալի քաղցր օրերը, երբեմնի իր գործակիցներին, աշակերտ-աշակերտուհիներին և շատ ուրիշներին:

Հանդիպման ավարտին սրահում հավաքված բոլոր ներկաները մոտենում և համբուրում են Վեհափառ Հայրապետի Ս. Աջը ու ստանում նրա օրհնությունները:

Հոկտեմբերի 29-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, «Ուալդորֆ Աստորիա» հյուրանոցում Վեհափառ Հայրապետին այցելում են մի խումբ ազգայիններ հանում «Արմինիրն ասամբլի»-ի և մտերմիկ զրույց ունենում Նորին Սուրբ Օծության հետ՝ ԱՄՆ-ի Հայ Եկեղեցու ներկա կացության վերաբերյալ:

Վեհափառը Հայրապետական հանդիսությունների ընթացքում դիմավորում է Մոսկվայում գտնվող վեցգլխանոցաձև մատուռը

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԻՆ

Նույն օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի ընդհանուր քարտուղար Արի Բրաուերի հրավերին, իր շքախմբի ընկերակցությամբ պաշտոնապես այցելում է նույն կազմակերպության կենտրոն-պալատ:

Պալատի շքամուտքի առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ընդունվում է հարգալից խանդավառությամբ և առաջնորդվում շենքի մուտուտ: Այստեղ տեղի է ունենում էկումենիկ արարողություն, որին իրենց մասնակցությունն են բերում Ս. Ներսես աստվածաբանական ընծայարանի սաները:

Այնուհետև ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի ընդհանուր քարտուղար Արի Բրաուերը, հանուն Եկեղեցիների ազգային խորհրդի, ողջունում է Ամենայն Հայոց կաթողիկոսի այցելությունը:

Վեհափառ Հայրապետը պատասխանում է հարգարժան քարտուղարի ողջույնի սիրալիր խոսքերին՝ իր ուրախությունը հայտնելով ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի կենտրոն այցելելու հրավերի և ջերմ ընդունելության համար.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«Ինչքան բարի է և վայելուչ, որ եղբայրներ միասին ըլլան»: Սաղմոսերգուի այս զգացումը կապրիմ ես այս պահուն: Ես շատ հեռավոր երկրեմը կուգամ, ձեզ չեմ ճանչնար անձնապես, ոչ ալ դուք՝ զիս, բայց ինչքան հրաշալի է, որ այս մատռան կամարներու տակ մենք կհանդիպինք իրարու և կզգանք մեր միջև իսկական եղբայրական հոգեկցություն: Այն, ինչ որ մեզ կմիացնե, մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերն է, ոգին է, պատգամն է: Հրաշալի իրողություն մըն է այս, որ ընդհանուր խոսքով՝ էկումենիզմ արտահայտությամբ կբնորոշվի:

Տասը և ավելի տարիներ առաջ, երբ Զվիցերիա կգտնվեի, Ժնևի մեջ այցելեցի լութերական Ս. Պետրոս տաճարը: Մատռան մուտքին տեսա արձանագրություն մը լատիներեն՝ «Ex tenebras lux», այսինքն՝ «Խավարեն դեպի լույս»: Թորգոմ արքեպիսկոպոս ներկա էր և կհիշե, որ այդ օրվա իմ խոսքը այդ գաղափարի շուրջ կազմակերպեցի, խավարեն դեպի լույս գաղափարի: Եվ կարծեմ ճիշտ արտահայտվեցա՝ հաստատելով, թե մեր դարաշրջանի էկումենիկ շարժումը խավարեն դեպի լույս ոստում մըն է, քրիստոնեական Եկեղեցիներու կյանքի ճայփուն վրա:

Ինչքան մխիթարական է քրիստոնյա ըլլալ, մանավանդ հոգևորական և հաստատել աքանչելի իրողությունը համաքրիստոնեական եղբայրության զարգացման մեր օրերուն: Ես համոզված եմ հաստատապես, որ էկումենիկ շարժումը, հետզհետե զորանալով, ապագային ավելի մեծ ծավալ ստանալով, իր բարերար ազդեցությունը պիտի տարածե աշխարհի վրա, բոլոր հարցերու լուծման ճանապարհին, Քրիստոսի սիրո և խաղաղարար ոգիով: Մեր դարաշրջանը, մեր ժամանակները, գուցե ավելի քան երբեք, պետք ունին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի սիրո և խաղաղարար ոգիին:

Էկումենիկ ոգիի արտահայտությունը մենք հաճախ կապրինք նաև

Հայաստանի մեջ, հատկապես Սուրբ Էջմիածնի կամարներուն ներքև: Այս առիթով ես կուզեմ իմ վկայությունը բերել, որ այսօր մեր երկրի՝ Սովետական Հայաստանի մեջ, եկեղեցական կյանքը հառաջդիմության ճանապարհի վրա կգտնվի: Ինչպես գիտեք, ես բնիկ հայաստանցի հայ չեմ. Ռումանիա ծնած, մեծցած և իմ ամբողջ ուսումս այնտեղ առած եմ: Միայն 1955-են հետո փոխադրվեցա Սովետական Հայաստան, իբրև կաթողիկոս Ամենայն Հայոց: Եվ այս երեսուներկու տարիներու ընթացքին, ինչքան ատեն ես կպաշտոնավարեմ, կրնամ պատկերավոր ձևով արտահայտվելով ըսել, որ Եկեղեցին մեր երկրի մեջ ես «դեպի լույս» շրջան մը կապրի: Փառք Տիրոջը, որ հրաշալի ոստում մը կատարվեցավ, ժամանակները փոխվեցան, և հիմա խաչերը վերստին կբարձրանան մեր եկեղեցիներու գմբեթներուն վրա: Այսօր պայմանները բարենպաստ են, և ես իմ պարտքը կնկատեմ հետզհետե զորացնել կրոնական հավատքը մեր ժողովուրդի կյանքին մեջ այնտեղ, զորացնել նաև մեր սուրբ Եկեղեցին:

Աղոթեցեք, սիրելի եղբայրներ, դուք ևս, որպեսզի Աստված մեզ զորացնե, և մենք կարողանանք եկեղեցաշեն մեր գործը շարունակել Սովետական Հայաստանի մեջ: Մեր ժողովուրդը կվերադառնա իր նախնիներու հավատքին, և մենք հետզհետե կհամոզվինք, որ Քրիստոսի Ավետարանը հավիտենական ճշմարտություններու գիրքն է:

Շնորհակալություն այս եղբայրական ջերմ ընդունելության համար: Թող Աստված իր ողորմությունը տարածե բոլոր եկեղեցիներու վրա, ամբողջ աշխարհի վրա, որպեսզի, ձեռք-ձեռքի տված, ամեն մեկս մեր ուժերու չափով, զորացնենք, ծաղկեցնենք և հզոր ուժի մը վերածենք ամբողջ աշխարհի քրիստոնեական եղբայրությունը, ի խնդիր աշխարհի խաղաղության և ի մարդիկ հաճության:

Մեր օրհնությունը ձեզի և խաղաղությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի. ամեն:

Արարողության ավարտին, ընդհանուր խանդավառության և ոգևորության մեջ, Վեհափառ Հայրապետը ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդին նվիրում է Ս. Էջմիածնից բերված գունավոր մի նկար՝ հայ միջնադարյան մանրանկարչությունից ընդօրինակված:

Ապա ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի նիստատեղը, ի նպատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում ելույթներով հանդես են գալիս անդամ Եկեղեցիների ներկայացուցիչները:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի պատվին կատարվում են մի շարք հոգևոր երգեր:

Հավարտ ճաշկերույթի Վեհափառ Հայրապետի հետ հարցազրույց է ունենում Ժենևում հրատարակվող «Ecumenical Press»-ի թղթակիցը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԾՈՒԽԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, «Հայկ և Ալիս Գավուքճյան» սրահում Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը հանդիպում է ունենում ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի շուրջ 50 ծուխերի ներկայացուցիչների հետ:

Թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը իր բացման խոսքով ներկայացնում է արկելյան թեմի ծուխերի ժրաջան և նվիրյալ եկեղեցասեր անդամներին և բարեբանում նրանց՝ իրենց բազում հոգսերի մեջ նաև Հայ Եկեղեցու կենսունակության պահպանմանը ընծայած իրենց ջանքի ու եռանդի համար: Ապա հրավիրում է Նորին Սրբությանը ներկաներին տալու իր հայրական օրհնությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Սիրելի սրբազան Եղբայր, բարեջան եկեղեցական հայրեր և հարգարժան Տիարք:

Ինձ համար այս հավաքույթը բացառիկ կարևորություն կներկայացնե: Դուք ղեկավար անձնավորություններ եք այս թեմեն ներս, պատասխանատվություններ ունիք եկեղեցական համայնքներու մեջ և ներկայացուցիչներն եք այդ համայնքներուն: Նախ պետք է իմ խորունկ գոհունակությունը հայտնեմ և գնահատանքը ձեզի բոլորիդ, որ ձեր բարի ձեռքը կերկարեք Եկեղեցիին՝ օգտակար ըլլալու համար այս երկրին մեջ հայ հոգևոր կյանքի զարգացման:

Արտասահմանի որևէ երկրի մեջ հայ ժողովուրդը ճակատը բաց կրնա ներկայանալ հաչս պետական իշխանություններուն և հաչս տվյալ երկրի ժողովուրդին, իբրև Եկեղեցի, իբրև քրիստոնյա ժողովուրդ: Գիտեմ, մենք բազմաթիվ ազգային կազմակերպություններ ունինք՝ մշակութային, մարզական, կուսակցական և այլն: Փարիզի մեջ հիմունվեց հայկական կազմակերպություն և միություն կա: Երևի ամեն մեկը իր աեղը ունի, իր գործունեության դաշտը, իր ընելիքը գուցե: Բայց այդ բոլորեն վեր կա հայությունը միացնող միակ կազմակերպություն մը, որ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին է՝ 1700 տարիներե ի վեր: Ես բոլոր հայերը, մեր ժողովուրդի բոլոր զավակները, ինչ հոսանքի ալ պատկանին, ինչ միության անդամ ըլլան, բոլորը կնկատեմ մեր Եկեղեցվո զավակները: Եվ ոչ մեկ հայ մարդ Հայ Եկեղեցիեն դուրս պետք չէ մնա: Այս է իմ ըմբռնումը և այս է Եկեղեցիի գաղափարի բնույթը, բովանդակությունը, էությունը: Դուք կներկայացնեք իսկապես մեր Եկեղեցին, այսինքն մեր ժողովուրդը իր ամբողջության մեջ: Կշնորհավորեմ ձեզ և կբերեմ ձեզի բոլորիդ Աստուծո օրհնությունը Սուրբ Էջմիածնեն: Աստված ձեզի բոլորիդ ուժ ու եռանդ պարգևե, որպեսզի ձեր սրբազան առաջնորդին շուրջ համախմբված, ձեր հոգևոր հովիվներուն հետ միասին շարունակեք այն աշխատանքը, որուն լծված եք:

Թույլ տվեք ինձ իմ գոհունակությունը հայտնել, որ ձեր մեջ կան նաև տիկիններ և օրիորդներ: Կշնորհավորեմ ես այս երևույթը և կփափագիմ, որ հետզհետե այդ ոգին ամրապնդվի, և տղամարդիկ ու կանայք հավասար կերպով մասնակցին եկեղեցական գործի կազմակերպման և հառաջդիմության: Պետք է ըսեմ, որ մեր կողմերն ալ սկիզբ առած է այս ընթացքը: Օրինակ՝ Թիֆլիզի մեջ Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցվո հոգաբարության ատենապետուհին տիկին մըն է և շատ լավ կաշխատի: Այս երևույթը ես կգտնեմ քաջալերելի:

Այժմ կուզեմ շնորհակալության խոսք ուղղել մեր սիրելի սրբազանին և թեմական խորհուրդին, ընդունելության հանձնաժողովին, որոնք իմ այ-

ցելության առիթով ամեն ինչ աքանչելի կերպով կազմակերպած են, և արդեն ծրագիրը գործածության մեջ դրված է անթերի կերպով:

Այսօր սրբազանը ակնարկ ըրավ հարյուր տարի առաջ ամերիկյան թեմի կազմավորումին: Ես ճիշտ թվականը չեմ հիշեր, բայց մոտավորապես հարյուր տարի առաջ է, որ այս թեմը կազմվեցավ Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի հատուկ կոնդակով, որով թեմը հռչակեցավ Էջմիածնի իրավասության ներքև:

Տարիներու ընթացքին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հաճախ վայելած է բարիքները այս թեմի, մանավանդ իր դժբախտությանց շրջաններուն: Մենք այսօր, բարեբախտաբար, ինքնաբավ եկեղեցիներ ենք մեր Մայր Հայրենիքի մեջ: Մայր Աթոռի բյուջեն հավասարակշռված է իր ներքին եկամուտներով: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հիմնական եկամուտները նախ Մայր տաճարի եկամուտներն են՝ մոմավաճառութեններ և մկրտություններեն, պսակներեն և գանձանակներեն գոյացած: Մայր Աթոռի համար կարևոր եկամուտի աղբյուր են նաև Արարատյան թեմը, Խորվիրապի վանքը և որոշ չափով մյուս ներքին թեմերը: Այս ձևով կրնամ ըսել, որ մեր նյութական պայմանները փայլուն են: Միայն բացառիկ շինարարական ծրագիրներու առիթով, նոր շենք մը կառուցելու, նոր վանք մը, եկեղեցի մը վերակառուցելու առիթով, մենք կունենանք արտասահմանի մեր հավատացյալներեն նվիրատուներ, ինչպես օրինակ՝ Ալեք Մանուկյանը, որ մոտ մեկ միլիոն դոլար տրամադրեց, և մենք կառուցեցինք երկու հարկանի փառավոր շենք մը, որ վերածված է հայ եկեղեցական արվեստի թանգարանի:

Այս է այսօրվան վիճակը: Բայց պահ մը կուզեմ երթալ ետ, հարյուր կամ ութսուն տարի ետ: Ի՞նչ վիճակի մեջ կգտնվեին Հայ Եկեղեցին և Էջմիածինը այն ատեն, Խրիմյան Հայրիկի օրոք: Եվ որպեսզի ոչ թե իմ խոսքերով հաստատվի այդ, կուզեմ, որ հայր Հայկազունը կարդա կոնդակ մը, որ հետս բերած եմ, որով 1894-ին Խրիմյան Հայրիկ շնորհակալություն կհայտնե ամերիկահայերուն՝ նվիրատվություններու համար: Հետաքրքրական է, կուզեմ որ կարդացվի:

Հայր Հայկազունը կարդում է հետևյալ կոնդակը:

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ 30 ՕԳՈՍՏՈՍԻ 1894 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆԴԱԿԸ

ԳԵՐԱՊԱՏԻՒ ՄԱՂԱՔԻԱ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԷՐՈՒՆՆԱՆ. ՐԱՐԵՋԱՆ ՀՈՎՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆԱՑ ԲՆԱԿԵԼՈՅ Ի ՋԱՆԱՁԱՆ ՔԱՂԱՔՍ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԴԱՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ, ՀՈԳԵՒՈՐ ԵՒ ՀԱՐԱՁԱՏ ՈՐՊԻՍՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Նախախնամութիւն Աստուածային որ երբեմն ի խրատել զմեզ առամէ ի վերայ մեր, պէսպէս արկածս, յայց ել զայս նուազ բնակչաց Արարատեան աշխարհին սովու: Ոչ սակաւ հոդազործ, որ ոչ կարացեալ ժողովել զոր սերմանեցինն, ստիպեալ եղեն վաճառել զանասունս իւրեանց և ընտանեացն՝ առ ի հայրայրել զսնունդ իւրեանց և տարագիր լինել ի խնդիր շնչին վարձուց. անտէրունչ և անօգնական թողեալ զընտանիս իւրեանց: Եւ աւա յայսպիսի հանգամանս տեսանեմք մխիթարեալ ի նոցի, զի Դուք պատուարժան

Գաղթականութիւնդ Հայոց Ամերիկայի ոչ անտես արարեալ, այլ մեծաւ մարդասիրութեամբ փութացայ յունկն առնել գիրուէր՝ զոր կարդացի Հոլիուս առ ի կարկառել ձեռն օգնականութեան ցաւոտեալ ընկերին: Օգնել ընկերի ի թշուառութեան, կերակրել զսովեալս, զբեցրոցանել զմերկս՝ պարտիք են Մեր՝ աւանդեալ մեզ ի Փրկչէն՝ որ ասէ մարդասիրաց և ողորմածաց. Բաղցեայ և եղուք ինձ ուտել, ծարաւեցի և արբուցիք զիս:

Ի դիմաց սովելոց յայտնեմք զգոհունակութիւն սրտի Մերոյ վասն նպաստի եօթն հարիւր իննսուն և եօթն և կէս տոլարի ի զանազան Բաղաքաց Երկրիդ, որոց 150.90 յՈւսքր, 131.75 ի Փրովիդընս, 112.45 ի Լին, 95.50 ի Պոսթոն, 57.90 ի Մոլտրն և Թէս, 53.20 ի Լօվել, 33 յՈրբաուն, 28.85 յԼուսմէր, 8.90 ի Լորէնս, 25.50 ի Պրայթրն, 25 ի Փուրմէր, 25.25 ի Վայկինս, 12 ի Միլվիլ, 14.30 ի Փիզպուրկ և 23 ի Քէմպրիճ Փորթ Բաղաքաց, յորոց ստացեալ է Մեր հարիւր վաթսուն և մի անգլիական ոսկի, ի բաց բառնալով զծախս թղթաբերի:

Ուստի այսու Հայրապետական կոնդակաւս լիայօժար սրտիւ օրհնեմք զՁեզ, զամենայն նուիրատուս և գնամօրէն հայ գաղթականութիւնդ Ամերիկայի և մաղթեմք յերկնային Պարգևատուէն՝ պարգևել ամենեցուցդ գերկարամեայ անդորր և բարեբաղդ կեանս և զամենայն բարիս գերկրային և գերկնային: Իսկ ինքն Տէր Ամենակալ հեղցէ յերկնից ի վերայ Ձեր ամենեցուն զպարգևս անսպառ ողորմութեան իւրոյ և զշնորհս երկնային գթութեանց. օրհնեսցէ զՁեզ և զամենայն բարեգործակ գործս և զձեռնարկս Ձեր: Հայրաբար պատուիրեմ այսու զի սիրոյ կալցիք զպատուական աւանդութիւնս Հարցն Սրբոց և զկրօն ամենամաքուր Առաքելական Ս. Եկեղեցւոյս Հայաստանեայց. ուսուցէք որդւոց Ձերոց զմայրենի լեզու մեր Հայկական, որով զարդիս մատուցանեմք գոհութիւնս և պաղատանս ի առն Տեառն Աստուծոյ մերոյ՝ ի ճանգի հեռի և անջատ լինելն ի հայրենեաց դառնացուցանէ զպանդխտութիւն, յամենայն սրտէ աղօթեմք, զի անփորձ և անսասան մնացեալ ի պանդխտութեանն, յաջողութեամբ վերադարձ առնիցիք ի ցանկալի Հայրենիս, ուրանօր միայն կարէք վայելել զլիուլի երջանկութիւն:

Շնորհք Տեառն մերոյ Յս.ի Քս.ի եղիցի ընդ Ձեզ ընդ ամենեսեան և խազաղութիւն Աստուծոյ բազմասցի ի վերայ ամենայն հոգևոր որդւոցդ Սերոց:

Ողջ լերուք և օրհնեալ ի յերկնաւոր Հօրէ, ի Սրբոց Նոյա և ի Մէնջ. ամէն:

ՄԿՐՏԻՉ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

յ30 օգոստոսի 1894
և ըստ տումարիս ՌՑԽԴ
Համար 1488
ՑԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վաղարշապատ:

Ահավասիկ, սիրելիներ, պատկերը այն ժամանակվա հայության և Հայ Եկեղեցիի վիճակի: Բայց նաև հաստատեցինք և կհաստատենք այսօր, որ այն ժամանակ այ ամերիկահայ փոքրաթիվ գաղութից շատերը երևի հասարակ բանվորություն կընեին, չկային ունևոր հայեր, բայց անոնք իրենց քիչ ունեցածեն կամ չունեցածեն սենթեր հավաքելով՝ այս գումարները հասցուցած էին Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին, օգնության իրենց բաժինը բերելու այն ժամանակվա չքավոր և կարիքավոր հայ գյուղացիության:

Ինչպես քիչ առաջ ըսի, այդ ժամանակները շատոնց անցած են, մենք այլևս այդ վիճակի մեջ չենք գտնվիր, սակայն այդ ոգին պետք է ամուր պահպանենք: Հարցը միայն նյութական օգնության հարց չէ հիմա, Մայր Աթոռը նյութապես գրեթե բավարարված է իր ներքին եկամուտներով, բայց բարոյական կապը կա, հոգևոր կապը, միասնությունը, Էջմիածնի լույսի ճառագայթումը, որ պետք է սրբությամբ պահպանենք՝ մեր Եկեղեցվո միությունը հաստատելով ամեն տեղ: Հավանաբար դուք ալ կտառապիք այն բաժանումներեն կամ երկպառակություններեն, որոնք ստեղծված են այս երկրի մեջ: Այդ բաժանումը անբնական երևույթ մըն է՝ և՝ անընդունելի, և՝ վնասակար: Վստահ եմ, բոլորն ալ կփափագին վերահաստատումը Ամերիկայի Միացյալ Նահանգներու հայ եկեղեցիներու միության: Ձեզի կվստահեցնեմ, որ եթե կա մեկը, որ առավելագույն չափով կտառապի այս պատճառով և առավելագույն չափով կփափագի, կաղոթե, որ միությունը վերահաստատվի, ան այսօրվա ձեր կաթողիկոսն է: Եվ բնական է, որ այդպես ըլլա: Ես մեկ կողմի մարդ չեմ: Մայր Աթոռը ոչ մեկ կողմի չի պատկանիր: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը 1700 տարիներե ի վեր Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետության կեդրոնն է, որուն հոգևոր իրավասության տակ կգտնվի համայն Հայ Եկեղեցին՝ անոր նվիրապետական Աթոռներեն ամեն մեկը իր տեղական ինքնությունը և իրավասությունները պահպանելով անշուշտ: Արդեն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ձեր ներքին գործերուն բնավ չի միջամտիր: Երբեք, գոնե այս երեսուներկու տարիներու ընթացքին, ես, իբրև կաթողիկոս, ոչ մեկ թեմի ներքին գործերուն չեմ խառնված բացարձակ կերպով: Դուք կղեկավարվիք նախ մեր եկեղեցական կանոններով, ձեր կանոնադրությամբ և կարևոր չափով ալ ձեր երկրի ընդհանուր օրենքներու տրամադրություններով: Եվ բնական է, որ այդպես ըլլա: Մեր կապը կանոնական կապ մըն է, հոգևոր կապ մը՝ եթե կուզեք, բայց մենք այդ հոգևոր կապին հիմնական նշանակություն կուտանք: Այդ կապով է, որ կերաշխավորվի մեր Եկեղեցվո ամբողջական միությունը, մեր ամբողջ Եկեղեցվո կանոնական կառույցը և մեր ամբողջ ժողովուրդի հոգևոր ազգային միասնությունը: Այս տարբերակաւ ճշմարտությունները երանի թե ճիշտ հասկըցվեին, և կողմնակի նկատումներ կամ շահեր չխանգարեին մեր Եկեղեցվո ներքին միությունը:

Մենք երբեք չենք խառնվիր ուրիշ կազմակերպություններու կամ կուսակցություններու գործունեության: Ամեն մեկը իր գոյության իրավունքը կրնա ունենալ, բայց Եկեղեցին ոչ մեկ կողմի Եկեղեցի պետք չէ ըլլա, ո՛չ աջի, ո՛չ ձախի: Ամեն երկրի մեջ կուսակցություններ շատ կան: Ֆրանսայի մեջ, օրինակ, վեց, յոթ կուսակցություններ կան, որոնց միջև լուրջ պայքարներ տեղի կունենան ընտրությունների առիթով: Բայց կաթոլիկ Եկեղեցին մեկ է: Եկեղեցին կուսակցությունների չի բաժնվիր ոչ մեկ տեղ, ոչ ալ ձեր երկրի մեջ: Ինչո՞ւ պետք է այս անբնական, հիվանդագին երևույթը գոյություն ունենա ձեր մեջ, ես չեմ հասկնար: Պետք է միասին մտածենք,

աղոթենք, որ Աստված մեզի օգնե, բարի հոգեւոր ներշնչե, որպեսզի կարող-
ղանանք հասկցնել բոլորին եղբայրորեն, առանց մեղադրելու որեւէ մեկուն,
որ այսպես չըլլար, որ մեր Եկեղեցին պետք է Եկեղեցի ըլլա ամեն բաներ
առաջ, իբրև կազմակերպություն, իբրև ներքին կարգ-կանոն, իբրև առա-
ջելություն: Երեսուներկու տարի է, որ կաթողիկոս եմ, կմտածեմ երբեմն,
արդյոք իմ կյանքի վերջալույսին պիտի կարողանա՞մ տեսնել վերամիա-
վորումը մեր Եկեղեցվո Ս. Էջմիածնի իրավասության ներքո, այնպես, ինչ-
պես Աստված հաստատած է զայն իր օրհնությամբ՝ սկսած Ս. Գրիգոր Լու-
սավորչի օրերեն: Ես հայրական կոչ կուղղեմ բոլորին, որպեսզի գիս լավ
հասկնան, ուղիղ հասկնան, և ամեն մեկը իր տեղին, իր չափով իր ձևով
օգնե, որպեսզի կարողանանք վերահաստատել այդ ներքին միությունը այս
ընդարձակ, մեծ թեմին մեջ: Երանի թե այդ առավոտը մենք կարողանա-
յինք ողջունել շուտով:

Միացյալ Նահանգներ գալես առաջ, նկատի ունենալով, որ պիտի գամ,
այս տարի, հունիսի 9-ին, ես կարևոր նամակ մը գրեցի Տանն Կիլիկիո Գա-
հակալին մեր ներքին հարցերով: Նման հարց կա ոչ միայն Միացյալ Նա-
հանգներու մեջ, այլ նաև Պարսկաստանի, Հունաստանի, Կանադայի և Նոյ-
նիսկ Հարավային Ամերիկայի մեջ: Քառսի կվերածվի մեր Եկեղեցին, եթե
այսպես շարունակվի: Ահա այս հարցերու շուրջ ես իրեն գրած էի հստակ
կերպով, եղբայրորեն, հարգելով իր Աթոռի բոլոր իրավասությունները, կոչ
ընելով, որ նոր պայմաններ ստեղծենք, և այդ կանոնական միության պայ-
մաններու տակ գործակցություն սկսի մեր Աթոռներուն միջև թե՛ արտա-
սահմանի ու նաև Հայաստանի մեջ: Հիմնական հարցը կանոնական իրա-
վասությանց հարգումն ու պառակտումի առաջքը առնելն է: Ես բոլորովին
հոռետես չեմ: Կխորհիմ, թե պիտի գա ժամանակը, երբ պիտի կարողա-
նանք լուծման ճանապարհ գտնել: Մեր եղբայրը՝ Գարեգին կաթողիկոս, իմ
9 հուլիս նամակին, կցավիմ ըսելու, որ տակավին պատասխան տված չէ:
Ես կսպասեի այդ պատասխանին: Իր պատասխանը կրնար օգտակար ըլ-
լալ ինձ իմ այս այցելության առիթով, որպեսզի ես կարողանայի ավելի
ճիշտ և հստակ կերպով կողմնորոշվիլ: Մեր ջերմ փափագն է վերջ տալ
այս երկպառակության: Եվ եթե կուզենք լուծում գտնել, անոնք, որ իրա-
պես կուզեն միություն, պետք է վերամիանան Ս. Էջմիածնին և ընդունին Ս.
Էջմիածնի կանոնական իրավասությունը այնպես, ինչպես հաստատած է
Խրիմյան Հայրիկ հարյուր տարի առաջ իր հայրապետական կոնդակով:

Այս սպասումներով կբերեմ ձեզի բոլորիդ իմ հայրական գնահատան-
քը, իմ սերը, իմ քաջալերանքը և Աստուծո օրհնությունը Սուրբ Էջմիած-
ծեն: Ամեն:

Սույն հիշարժան հանդիպումն ավարտվում է խմբովին երգված «Հայր մեր»-ով:

ՊԱՏԱՐԱԳ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ Ս. ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հոկտեմբերի 24-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, ի ներկայության խուռներամ Հավատացյալների, Սրբոց երկոտասանից վարդապետաց տոնի առթիվ, Նյու Յորքի Ս. Վարդան Մայր եկեղեցում պատարագ է մատուցում Տ. Նավասարդ աբեղա Կճոյանը:

Այդ օրը թեմի տարբեր շրջաններից ժամանած ամենօրյա և կիրակնօրյա դպրոցների բոլոր աշակերտ-աշակերտուհիները եկեղեցի էին եկել՝ ներկա լինելու ս. պատարագի սրբազան արարողությանը, հանդիպում ունենալու իրենց սիրելյալ Հայրապետի հետ և ունկնդրելու Նորին Սրբության հայրական պատգամը:

Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է եկեղեցի, որի շուրջ հավաքված հավատացյալների խուռներամ բազմությունը երկյուղած բարեպաշտությամբ և սրտագին բարեմաղթություններով ողջունում է իր սիրելի Հովվապետին:

Մայր եկեղեցին հորդում էր երեխաներով, որոնց պայծառ հայացքներն ուղղված էին հեռավոր Մայր Հայրենիքից ժամանած Հայոց Հայրապետին: Ս. պատարագի ընթացքում նրանք բոլորը ակնածանքով մոտենում են Նորին Սրբությանը, համբուրում նրա Ս. Աջը, ստանում նրա օրհնությունը և ապա հաղորդվում:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բեմ է բարձրանում՝ տալու իր պատգամն ու օրհնությունը ամերիկահայ պատանիներին և պատանուհիներին: Նորին Սրբությունը հայրական շնչով ու ջերմությամբ հորդորում է նրանց վառ պահել եկեղեցասիրական և ազգային ոգին իրենց սրտերում, չմոռանալ մայրենի լեզուն, նախնյաց հայրենասիրությունն ու հավատը, ապրել քրիստոնեական առաքինի կյանքով՝ միշտ մնայով հավատարիմ զավակները առաքելական Մայր Եկեղեցու: Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը օրհնում է բոլորին հայրական ջերմագին մաղթանքներով:

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը հրավիրվում է առաջնորդարան՝ հանգստանալու: Ապա առաջնորդարանի սրահում, ճաշի սեղանի շուրջ, հանդիպում է ունենում թեմական խորհրդի անդամների հետ և զրուցում արևելյան թեմի գործունեության հետ առնչվող մի շարք հարցերի շուրջ:

Ժամը 14.30-ին Նորին Սրբությունը, մի պահ ընդմիջելով խորհրդակցությունը, գնում է «Հայկ և Ալիս Գավուքճյան» սրահ, որտեղ անհամբեր նրան էին սպասում ամենօրյա և կիրակնօրյա դպրոցների սան-սանուհիները՝ հանդիպում ունենալու իրենց շնորհազարդ Հայրապետի հետ և վերստին ստանալու նրա հայրական հորդորն ու օրհնությունը: Այնտեղ գործադրության է դրվում գեղարվեստական մի ճոխ ծրագիր: Հայկական խմբական երգերով և հայրենաշունչ արտասանություններով հանդես են գալիս շնորհալի հայ մանուկները՝ ջերմացնելով օրվա հանդիսավոր մթնոլորտը:

Հանուն հայ վարժարանների ողջ աշակերտության, ողջույնի սրտառուչ ուղերձով Հայոց Հայրապետին է դիմում կիրակնօրյա վարժարանների պատասխանատու տեսուչ պրն. Նուբար Քյուփելյանը:

Այնուհետև բեմ է հրավիրվում Հայոց Հայրապետը՝ տալու իր հայրական խրատներն ու հայրապետական օրհնությունը: Նա աշակերտներին հասկանալի լեզվով խոսում է Ս. Էջմիածնի, հեռավոր հայրենիքի և սրբազան Արարատի մասին, թելադրում է, որ սիրեն և սովորեն նաև հայոց լե-

Նյու Յորքի Հայոց Ս. Վարդան Մայր տաճար

զուն, հայոց պատմությունը և միշտ հպարտ լինեն ամեն տեղ որպես հայ ժողովրդի զավակներ, Հայ Եկեղեցու լուսաբծնունդ սերունդներ:

Նույն օրը, ժամը 19.30-ին, Ամենայն Հայոց կաթողիկոսը նույն սրահում հանդիպում է ունենում ամերիկահայ երիտասարդ մտավորականության հետ: Դահլիճում հավաքված էին շուրջ 600 հայ պատանիներ և երիտասարդներ:

Երիտասարդության անունից Վեհափառ Հայրապետին որդիական անկեղծ սիրո և երախտագիտության խոսք է ուղղում դոկտ. Թոմ Սամվելյանը:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական պատշաճ մի հայտագիր: Արտասանություններով ու երգերով հանդես են գալիս երիտասարդ անհատ կատարողներ: Եղույթ է ունենում Մայր եկեղեցու երգչախմբի շնորհալի մեներգչուհի օրիորդ Է. Փելթեքյանը: Հանդիսության մթնոլորտի խանդավառությունը կրկնապատկվում է «Անդրանիկ» պարախմբի ելույթով: Կատարվում են հայկական ժողովրդական և ազգագրական պարեր:

Հանդիսության վերջում թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը հրավիրում է Հայոց Հայրապետին՝ տալու իր հոգևոր խրատները

ու պատգամը ամերիկահայ նոր սերնդի ներկայացուցիչներին՝ Հայ Եկեղեցուն, մշակույթին ու մայրենի լեզվին հավատարիմ մնալու։

Նորին Սրբությունը իր գոհունակությունն է հայտնում ջերմ ընդունելության և սրտագին խոսքերի համար, ապա հորդորում է հայ երիտասարդներին միասնական ջանքերով և մեծ նվիրումով ծառայել հայ մշակույթի առաջադիմությանը՝ ներշնչվելով վերածնված մայր հայրենիքի կենդանության աղբյուրներից։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՍԵՆՏ ՋՈՆ ԴԸ ԴԻՎԱՅՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 25, կիրակի։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելության բարեբաստիկ առիթով անա շուրջ մեկ շաբաթ է արդեն, ինչ բովանդակ Նյույորքաբնակ հայությունը ապրում է ազգային-եկեղեցական բացառիկ ոգևորության և երանության պատմական օրեր։ Ս. Էջմիածնի Գահակալի այցելությունները մի շարք պաշտոնական հաստատություններ և միջեկեղեցական կենտրոններ, նրա հանդիպումները հայ և օտար մամուլի ներկայացուցիչների, հայ երիտասարդության և մտավորականության հետ՝ դարձել են համազգային ոգևորության և ցնծության անսպառ աղբյուր։

Այսօր Գյուտ Խաչի տոնի առթիվ Նյու Յորքի Սենտ Ջոն դը Դիվայն եպիսկոպոսական Մայր տաճարում, Հայոց Հայրապետի հովանավորությամբ, մատուցվելու է սուրբ պատարագ։

Հայ հավատացյալների հոգիները խայտում են երանությամբ և ջերմ հույզերով։ Նյու Յորքի եպիսկոպոսական Մայր եկեղեցում, որ մեկն է Միացյալ Նահանգների մեծագույն եկեղեցիներից, համախմբվել է շուրջ 6000 հոգի՝ ներկա լինելու սուրբ պատարագին և ունկնդրելու Ամենայն Հայոց Հայրապետի խոսքը։ Նրանք Մայր տաճար էին փութացել, բացի Նյու Յորքի և Նյու Ջերզիի մոտակա արվարձաններից, նաև հեռավոր շրջաններից՝ Բոստոնից, Դետրոյտից, Սիրակուսից, Տրոյից, Պրովիդենսից, Ֆիլադելֆիայից և Հարտֆորդից՝ միասին ապրելու այս պատմական մեծահանդես օրը։

Ուրախ են բոլորը։ Տաճարը լեցուն է ուխտավորներով և աղոթավոր հոգիներով։ Տաճարի շրջափակում և պողոտայի մայթերի վրա հնչում է մայրենի քաղցրահունչ բարբառը։ Քիչ չի նաև թիվը օտար հավատացյալների։

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, ամպհովանու ներքո, «Հրաշափառ»-ի պայծառ երգեցողությամբ առաջնորդվում է Մայր տաճար։ Օրվա պատարագիչն է ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի բարեջան առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը։

Եկեղեցու դասում տեղ են գրավել, Վեհափառ Հայրապետի կողքին, Տ. Տիրան, Տ. Վաչե, Տ. Ներսես արքեպիսկոպոսները, Տ. Բարկեն, Տ. Վազգեն եպիսկոպոսները, ինչպես նաև վարդապետների և քահանաների դասը։

Ս. պատարագի սրբազան երգեցողությունը կատարում է Նյու Յորքի հայոց Մայր եկեղեցու և շրջակա հայ եկեղեցիների դպրաց դասերից կազմված և շուրջ 150 հոգուց բաղկացած միացյալ երկսեռ երգչախումբը։

Ամեն կողմ խունկ, աղոթք, երգ և սրբազան վեհություն։

Ս. պատարագը շարունակվում է մեծահանդես շքեղությամբ՝ առինքնելով հավատացյալների երկյուղած հոգիները:

«Հայր մեր»-ից առաջ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղղված ողջույնի խոսք է ասում տաճարի տեսուչ կանոնիկոս հայր Ջեյմս Մորթոնը՝ շրջապատված տաճարի կանոնիկոսների խմբով:

Ս. Հաղորդությունից առաջ հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը հետևյալ ոգեշունչ քարոզով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՍԵՑՆՏ ՋՈՆ ԴԸ ԴԻՎԱՅՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սիրելի հավատացյալ զավակներ Մեր,

Օդանավ բարձրանալուց առաջ ես իմ հայացքը ուղղեցի դեպի երկինք: Այդօր օդը պայծառ էր և կապույտի վրա բարձրանում էր հավերժական Արարատը իր սպիտակ կատարով: Եվ այդ օրը Արարատը ահագնածավալ ադամանդի նման ճառագայթում էր: Մի պահ հիասքանչ դիտեցի, և ինձ այնպես թվաց, որ Արարատը ինձ ճանաչեց և լսեց իմ աղերսը: Եվ ինձ հանձնեց իր պատգամը, որպեսզի բերեմ ձեզ, համայն ամերիկահայ Մեր զավակներին, բոլորին անխտիր: Այդ պատգամը, սիրելիներ, այս տարի բացառիկ և մասնավոր մի խորհուրդ ունի, թեպադրել և նույնիսկ հրամայական, Եվրոպական պառլամենտի ձեզ ճանոթ որոշումից հետո, երբ միջազգային մակարդակի վրա, առաջին անգամ լինելով, հայոց մեծ ողբերգության՝ 1915 թվականի ցեղասպանության ճանաչումը հռչակվեց: Մեր հոգիները ցնցվեցին, բոլոր հայերի հոգիները, Հայաստանի լեռներից մինչև Սփյուռքի բոլոր ափերը: Եվ զգացինք, որ այս տարի, հունիսի 18-ին, Ստրասբուրգից մի արահետ, արդարության մի ճանապարհ բացվեց Սևր: Այդ ճանապարհը երկար կտևի, գիտենք բոլորս, գուցե շատ երկար: Այս սուրբ պատարագի պահին ձեր առջև ես, կաթողիկոս Ամենայն Հայոց, օրհնում եմ այդ արդարության ճանապարհը:

Տիրոջ ողորմությամբ երրորդ անգամ լինելով իմ քայլերը ուղղեցի դեպի նոր աշխարհ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, փնտրելու և գտնելու մեր Առաքելական Եկեղեցու զավակներին:

Գոհություն Բարձրյալն Աստծուն, որ իմ իղձը կատարվեց և աղոթքի այս սուրբ պահին ես կանգնած եմ ձեր առաջ, սիրեցյալ իմ հոգևոր եղբայրներ և հավատացյալ զավակներ մեր Մայր Եկեղեցու:

Իմ սրտի բովանդակ ջերմությամբ ողջունում եմ ձեզ հայրական սիրով ու կարոտով և բերում բոլորիդ, բոլորիդ անխտիր՝ երկնային օրհնություն Փրկչի Ծննդյան Սուրբ Սեղանից, բերում եմ մի ճառագայթ Արագածի լուսավորչյան լույս կանթեղից, բերում եմ ողջույնը ձեր հավատակից քույրերի ու եղբայրների Հայաստան աշխարհից, նաև ողջույն սուրբգրական Արարատից, հավերժական վկան հայոց ազգի բազում դարերի պատմության, հույսի անմար փարոսը մեր ժողովրդի արդար երազանքների, ստուգությունը մեր ապագայի:

Հայեր, ուր էլ որ լինեք, աշխարհի ճանապարհների վրա, ի սեր մեր հայրերի Աստծուն, ի սեր մեր հերոսական անցյալի, ի սեր մեր անթաղ նահատակների, ի սեր մեր օրերի հայրենի նոր կյանքի ու ծաղկման, մի

մոռանաք Սուրբ Էջմիածինը, մի մոռանաք Արարատը ու նրա պատգամը, մի մոռանաք Երևանի լույսերը:

Հավատացեք Աստուծո օգնականությանը, հավատացեք հայկյան հանճարին, հավատացեք ձեր հոգևոր ինքնությանը, հավատացեք ձեր հոգու ուժերին, հավատացեք արդարության հաղթանակին, հավատացեք վաղվա էլ ավելի պայծառ լուսաբացին:

«Երանի որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան զի նոքա յագեսցեն» (Մատթ. Ե 7):

Ձեզ ամենքիդ օրհնություն, բյուր օրհնություն:

«Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո» (Սաղմոս Ծ 17):

Ուղիղ քառասունչորս տարի առաջ, 1948 թվականի աշնանային այս իսկ օրերին, Բուխարեստի հայոց Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում, երիտասարդ մի վարդապետ իր անդրանիկ պատարագն էր մատուցում և իր առաջին քարոզն էր արտասանում խուռներամ հայ հավատացյալների ներկայությամբ: Այդ ես էի, երկյուղած ու ինքնամոռաց: Ուխտի և աղոթքի այդ պահին ես աղերսում էի Աստծուն, որ ինձ՝ տկարիս օգնական ու գորավիգ մնա իմ առաքելության ճանապարհին, որպեսզի ես արժանի լինեմ իր կամքը կատարելու մեր ժողովրդի ծոցում: Ես աղոթեցի առ Աստված նաև վասն անսասանության և պայծառության մեր սուրբ Եկեղեցու, վասն հոգևոր շինության մեր ժողովրդի կյանքի ու վասն անվտանգության հայոց Մայր Հայրենիքի:

1948 թվական: Պատերազմ էր աշխարհում, երկրներ, քաղաքներ, շեներ, աղոթքի տաճարներ այրվում էին բոցերի մեջ և մարդկային արյունը հոսում էր անվերջ, խլելով կյանքը միլիոնավոր, միլիոնավոր մարդկանց, խաղաղ բնակիչների, միլիոնավոր մայրերի ու երեխաների:

Մթագնած էր երկինքը նաև ռումեն հայրենիքի, տագնապալի էր կյանքը ժողովրդի Հիթլերյան Գերմանիայի վայրագ կրնկի ներքո:

Այդ պահին, ես մանավանդ աղոթեցի, որ մարդասերն Աստված օգնության հասնի տառապող մարդկությանը, որ բացվեն ողորմության դռները երկնքի, և ազատ ու հզոր հնչեն աշխարհի վրա խաղաղության շեփորները հրեշտակների: Նաև ուժ ու կորով գտա ես իմ մեջ, աղոթելու մեր ազգի զավակների, մեր եղբայրների համար, որոնք հազար-հազարներով մարտնչում էին դաժան թշնամու դեմ, իրենց կյանքը զոհաբերելով վասն հայրենյաց պաշտպանության և ազատության:

Մի պահ ոգեկոչելով անցյալի այդ ողբերգությունները, ես այսօր էլ խղճի պարտք եմ համարում աղոթել, որ աշխարհում նման ողբերգություններ այլևս չկրկնվեն երբեք, որ տագնապների մեջ տվայտող մեր երկրագունդը վերջապես հասնի կայուն խաղաղ գոյավիճակի, և ազգություններ, պետություններ մեծ ու փոքր, գտնեն ճանապարհը համերաշխ գոյակցության և շինարար գործակցության:

Ես հավատում եմ, որ աշխարհի բոլոր ազգությունները, մանավանդ մարդկային լայն զանգվածները ծարավի են խաղաղ ու անվտանգ կյանքի և իրենց ձեռքերը դեպի երկինք կարկառած սպասում են մի հրաշքի, ընդհանուր գիտաթափման հրաշքին, առանց սրի և հրի մի աշխարհի կառուցման հրաշքին:

Սակայն, այնուամենայնիվ, շարունակվում է մեր աշխարհի տագնապալի վիճակը, հակառակ բոլորի բարի կամեցողության: Մղվում եմ երբեմն

նույնիսկ մտածելու, թե մեր օրերի մարդկությունը կարծեք ի վիճակի չէ ինքն իրեն ղեկավարելու, ի վիճակի չէ իր փրկության ճանապարհը գտնելու:

Հիշում եմ երկրորդ դարի վերջերին ապրող անծանոթ քրիստոնյա մի հեղինակի նամակը՝ ուղղյալ Դիոկնետին: Անծանոթ հեղինակը հավանաբար Ալեքսանդրիայի բնակիչ, պաշտպանելով այն ժամանակ Հռոմեական կայսրության տարածքի վրա հալածվող քրիստոնյաներին, պատասխանում է հեթանոսների այն հարցին, թե «Ուրչո՞ւ Հիսուս ավելի շուտ աշխարհ չեկավ»:

Անծանոթ հեղինակը պատասխանում է «Հիսուս եկավ աշխարհ այն ժամանակ, երբ մարդիկ գիտակցեցին իրենց անկարողությունը փրկության հասնելու»: Ահա պատմական մի պատասխան, որ այսօր մանավանդ մեզ մղում է խորհրդածելու:

Մարդիկ, ժողովուրդներ, եկեք մեր հայացքը դեպի երկինք բարձրացնենք և աղոթենք, որ Հիսուսի խաղաղարար հոգին իջնի մեր ալեկոծ աշխարհի վրա իբրև փրկության ղաստ, իբրև «առաւօտ լուսոյ»:

Չի մեզ՝ քրիստոնյաներիս հասար, իշխանը խաղաղության և արեգակը արդարության մեր Տերն ու Փրկիչն է՝ Հիսուս, երեկ, այսօր ու հավիտյան:

Այս աղոթքի պահին իմ խոսքը նաև համերաշխության կոչ է՝ ուղղյալ մեր եկեղեցական բոլոր համայնքներին ի Միացյալ Նահանգներ, ուղղյալ մեր Եկեղեցվո բոլոր սպասավորներին և հավատացյալներին: Հայ եկեղեցական կյանքից ներս, այստեղ և այլուր՝ անմիաբանությունը, անկարգությունները, արծաթասիրությունը և եսակենտրոն այլ մղումներ հաճախ ավերներ են գործում: Այս բոլորի արմատը տկարացումն է իրավ հավատքի: Հավատք առ Աստված, հավատք դեպի մեր հոգևորականներիս ծառայության կոչումը, հավատք դեպի մեր Եկեղեցու սրբազան առաքելությունը, հավատք դեպի մեր ազգի ներկան ու ապագան: Ահա այն հոգեկան վեմը, որի հիմքի վրա կարող է գոյատևել ու ծաղկել մեր Եկեղեցին և մեր ժողովրդի հոգևոր-բարոյական կյանքը ու ապահովել ազգային միասնությունը մեր ժողովրդի, սկսած մեր մայր երկրից մինչև հայ Սփյուռքի հեռավոր ափերը: Կրոնական հավատքի և հոգևոր առաքելության գիտակցությունը պետք է մեր հավատացյալ ժողովրդի կյանքում փայլի, մանավանդ հայ հոգևոր ծառայողների կենդանի օրինակով, որոնց կոչումն է վեր կանգնել կուսակցական, խմբակցական հակամարտություններից և գաղափարախոսական հոսանքներից:

Եկեղեցին միությունն է, հոգևոր եղբայրությունն է հայ հավատացյալ ժողովրդի՝ Քրիստոսի սիրով, Քրիստոսի սիրո մեջ, իբրև կազմակերպություն խարսխված մեր առաքելական Եկեղեցու կարգ ու կանոնի և ավանդությանց վրա, ազգային ոգեկանության ձևավորումների վրա, հոգևոր սպասավորների և աշխարհական հավատացյալների համահավասար գործակցությամբ: Եկեղեցին չի կարող բաժանվել ըստ աշխարհական խմբավորումների: Եկեղեցին չի կարող ժողովրդի մեկ կամ մյուս հատվածին, մեկ կամ մյուս կուսակցությանը պատկանել: Եկեղեցու կոչումն է ազգի կյանքի մեջ ունենալ միարարության առաքելություն:

Ահա երեսուն և ավելի տարիներից ի վեր ես իմ պարտքն եմ համարում իմ հայրական հորդորն ու հրավերը կարդալ բոլորին, որ վերջ գտնի այդ տագնապը կանոնական միության և համերաշխ գործակցության վերահաստատումով:

Իմ աղոթքն է նաև, որ հավատքի զորացումով, բարոյական խոնարհություններին ծաղկումով, վերանորոգվի մեր ժողովրդի կրոնական կյանքը, սուրբ պահպանվի ընտանեկան ուխտը, երիտասարդ սերունդները հեռու մնան անկարգ ու վատառողջ ազդեցություններից: Երանի թե հավատքի զորացմամբ վերարժևորվեն մեր քրիստոնեական ոգեկանությունը, մեր ժողովրդի ավանդական բարոյականը, մեր ազգային պատմության հերոսական զգացողությունը, մեր լուսառատ մշակույթի արժեքները, մեր մայրենի լեզվի անկորնչելի հնչյունները:

Այս անշարժ հավատքով ու աներեր լավատեսությամբ, հավատարիմ մնացեք մեր հոգևոր-ազգային ժառանգությանը, տեսիլքովը մեր օրերի հայրենական վերածննդի, տեսիլքովը մեր՝ էլ ավելի պայծառ ապագայի: Համերաշխեցեք, զորացեք, միացեք և տիվ ու գիշեր անդադար երկնքի ու աշխարհի դռները բախեցեք հանուն հայոց ազգի արդար սպասումների հաղթության:

«Խնդրեցէք և տացի ձեզ, հայցեցէք և գտջիք, բախիցէք և բացցի ձեզ» (Մատթ. Է 7):

Սիրելիներ Մեր, հարազատներ Մեր, այսօր քառասունչորս տարիներ հետո, ինձ թվում է, թե նույն քարոզն եմ արտասանում այս մեծ, լուսառատ քաղաքի Սուրբ Ծաղ տը Տիվայն փառահեղ տաճարի կամարների ներքև, ձեր բոլորի ներկայությամբ:

Սփյուռքի տարածքի վրա ապրող մեր Եկեղեցին ու ժողովուրդը կանգնած են գրեթե նույն հարցերի առաջ, գրեթե նույն պայմաններում:

Հետևաբար այսօր էլ իմ աղերսն է, որ Աստված անշարժ ու անփոփոխ պահպանի իր իսկ հիմնած Եկեղեցին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, Սուրբ Հոգու շնորհները բաշխելով բոլոր հայ հավատացյալներին:

Քրիստոնեական հավատքը հայ ժողովուրդը ընդունեց շատ դարեր առաջ ու այն պաշտպանեց հաճախ իր կյանքի իսկ գնով: Հայ Եկեղեցու պատմությունը մի դյուցազներգություն է վասն Քրիստոսի և վասն հայրենյաց:

Այսօր էլ մենք նույն Եկեղեցին ենք, այսօր էլ մենք նույն հավատավոր ժողովուրդն ենք, այսօր էլ Քրիստոսն է մեր ճանապարհը, մեր ճշմարտությունը և կյանքը:

Հավատացյալ զավակներ Մեր, հպարտ եղեք ձեր նախնյաց սուրբ հավատքով, հպարտ եղեք ձեր առաքելահիմն Մայր Եկեղեցով, հպարտ եղեք աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով և ամերիկյան քրիստոնյաներ այս մեծ երկրում սուրբ պահեցեք ձեր կրոնական ինքնությունը, ձեր ազգային ոգեկանության արժեքները, ձեր բարոյական ավանդությունները, ձեր հայրենաբաղձ զգացումները, լինելու համար նաև կարգապահ ու շինարար քաղաքացիները ամերիկյան աշխարհի:

Սեր և խաղաղություն ու ամենայն բարիք եղիցին ընդ ձեզ:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութեան»:

Քարոզի ավարտին, ի նշան հայ և անգլիկան եպիսկոպոսական Եկեղեցիների միջև գոյություն ունեցող սիրո և եղբայրության կապերի, Վեհափառ Հայրապետը կանոնիկոս հայր Ջեյմս Մորթոնին, որպես հիշատակ, հանձնում է Վասպուրականի մանրանկարչական դպրոցի մի գեղեցիկ մանրանկարի վերարտադրություն:

Սուրբ պատարագի արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով անցնում է ժողովրդի ծովածավալ բազմության միջով՝ հայրապետական իր օրհնությունները ափռելով իր հանդիսավոր երթի ճանապարհին:

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՐԵԿՈ՝ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հոկտեմբերի 25-ի այս պատմական օրվա երեկոյան Նյու Յորքի «Էլվերի Ֆիշեր» սրահը լեցուն էր արվեստագետներով և արվեստասեր հանդիսականներով: Սրահի բեմի ճակատին զետեղված էր Ամենայն Հայոց Հայրապետության խորհրդանշանը:

Նյու Յորքի աշխարհահռչակ սիմֆոնիկ նվագախումբը, հայ և օտար երգիչներից կազմված բազմամարդ երկսեռ երգչախումբը, ինչպես նաև սրահում հավաքված բովանդակ ժողովուրդը անհամբեր սպասում էին Վեհափառ Հայրապետի ժամանմանը:

Հոգևորականներ, ազգային, հասարակական, քաղաքական ու մշակութային գործիչներ, գրողներ և կրթական մշակներ եկել էին հարգելու հիշատակը Հայոց Հայրիկի՝ Մկրտիչ Խրիմյան Ամենայն Հայոց կաթողիկոսի, որ ամեն հայ սրտի մեջ բորբոքում է հուրը հայրենյաց կարոտի:

Ժամը 19-ին ժամանում է Վեհափառ Հայրապետը՝ ուղեկցությամբ Տ. Թորգոմ, Տ. Վաչե, Տ. Ներսես, Տ. Վազգեն սրբազանների: Ներկաները դղրդագին ծափերի ներքո դիմավորում են մերօրյա Հայոց Հայրիկին՝ Խրիմյանաշունչ Վազգեն կաթողիկոսին, որ նույն հայրենասիրական պատգամներով ոգեշնչում է հոգիները հայորդիների:

Հանդիսության սկզբին սրտառուչ խոսքով հանդես է գալիս Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը.

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Այս գիշեր՝ հրճվագին, Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի այցը երաժշտությամբ ու երգով կհիշատակենք: Մեր ժողովուրդին ամենեն տաղանդավոր զավակներեն ոմանք պատմական այս ուրախ առիթը կբաժնեն մեզի հետ:

Համերգը նվիրված է Խրիմյան Հայրիկին, մեր թեմի հիմնադիրին՝ որուն օրհնությամբ միայն կանք այսօր, և որպես ընդարձակ ու կազմակերպված գաղութ կպատվենք մեր սիրելի Հայրապետը: Ստեղծագործ, հոյակապ անհատականություն մըն էր Հայրիկ: Հիմնեց տպարաններ, հրատարակեց թերթեր, ու երկնեց թե՛ արձակ և թե՛ քերթողական գործեր: Առաջնորդեց Արևելյան և Արևմտյան Հայաստանի մեջ հաստատված և Նոր Աշխարհի մեջ ցրված հայ ժողովուրդը, հաստատակամ հետևողականությամբ ու տեսիլքով: Իր վախճանման 80-ամյակին առիթով մեր թեմը կհիշատակե զինք, ոչ միայն հսկայական իր վաստակին դիմաց ակնածանքով, այլ նաև ներշնչվելու համար ծառայության և անսակարկ հանձնառության ու նվիրումի իր ոգիեն:

Նորին Սրբություն Վազգեն Առաջին, մեր արժանահարգ հյուրն ու Հոգևոր Հայրը, հարազատորեն կընթանա Խրիմյան Հայրիկի լուսեղեն ճամ-

բեն, խանդավառորեն ընդունված Եկեղեցվո զորացման, և ջանալով կենսավորել անոր առաքելությունը: Եվ այս՝ ըլլա եկեղեցաշինության ձեռնարկությամբ, և սպասման եկեղեցիներու վերանորոգման ծրագիրներով՝ Հայաստան աշխարհի տարածքին, և կամ Աստուծո խոսքին տարածման նախաձեռնությամբ, ինչպես կվկայե իր բարձր հովանավորությամբ լույս տեսած հրատարակությունները կարգին Նոր Կտակարանի թարգմանությունը արդի հայերենով:

Հիշատակի այս համերգով՝ ընդունված Խրիմյան Հայրիկին և ի պատիվ Նորին Վեհափառության, կրնանք հրճվիլ միասին հայ ոգեղինությամբ՝ որ կկամրջե ցամաքամասերն ու կկամարե ժամանակն ու դարաշրջանները սերունդներուն:

Թող Աստված անխախտ ու անվթար պահե այդ ոգին:

Տ. Թորգոմ սրբազանը իր ողջույնի խոսքի ավարտին կատարում է գեղեցիկ մի անակնկալ՝ Վեհափառ Հայրապետին մատուցելով նրա հեղինակած «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» ուսումնասիրության նոր, շքեղ հրատարակությունից մի օրինակ:

1943 թվականին Բուխարեստում, դեռևս հոգևորական չձեռնադրված, Կարապետ Պալճյանը, համաշխարհային երկրորդ պատերազմի օրերին, իր համեստ միջոցներով հրատարակել էր այդ աշխատությունը՝ ընդունված մեծ Հայրապետի՝ Խրիմյան Հայրիկի հիշատակին: Հին հրատարակությունը ամբողջությամբ սպառված լինելու պատճառով, Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդարանը գեղեցիկ գաղափարն էր ունեցել այն վերահրատարակելու և այս ոգով ընդունելու հեղինակին՝ Վազգեն Ա կաթողիկոսին:

Առաջնորդ սրբազանը վերահրատարակության առթիվ գրած իր առաջաբանում ասում է.

«Ուրախությամբ է որ Ս. Վարդան հրատարակչության անունով կվերահրատարակենք Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոս Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի խիստ շահեկան աշխատասիրությունը «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» խորագիրով:

Նորին Սրբությունը այս ուսումնասիրությունը կատարած է նախքան կուսակրոն քահանա ձեռնադրվիլը, և այդ իսկ պատճառով Անոր աշխարհականի անունը՝ Կ. Պալճյան պահված է որպես հեղինակի անուն և փակագիծի մեջ տրված է Ամենայն Հայոց կաթողիկոսի հանգամանքը:

Այս վերահրատարակությունը նախաձեռնված է երեք գլխավոր պատճառներով.

1. 1943 թվականին Պուքրեշի մեջ լույս տեսած այդ հրատարակությունը սպառած է:

2. Այս տարի կնշվի Խրիմյան Հայրիկի մահվան 80-ամյակը:

3. Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոսը հովվապետական այցելությամբ կգտնվի Միացյալ Նահանգներ:

Վստահ ենք որ ընթերցողները հետաքրքրությամբ և վայելքով պիտի կարդան «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» խորիմաստ և խորաթափանց ուսումնասիրությունը»:

Վեհափառ Հայրապետը, ստանալով վերահրատարակված իր աշխատասիրությունը, խորապես հուզված, նախ խոսում է իր այս ուսումնասիրու-

Վենետիկ Հայրապետի՝ Խրիմյան Հայրիկին նվիրված գրքի շապիկը

թյունը գրելու շարժառիթի մասին, շատ հաղորդական և հաճելի ձևով, ապա իր պատգամն է տալիս ներկաներին.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Լուսո խորան Սուրբ Էջմիածնի կամարներու կողքին, սպիտակ մարմարի տակ կհանգչի մարմինը Վասպուրականի Արծիվ Հայոց Հայրիկին:

Գրելու համար Հայրիկի մասին, պետք է գրիչը թաթխել հայ ժողովուրդի հույզերու և երազանքներու ավազանին մեջ, զի Տ. Տ. Մկրտիչ Խրիմյան Հայրապետը, համայն հայության գիտակցության մեջ, շատոնց ի վեր փառավորված է անթառամ լուսապսակով՝ իբրև անձնդիր քաջ Հովվապետ, իբրև դաստիարակ հայ շինականի, իբրև նվաստ հայրենյաց դարավոր վշտի, իբրև ռահվիրա հայրենյաց ազատության: Անոր ոգին կսավառնի այսօր ալ հայոց աշխարհի երկնակամարին ներքև՝ հավատք և հույս ներշնչելով իր ժողովուրդին, լուսավոր նոր հորիզոններ բանալով դեպի ապագան:

Ամենայն Հայոց Հայրիկը կմնա բոլորիս համար կենդանի, պաշտաս, իբրև խորհուրդ, իբրև կարապետ, իբրև պատգամ:

Իր կյանքի ընթացքին երկու տեսիլքներ, երկու մեծ իղձեր առաջնորդեցին զինք՝ խաղաղությունը և վերաշինությունը հայրենի երկրի ու վերադարձը պանդուխտ հայերու դեպի Հայաստան:

Լսեցեք կտակը Հայոց Հայրիկին, բացեք ձեր սրտերը.

«Ես քեզ կթողում մեր հայրենի ժառանգություն, դաշտեր ու հողեր, կթողում քեզ գութան երկու տավարներով, կթողում կթան կովեր ու ոչխարներ: Թե մեռնիմ, երթամ գերեզման, և այլևս չկարամ խոսել ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով, ահա կթողում ձեզ գիրս իբրև մշտախոս կտակ և հիշատակ, որուն միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողեն չբաժնվի»:

Ով պաշտելի Հայրիկ, տես ահա, որ այսօր խաղաղ է երկիրդ քու նվիրական, մայր հողը ծաղկած է թոռնիկներուդ աշխատանքով արդար, քու երազած ճարտար հնարանքներովը արդի գիտության, պտուղներ տալով մեկի տեղ երեսուն, մեկի տեղ վաթսուն, մեկի տեղ հարյուր: Լեցուն են ամբարները շինականներուն, առատ կհոսի ոսկեվազ գինին Արարատյան դաշտի, կբարձրանան քաղաքներն ու գյուղերը մեր շեն, և համայն ժողովուրդը մեր, սուրբ տենդով զեղուն, կապրի կառուցելով, կկառուցե երգելով, լույս երազանքներով...

Սակայն, Հայրապետ մեր բարի, «նուագող վշտից հայրենեաց», ինչպես քու կյանքիդ օրերուն, այսօր ալ տակավին ունինք ի սփյուռս աշխարհի ցրված պանդուխտ զավակներ, մեր աշխարհեն պոկված հայ շինականներ, հազար-հազարներ...

Արդ, աղոթե դուն Հայոց Աստուծույն, որ օգնության հասնի մեզի տկարներուս, որպեսզի կարենանք քու և մեր հոտը պահել ամբողջ ու անբաժան, հեռու կորստյան ճամբաներե, հափշտակիչ օտար ձեռքերե, պահպանելով բոլոր Մեր զավակները՝ հոգեպես նվիրված իրենց հավատքի տուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, իրենց կյանքի մշտահոս աղբյուր Հայոց աշխարհին, իրենց ավանդություններուն, իրենց մայրենի լեզվին, մինչև

օրն այն արևով լեցուն, երբ շեփորները վերատին հնչեն, երբ փրկության լաստերը ազատ արձակվին, և դեպի երկիր դառնան պանդուխ որդիները Մեր՝ աշխարհի բոլոր ծագերեն:

Հարազատ ժողովուրդ Մեր, հուսանք և հավատանք, մնալ հավատարիմ Հայոց Հայրիկի հիշատակին, անոր տեսիլքներուն, անոր ժառանգության, և ապրիլ ու գործել՝ ի փառս մեր առաքելական սուրբ Եկեղեցվույն և մեր անմահ ազգին:

Փրկչի Իջման սուրբ սեղաղնեն, երջանկահիշատակ Խրիմյան Հայրիկի լույս շիրիմեն՝ բոլորիդ ողջույն, բոլորիդ օրհնություն, սիրով, կարոտով, քաղցր սպասումով:

Հայոց Հայրապետի խոսքի ավարտին սրահն ամբողջ հոտնկայս երկար ծափահարություններով և ոգևորությամբ դիմավորում է Հայոց Հայրապետի սրտից բխած խոսքը՝ «նուագող վշտից հայրենեաց» Հայրապետի մանին:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական մի ճոխ ծրագիր: Մեկը մյուսին հաջորդում են միջազգային ճանաչման արժանացած տաղանդավոր արվեստագետներ Ալան Հովհաննեսի, Հերի Զարաբյանի, Լիլի Զուքանգյանի, Պերճ Ժամկոչյանի, Արա Բերբերյանի, Լուսին Ամարալի, Անի Գավաֆյանի, Տիգրան Ադամյանի գեղարվեստական բարձր մակարդակով կատարված ելույթները:

Գեղարվեստական ծրագրի երկրորդ բաժնում կատարվում է ծանոթ երաժիշտ և խմբավար Օհան Դուրյանի «Կոմիտասյան»-ը՝ նվիրված Կոմիտաս վարդապետի հիշատակին, հեղինակի ղեկավարությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Վաշինգտոնը Միացյալ Նահանգների մայրաքաղաքն է և միաժամանակ քաղաքական, մշակութային և գիտական խոշոր կենտրոն: Հիմնադրվել է 1791 թվականին: Քաղաքն իր անունը ստացել է հայտնի զինվորական գործիչ գեներալ Ժորժ Վաշինգտոնի անունից, որը եղել է Միացյալ Նահանգների առաջին նախագահը: Այժմ Վաշինգտոնում և նրա արվարձաններում ապրում է ավելի քան 3 միլիոն բնակչություն: Այստեղ են գտնվում հռչակավոր Կապիտոլիումը (Կոնգրեսի շենքը), Սպիտակ Տունը, Գերագույն ատյանը, Ջոն Քենեդիի անվան կենտրոնը, Գիտությունների ազգային ակադեմիան և կառավարական մի շարք հիմնարկներ: Վաշինգտոնում գործում են հինգ համալսարան և բազմաթիվ գիտական ընկերություններ և հաստատություններ: Քաղաքն արագ զարգացում ապրեց հատկապես համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում և դրանից հետո:

Վաշինգտոնի հայկական համայնքը փոքրաթիվ է: Համայնքի ազգային կյանքը կազմակերպում են մշակութային, բարեգործական մի շարք միություններ և երիտասարդական կազմակերպություններ: Քաղաքում գործում են երկու հայկական եկեղեցիներ՝ կիրակնօրյա դպրոցներով: Եկեղեցիներից յուրաքանչյուրն ունի իր ծխական պարբերաթերթը:

Հոկտեմբերի 25-ին, կիրակի օրը, գիշերվա ժամը 23.30-ին, Նորին Սուրբ Օծությունը, ընկերակցությամբ իր մեծ շքախմբի, ժամանում է «Դալլաս» միջազգային օդանավակայան, ուր դիմավորվում է համայնքի պաշտոնական մարմինների ներկայացուցիչների, ազգայինների և բազում հավատացյալների կողմից:

Համայնքի անունից բարիգալստյան խոսք են ասում Տ. Վրթանես ավ. քհն. Գալայճյանը և տիկ. Լուսի Մուրատը՝ ջերմորեն ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությունը, այն գնահատելով նաև որպես օրհնություն, պատիվ և բարիք ԱՄՆ-ի մայրաքաղաքի և նրա ողջ բնակչության համար:

Վեհափառ Հայրապետի շքախմբին մաս էին կազմում Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ հայրերը՝ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը՝ արևելյան թեմ, Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը՝ արևմտյան թեմ, Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը՝ Կանադայի թեմ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Նորին Սուրբ Օծության գանձանակիր Տ. Նավասարդ աբեղ. Կճոյանը, արևելյան և արևմտյան թեմերի թեմական խորհուրդների ատենապետներ՝ դատավոր Վինսենթ Կյուրեղյանը և Վարդան քհն. Գասպարյանը, ինչպես նաև Կենտրոնական Գործադիր Հանձնախմբի զույգ ատենապետներից՝ տիար Սուրեն Ֆեռճյանը:

Օդանավակայանի ընդունելության սրահում Հայոց Հայրապետը իր գնահատանքի և օրհնության խոսքը ասելուց հետո՝ իր շքախմբով առաջնորդվում է «Մադիսոն» հյուրանոց:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ՌՈՆԱԼԴ ՌԵՅԳԱՆԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Ամենայն Հայոց կաթողիկոսը հանդիպում է ունենում ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի հետ: Պատմական այս հանդիպումը տեղի է ունենում Սպիտակ Տան Ռուզվելտյան ընդունարանում:

Նախագահի ժամանումից առաջ Ծերակույտի փոքրամասնության ղեկավար, ծերակուտական Ռոբերտ Դոլը ողջունում և բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին և նրա պատվիրակությանը, որին մաս էին կազմում.

Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան.

Տ. Վահե արքեպիսկոպոս Հովսեփյան.

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան.

Տ. Վազգեն եպիսկոպոս Քեշիշյան.

Տ. Վարդան ավագ քահանա Գասպարյան.

Դատավոր Վինսընթ Կյուրեղյան.

Տիար Պերի Զորության՝ վարիչ Հայկական համագումարի վարչական մարմնի.

Տիար Արմեն Ավետիսյան՝ ատենապետ Ազատության Արձանի հանձնախմբի.

Տ՛ար Սուրեն Ֆեսճյան՝ ատենապետ արևելյան թեմի ընդունելության հանձնախմբի.

Տիար Էդուարդ Մերեճյան՝ ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարության փոխքարտուղար, պատասխանատու Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի հարցերի:

Հանդիպումը պատմական էր ոչ միայն որովհետև Ամենայն Հայոց կաթողիկոսը առաջին անգամ լինելով հրավիրվել էր Սպիտակ Տուն՝ տեսակ-

Վեցերորդ հանդիպումը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությամբ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջորջ Շուլցի հետ

ցելու ԱՄՆ-ի Նախագահի հետ, այլ նաև նրա համար, որ այս հանդիպումը գրանցվեց Նախագահի այդ օրվա պաշտոնական օրակարգում, պարագա, որ վերապահվում է միայն պետության ներկայացուցիչ Նախագահներին ու վարչապետներին:

Հանդիպման ընթացքում Տ. Տ. Վազգէն Ա կաթողիկոսը իր գոհունակությունն է հայտնում Սպիտակ Տուն հրավիրված լինելու և մեծարգո Նախագահի հետ տեսակցելու առիթի համար: Հայաստանյայց Եկեղեցու մասին խոսելով, Նորին Սրբությունը շեշտում է, որ հայ ժողովուրդը առաջին ազգն է եղել, որ քրիստոնեությունը ընդունել է որպես պետական կրոն. հայ ժողովուրդը դեռևս վաղ ժամանակներում ըմբռնել է, որ քրիստոնեությունը որպես լույս ճառագայթելու և ապաստան է լինելու բոլոր քրիստոնյաներին, որոնք գտնվում են հեթանոս ազգերի միջև:

«Հակառակ մի շարք ազգերի և մասնավորաբար Օսմանյան կայսրության կողմից կրած տևական հալածանքներին և կոտորածներին, հայ ժողովուրդը հաստատ մնաց քրիստոնեական իր հավատքին և պահեց իր քրիստոնեական ժառանգությունը՝ ընտանեկան բարոյականը և իր ազատատենչ ոգին: Մեր ժողովուրդը ցրվեց աշխարհի չորս ծագերը, մանավանդ առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ բազմաթիվ հայեր եկան և բնակություն հաստատեցին ասպնջական Միացյալ Նահանգներում: Այսօր 700 հազար հայեր են ապրում Միացյալ Նահանգներում: Մենք հորդորում ենք նրանց, որ հավատարիմ լինեն Միացյալ Նահանգներին և մնան շինարար օգտակար քաղաքացիներ այս քրիստոնյա մեծ երկրի»:

Նորին Սրբությունը հանգամանորեն խոսում է նաև աշխարհի արդի տագնապալի վիճակի մասին և կոչ անում մեծարգո Նախագահին, որ իր վճռական նպաստը բերի աշխարհի խաղաղության պահպանմանը ի խնդիր: Ապա Նորին Սրբությունը Նախագահ Ռեյգանին և իր ազնվափայլ տիկնոջը մաղթում է քաջառողջություն և երկար կյանք:

Իր խոսքի վերջում Հայոց Հայրապետը, իբրև այս այցելությունից և իր նկատմամբ ցուցաբերված սիրալիր ընդունելությունից իր զգացած գոհունակության առհավատչյա, Նախագահ Ռեյգանին նվիրում է հայկական զարդանախշերով դրվագված արծաթյա մի գեղեցիկ ափսե՝ Միածնաէջ տաճարի պատկերով:

Իր պատասխան խոսքում ԱՄՆ-ի մեծահարգ Նախագահը շնորհակալություն է հայտնում արտահայտված ազնիվ զգացումների համար և մասնավոր գնահատանքով հիշում հայերի՝ Ամերիկայի տնտեսական և մշակութային կյանքի առաջադիմության համար ներդրած նպաստը և մաղթում, որ, հակառակ պատմության ընթացքում իրենց կրած անլուր հալածանքներին, հայերը Միացյալ Նահանգներում և ամենուր շարունակեն իրենց ստեղծագործ աշխատանքը: Իր ելույթի վերջում Նախագահ Ռեյգանը ջերմ ցանկություններ է արտահայտում նաև Հայ Եկեղեցու ծաղկման և բարգավաճման համար:

Սույն հանդիպմանը, իբրև մեծապատիվ Նախագահի խորհրդական և ընդունելության մարմնի անդամ, ներկա էր հայազգի տիար Էդուարդ Մերեճյանը՝ ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարության փոխքարտուղար և պատասխանատու Մերձավոր Արևելքի և Հարավային Ասիայի հարցերի:

Ընդունելությանը ներկա էին նաև օտար մամուլի թղթակիցներ և Սպիտակ Տան լուսանկարիչներ։

Հաջորդ օրը Վաշինգտոնի գլխավոր թերթը՝ միջազգային համբավ վայելող «Վաշինգտոն Փոստ»-ը, անդրադարձավ օրվա հանդիպմանը, լուսանկարով և հակիրճ նկարագրականով։ Այնտեղ ի միջի այլոց ասվում է.

«Նախագահ Ռեյգանը երեկ հանդիպեց Հայ Եկեղեցու Ծայրագույն Պատրիարք Վազգեն Առաջինի հետ, որն այդ այցելությունը կոչեց «Պատմական դեպք և առիթ»՝ հայտնելու իր երախտագիտությունը Միացյալ Նահանգներին, որ կրոնական, մշակութային և տնտեսական առիթներ է տվել հայ ժողովրդին։ Նախագահ Ռեյգանը իր պատասխան խոսքում գնահատանքով անդրադարձավ զանազան բնագավառներում հայ ծագումով ամերիկացիների ներդրումին»։ «Վազգեն Առաջինը,—շարունակում է թերթը,—անուղղակիորեն հիշատակել է 1915—23 թվականներին տեղի ունեցած ջարդերը, որոնք կատարվեցին Օսմանյան Թուրքիայի իշխանության շրջանին, ավելացնելով, որ բազմաթիվ հայ ամերիկացիներ զավակներն ու թոռներն են ցեղասպանության այդ զոհերի»։



ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Նույն օրը, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետը քաղաքավարական այցելություն է տալիս ԱՄՆ-ում ՍՍՀՄ դեսպանատուն: Վեհափառ Հայրապետին շատ ջերմ ընդունում և բարի գալուստ է մաղթում դեսպանի առաջին տեղակալ Եվգենի Կատովոյը: Հայոց Հայրապետի և մեծարգո տեղակալի միջև տեղի է ունենում զրույց: Այցելությանը ներկա է լինում դեսպանատան աշխատակից տիար Էդուարդ Մալայանը:

Հանդիպումն անցնում է բարեկամական սիրալիր մթնոլորտում:

ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վաշինգտոնի հայոց Ս. Աստվածածին եկեղեցի: Տոնական խանդավառ տրամադրության մեջ էր բազմությունը: Ակնածանքի և որդիական գուրգուրանքի ջերմ մթնոլորտ էր սպասում Հայոց Հայրապետին:

Եկեղեցականների և դպրաց դասի մասնակցությամբ և «Հրաշափառ» շարականի հնչյունների ներքո Հայոց Հայրապետը, իր օրհնությունները բաշխելով, մոտենում է Սուրբ Սեղանին «յերկրպագութիւն եկեղեցւոյ»: «Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս, ի տուն Տեառն երթիցուք մեք»,—հնչում է սաղմոսերգուի խոսքը հայրապետական շեշտով: «Ալելուիա, ալելուիա. Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի», արձագանքում է դպրաց դասը՝ ղեկավարությամբ դոկտ. Սոկրատ Պոյաճյանի: Հիրավի ուրախ էր Եկեղեցին հայոց, որ իր Հայրապետը գալիս էր ասելու. «Վասն եղբարց և ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութիւն»:

Ողջույնի և բարիգալստյան իր խոսքում եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Վրթանես քհն. Գալայճյանը ասում է հետևյալը.

Տ. ՎՐԹԱՆԵՍ ՔԱՀԱՆԱ ԳԱԼԱՅՃՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Առանձնաշնորհում կնկատենք այսօր Ձերդ Վեհափառությունը ողջունել այս հարկեն ներս:

Վեհափառ տարապետ Հայրապետը ԱՍՀՄ դեսպանատանը, ԱՄՆ-ում ԱՍՀՄ դեսպանի տարեցլիկ ընդունելության ընթացքում Լոսանջելես Եղեգնի Պատուավոր ճեմ

Ս. Աստվածածին եկեղեցվո համայնքը և մայրաքաղաք Վաշինգտոնի ընդհանուր հայությունը, ինչպես նաև մեզի մոտակա Բալթիմորի հայությունը ցնծության մեջ է, որ ազգիս Վեհափառ Հայրապետը իր զավակներուն այցի է եկած: Անցնող այս մի քանի շաբաթներու ընթացքին մենք անընդհատ աղոթեցինք Ձերդ Ս. Օծության քաջառողջության համար, որպեսզի կարենաք Ձեր հոտին հետ ըլլալու ֆիզիկապես հոգևեցուցիչ պարտականությունը լիովին կատարել:

Մենք գիտենք, որ հոգեպես և Ձեր աղոթքներով միշտ մեզի հետ եք: Մենք նս որդիական սիրով մեր հոգվո աչքերը դեպի Ձերդ Սրբությունը, դեպի Ս. Էջմիածին, դեպի Արարատ դարձուցած՝ կակնկալենք հոգեկան մխիթարություն, քաջալերանք մեր գոյապայքարի մեջ, ուղղություն և իմաստուն խրատ մեր կրոնական, ազգային-մշակութային, ընկերային-բարոյական կենսունակության:

Վեհափառ Տեր, Ձերդ Սրբության հայրական խնամքը մենք զգացած ենք և ապրած անցած երեսուն ավելի տարիներու ընթացքին: Ձերդ Վեհափառության շինիչ, ոգևորիչ, դաստիարակող խոսքը մեզի մոտեցուցած է Ս. Էջմիածինը, Մայր Հայրենիքը՝ անանխընթաց չափով: Օտար այս ափերուն, Ձեր անձը, օրինակը, խոսքը եղած են այն կապը, որ մեզ միացուցած է մեր պատմության, մեր հավատքին:

Այսօր այս օրհնաբեր այցելությամբ այդ կապը ավելի ևս կամրապնդվի, և մենք կուխտենք այս Ս. Խորանին առջև, ուր Տերը բազմած է, որ մենք պիտի շարունակենք մեր հայրերու ճամբով, հավատքի ճամբով իրագործել մեր հայ քրիստոնյայի առաքելությունը:

Վեհափառ Տեր, այսօր Մեծագույն Վաշինգտոնի այս համայնքը կպատկերացնե մեկ մանրանկար պատկերը ամերիկահայ գաղութին, այն իմաստով, որ այստեղ հավաքված են և դեռ կհավաքվին հաջորդական սերունդները ամերիկահայ գաղութին, որոնք այլազան ուսումնական մակարդակով մասնագիտացած ասպարեզներով, քաղաքական և ընկերային մարզերու մեջ առաջնորդողի դեր կատարած տաղանդներով, կկերտեն նոր դիմագիծը ամերիկահայուն:

Բոլորս՝ այստեղ հավաքված կամ հարկադրաբար բացակա, Ձերդ Ս. Օծության աղոթքին, օրհնության և հայրական խնամքին պետք ունինք:

Ձեր խոսքին և օրհնության կսպասենք, Վեհափառ Տեր, բարի եկաք:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:
«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի»:
«Ուրախ եղիր, Սուրբ Եկեղեցի»:

Աստուծո օգնականությամբ մեր Եկեղեցին կապրի ուրախ օրեր բազում անգամներ: Ահա այսպիսի ուրախ պահ մըն է նաև այսօր, այս փոքրիկ, բայց սիրուն եկեղեցվո կամարներուն տակ, Միացյալ Նահանգներու այս կանաչազարդ մայրաքաղաքի սրտին վրա հաստատված:

Ուրախ եմ, որ կուգամ ձեզի Աստուծո օրհնությունը բերելու Սուրբ Էջմիածնեն, ուր մեր նախնիք 1700 տարիներ առաջ իրենց քրիստոնեական

հավատքի վկայությունները ամուր կերպով հաստատեցին իբրև արտահայտությունը իրենց ոգեկանության, իրենց բարոյական գիտակցության: Մեր ազգը իսկապես ոգեկան արժեքներ ստեղծած և ոգեկան արժեքներ դավանող ժողովուրդ եղած է, այլապես չէր կրնար ապրիլ: Շատ ցեղեր, նույնիսկ ազգություններ պատմության թատերաբեմի վրայեն անհետացած են և երբեմն նույնիսկ անհետ կորսված, որովհետև անոնք ապրած են միայն մարմնապես, կամ միայն նյութական բարիքներով, կամ քաղաքական նվաճումներով:

Հայ ժողովուրդը շատ չի կրնար պարծենալ իր քաղաքական հզորությամբ անցյալի մեջ, հայ ժողովուրդը շատ չի կրնար պարծենալ իր նյութական հարստություններով պատմության ընթացքին, բայց հայ ժողովուրդը կրնա պարծենալ իր ոգեկան, իր հոգևոր արժեքներով: Եվ այսպես է, որ անիկա կրցավ ապրիլ մինչև այսօր, դիմագրավել ամեն դժվարություն, տոկալ ամեն տառապանքներուն, ամեն կոտորածներուն, ամեն հարստահարություններուն, շատ անգամ ցիրուցան ըլլալով աշխարհով մեկ:

Հայ ժողովուրդի գոյատևման գաղտնիքը այդ ոգեկանությունն է, որ կխորհրդանշվի, կարտահայտվի մանավանդ մեր Մայր Եկեղեցիով, մեր քրիստոնեական հավատքով: Քրիստոնեությունը հայերու համար դուրսեն ներմուծված կրոն մը չէ եղած, պարզապես ուրիշներու օրինակին հետևելով: Քրիստոնեությունը հայ ազգի հոգվո արտահայտությունն է: Տակավին առաջին դարերեն Քրիստոսի լույսը, Ավետարանի պատգամը սկսավ տարածվիլ Հայաստանի վրա և պարարտ հող գտավ: Կարծես հայ ազգը Հիսուսեն առաջ Քրիստոսին կսպասեր: Երբ Քրիստոսի լույսը սկսավ ճառագայթել Հայաստան աշխարհի վրա, հայ ազգը իր սիրտը բացավ այդ լույսին և եղավ առաջին քրիստոնյա պետությունը այս աշխարհի վրա, որուն համար մենք կրնանք հպարտ ըլլալ: Միգուցե մեր ամենամեծ ազգային հպարտությունն է այդ:

Այս դարուն մեջ, երբ ընկերային և բարոյական վերիվայրումներու շրջան մը կապրի մարդկությունը ամեն տեղ, Քրիստոսի Ավետարանը իր հոգեոր-բարոյական պատգամներով դարձած է այժմեական ավելի քան երբեք: Մենք կհավատանք, որ այս բոլոր վերիվայրումները, այլասերիչ երևույթները, որ կդրսևորվին ամեն տեղ, կրնան հեղաշրջվիլ, կրնան բարոյական ճամփու մեջ մտնել Քրիստոսի Ավետարանի պատգամներով:

«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի»:

Կես ժամ առաջ այցելություն տվի Սպիտակ Տուն: Ձիս և ինձի ուղեկցողները ընդունեց ձեր երկրի հարգարժան նախագահը «Ռուզվելտյան դահլիճ»-ին մեջ՝ իրեն հատուկ բարեկամական ժպիտը դեմքին: Անշուշտ իմ հարգանքի խոսքս ուղղեցի իրեն և բարեմաղթություններ ըրի իր հեղինակավոր անձին և այս մեծ երկրին՝ Միացյալ Նահանգներուն:

Ես կաղոթեմ, որ Աստված իր Սուրբ Հոգիով ներշնչե այս մեծ երկրի նախագահը և անոր բոլոր գործակիցները, որպեսզի մյուս ազգություններուն հետ ձեռք-ձեռքի տված անոնք կարողանան կառուցել նոր աշխարհ մը առանց հուրի և սուրի: Մանավանդ մեր ազգը կարիք ունի խաղաղության: Մենք, իբրև ազգություն, մեր Մայր Հայրենիքի մեջ դարեր շարունակ տառապած ենք և նահատակված պատերազմներու ընթացքին: Եթե առաջին համաշխարհային պատերազմը չսանձազերծվեր, մեր ազգի ցեղասպանությունը տեղի չէր ունենար:

Բազում ողբերգություններու բովեն անցավ մեր ազգը, վերջապես հպ-

սավ այսօրվան խաղաղ գոյավիճակին արդի Հայաստանի մեջ, ուր կապրին երեք և կես միլիոն հայեր անվտանգ պայմաններու մեջ, զարգացնելով իրենց ազգային մշակույթը և երազելով ավելի պայծառ ու արդար ապագա մը։ Մենք աղոթող ենք վասն խաղաղության ամենայն աշխարհի։

Շնորհակալ եմ, սիրելի Տեր Հայր, Ձեր շատ իմաստալից և հուզիչ խոսքերուն համար։ Շատ լավ գրած էիք։ Գրած էիք սրտով, ապրումով։ Կմաղթեմ, որ այդ զգացումները և այդ մտքերը, զոր Դուք արտահայտեցիք, մնան կենդանի նաև ձեր ժողովուրդի սրտերուն մեջ։

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեսոնէ և ի Մէնջ». ամեն։

Այս առթիվ Նորին Սրբությունը, որպես հիշատակ, Ս. Էջմիածնի մեջ պատրաստված ձեռագործ մի բուրվառ է նվիրում եկեղեցուն։

Հավատացյալ ժողովրդին աջահամբույրի առաջնորդելուց առաջ թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը շնորհակալություն է հայտնում մեծահարգ տիար Արմեն Ավետիսյանին, որի միջոցով ու նաև այլոց օժանդակությամբ Վեհափառ Հայրապետի և նախագահ Ռեյգանի հանդիպումն իրագործված էր։ Առ ի գնահատություն իր սույն նախաձեռնության՝ Վեհափառ Հայրապետի ձեռքով «Հայկական Վերածնունդ» մեդալով պարգևատրվում է տիար Արմեն Ավետիսյանը։

Աջահամբույրի եկող հավատացյալներին բաշխում են Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու ստորագրությունը կրող Ավետարաններ, որոնք առատաձեռնորեն տրամադրված էին տիար Տիգ Շահինյանի կողմից՝ հանուն իր գլխավորած «Արարատ» հիմնարկության։

Աջահամբույրից հետո Վեհափառ Հայրապետը տեսակցություն է շնորհում մամուլի թղթակիցներին, ինչպես նաև ՏԱՍՍ-ի թղթակից տիար Իգոր Իգնատևին։

Վեհափառ Հայրապետի մեկնումից առաջ եկեղեցուն կից սրահում տեղի է ունենում մտերմիկ հյուրասիրություն՝ պատրաստված եկեղեցու Տիկնանց Հանձնախմբի կողմից։ Այս առթիվ Հայոց Հայրապետը օրհնում է բոլոր նրանց, ովքեր գործոն մասնակցություն էին բերել օրվա ծրագրի բարեհաջող գործադրությանը։

Հիրավի ուրախ էր Ս. Եկեղեցին Հայոց և մանավանդ հպարտ՝ Վաշինգտոնի հայությունը, որ Հայոց Հայրապետի շնորհաբաշխ այցելությամբ անմոռանալի և պատմական այս օրը ապրելու հաճույքը շնորհվեց բոլորին։

Ավելի ուշ «Մեդիսոն» հյուրանոցում Վեհափառ Հայրապետը հարցազրույց է ունենում «Վաշինգտոն Փոստ» թերթի թղթակցի հետ։

Հարցազրույցից հետո Վեհափառ Հայրապետին է այցելում հյուրանոցի տեր, գեղարվեստական գործերի հայտնի հավաքորդ տիար Մարշալ Կոյնեն։

ՎԵՐԱԴԱՐՁ ՆՅՈՒ ՅՈՐՔ

Հոկտեմբերի 26-ին, երկուշաբթի օրը, երեւոյան, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով վերադառնում է Նյու Յորք:

Հետեւյալ օրը, հոկտեմբերի 27-ին, ժամը 13-ին, առաջնորդարանում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ճաշկերույթ: Ճաշկերույթին, բացի Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամներից, մասնակցում են արևելյան թեմի մի խումբ հոգևորականներ, Մայր Աթոռի բարերար լոնդոնաբնակ սիւսր Ջորջ Քյուրքճյանը, նկարիչ Սոս Մելիքը՝ իր տիկնոջ հետ, և խմբավար Օհան Դուրյանը:

Ճաշկերույթն անցնում է ջերմ մթնոլորտում:

Հոկտեմբերի 28-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հայոց առաջնորդարանի սրահում տեղի է ունենում հանդիպում Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի և «Վարդանանց Ասպետներ» եղբայրակցության զանազան շրջանների ղեկավարների միջև:

Ասպետների ավագ-սպարապետ Մարտին Մարտինյանը նախ Վեհափառ Հայրապետին է ներկայացնում ներկաներին, ապա հանգամանորեն խոսում իրենց գործունեության և ծրագրերի ու նպատակների մասին:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, ծանոթանալով «Վարդանանց Ասպետների» կատարած աշխատանքներին ու բարձր գնահատելով նրանց մարդասիրական գործունեությունը, ասում է.

«Միակ կազմակերպությունն եք, որ ձեր անունով արդեն կբացահայտեք ձեր ոգին, ձեր վերաբերմունքը դեպի մեր Եկեղեցին և մեր ժողովուրդը: Վարդան Մամիկոնյան մեր Եկեղեցվո սուրբերեն է, զորավարը, որ Վարդանանց պատերազմին հայկական զորքը առաջնորդեց և նահատակվեցավ: Ան խորհրդանիշը կհանդիսանա պայքարի՝ հանուն հավատքի, հանուն հայրենիքի և հանուն ազատության: Վարդան Մամիկոնյան զոհվեցավ, բայց իր կյանքը զոհելով ավելի խորհրդանշական դարձավ իր անձնավորությունը. իր զոհաբերությունը գինք անմահացուց: Դուք այդ գաղափարի, այդ անմահության ասպետներն եք: Կցանկայի որ դուք, ձեր կազմակերպության բոլոր անդամները ինչի ալ որ ձեռնարկեք, եկեղեցական, մշակութային, ընկերային, քաղաքական և այլ նպատակներու ծառայող, չմոռնաք, որ հիմքը Ս. Վարդանն է, ուրեմն պետք է քրիստոնեական ոգիով մոտենաք ձեր բոլոր հարցերուն:

Ես կնկատեմ, որ դուք սովորական աշխարհիկ կազմակերպություն մը չեք, այլ ինչ-որ չափով կրոնական բնույթ ունի ձեր գոյության և ձեր գործունեության իմաստը: Մեր հասկացողությամբ՝ մեր Եկեղեցին մեր ազգին հետ միավորված մարմին մը եղած է սկիզբեն իսկ, բայց մանավանդ Վարդանանց հերոսամարտեն հետո: Այնպես որ կբերեմ իմ օրհնությունը ձեզի բոլորիդ: Շնորհակալ եմ ձեր պատրաստակամության համար՝ միշտ Եկեղեցվո կողքին կանգնելու: Մեր Եկեղեցին պետք է զգա, որ այս կազմակերպությունը միշտ իր կողքին է, նաև էջմիածնում: Խնդիրը նյութական օգնությունը չէ, այլ առավել ևս բարոյական: Մեր Եկեղեցին միայն կղերականներու հաստատություն չէ, այլ ամբողջ ժողովրդի հաստատությունն է, և հետևաբար մեր աշխարհական անձինք, մեր ժողովրդի բոլոր զավակները հավասարապես իրավունքներ ունին Եկեղեցիեն ներս: Ատիկա կարտահայտվի մեր Եկեղեցիին գործնական կյանքին մեջ ալ, ձեր կանոնագրության տրամադրություններով և այլն:

Այս բոլորեն հետո գանք ցեղասպանության հարցին: Նախ կշնորհավորեմ ձեզ, որ այդքան ձեր սրտին մոտ կառնեք այդ հարցը: Սա համազգային հարց մըն է: Մեր ազգի մեջ շերտավորումներ կան, գաղափարախոսական տարբերություններ, կուսակցություններ և այլն, բայց, ինչքան ես գիտեմ, Ապրիլ 24-ի վերաբերյալ, ցեղասպանության վերաբերյալ հայերը բոլորը միակերպ կմտածեն, միասնական են, և ատիկա շատ լավ է: Մեր ազգային կյանքին մեջ քանի մը խորհրդանշական օրեր կան, որուն շուրջ ամբողջ հայությունը պետք է միանա: Եվ լավ է, որ այդ միացնող ուժը Եկեղեցին ըլլա, որովհետև Եկեղեցին բոլորին կպատկանի: Ամբողջ ազգը Եկեղեցիին մեջ է: Իմ կարծիքով՝ հայկական դատի առնչությամբ ինչ որ անհրաժեշտ է հիմա կատարել՝ ցեղասպանության ճանաչման հարցն է. ուրիշ հարցեր պետք չէ խառնել հիմա: Նախ ցեղասպանությունը պետք է պաշտոնապես ճարողանանք ճանաչել տալ: Չի բավեր միայն Ամերիկայի կոնգրեսի որոշումը: Ատիկա միայն Ամերիկայի ձեր ընկերության կվերաբերի: Կարևորը՝ միջազգային իրավունքի տեսակետեն ՄԱԿ-ի որոշումն է: Ատոր պետք է ձգտինք հասնիլ: Քայլ մը առաջ գացինք Եվրոպական պառլամենտի որոշումով, որ պետք է ձևով մը գա ՄԱԿ-ի մոտ, իբրև առաջարկ: Եվ եթե որոշում մը տրվի այնտեղ, այն ատեն մեծ հաղթանակ կըլլա, քանի որ միջազգային մակարդակի վրա ցեղասպանությունը ճանաչում կստանա: Բայց ատիկա շատ դժվար գործ է: Ինչպես կհաջողինք, հիմա չեմ կրնար ըսել»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսում է Եվրոպական պառլամենտում ցեղասպանության հարցի քննարկման մանրամասնությունների մասին:

Վերջում Նորին Սրբությունը «Վարդանանց Ասպետներին» մաղթում է ուժ, եռանդ ու կամք և հաջողություն՝ բազմակողմանի գործունեության մեջ:

Նույն օրը, ժամը 12.15-ին, առաջնորդարանի սրահում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել առաջնորդարանի պաշտոնեությանը՝ գլխավորությամբ թեմական առաջնորդ սրբազան հոր:

Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը մեկ առ մեկ Վեհափառ Հայրապետին է ներկայացնում իր գործակիցներին: Ապա խոսք է առնում առաջնորդարանի Բալանալորության ներքո գտնվող հայ դպրոցների կրթական կենտրոնի

տնօրինուհի Սիլվա Սեր-Ստեփանյանը՝ մանրամասն տեղեկություններ հաղորդելով կրթական ասպարեզում նրանց ծավալած գործունեության մասին: Այնուհետև երույթ է ունենում կիրանցօրյա վարժարանի տնօրեն Նուբար Քյոքեյանը և իր խոսքի ավարտին Վեհափառ Հայրապետին է նվիրում Երուսաղեմում պատրաստված ճենապակյա գեղեցիկ մի խաչքար:

Վեհափառ Հայրապետը, ծանոթանալուց հետո առաջնորդարանի սպասարկության եկեղեցական աշխատանքներին, ջերմ գնահատանքի խոսքերով ներկաներին բաշխում է իր օրհնությունը և, ի գնահատումն նրանց կատարած ազնիվ աշխատանքի, նրանց բաժանում է խաչիկներ և Ս. Էջմիածնից բերված գունագեղ նկարներ:

Շրջանի ողջ հայությունը և համայնքի բոլոր կազմակերպությունները հավաքվել էին Ս. Ստեփանոս եկեղեցի՝ որդիական իրենց անվերապահ սերը և հավատարմությունը հայտնելու Մայր Աթոռի գահակալին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվում է Նյու Ջերզիի նահանգի Էլբրոն քաղաք: Նյու Ջերզիի նահանգի հայ բարեպաշտ ժողովրդի համար Վեհափառ Հայրապետի այցելությունը դառնում է առիթ ազգային հոգեպարար ուրախության:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԷԼԲՐՈՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՈՑ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Ժամը 15-ին խուռներամ հավատացյալների ուղեկցությամբ, «Հրաշափառ»-ով Վեհափառ Հայրապետը մուտք է գործում Ս. Ստեփանոս Նորակառույց հայոց եկեղեցի:

Եկեղեցում տեղի ունեցած կարճ արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք է ասում տեղի հոգևոր հովիվ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը եկեղեցու բարեբար տեր և տիկին Գևորգ Հովհաննիսյաններին և եկեղեցում հավաքված հավատացյալ բազմությանը տալիս է հավատի, սիրո և միության իր պատգամը:

Եկեղեցում պաշտոնական ընդունելության ավարտին եկեղեցու մշակութային կենտրոնում տեղի է ունենում ճաշկերույթ, որի ընթացքում Հովնանյան ընտանիքի անունից պրն. Դավիթ Նաջարյանը շնորհակալության ջերմ խոսք է ասում Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելության առթիվ: Ապա Վեհափառ Հայրապետը բարձր գնահատանքով վերստին արտահայտվում է ազգային մեծ բարերար, Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանակիր տիար Գևորգ Հովնանյանի մասին՝ վեր հանելով նրա ցուցաբերած ազնիվ նախաձեռնությունը եկեղեցու շինության ու ծառայության գործում, անդրադառնալով նաև Հայ Եկեղեցու ծոցում տիրող տագնապին՝ շեշտը դնելով մեկ և անբաժան Եկեղեցու գաղափարի վրա:

Ճաշկերույթի վերջում Վեհափառ Հայրապետին ուղղված երախտագիտական խոսք է ասում բարերար տիար Գևորգ Հովնանյանը:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով վերադառնում է Նյու Յորք և ներկա գտնվում «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնում Ռ. Վագների «Վալքերիա» ներկայացմանը:

Հոկտեմբերի 29-ին, հինգշաբթի օրը, ժամը 13.30-ին, առաջնորդարանի սրահում Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել թեմի Տիկնանց հանձնախմբերի անդամներին:

Հանդիպման սկզբում թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը համառոտակի ներկայացնում է թեմում հարգարժան տիկնանց մատուցած եկեղեցաշեն ծառայությունները:

Ապա ելույթ է ունենում տիկին Հասմիկ Պիպերյանը և հաստատում, որ Վեհափառ Հայրապետի այցելությունը նոր եռանդ ու կորով կհաղորդի իրենց՝ շարունակելու իրենց ազգանվեր և եկեղեցաշեն գործունեությունը. «Եկաք որպես առաքյալ Մայր Հայրենիքեն մեզի բերելու Ս. Գրիգոր Լուսավորիչի կանթեղի լույսը», ասում է տիկին Պիպերյանը:

Հանդիպման ավարտին եկեղեցասեր տիկնանց քաջալերանքի և օրհնության խոսք է ուղղում Նորին Սրբությունը՝ ընդգծելով կանանց կարևոր դերը եկեղեցու համայնական կյանքում:

Նույն օրը, ժամը 15-ին, առաջնորդարանի ընդունարանում Վեհափառ Հայրապետը հարցազրույց է ունենում «Պայքար» թերթի թղթակից Գրիգոր Քյոսեյանի հետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԴԻՆԱԼ Օ'ՔԱՆՈՐԻՆ

Հոկտեմբերի 30-ին, ուրբաթ օրը, ժամը 13-ին, Նյու Յորքի Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու կարդինալ Հովհաննես Օ'Քանորի հրավերով Վեհափառ Հայրապետը այցելում է արքեպիսկոպոսարան: Արքեպիսկոպոսարանի շքամուտքի առջև Նորին Ամենապատվությունը կարդինալը դիմավորում և ջերմորեն ողջունում է Ամենայն Հայոց Հայրապետին՝ առաջնորդելով նրան արքեպիսկոպոսարանի իր ընդունարան: Այստեղ թեմի կաթոլիկ բարձրաստիճան բոլոր հոգևորականները մեկ առ մեկ գալիս-ողջունում և իրենց հարգանքն են մատուցում Նորին Սրբությանը:

Ընդունարանում մատուցվում են ախորժաբեր ըմպելիքներ, որի ընթացքում ներկաների միջև տեղի է ունենում սրտագին զրույց՝ էկումենիկ ոգով: Ապա Հայոց Հայրապետը և հյուր հայ հոգևորականները հրավիրվում են սեղանատուն՝ ճաշկերույթի:

Սեղանն օրհնում է Հայոց Հայրապետը: Ճաշկերույթի ընթացքում հյուրընկալ կարդինալը բարիգալստյան խոսքով դիմում է Հայոց Հայրապետին.

ԿԱՐԴԻՆԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ Օ'ՔԱՆՈՐԻ ԽՈՍՔԸ

Այս վերջին երեք ու կես տարիներին, որ ես այստեղ եմ, մեզ այցելել են նախագահներ, թագավորներ և բարձրաստիճան եկեղեցականներ, բայց երբեք չենք ունեցել մի անձ, որ մեզ շնորհած լինի իր ներկայությունը այնպես, ինչպես Ձերդ Սրբությունը: Սա չեմ ասում միայն քաղաքավարության համար, այլ որովհետև Նորին Սրբությունը առաջին այցելուն է, որ Պապի հետ միասնաբար Հայտարարություն է արել: 1970-ի մայիսի 12-ին Նորին Սրբությունը և Պողոս Զ Պապը շատ կարևոր Հայտարարություն արեցին

Վիճակիս Հարգանքը Նյու Յորքի Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու պետ կարդինալ Ջոն Օ'Քոնորի հետ

երկու Եկեղեցիների մասին, խոսեցին դավանական-վարդապետական հարցերի, ինչպես նաև ծիսական խորհուրդների մասին: Այդ առիթով Պողոս Զ Պապը մի շատ կարևոր հայտարարություն արեց. «Այն հեռավորությունը, որ եղել է մեր երկու Եկեղեցիների միջև դարերի ընթացքում, եղել է, որովհետև պայմանավորված է մեր սերը»: Իմ փորձառությունն է եղել այստեղ Նյու Յորքում Թորգոմ արքեպիսկոպոսի հետ շատ տաք սերն ու հարաբերությունը: Այս աքանչելի խաչը, որ կրում եմ, Թորգոմ արքեպիսկոպոսի նվերն է: Իմ իղձը և աղոթքն այն է, որ այստեղ Նորին Սրբության այցելությունը ավելի սերտացնի և վառ պահի այն հարաբերությունը, որ կա մեր երկու ժողովուրդների միջև:

Իր խոսքի ավարտին Ամենապատիվ կարդինալ Հայրը Վեհափառ Հայրապետին է նվիրում Սեյնտ Փաթրիքս Մայր տաճարի նկարը՝ դաջված բյուրեղապակու վրա:

Բարիգալստյան և ողջույնի խոսք է ասում նաև կարդինալի օգնական Իգն եպիսկոպոսը:

Իր պատասխան խոսքում Հայոց Հայրապետը շնորհակալություն է հայտնում կարդինալին՝ Նյու Յորքի Հայ համայնքի նկատմամբ նրա տածած սիրալիր ուշադրության և այդ օրվա հրավերի համար, շեշտելով քրիստոնեական եղբայրության վրա հիմնված Եկեղեցիների համագործակցության անհրաժեշտությունը մեր օրերում: Ապա օրհնում է բոլոր ներկաներին Ս. Էջմիածնի անունով և զորությամբ:

Իր խոսքի ավարտին Նորին Սրբությունը կարդինալ Օ'Քանորին նվիրում է օնիքսի վրա հայկական ոճով քանդակված մի խաչ:

Ճաշկերույթն ավարտվում է համատեղ արտասանված Գոհաբանական աղոթքով:

Եղբայրական ջերմ և սիրալիր մթնոլորտում Վեհափառ Հայրապետն ու նրա ուղեկիցները հրաժեշտ են առնում Ամենապատիվ կարդինալ Հորից:

Նույն օրը, երեկոյան, առաջնորդարանի մուտքի առջև Վեհափառ Հայրապետը օրհնում է լիոնահայ մի խումբ մարզիկների, որոնք Նյու Յորք էին եկել՝ մասնակցելու մարաթոնյան մրցավազքին: Նրանք ցանկություն էին ունեցել տեսնելու իրենց հոգևոր առաջնորդին և ստանալու նրա օրհնությունները:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, առաջնորդարանի «Գավուքճյան» սրահում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում ամերիկահայ մտավորականների հետ:

Նորին Սուրբ Օծության պատվին կազմակերպված սույն ունկնդրությանը ներկա են շուրջ երեք հարյուր մտավորականներ՝ գրողներ, գիտնականներ, բժիշկներ, իրավաբաններ, կրթական մշակներ, արվեստագետներ և այլն:

Բացման խոսքով հանդես է գալիս թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը.

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Հայր,

Անցնող տասնվեց օրերուն, Ձեր օրհնաբեր ներկայությամբ, խանդավառեցիք ու նոր ավիշ ներարկեցիք ամերիկահայ գաղութին Ձեր զավակներուն ու ներկա եղաք զանազան ձեռնարկներու, մոտեն ճանչնալու, Ձեզի այդեն անցյալեն ծանոթ գաղութը: Այսօր բոլորովին տարբեր է բնույթը այս երեկոյին: Տարբեր՝ մյուսներեն, անո՛վ, որ հաշվետվության մը երեկույթն է, Վեհիդ ծանոթացնելու համար մեր գաղութի իրագործումներն ու նվաճումները:

Բանաստեղծի ակնարկած «Հաշուեյարդար»-ը չէ, որովհետև չեմ կարծեր, թե ատոր ժամանակը հասած է տակավին: Իսկ ավելի կարևորը, կհուսանք, որ, կամոքն Աստուծո, հաշվեհարդարի ժամը երբեք չի հնչեր, որովհետև դեռ պիտի գոյատևենք: Քիչ ենք, բայց դեռ պիտի բազմանանք: Ու պիտի ապրինք այնքան ատեն, որ մեր ժողովուրդը պիտի երգե՝ «արև դիպավ Մասիս սարին»: Ու մեր Եկեղեցին ալ յուրաքանչյուր այգաբացին պիտի ողջունե իր անկրկնելի «առաւօտ լուսոյ»-ն: Ուրեմն հաշվեկշիռ մըն է մեր ընելիքը՝ Ձերդ Սրբությունը տեղյակ պահելու մեր գործերեն, և ապա իմանալու Ձերդ Վեհափառության թելադրանքը և ուղղությունները, ճշդելու կամ սրբագրելու մեր երթը, մեր արևելումը:

Ու այդ հաշվեկշիռին համար հրավիրած ենք մեր գաղութի արժանավոր մտավորականներեն ոմանք: Անոնք իրենց տաղանդով, մտքի ուժով և ստեղծագործական երկունքի խիզախ թափով լծված են այս երկրի մշակույթին, արվեստներուն ու գիտության իրենց նպաստը բերելու: Իրենց այդ աշխատանքներուն առընթեր կազնվացնեն ու կգեղեցկացնեն մեր գաղութի ազգային, մշակութային կյանքը, ու միևնույն ատեն, որպես տրիտուր հոգեկան երախտիքի՝ կվերադարձնեն ապանջական այս երկրին մաս մը այն անթիվ բարիքներեն, որ ան շռայլեց մեզի:

Այս հայորդիները զավակներն են եղեռնը վերապրողներուն և ունին գիտակցությունը իրենց հայրերու պարտքին: Այսօր հպարտ ենք իրենց հաջողություններով, ու մեր ճակատները բարձր՝ կրնանք հայտարարել, թե ի՛նչ որ տրվեցավ մեզի, կվերադարձնենք լիաբուռն ու լիառատ, գոհ ու թեթև սրտով:

Այսօր ներկա են իրենք, Ձերդ Վեհափառության առջև, արքաներու գահակից Էջմիածնա արժանավոր գահակալին, Հայաստանյայց Աշխարհին Ամենայն Հայոց Հայրապետին, որպեսզի հաշվետու-ելլան իրենց նվաճումներուն և հայտնելու, թե ինչպես կմտածեն օգնելու, թե ու թիկունք կանգնելու մեր Հայրենիքին, անոր բարօրության ու բարգավաճման: Որովհետև գիտական հսկայական հառաջդիմություններու այս ժամանակներուն, չենք հավատար, թե հեռավորությունները կրնան արգելք ելլալ, կամ կրնան մեզ բաժնված պահել Հայրենիքեն, կամ մինչև իսկ օտարացնել մեզ անկե: Հեռու թեև, բայց ոչ անհայրենիք, ծնած օտար, ասպնջական հողերուն վրա, բայց միշտ կապված մեր Հայրենիքին՝ մեր յուրաքանչյուր բջիջով, հավերժորեն ունկնդիր Էջմիածնա գմբեթներու մշտահունչ դողանջներուն:

Այնուհետև հանդիսավար դոկտ. Մարզպետ Մարկոսյանը Վեհափառ Հայրապետին է ներկայացնում ամերիկահայ մտավորականության ներկայացուցիչներ պրոֆ. Ջորջ Ատոմյանին, գրող Հակոբ Ասատուրյանին, պրոֆ. Ռայմոնդ Տամատյանին, պրոֆ. Մարժերի Դոբկին-Հովսեփյանին, բժիշկ

Կարո Կարապետյանին, պրոֆ. Վարդգես Գինոյանին, դոկտ. Ադրիան Բարսեղյանին և պրոֆ. Փիթեր Սուրյանին, որոնք հանդես են գալիս ելույթներով: Իրենց ելույթներում հարգարժան մտավորականները անդրադառնում են Միացյալ Նահանգների հայ համայնքում հայ արվեստագետների, կրթական մշակների, գիտնականների և գրողների բերած նպաստին՝ մատնանշելով այն հնարավորությունները, որոնցով կարելի կլինի գիտական և մշակութային ասպարեզում առավել զարգացնել և ամրապնդել ամերիկահայ գաղութի հարաբերությունները Մայր Հայրենիքի հետ:

Այս առթիվ հանդես է գալիս նաև Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հետևյալ ոգեշունչ խոսքով.

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Հարգելի ներկաներ,

Ինձ թվում է, որ այս կազմակերպության նպատակը և նրա գործունեության իմաստը շատ կարևոր են: Այն հարցերը, որ քիչ առաջ մեզ ներկայացրին մեր բոլոր գիտնականները, արվեստագետները ու գրողները, և որոնցով մտահոգված են նրանք, խիստ կենսական են արտասահմանում ապրող մեր ժողովրդի ապագայի համար: Նրանց ցանկությունն էր, որ այսօր այդ հարցերը դրվեին նաև Վեհափառ Հայրապետի առջև:

Այստեղ խոսվեց միության մասին. միություն արտասահմանի, ի մասնավորի Միացյալ Նահանգների հայության և հայրենաբնակ մեր ժողովրդի միջև: Միանգամայն ճիշտ է այս մտահոգությունը: Եթե անցյալում Մերձավոր և Միջին Արևելքի հայ գաղութն էր, որ, ամուր և անաղարտ պահած իր մայրենի լեզուն և ազգային ավանդությունները, իր ավյունով սնում էր արևմտյան աշխարհի մեջ ապրող հայությանը, այժմ, քաղաքական վայրիվերումների հետևանքով, այդ գաղութը կորցրել է իր երբեմնի կենսունակությունը: Նրա երակների միջից աստիճանաբար պակասում է հայկական ավյունը, և նա կարծեք այլևս ի վիճակի չէ Սփյուռքի տարածքում ապրող մեր ժողովրդի զավակներին տալու հայեցի շունչ ու կենդանություն, վառ պահելու նրանց մեջ ազգային ոգին՝ դառնալու առաջնորդիչ ուժ, որպեսզի նրանք պայքարեն կյանքի բոլոր տեսակի դժվարությունների դեմ՝ ի խնդիր օտարության մեջ մեր մայրենի լեզվի, մեր մշակույթի, մեր ինքնության պահպանման: Իրոք ժամանակն է մտահոգվելու: Ո՞վ պիտի պաշտպանի այսօր տարասփյուռ հայությանը ուծացման աղեղ վտանգից: Ո՞վ պիտի տա ձեզ ուժ, հավատ, վստահություն, ազգային հպարտություն ձեր գոյապահպանության համար մղվող պայքարի այս դժվարին օրերին: Այդ բոլորը, սիրելի ներկաներ, գալիս են ձեզ և այսուհետև էլ պիտի գան միայն և միայն մեր հայրենի աշխարհից, ապրող ու ծաղկող մեր Մայր Հայրենիքից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Բավական է միայն, որ ձեր աչքերը ուղղեք Արարատի կողմը, և դուք պիտի տեսնեք ձեր կյանքի ճանապարհը լուսավորող փրկարար լույսը:

Միության մասին արտահայտվելիս, ես ուզում եմ նշել, որ միությունն պետք է ստեղծվի ոչ միայն Հայրենիքի և Սփյուռքի, այլև հայկական բոլոր գաղութների միջև: Եվ այդ միությունը ամեն բանից առաջ պետք է լինի սիրո արտահայտություն: Եթե մենք սիրում ենք մեր հայրենիքը, մեր ժողովրդի հողը, մեր Եկեղեցին և մեր հավատը, ապա մեր ուժերը պետք է

կենտրոնացնենք դեպի այդ իրականությունը և նրանո՛վ միայն միանանք ու ամրանանք: Այլ խոսքով՝ մեզ առաջ մղող հիմնական ուժը ուրիշ բան չպիտի լինի, եթե ոչ սերը, որ մեզ կապում է միմյանց. ընդհանրական սեր՝ դեպի հայությունը, սեր՝ դեպի մեր պատմությունը, սեր՝ դեպի մեր մշակույթը, սեր՝ դեպի հայ գիրն ու հայ լեզուն, և մանավանդ՝ սեր՝ դեպի Ամենայն Հայոց Հայրապետությունն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Այսօր Վեհափառ Հայրապետը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռի 130-րդ գահակալը, հակառակ առաջացած իր տարիքին, և հակառակ իր առողջական ոչ բարվոք վիճակին, ի սեր հայության և ի սեր ձեզ, ի սեր Միացյալ Նահանգներում սփռված Հայաստանյայց Եկեղեցու բոլոր զավակների, հանձնը առավ օվկիանոսներ կտրելով դալ այստեղ՝ տեսնելու ձեզ, հանդիպումներ ունենալու իր հոգևոր զավակների հետ, անձամբ բերելու նրանց հայրենիքում ապրող իրենց եղբայրների և քույրերի ողջույնը և ներշնչելու նրանց հայ ապրելու, հայ մնալու հպարտությունը:

Վեհափառ Հայրապետը այսօր Հայաստանի ողջ ժողովրդի կողմից մեծապես սիրված ու հարգված անձնավորությունն է: Մենք վստահ ենք, որ նրան սիրում ու հարգում է նաև արտասահմանի հայությունը: Թող Աստված քաջառողջ կյանք պարգևի Նորին Սուրբ Օծությանը, որպեսզի նրա հովանավոր Աջը դեռ երկար տարիներ խաղաղության մեջ պահի-պահպանի հայ հավատացյալ ժողովրդին:

Այժմ հրավիրում եմ Հայոց Հայրապետին՝ տալու օրհնությունը և իր հայրական խոսքերով մխիթարելու մեզ բոլորս:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք է առնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ողջունում ներկայությունը ամերիկահայ մտավորականների, ապա տալիս է հայրապետական իր խորհրդաստ և հայրենաշունչ հետևյալ պատգամը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

Ինձի համար բացառիկ առիթ մըն է այս հանդիպումը, որպեսզի իմ ողջույնը և օրհնությունը բերեմ ձեզի, որ կներկայացնեք հայ մտավորականներու դասը այս երկրին մեջ: Շատ հետաքրքրական էր և շատ շահեկան լսել զեկուցումները, որ ներկայացվեցան այստեղ և որոնց մեջ տարբեր հարցեր շոշափվեցան՝ եկեղեցական-ազգային, մշակութային, ընկերային և գիտական: Այս հանդիպումը ինձի հիշեցուց հիսուներկու տարի առաջ, 1937-ին, իմ գրած մեկ հոդվածը Բուխարեստի մեջ: Դուք գիտեք, որ ես Բուխարեստ ծնած և մեծցած եմ, և իմ ամբողջ ուսումը գրեթե ռումինական է: Այդ հոդվածը վերնագրած էի այսպես՝ «Ի՞նչ կնշանակե հայ ըլլալ 1937-ին Ռումանիո մեջ»: Այդ հոդվածի մեջ ես շոշափած էի գրեթե այն հարցերը, որ այսօր դրվեցան: Այն ատեն ես և իմ տարեկից համալսարանական ընկերներս նույն մտահոգություններու, նույն հարցերու առջև կգտնըվեինք, իբրև հայ երիտասարդներ ռումեն միջավայրի, ընկերության և մշակութային մթնոլորտի մեջ:

Այսօր ես կուզեմ անդրադառնալ միայն մեկ հարցի: Բայց նախ երկու խոսքով կուզեմ պահ մը ձեր գիտակցության առջև նոր հորիզոն մը բանալ,

այն հաստատումով, որ այս աշխարհի վրա հայը միջազգային երևույթ է: Նախ մեր լեզուն իր ծագումով հնդեվրոպական մեծ լեզուների խումբին մեկ ճյուղը կկազմե, ինչպես հունարենը, լատիներենը, սլավոներենը, գերմաներենը և այլն: Մեր կրոնական հավատքով, իբրև քրիստոնյա ժողովուրդ, առաջինն ենք, որ քրիստոնեությունը հռչակեցինք պետական կրոն և պատմության բեմի վրա առաջին պատերազմը մղեցինք վասն Հիսուսի և վասն հայրենի ազատության: Միջին դարերուն ունեցած ենք մեծ աղոթողներ, ինչպես՝ Ս. Գրիգոր Նարեկացին և Ս. Ներսես Շնորհալին:

Ստրասբուրգի համալսարանի լատիներենի նախկին պրոֆեսոր Ժան Մահեն, որ հիմա Փարիզի «Էնստիտյու կաթոլիկի» հայագիտական ամբիոնը կվարե, որ Հայաստան եկավ, մեկ և կես տարի ապրեցավ և հայերեն սորվեցավ, օր մը Էջմիածնի մեջ իր հետ խոսակցելու ընթացքին, Ս. Գրիգոր Նարեկացիի մասին հետևյալը ըսավ: «Ես եվրոպական միջնադարյան ամբողջ կրոնական գրականության ծանոթ եմ և կրնամ վկայել, թե ոչ մի հեղինակ Ս. Գրիգոր Նարեկացիի բարձրության չի հասնիր»: Եվ ինչպես հայտնի է, Հռոմի Սրբազան Պապը երկու-երեք ամիս առաջ հրատարակած ծանոթ իր կոնդակի մեջ, որ նվիրված է Սուրբ Կույս Մարիամի հիշատակին և փառաբանությանը, հատված մը կմեջբերե Ս. Գրիգոր Նարեկացիի աղոթքներեն՝ նվիրված Ս. Կույս Մարիամին: Ահավասիկ թե ինչպես միջազգային մակարդակի վրա կբարձրացնե հայ անունը Ս. Գրիգոր Նարեկացին:

Հայերը համաշխարհային պատմության մեջ փառավոր տեղ ունին: Բյուզանդական կայսրության շրջանին տասներեք բյուզանդացի կայսրեր ծագումով հայեր եղած են: Առաջիկա տարի Ռուս Օրթոդոքս Եկեղեցին հազարամյակը պիտի տոնե ռուս ժողովուրդի քրիստոնեությունը ընդունելուն, Կիև քաղաքին մեջ, Վլադիմիր իշխանի օրոք, որուն կինը՝ Օլգան, աղջիկն էր Բյուզանդիայեն հայ իշխանավորի մը: Կիևի մեջ մեծ տաճար մը կա Ժ դարուն կառուցված, Ս. Սոֆիա անունով: Քանի մը տարիներ առաջ պեղումներ եղան այդ եկեղեցիին գետնահարկերուն մեջ և արձանագրություններ գտնվեցան այն ժամանակվա ռուս իշխաններու, ուր կհիշվի հայերու ներկայությունը Կիևի մեջ: Ավելի ուշ, Անիի թագավորության կործանումեն հետո, մեծ գաղթականություն մը հայերու, բազմահազար ընտանիքներ, քաղաքական շատ դժբախտ պայմաններու բերումով գաղթեցին դեպի հյուսիս, դեպի այսօրվան Ղրիմը, այնտեղեն ալ թաթարներու հոսանքներեն հալածված, հասան և տեղավորվեցան հարավային Լեհաստան, տասներեքերորդ դարուն: Ապա այդ հայութենեն կարևոր թիվ մը դեպի հարավ իջավ, դեպի այսօրվան Ռումանիան, Մոլդավիո իշխանապետության մեջ, իսկ մեկ մասն ալ գնաց այսօրվան Հունգարիո կողմերը: Բազմաթիվ եկեղեցիներ ունինք Մոլդավիո մեջ: 16-րդ դարուն, երբ թուրքերը իրենց ուժի գագաթնակետին հասան և Վիեննան շրջապատեցին, Լեհաստանեն Սոբիեցկի զորավարը եկավ և փրկեց Վիեննան թուրքերու գրավումեն: Այդ բանակին մեջ հատուկ գունդեր կային Լվովի հայերե կազմված: Եթե հրաշքով այդ հին հայերու հետնորդները երևան գան հիմա իբրև հայեր, հավանաբար անոնց թիվը կրնա հասնիլ մեկ-երկու միլիոնի: Պատմության ընթացքին հայերը թե՛ Լեհաստանի, թե՛ Մոլդավիո և թե՛ Հունգարիո մեջ փառավոր հետքեր թողած են, նշանավոր մարդիկ տված են այդ երկիրներուն: Մոլդավիո իշխաններեն մեկը, որ Հովհաննես Հայը կկոչվի (Joon

Voda Armeanul), երեք տարի իբրև իշխան ղեկավարած է Մոլդավիան և թուրքերու դեմ պատերազմի դաշտի վրա հերոսի մահով ինկած:

Անհավասիկ քանի մը հիշատակներ, պատմական իրողություններ, հիմնակոն կարևորություն ունեցող, որոնք ցույց կուտան, թե իսկապես հայը միջազգային երևույթ է: Այսօր ալ նույն միճակը կշարունակվի՝ նկատի ունենալով Սփյուռքի հայության իրականությունը: Այս իրավիճակը, անշուշտ, ազգային տեսակետով մեր առջև շատ բարդ հարցեր կդնե և գուցե քիչ մը հետետես կդարձնե մեզ, սակայն պետք է քաջությունը ունենանք իրողությունները տեսնելու այնպես, ինչպես կան, անկախ մեր զգացական վերաբերմունքներեն: Այս պայմաններու մեջ պետք է աշխատինք արտասահմանի հայութենեն օգուտ քաղել հայության ներկայի և ապագայի համար, Մայր Հայաստանի համար:

Եվ հիմա, վերջացնելով իմ խոսքը, ըսեմ այս մասին իմ կարծիքը կամ առաջադրանքը և կամ պաագամը, եթե կուզեք՝ ուղղյալ ձեզի՝ մտավորականներուդ և գիտնականներուդ: Գործնական կնկատեմ, որ արտասահմանի ամեն մեկ հայ մտավորական Հայաստանի հետ կապ հաստատե իր մասնագիտության գծով: Ես քիչ առաջ լսեցի մաթեմատիկոս Ջորջ Ատոմյանի խոսքը և նույն ոգիով բժիշկ Տամասյանի զեկուցումը, որ Հայաստանի հետ կապ կհաստատե՝ իր գյուտը այնտեղ տարածելու համար: Կկարծեմ, որ այս ճանապարհը շատ բնական է, շատ օգտակար և հնարավոր Սփյուռքի մտավորականի մը համար: Բժիշկներ՝ Հայաստանի բժիշկներու հետ, մաթեմատիկոսներ՝ այնտեղի մաթեմատիկոսներու հետ, ֆիզիկոսներ՝ այնտեղի ֆիզիկոսներու հետ, գրողներ, բանաստեղծներ կամ արվեստագետներ՝ մայր երկրի արվեստագետներու հետ, առանց քաղաքական կամ գաղափարախոսական խտրության: Այս ճանապարհը ես պիտի ուզեի առաջարկել ամերիկահայ մտավորականներուն:

Դոկտոր Կարո Կարապետյան սքանչելի հայերենով ճառ մը կարդաց մեզի քիչ առաջ և տեղ մը այսպես արտահայտվեցավ. «Մենք՝ արտասահմանի հայերս, հայրենիքին կարիքը ունինք, բայց հայրենիքը մեզի կարիք չունի»: Ես կրնամ հայտարարել, որ հայաստանցի հայերը այդ բանաձևումին համաձայն չեն: Հորս-հինգ տարի առաջ Երևանի մեջ թատերական գործ մը կներկայացվեր «Հաջի Փայլակ» անունով, կատակերգություն մը, հայ գրողներեն մեկուն գործը: Այնտեղ պատկեր մը կար, ուր երկու հայաստանցի հայեր կվիճեին իրարու հետ հայ ժողովուրդի ապագայի մասին: Անոնցմե մեկը կըսեր. «Երևանի արտասահմանում հայեր չլինեին, բոլորը այստեղ լինեին»: Մյուսը կպատասխաներ. «Տո ի՞նչ ես ասում, մենք առանց Սփյուռքի ո՞նց կարող ենք ապրել»: Անշուշտ երգիծական ձևով չափազանցված արտահայտություն մըն է ասիկա: Սակայն խորքին մեջ հայաստանցին այդ հոգեբանությունը ունի: Կմնա, որ Սփյուռքի հայությունը հայաստանցիներուն հուսախաբ չընե այդ տեսակետեն: Ես կմաղթեմ, որ ամերիկահայ գիտնականներ, մշակութային գործիչներ, մտավորականներ, ուղիղ հասկնան այս հոգեբանական կացությունը և իրենց մասնագիտության գծով կապերը ամրապնդեն Մայր Հայրենիքի հետ: Քիչ մըն ալ հավատ ունենան, որ Աստված մեզի պիտի օգնե:

Մեր օրհնությունը ձեզի բոլորիդ: Ամեն:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆՅՈՒ ՋԵՐՋԻԻ Ս. ՆԵՐՍԵՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԾԱՅԱՐԱՆ

Հոկտեմբերի 31-ին, շաբաթ օրը, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Նյու Ջերզիի Նահանգի Նյու Ռոշել քաղաքի Ս. Ներսես աստվածաբանական ընծայարան: Ընծայարանի շքամուտքի առջև խմբվել էին ընծայարանի սաները՝ իրենց դասախոսների, ընծայարանի խնամակալների և տեսուչ Տ. Մարտիրոս քհն. Զևյանի հետ՝ դիմավորելու Հայոց Հայրապետին:

Այս ուղթիվ Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել Տ. Տիրան արքեպս. Ներսոյանը, Հ. Բ. Ը. Միության նախագահ տիար Ալեք Մանուկյանը՝ իր տիկնոջ հետ, տիկին Լուիզ Սիմոնը, ինչպես նաև Հ. Բ. Ը. Միության Կենտրոնական Վարչության մի շարք անդամներ:

Դիմավորումից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է ընծայարանի մատուռ, ուր և տեղի է ունենում Գոհաբանական աղոթք:

Հանուն ուսանողության, Վեհափառ Հայրապետին բարի գալուստ է մաղթում աստվածաբանական ընծայարանի սան բարեշնորհ Սերովբե սրկ. Անանյանը հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Ձեզի բարի գալուստ կմաղթենք և կմատուցանենք մեր որդիական սերը այս օրհնաբեր առիթով: Ձեր այցը Ս. Ներսես ընծայարան մեզի եղավ մեծ օրհնություն և քաջալերանք: Դուք եք մեր հոգևոր հայրը, և Ս. Էջմիածինը՝ մեր հոգևոր տունը: Ձեր այցելությամբ մեր ընտանիքը ամբողջացավ: Մեր ուսման ճանապարհը, որ կսկսի Ս. Ներսես ընծայարանեն, իր կատարումը կգտնե Ս. Էջմիածին: Կաղաչենք Տիրոջ, որ Ձեզի երկար տարիներ պարգևե, որպեսզի շարունակեք Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելությունը՝ բաշխելով Քրիստոսի լույսը հայ ազգին մեջ:

Բարի եկաք, Վեհափառ Տեր»:

Հավարտ Սերովբե սարկավագի խոսքի, Վեհափառ Հայրապետը ընծայարանին նվիրում է օնիքսից պատրաստված մի գեղեցիկ խաչ:

Ապա տեղի է ունենում հյուրասիրություն, որի ընթացքում Տ. Գառնիկ քհն. Հալաճյանը հանդես է գալիս ողջույնի խոսքով՝ միաժամանակ հակիրճ տեղեկություններ տալով ընծայարանի ուսումնական առարկաների դրվածքի, առօրյա աշխատանքների և ապագա ծրագրերի մասին:

Վերջում հայրական իր սրտառուչ պատգամն է տալիս Վեհափառ Հայրապետը՝ նշելով Ս. Ներսես աստվածաբանական ընծայարանի դերի կարևորությունը ապագա լուսամիտ և նվիրյալ հայ հոգևորականներ պատրաստելու գործում: Իր խոսքի ավարտին Հայոց Հայրապետը քաջալերում է խնամակալ մարմնի անդամներին և ցանկություն հայտնում, որ ապագայում ավելի ընդարձակվի ընծայարանի գործունեությունը և ավելի մեծ թվով ուսանողներ ընդգրկվեն նրա հարկի տակ:

Հանդիպումն ավարտվում է խմբովին երգված «Հայրապետական մաղթերգ»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Հ. Բ. Ը. Մ.-Ի ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 19-ին, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը իր շքախմբով պաշտոնական այցելություն է տալիս Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Սեղանի Պրուքի կենտրոնատեղին, որտեղ Նորին Սուրբ Օծությանն էին սպասում Կենտրոնական Վարչական Ժողովի անդամները:

Վեհափառ Հայրապետը նախ առաջնորդվում է գլխավոր ժողովասրահ, ուր նախագահ պրն. Ալեք Մանուկյանը բարի գալուստ է մաղթում Վեհափառ Հայրապետին և նրան ներկայացնում իր գործակիցներին:

Ի պատասխան, Վազգեն Ա կաթողիկոսը գնահատանքով է արտահայտվում Միության երկարամյա ազգանվեր գործունեության մասին և գոհունակություն հայտնում Բարեգործական մեծ Միության կենտրոնում գտնվելու համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր շքախմբի և Կենտրոնական Վարչական Ժողովի անդամների հետ ուղղվում է դեպի Միության շքեղորեն զարդարված Նազարյան հանդիսասրահ, որտեղ հոտնկայս ծափահարություններով դիմավորվում է շուրջ 150 հրավիրյալների կողմից:

Պատվո սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ են գրավել թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոսը, նախագահ Ալեք Մանուկյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, տեր և տիկին Սուրեն Ֆեսճյանը, տեր և տիկին Էդուարդ Մարտիկյանը և ուրիշներ:

Սեղանի օրհնությունից հետո պրն. Ալեք Մանուկյանը, հանուն Բարեգործական Միության, բարիգալստյան և արհեստության բաժակ է բարձրացնում Վեհափառ Հայրապետի կենացը:

Հավարտ ճաշկերույթի, խոսք առնելով, մեծարգո նախագահը սրտագին ողջունում է Նորին Սրբության բարձր ներկայությունը Հ. Բ. Ը. Միության կենտրոնում և արտասանում հետևյալ սրտառուչ խոսքը.

ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Սիրելի հյուրեր և բարեկամներ,

Բոլորիս համար բացառիկ բախտավորություն է Ամենայն Հայոց Հայրապետը հյուրընկալել Բարեգործականի սեփական հարկին տակ: Բոլորս ալ կանդրադառնանք, թե մեր Եկեղեցիեն ետք Հայկական Բարեգործական

Ջերմ ողջագուրում... Վեցապատ Հայրապետը Ներսիսյան դպրոցում Կեդ Մաճառյանցը

Ընդհանուր Միությունը սակայն հայ կազմակերպություններն է, որ կարժանանա այս պատիվին: Կգնահատենք այս բացառիկ վերաբերումը և կհասկնանք անոր նշանակությունը:

Վեհափառ Հայրապետը իր հայտագրին մեջ այս հատուկ տեղը վերապահելով Բարեգործականին, կատարած կըլլա կարևոր հաստատում մը այն մասին, թե ինչպիսի կենսական նշանակություն ունի Բարեգործականը բովանդակ Սփյուռքի տարածքին: առաջին անգամը չէ, որ Վեհափառ Հայրապետը իր օրհնությունն ու գնահատանքը կընծայե համազգային այս մեծ Միության և կփափաքինք այստեղ մեր ամբողջ անդամակցության անկեղծ ու սրտագին շնորհակալությունները հայտնել Վազգեն կաթողիկոսին:

Վեհափառ Հայրապետը իր շրջապտույտին ընթացքին տոնական բովանդակությամբ բարի գալուստի և ողջույնի բազմաթիվ խոսքեր լսած է ու պիտի շարունակե լսել: Հետևաբար պիտի ուզեմ այսօր շեղում մը կատարել այդ ընթացիկ արտահայտություններեն՝ կեղրոնանալու համար Բարեգործականի համազգային գործունեության, ինչպես նաև այդ գործունեության ընթացքին մեր արձանագրած հաջողությանց ու կրած դժվարությանց վրա: Եվ քանի որ Վեհափառը մեր տան, այսինքն Բարեգործականի ընտանիքին հյուրն է, կուզեմ մեր մտահոգությունները սրտաբաց և անկեղծ կերպով բաժնել իրեն հետ:

Շատ մը մտահոգություններ ու երևույթներ, որոնք կպարզվին մեր դիմաց, հատուկ չեն միայն Բարեգործականին, այլ կվերաբերին նաև մեր Եկեղեցիին և առհասարակ ամեն հայ կազմակերպության:

Այսօր Սփյուռքը մտահոգող գլխավոր երևույթներեն մեկը գաղթականության հարցն է: Մեծ Եղեռնեն ետք կիուսային, որ խնայվեին հայ ժողովուրդին զանգվածային նոր տեղաշարժերը: Սակայն այնպես կթվի, թե գաղթն ու կրկնագաղթը մեր ժողովուրդի ճակատագրին մաս կկազմեն՝ միշտ անակնկալ ու հավելյալ պարտավորություններ բարդելով Բարեգործականին ու մեր բարեսիրական կազմակերպությանց ուսերուն:

Այսօր Լիբանանի և Պարսկաստանի ցնցումները, ինչպես նաև Թուրքիոյ ներքին գավառներուն սեղմումները, պատճառ կդառնան, որ մեր նորահաստատ համայնքները ողողվին գաղթականներու նոր հոսանքներով. արդեն նոր գաղութներ կկազմվին, կամ կստվարանան հայկական գաղութները Գերմանիոյ, Պելճիքայի և Հոլանտայի, Ամերիկայի ու Գանատայի մեջ, ուր պարսկահայ ու թրքահայ և լիբանանահայ մեր ազգակիցները կարիքն ունին խնամատարական սպասարկության, կրթության, օրինական կեցության հարցերու լուծման և անմիջական այլ ծառայությանց: Բարեգործականը կհասնի անոնց՝ նյութական օժանդակություն փութացնելով, համայնքային շենք տրամադրելով և հայեցի դաստիարակություն ապահովելով:

Մեզի համար խորունկ վիշտ է մանավանդ հայերու արտագաղթը Հայաստանեն: Քաղաքական, տնտեսական, ընկերային և անձնական բազմաթիվ բացատրություններ գոյություն ունին այս երևույթին մասին: Սակայն պատմական իմաստով անիկա արյունահոսություն մըն է Հայաստանի մարմնեն և մեզ անմխիթար կթողու ան: Հայաստանը մեր ազգապահպանման միջնաբերդն է և ամեն հեռացում անկե՝ հեռացում կնշանակե մեր ինքնությենեն, այլասերում ու կորուստ:

Գաղթականության հոսանքներու ծավալումով պահանջը կստեղծվի նաև Բարեգործականի վարժարաններու ցանցին ընդարձակման: Միության 23 վարժարաններուն մեջ գուցե ամենեն ավելի տագնապալի վիճակը ներ-

կայացնող կրթարանները կգտնվին Լիբանանի մեջ։ Բաց աստի, մենք նոր վարժարան մը կհաստատենք Թորոնթոյի մեջ, դպրոցի շենք մը բարձրացուցինք արդեն Սան Փաուլոյի մեջ ու վարժարան մըն ալ պիտի բանանք Սիտնիի մեջ։ Անդին Կիպրոսի մեջ 3.5 միլիոն տոլարի ծախքով մը արդեն կառուցանելու վրա ենք Մելգոնյան Հաստատության նոր և ընդարձակ համալիրը՝ գոհացում տալու համար Լիբանանեն, Պարսկաստանեն և Արաբական ծոցի երկիրներեն հասնող կրթական պահանջներուն։

Կրթական այս պահանջները կպարզվին ամեն օր, և ծնող ու աճող սերունդները մեզ կդնեն անմիջական հրամայականին տակ՝ ընտրությո՛ւն մը կատարելու. երկընտրանքը այն է, թե հայ պիտի մնա՞ հառաջացող սերունդը, թե պիտի օտարանա։ Այդ երկընտրանքին առջև տատամսիլը պիտի նշանակեր հայ ժողովուրդին ճակատագրով խաղալ։ Երևույթ մը, որուն դիմաց ոչ մեկ խղճամիտ հայ անհատ կամ կազմակերպություն կրնա անտարբեր մնալ կամ անպատասխանատու դիրք մը բռնել։ Այսպիսի երկընտրանքներու առջև Բարեգործականի որոշումը հստակ ու մեկին է՝ ձեռնարկե՛լ գործի ու փրկել սերունդը, որքան որ անկարելի և անտանելի ըլլան պայմանները։

Սակայն, դժբախտաբար, ամեն կազմակերպություն և անհատ միևնույն վերաբերումը չունի մեր կյանքին մեջ։ Կենսականորեն թանկագին ժամանակ կվատնենք՝ վիճելով ու խորհելով, թե որքանո՞վ օգտակար են հայ վարժարանները, թե որքանո՞վ կարելի կամ անկարելի է անոնց իրականացումը։ Մինչ այդ ժամանակը իր անողոք արշավով կհառաջանա։ Մեր պատանիներուն սևուկ աչքերուն մեջ հայկականության արևը կմարի և անկարելի կդառնա պատմության անիվը ետ շրջել և ուծացած սերունդը անգամ մըն ալ հայացնել հետագային։

Կուզենք անկեղծորեն հայտարարել, թե հայապահպանության այս ճակատագրական հանգրվանին Ամերիկայի մեջ չունինք ամբողջական նեցուկն ու գործակցությունը մեր եկեղեցիներուն։ Պատմականորեն գրեթե ամեն հայ եկեղեցվո գմբեթին ներքև ծաղկած է հայկական կրթարան մը. նույնիսկ միջնադարյան մեր բարձրագույն կրթական հաստատությունները, ինչպիսիք էին Գլաձորն ու Սանահինը, աճած են մեր վանքերուն կողքին։ Մեզի համար անհասկնալի կմնա հայ վարժարանին բացակայությունը ամերիկահայ մեր Եկեղեցիին կողքին։

Անմիջապես ավելցնենք, թե միշտ գնահատող եղած ենք շաբաթօրյա վարժարաններուն դերն ու առաջնորդարանին կողմե հրատարակված դասագիրքերու շարքերը։ Սակայն անոնք անբավարար կմնան մեր ազգապահպանման կարիքներուն դիմաց։

Կարելի չէ նաև ըսել, թե Եկեղեցին չի կրնար ամենօրյա դպրոց պահել Ամերիկայի մեջ, որովհետև բաժանյալ եկեղեցիներեն շատերը արդեն իրագործած են այդ ծրագիրը։ Մեր պարագային պիտի բավականանայինք, եթե Եկեղեցին օժանդակեր Բարեգործականի կրթական առաքելության կամ առնվազն մրցակցություն չտեսներ այդ առաքելության և իր կարգ մը ընկերային գործունեության մեջ։

Բարեգործականի ղեկավարները և բարերարները անդամներն ու սատարողներն են նաև մեր Եկեղեցիին. և անոնք երբեք վերապահ չեն գտնված Եկեղեցվո և անոր գործունեության նկատմամբ և առատորեն սատարած են անոր բարգավաճման գործին։

Բարեգործականը իր առաքելությունը ի գործ կդնե 26 երկիրներու մեջ,

որոնք կգտնվին ընկերային ու քաղաքական տարբեր պայմաններու տակ։ Անոր ապաքաղաքական բնույթը թող թուտա, որ ան պատշաճի ամեն վարչակարգի յուրահատուկ պայմաններուն ու սատարե մեր գաղութներու կենսական կարիքներուն։ Մեր 23 վարժարաններուն կողքին ունինք երիտասարդական կեդրոններ, դպրոցական մատուներ և մշակութային կեդրոններ։ Մեր Միությունը տարին գրեթե ութ միլիոն տոլար կհատկացնե իր ազգապահպանման ծրագիրներուն համար և այդ պյուտճեին 70 առ հարյուրը սահմանված է կրթական գործին՝ դպրոցներու, դասագիրքերու և կրթաթոշակներու։ Մեր կրթաթոշակներեն ամեն տարի կօգտվին մոտավորապես 400 համալսարանական ուսանողներ։ Մեր Միությունը նույնպես միակ կազմակերպությունն է, որ մեր հանգստյան կոչված դաստիարակներուն ու մտավորականներուն օժանդակություն կհասցնե։ Բազմաթիվ վաստակավոր ուսուցիչներու կողքին անվանի գրողներ և ազգային գործիչներ խորհրդապահաբար օժանդակություն ստացած են և կշարունակեն ստանալ։

Բարեգործականը իր օգնության ձեռքը երկարած է նաև Մայր Հայրենիքին և այնտեղ բնակող մեր հարազատներուն։ Մեզի համար մխիթարություն և ուրախություն է, որ հայրենի ժողովուրդը այլևս կարիքը չունի արտասահմանի օժանդակության և ինքն է, որ բազմաթիվ կերպերով կսատարե Սփյուռքի հայության կարիքներուն։ Սակայն Բարեգործականը միշտ պատրաստ է ընդառաջելու Հայրենիքի կոչին, այժմ և հավիտյան...։

Վեհափառ Տեր, իսկապես կարոտցած էինք Ձեզ, կարոտը ունեինք Ձեր հայրական բարի ժպիտին, Ձեր միտքի լայն հորիզոնին, Ձեր կորովին ու Ձեր ներշնչող խոսքին։ Եվ այսօր Ձեր օրհնաբեր այցելութենեն օգտվելով ուզեցինք մեր անկեղծ մտահոգությունները, մեր մտածումները և մեր ոգեվորող իրագործումները պարզել այստեղ, Ձեր ներկայության, իբրև հաչրն ու Հայրապետը բոլորիս։

Այսօր այստեղ հավաքված են Բարեգործականի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամները, Միության Ամերիկայի շրջանակի պատասխանատուները, բարերար ու պատվո անդամները, մեր պաշտոնեությունը և Միության գործին հավատացող և անոր սատարող ընտրանի բազմությունը։

Բոլորը կմիանան մեզի մեր հավատարմության ուխտը նորոգելու Սուրբ Էջմիածնին և արնշատություն ու բազում շինարար տարիներ մաղթելու Վեհին։

Բարի եկաք, Վեհափառ Տեր, հազար բարով։

Այնուհետև մեծարանքի սեղանների շուրջ ստեղծված ջերմ մթնոլորտում Վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատում է Սփյուռքի հայ կյանքում Հ. Բ. Ը. Միության կատարած հոգևոր, ազգային, մշակութային մեծ դերը հետևյալ բովանդակալից ճառով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Գոհություն Աստուծո ամենակալին, որ ինձ վիճակվեցավ երրորդ անգամ հովվական այցի գալ իմ հոգևոր զավակներուն ի Միացյալ Նահանգներ և այսօր գտնվիլ ձեր մեջ՝ բերելու իմ հայրական սիրո ողջույնը և Աստուծո օրհնությունը Սուրբ Էջմիածնեն՝ ձեր մեծ Միության անզուգական նախագահ մեծահարգ տիար Ալեք Մանուկյանին, Կենդրոնական Վարչության և ներկա գտնվող հարգարժան անձնավորություններուն:

Հ. Բ. Ը. Միությունը իր կազմավորման առաջին իսկ օրերեն սկսյալ, տևապես վայելած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ընդհանրապես մեր Մայր Եկեղեցվո գնահատանքը, քաջալերանքը և օրհնությունը: Եվ ահավասիկ ես այսօր ձեր մեջ կգտնվիմ նույն զգացումներով, նույն օրհնություններով՝ ուղղյալ բոլորիդ, ուղղյալ Հ. Բ. Ը. Միության բոլոր անդամներուն, մանավանդ որ վերջերս էր, երբ Փարիզի մեջ ձեր Միությունը տոնախմբեց իր գոյատման ու գործունեության ութսունամյակը:

Հ. Բ. Ը. Միությունը, հիմնված 1908-ին Նեղոսի ափերուն, պատահական ու անցողական երևույթ չէ եղած մեր ազգի կյանքին մեջ, այլ բնական և անհրաժեշտ մեկ արտահայտությունը հայոց ազգային վերածննդյան, որ սկիզբ առած էր անցյալ դարու վերջին տասնամյակներուն թե՛ Արևելահայաստանի և թե՛ Արևմտահայաստանի տարածքի վրա:

Այն, ինչ կկոչենք հայոց վերածնունդ, եղած է ազգային ինքնաճանաչումի, զարթոնքի և հիշատակության արժանի իրագործումներու ժամանակաշրջան մը՝ թե՛ կրթական-մշակութային, թե՛ հասարակական և թե՛ քաղաքական մակարդակներու վրա: Ինչպես Կովկասահայոց Բարեգործական Ընկերությունը, ծնունդ առած Թիֆլիսի մեջ 1881 նոյեմբեր 15-ին ջանքերովը բժիշկ Բագարատ Նավասարդյանի, Գաբրիել Սունդուկյանի և ազգային բարերար Ալեքսանդր Մանթաշյանի, այնպես ալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը եղած են, այո, բնական և անհրաժեշտ արտահայտությունները մեր ազգային վերածննդյան, կազմակերպություններ, որոնք կոչված էին հեղաշրջում և բարենորոգում հառաջ բերելու հայ կյանքի մեջ, հզորացնելու տնտեսական և ֆինանսական մակարդակը հայ ազգաբնակչության ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության տարածքի վրա: Եթե հայ քաղաքական կուսակցությունները իրենց մարտական սխրանքներով կերտեցին հայ ազատագրական շարժման հերոսական էպոսը, ապա նույն ազգային-քաղաքական գիտակցությամբ տոգորված, գործարար հայ մարդիկ թե՛ Կովկասի և թե՛ Թուրքիո մեջ նույն ազատագրական իդեալին փորձեցին ծառայել խաղաղ ճանապարհներով:

Կովկասի Բարեգործական Ընկերությունը արագ թափով զարգացավ և 1891-ին ունեցավ 21 մասնաճյուղեր Կովկասի և Ռուսաստանի հայաշատ տարբեր քաղաքներուն մեջ: Գեորգ Դ կաթողիկոս 1881-ի դեկտեմբեր 18-ի կոնդակով իր ողջույնը և օրհնությունը բերավ նորակազմ Ընկերության:

Ահա հատված մը հայրապետական այդ կոնդակեն.

«Օրհնեալ եղիջիք դուք, որ ըստ կարեաց հայկական ազգային օգտի և ըստ պիտոյից ժամանակիս այսորիկ ընտրեալ էք ձեռնտու լինել տարածման մտաւոր լուսաւորութեան, օժանդակ լինել բարգաւաճման արհեստից, օգնական լինել որոց նուիրեն զանձինս յուսումն գիտութեան, մխիթարիչ հիւանդաց և կարօտելոց, և նպաստատու այլ ամենայն հաստատութեանց և

միջոցաց, որովք ազգ մեր առաւել պայծառապէս փայլեսցի առաջի ազգաց օտարաց ըստ բազում մասանց»:

Հատկապես Պողոս Նուպարի և իր գործակիցներու հիմնական նպատակն ու ծրագիրը եղան նյութական լայն միջոցներ ստեղծելով բարելավել ու զարգացնել Թրքահայաստանի գաւառներու շինական ժողովուրդի տընտեսական, ի մասնավորի հողագործական աշխատանքի պայմանները: Եվ կխորհիմ թե այս նպատակադրումը կոչված էր նույնքան հեղափոխական և ազատագրական ըլլալ հայ գյուղացիության համար, որ այդ օրերուն մեր ժողովուրդի համրանքին 80—90 տոկոսը կկազմեր:

Այստեղ հիշենք նաև Սեծն Խրիմյան Հայրիկին, որ գավառի հայ շինականներու կյանքի բարելավումը և հեղափոխումը կտեսներ հողագործության, գյուղական տնտեսության զարգացման և մեքենայացումի մեջ:

Իմ խոսքի իբրև հառաջաբան, ես փորձեցի ուրվագծել անցյալը և մատնանիշ ընել Հ. Բ. Ը. Միության հիմնադիրներու ոգին և ազգային մտահոգությունները, որովհետև կխորհիմ թե այսօր ալ նույն այդ ոգին պետք է առաջնորդող մնա, թեև հայ կյանքի պայմանները հիմնովին փոխված են:

Հ. Բ. Ը. Միությունը իր սկզբնական ծրագիրը, ավաղ, չկարողացավ իրագործել: Հազիվ քանի մը տարիներ անց իր կազմավորումեն, ծայր տվավ Պալքանյան պատերազմը, ապա հաջորդեցին համաշխարհային առաջին պատերազմը և մեր ազգային մեծագույն աղետը՝ բնաջնջումը Արևմտյան Հայաստանի բովանդակ ազգաբնակչության 1915—16 սև տարիներուն:

Արևմտահայոց վերածնունդն ու ազատագրական շարժման սխրանքը մարտիրոսությամբ պսակվեցան: Պահ մը թվեցավ, թե հայ ազգի համար ամեն հույս կորսված է: Սակայն հրաշքի համազոր պայմաններու բերումով, Սարդարապատի Մայիսյան պատմական հաղթանակով ազատագրվեցավ Արևելյան Հայաստանը, սկիզբ առավ հայոց պետականությունը, որ 1920-ի աշնան Նոր Եղեռնի մը առաջ կանգնած՝ փրկվեցավ յաթաղանի հարվածեն, այս անգամ շնորհիվ ռուսական բանակի օգնության, որով մեր երկիրը վերջապես հասավ խաղաղ գոյատևման և անվտանգության ափին, այդ օրերուն շուրջ յոթ հարյուր հազար ազգաբնակչությամբ:

Ահա այսպես, հիմնովին փոխվեցավ հայ ժողովուրդի պատմության ընթացքը: Սկիզբ առին նոր պայմաններ, նոր հնարավորություններ, նոր հույսեր և մանավանդ նոր ու հերոսական հայրենաշեն իրագործումներ փրկված մայր հողի վրա: Սկիզբ կառներ հայ ժողովուրդի պատմության նոր շրջանը, պատմության շրջանը Սովետական Հայաստանի:

Հ. Բ. Ը. Միությունը այս նոր կացության առաջ կանգնած, սրբությամբ պահպանեց իր սկզբնական ոգին, և իրապաշտ ու գործարար կեցվածքով օգնության ձեռք երկարեց մահվան եզրին հասած մեր մայր երկրին, որ այդ օրերուն «ողբի ու որբի հայրենիք էր»:

Ձեն մոռցված և պիտի չմոռցվին Հ. Բ. Ը. Միության նյութական օգնությունները և բարոյական քաջալերանքը՝ ընծայված նորակազմ Սովետական Հայաստանի ազգաբնակչության:

Ձեն մոռցված և պիտի չմոռցվին նաև Հ. Բ. Ը. Միության որբախնամ և եկեղեցաշեն ու կրթանվեր իրագործումները հայ Սփյուռքի տարածքի վրա, մանավանդ Մերձավոր Արևելքի երկիրներուն մեջ, ուր ապաստան գտած էին Եղեռնի դժոխքեն փրկված գաղթականները և բազմահազար որբերը:

Այդ օրերում և հետագային Հ. Բ. Ը. Միությունը ընտրեց ոչ թե գաղափարախոսական ընդդիմության ուղին, այլ համազգային համերաշխության ուղին: Ան մնաց հավատարիմ իր հիմնադիրներու համահայկական մտահոգություններուն և գործելակերպին, խարսխված համազգային, հայրենասիրական, քաղաքական մտածելակերպի վեմին վրա:

Սովետական Հայաստանի Հանրապետության կազմավորումով, 1920-ենետո հայ ժողովուրդի առաջ դրվեցան հիմնական չորս հարցեր.

ա. Վերաշինությունը և հզորացումը նորաստեղծ հայրենիքի և մեկտեղումը հայ ազգի զավակներուն, Խորհրդային Հայաստանի հողի վրա, միակ իրական և հնարավոր հայրենիքը համայն հայության:

բ. Կազմավորումը Սփյուռքի հայ բազմություններու, ապահովելու համար անոնց ազգային ինքնության պահպանումը և ամրապնդումը՝ Եկեղեցիով, կրթական հաստատություններով և մշակութային-ազգային միություններով:

գ. Ամուր հիմքերու վրա հաստատումը և զարգացումը Հայրենիք—Սփյուռք հարաբերություններու՝ եկեղեցական, մշակութային, հայրենասիրական գետնի վրա:

դ. Հետապնդումը հայոց քաղաքական պահանջատիրության ե առաջին հերթին միջազգային ճանաչման 1915-ի ցեղասպանության:

Կխորհիմ, թե Հ. Բ. Ը. Միության հիմնադրման հիմնական ոգին ամբողջապես կհամապատասխանեն այս չորս մտահոգությունները և առաջադրանքները: Այս մտահոգություններու և առաջադրանքներու ճամփով ընթացած է ձեր բարեսիրական մեծ կազմակերպությունը առաջին համաշխարհային պատերազմեն հետո ահա մոտ յոթանասուն տարիներ շարունակ: Եվ իմ մաղթանքն է, որ Հ. Բ. Ը. Մությունը նաև հետ այսու միշտ մնա հավատարիմ այս ոգիին և այս գործելակերպին:

Ինչպես հիշեցի արդեն, Հ. Բ. Ը. Միությունը իր եղբայրական կարևոր նպաստը բերավ Սովետական Հայաստանին անոր ստեղծման առաջին տարիներուն, երբ հայաստանցի բնակչությունը ծով կարիքներու մեջ կգտնվեր: Այդ շրջանը սակայն շատոնց պատմության գիրկն անցած է: Այսօր մեր մայր երկիրը շուրջ երեք և կես միլիոն բնակչությամբ, իր հզոր տնտեսությամբ և արդյունաբերական մեծ հիմնարկություններով, իր մեքենայացված գյուղատնտեսությամբ, իր քաղաքներու և գյուղերու վերաշինությամբ, իր մշակութային և գիտական բազմահարյուր հաստատություններով, վերջին տարիներուն իր իրականացուցած հազարավոր միլիոն ռուբլի արժեղությամբ մեծ կառուցումներով, բնականաբար կարիքը չունի Սփյուռքի հայության նյութական օժանդակության: Սակայն կխորհիմ, թե այնուամենայնիվ հանձնարարելի է, որ Սփյուռքի մեր ազգակիցները և միությունները խորհրդանշական առումով որոշ հոգատար վերաբերում ցուցաբերեն Մայր Հայրենիքի գիտական և մշակութային հիմնարկներու նկատմամբ:

Այսօր ես կկամենամ մասնավորաբար ընդգծել իմ առաջադրանքը՝ Սփյուռքի նոր սերունդներու հայեցի դաստիարակության անհրաժեշտության առնչությամբ: Գիտեմ, թե Հ. Բ. Ը. Միությունը մեծ չափերով ընդարձակած է ամենօրյա հայ վարժարաններու ցանցը Սփյուռքի տարածքի վրա, սակայն կատարվածը դեռ հեռու է բավարար ըլլալե: Առանց հայ լեզվի և հայ մշակույթի արժեքներու յուրացման, հնարավոր չէ հայապահպանում ապահովել: Ոչ մեկ կազմակերպություն, ոչ իսկ միայն Եկեղեցին, առանց հայ լեզվի, ի վիճակի չեն ապահովելու նոր սերունդներու հայկական գի-

տակցությունը և զգացողությունը: Դպրոցաշեն հետևողական քաղաքակա-
նությամբ հարկ է ապահովել, որ գոնէ տասը հայ պատանիներեն մեկը հա-
յերեն խոսիլ և կարդալ գիտնա: Այդ մեկը կխորհիմ կարող է ինը հայերեն
չխոսողները իր հետ բերել հայ կյանքի մեջ:

Անտարակույս Սփյուռքի տարածքի վրա հայ վարժարանները մեծա-
գույն պարգևն են Մայր Հայրենիքին: Անշուշտ վարժարաններու կողքին կան
նաև հայապահպանման այլ կարևոր հաստատություններ, ինչպես մեր Առա-
քելական Եկեղեցին առաջին հերթին, և ազգային-մշակութային կազմակեր-
պությունները, որոնք կհամալրեն և կշարունակեն դպրոցներու իրագործումնե-
ները, հայ երիտասարդը դպրոցական շրջանեն հետո հայ կյանքին կապե-
լու համար, որ շատ կարևոր պարագա է, որովհետև հաճախ հայ միջնա-
կարգ վարժարանի շրջանավարտներ, որոնք գիտեն հայերեն խոսիլ ու
կարդալ, վարժարանը ավարտելե հետո սակայն հեռու մնալով հայ կյան-
քեն, Հայ Եկեղեցիեն, Հայաստանի իրականութենեն, տակավ կկորսվին
հայության համար:

Անհավասիկ մտահոգություններ, առաջադրանքներ, հարցեր, որոնք
պետք է առարկան դառնան լուրջ ծրագիրներու ու կազմակերպված բազ-
մակողմանի աշխատանքի:

Հ. Բ. Ը. Միությունը այն համազգային մեծ կազմակերպությունն է, որ
ի վիճակի է աստիճանաբար կենդանի գործի վերածելու այս բաղձանք-
ներն ու ծրագիրները, առաջին հերթին գործակցելով մեր Մայր Եկեղեցիին
հետ:

Հայաստանյայց Եկեղեցին և Հ. Բ. Ը. Միությունը պատմականորեն
միշտ կողք-կողքի գործած են, իբրև համազգային անկուսակցական կազ-
մակերպություններ Սուրբ Էջմիածնի օրհնության ներքև:

Վերջացնելե առաջ իմ խոսքը, պահ մը կուզեմ կանգ առնել վերոհիշ-
յալ վերջին հարցի վրա, որ է հետապնդումը հայկական դատին և միջազ-
գային ճանաչումը 1915-ի ցեղասպանության: Վստահ եմ, թե Հ. Բ. Ը. Միու-
թյունը ևս, այլ հայկական կազմակերպություններու կողքին, կապրի ու
կգործե նաև այս մտահոգությունով, այս ազգային-քաղաքական հարցով,
հարց, որ համահայկական է, զի նման հարցերը մենաշնորհը չեն քաղաքա-
կան կուսակցություններու: Ամեն հայկական կազմակերպություն, ներառյալ
Հայ Եկեղեցին իր հոգևոր սպասավորներով և հավատացյալներով, պար-
տին իրենց նպաստը բերել մեր ազգին արդար երազանքներու կենսագործ-
ման ճանապարհի վրա:

Դուք, հարգարժան տիարք, ղեկավարներ և անդամներ Հ. Բ. Ը. Միու-
թյան և մեր ժողովուրդի ծոցին մեջ գործող կազմակերպություններ, բոլորդ,
բոլորս կոչված ենք ուղիղ հասկնալ մեր ողբերգական անցյալը, մեր ահա-
վոր հուսախաբությունները, կոչված ենք ուղիղ տեսնել մեր մայր երկրի աշ-
խարհագրական-քաղաքական դիրքը, ուղիղ գնահատել մեր սեփական ու-
ժերու տարողությունը, ուղիղ ճանչնալ մեր բարեկամը և մեր թշնամին:

Այս մտքերը կարտահայտեմ լավատեսության շեշտով, որովհետև այս
տարի հունիսի 18-ին Ստրասպուրկի մեջ մեր ժողովուրդի դատը հաղթա-
նակ մը արձանագրեց 1915-ի ցեղասպանության ճանաչումով Եվրոպական
պառլամենտի կողմե: Իրավ հաղթանակ մըն է միջազգային իրավունքի մա-
կարդակի վրա, հաղթանակ մը ոչ միայն բարոյական, այլ նաև քաղաքա-
կան: Այդ օրը զգացինք մենք բոլոր հայերս, թե Ստրասպուրկեն ճամփա
մը բացվեցավ դեպի Սեր: Մեր ճամփան երկար է տակավին և դժվարու-

թյուններով լեցուն, սակայն պետք է հավատանք մեր վերջնական հաղթանակին, վասնզի, իբրև քրիստոնյաներ, կհավատանք ճշմարտության և արդարության հաղթության, մեր Տիրոջ և Փրկչի Հիսուսի դատարկ գերեզմանի խորհուրդով:

Եվ մեր արդար դատի հետապնդման ճանապարհին, պետք է ճկուն ըլլանք և իմաստուն, օգտագործելու համար մեզի ընձեռված հնարավորությունները, բոլոր արտաքին պայմանները, հետամուտ ըլլանք ամեն տեղ բարեկամներ շահելու մեկ հիմնական նպատակի համար: Այս տեսանկյունեն դիտված, կհաստատենք, թե հայ կազմակերպություններեն ոչ բոլորը բավարար չափով այդ ճկունությունը և իմաստությունը կպահեն: Այսպես օրինակ, ինձ համար անհասկնալի է, թե ինչո՞ւ հակասովետ դիրքավորում մը կրնա նպաստել հայ դատին: Արդյո՞ք հակասովետ քաղաքականությունը պիտի դյուրացնե հայոց դատի արդար լուծումը: Ահա հարցում մը ևս, որուն պատասխանը կսպասեմ:

Մեծահարգ տիար Ալեք Մանուկյան, այսօր ես երջանիկ եմ հույժ, որ Դուք մեր մեջ եք այստեղ: Դուք Ձեր երեսուն և ավելի տարիներու ազգաշեն փայլուն իրագործումներով, իբրև անզուգական նախագահը Հ. Բ. Ը. Միության, Դուք, որ Ձեր անձնական միջոցներով բազում բարեգործություններու ռահվիրան կհանդիսանաք, մեր դարու ամենապայծառ ու ամենապանծալի հայ անձնավորությունն եք Սիյուռքի տարածքի վրա, Դուք, որ Ձեր ամենաբաշխ բարի ձեռքը տարածած եք արտասահմանի հեռավոր շրջաններեն մինչև Հայաստան, մինչև Սուրբ Էջմիածին, Դուք, որ մեր օրերուն արդարորեն կվայելեք հարգանքն ու երախտագիտությունը համայն հայության:

Ամենայն Հայոց կաթողիկոսը այսօր անգամ մը ևս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն Ձեզի կբերե իր մեծարանքը, իր սերը և իր հայրապետական օրհնությունը, ջերմ մաղթանքով, որ բազում տարիներ ևս առողջ մարմնով, Ձեր արդար սրտով ու Ձեր շինարար ոգիով շարունակեք Ձեր պայծառ առաքելությունը հայ ազգին ծառայելու ճամփուն վրա:

Սիրելի տիարք և տիկնայք, այսօր ձեր մեջ ինքզինքս զգացի հարազատներու հին և ապահով բարեկամներու ընտանեկան հարկի տակ և խոր ապրումներ ունեցա, լսելով ձեր որդիական ազնիվ արտահայտությունները Սուրբ Էջմիածնի և իմ հասցեին: Շնորհակալություն: Այս բոլորը ես պիտի չմոռնամ, չեմ կրնար մոռնալ: Ձեզմե պիտի բաժնվիմ ձեզի ավելի միացած: Հետս Մայր Հայրենիք և Սուրբ Էջմիածին պիտի տանիմ ճառագայթ մը այսօրվան լույսեն, ձեր հոգիներեն ճառագայթող: Ես կզգամ շոշափելի իրողությունը այդ լույսին:

Շատ հավանական է, որ այս իմ վերջին այցելությունն է ձեզի և Մեր ամերիկահայ հոգևոր զավակներուն: Սակայն ես միշտ ձեր մեջ պիտի գտնըվիմ իմ աղոթքներով, իմ երազանքներով, իմ բարի մաղթանքներով:

Մնացեք խաղաղությամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով»: Ամեն:

Վեհափառ Հայրապետի ճառից հետո պրն. Ալեք Մանուկյանը, խորապես հուզված, հայտարարում է.

«Շնորհակալ ենք, Վեհափառ Տեր, Ձեր խոսքերուն համար, Ձեր հորդորներուն համար: Կրնանք վստահեցնել Ձեզ, թե մեր հավատքի կեդրո-

նը՝ Ս. Էջմիածինը, երբեք պիտի չքանդվի, այլ պիտի մնա ու պիտի զարգանա։ Մենք բոլորս այդ հավատքը ունինք և այդ հավատքով ալ մեր գործունեությունը պիտի շարունակենք՝ ի փառս Աստուծո, ի փառս Ս. Էջմիածնին և ի փառս հայ ժողովրդին ու Ամենայն Հայոց Կաթողիկոսության»։

Ապա Միության մեծարգո նախագահը, հանուն Բարեգործական Միության, Վեհափառ Հայրապետին է հանձնում հիշատակի թանկագին մի նվեր՝ Հովհաննես Այվազովսկու մեկ ծովանկարը։

Այնուհետև պրն. Ալեք Մանուկյանը հուզիչ շեշտելով հայտնում է, թե ինքը ևս վերջերս գեղեցիկ մի նվեր է ստացել Հ. Բ. Ը. Միության հարգելի անդամ պրն. Հովսեփ Թահմազյանի և նրա քրոջ կողմից։

«Պրն. Թահմազյանը ինձի գրած էր նամակ մը,—ասում է պրն. Ալեք Մանուկյանը,—որ շատ հուզեց զիս, որովհետև կրնամ ըսել, թե աև 70 տարվան հնություն ունեցող նամակ մը էր, իր մանկության հիշատակներով գրված նամակ մը։ Հոն կնկարագրեր, թե ինչպես ինք գաղթականության օրերուն հասած է Տեորթ-Յոլ իբրև որբ և հաստատված է Բարեգործականի որբանոցներեն մեկուն մեջ, որուն ընդարձակման աշխատանքներուն բերած է իր մասնակցությունը, հոն տեղավորած է իր քույրը և բնավ չէ մոռցած այդ հիշատակներն ու մասնավորաբար Բարեգործականի այդ օրերու գործունեությունը։ Ատոր համար ալ ուղարկած է ինձի 25.000 դոլարի փոխգիր մը, հատկացվելու բարեգործական նպատակի։ Շատ շնորհակալ եմ պրն. Թահմազյանին։ Հ. Բ. Ը. Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովը հանուքով ու երախտագիտությամբ պրն. Թահմազյանին և իր քրոջ կընծայե վկայագիրը բարերար անդամի»։

Արցունքոտված աչքերով, ներկաների ծափահարությունների տարափի ներքո, Վազգեն Ա կաթողիկոսը, պրն. Ալեք Մանուկյանի հրավերով, բարերար անդամի վկայագիր է հանձնում պրն. Թահմազյանին՝ հայտնելով, թե ինքն էլ մի անակնկալ ունի մատուցելու այդ ուրախ օրվա առթիվ։

Ապա Վեհափառ Հայրապետը ավելացնում է.

«Ես իմ ճառիս մեջ շնորհակալության և երախտագիտության խոսքս ուղղեցի Հ. Բ. Ը. Մ.-ին և հատկապես տիար Ալեք Մանուկյանին, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ամենամեծ բարերարը հանդիսացավ իմ գահակալության շրջանին։ Բայց բարիքները, զորս կվայելե Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, կշարունակվին նաև Ալեք Մանուկյանի դուստր տիկ. Լուիզ Սիմոնին կողմե։ Այս առիթով ես իմ գնահատանքի և շնորհակալության խոսքը կուզեմ ուղղել իրեն և իրեն շնորհել Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանը»։

Բուռն ծափահարությունների ներքո Հայոց Հայրապետը Հ. Բ. Ը. Միության փոխնախագահ տիկ. Լուիզ Սիմոնի կուրծքը զարդարում է Ս. Գրիգոր Լուսավորչի ականակուռ շքանշանով։

Հայրապետական մեծարանքի այս պատմական ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով։



ՃԱՇԿԵՐՈՒԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, «University club»-ում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Նորին Սրբության ընդունելության ծախսերը հոգացող արևելյան թեմի բարերարները կազմակերպում են ճաշկերույթ: Օրվա հյուրընկալն է Մայր Աթոռի բարերար պրն. Գևորգ Հովնանյանը:

Բացման խոսքով հանդես է գալիս Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ապա խանդավառ մթնոլորտում Վեհափառ Հայրապետին ուղղված երախտագիտական սրտագին խոսք է ասում Գևորգ Հովնանյանը:

Ընդունելության վերջում, ընդհանուր ծափերի ներքո, օրհնության և գնահատանքի խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ ներկաներին փոխանցելով Հայ Եկեղեցու, հայ ժողովրդի, հայոց վերածնված մայր հողի նկատմամբ իր սլայծառ լավատեսությունն ու անկոտրում հավատքը և նրանց հոգիները փոթորկելով հայրենաբույր խոհերով և զգացումներով:

Իր խոսքի վերջում Վեհափառ Հայրապետը, իր այցելության երջանիկ առիթով, ի նշան հայրապետական սիրո և գնահատանքի, Ս. Գրիգոր Լուսավորչի ականակուռ շքանշանով զարդարում է կուրծքը բարերար տիար Հրայր Հովնանյանի:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նոյեմբերի 1-ին, կիրակի օրը, Նյու Յորքի Ս. Վարդան Մայր տաճարում պատարագում և քարոզում է հայրապետական շքախմբի անդամ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Վաղ առավոտվանից հավատացյալների ծովածավալ բազմությունը, շուրջ 3.000 հոգի, լցրել էր եկեղեցին, վերնատունը, բակը, գավիթը՝ վայելելու սուրբ պատարագի անպատում երանությունն ու հոգեկան քերկրանքը:

Բազմաթիվ հայ ուխտավորներ Նյու Յորքի հեռու և մոտիկ շրջաններից փութացել էին մասնակցելու սուրբ պատարագի հոգեպարար արարողությանը:

Նյու Յորքի տարբեր շրջանների հայ եկեղեցիների միացյալ երգչախումբը կատարում է Կոմիտասյան պատարագի հոգեզմայլ երգեցողությունը:

Ավետարանի ընթերցումից առաջ, եկեղեցական թափորով, ամպհովանու ներքո, «Հրաշափառ»-ով, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մայր եկեղեցի, ուր հավատացյալների բազմությունը երկյուղած բարեպաշտությամբ և սրտագին բարեմաղթություններով ողջունում է իր սիրելի Հայրապետին:

«Հայր մեր»-ից առաջ պատարագիչ սրբազան հայրը կրոնաշունչ քարոզով մխիթարում է հավատացյալ ժողովրդին:

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՔԱՐՈԶԸ

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ահաւասիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի»:

Սիրելի հավատացյալներ,

Այս բնաբանը վերցրել եմ Հրն Կտակարանի Եզեկիելի մարգարեությունից: Աստված Եզեկիելին պարգևում է նրա տեսիլքներից ամենահատկանշականն ու խորհրդավորը: Սույն տեսիլքի սկզբին Տերը հետևյալ հուսադրիչ խոսքերն է ասում նրան. «Ահավասիկ ես ձեր մեջ դնելու իմ շունչը կենդանի»:

Մարգարեն մտահոգ էր իր ժողովրդի ճակատագրով, մանավանդ ի տես հարևան թշնամի ցեղերի կողմից գործադրվող հալածանքների, կոտորածի և աքսորի: Նրա հոգին խռովված էր, և նա փորձում էր գտնել մխիթարանքի մի միջոց, որը սպեղանի դառնար իր ժողովրդի ցավերին: Ահա այսպիսի խռովյալ մի պահի մարգարեն ունենում է հետևյալ տեսիլքը.

Աստված նրա ձեռքից բռնած տանում է նրան հեռավոր մի դաշտավայր, որը լցված էր մարդկային չորացած ոսկորներով: Ցույց տալով այդ ոսկորները, Տերը հրամայում է Եզեկիելին՝ ասելով. «Կյանք պարգևիր այս անկենդան ոսկորներին»: Մարգարեն, զարմացած տվյալ հրամանից, նայում է իր Տիրոջը և մարդկային անզորության ամբողջ գիտակցությամբ մտածում, որ կյանքի տվիչը մարդը չէ, այլ՝ Աստված: Եվ որովհետև Տիրոջ հրամանը արդեն արձակվել էր, դաշտում սփռված մարդկային ոսկորները մնան, միս ու մորթ են հագնում և ստանում մարդկային կերպարանք:

Քիչ հետո Աստված կրկին հրամայում է մարգարեին՝ ասելով. «Ծունչ պարգևիր սրանց»: Դաշտը կենդանանում է անմիջապես, աստվածային կենարար ու կենդանարար շունչը, երկնային անտեսանելի հողմի նման, անցնում է դիակների միջով, և նրանք նմանվում են հողի տակ թաղված սերմերի՝ գարնան շնչով ծլող ու ծաղկող:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր նոյեմբերի մեկն է, պատմական և անմոռանալի մի թվական բոլորիս համար, որովհետև այսօր մեզ հետ Նյու Յորքի հայոց Ս. Վարդան Մայր եկեղեցու կամարների տակ է գտնվում Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը, գալով հազարավոր մղոններ հեռու գտնվող հայ ժողովրդի հավատքի կենտրոն աստվածադիր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և բոլորիս սիրելի Հայաստան աշխարհից: Ըստ նախօրոք կատարված հատուկ կարգադրության, այսօր, հավարտ սուրբ պատարագի, նախագահությամբ Նորին Սրբության և ներկայությամբ մեծ Եղեռնի դառնությունները ճաշակած մեր տարեց հայրերի

ու մայրերի, որոնց թիվը տարիների ընթացքում գնալով նվազում է, կատարելու ենք մասնավոր հոգեհանգստյան պաշտոն Եղեռնի մեր հանգուցյալների հոգիների խաղաղության և լուսավորության համար, որոնք «վասն հայրենյաց և վասն հավատոյ» զոհ գնացին 19-րդ դարի վերջին տասնամյակում և 20-րդ դարի առաջին քառորդում օսմանյան բիրտ իշխանության կողմից հայ ժողովրդի դեմ նյութված դավադրության՝ ցեղասպանության:

Ի տես ներկա ժամանակների մեր ժողովրդի վերազարթոնքի, մենք ազգովին Եզեկիել մարգարեի տեսիլքն ենք վերապրում. մեր աչքերի առջև է անա Արևմտյան Հայաստանը՝ իր տխուր անցյալով. ավերված գյուղեր, քաղաքներ, եկեղեցիներ, աքսորված մի ժողովուրդ, ամենուրեք ջարդեր, արյուն և սպանդ: 1876 թվականին Սուլթան Համիդը գահ է բարձրանում՝ տարածելով ահ ու սարսափ իր կայսրության սահմաններում ապրող բոլոր փոքրամասնությանց վրա: Խլում է նրանց իրավունքները, ջարդեր է կազմակերպում, հատկապես քրիստոնյաների և ի մասնավորի հայ ժողովրդի դեմ:

Առաքելական օրերից քրիստոնեությունը ընդունած հայ ժողովուրդը օսմանյան լծի տակ վեց դար շարունակ հեծել է: Եվ որովհետև ազատության տենչը նրան մղում էր այդ լուծը թոթափելու ճանապարհներ որոնել, այդ իսկ պատճառով նա դառնում է թիրախը սուլթանի հալածանքների: Բռնությունները հատկապես սաստկանում են 1896 թվականին, իսկ 1908-ին Թթիհատական երիտասարդ թուրքերը, տապալելով սուլթանին և անցնելով իշխանության գլուխ, մեկ տարի անց, շեփորելով ֆրանսիական հեղափոխության ընդունած արդարության, եղբայրության և հավասարության կոչը, կազմակերպում են Ադանայի ջարդը: Հետագայում նույն երիտասարդ թուրքերի իշխանությունը դավադրաբար կազմակերպում է մեծ Եղեռնը՝ հայկական ցեղասպանությունը: Պատմական այս կարճ ժամանակաշրջանում քսան-երեսուն տարիների ընթացքում, ավելի քան երկու միլիոն հայեր զոհ են դառնում տեղահանությանց, սպանդի և ցեղասպանության: Դատարկվել էր ամբողջ Արևմտահայաստանը իր հայ ազգաբնակչությունից:

Կարծես հասել էր դժբախտ պահը, երբ հայ ժողովրդի պատմության էջերը առհավետ փակվելու էին:

Սակայն, ո՞վ հրաշք զարմանալի, հայ ժողովուրդը փյունիկի նման իր մոխիրներից վերակենդանացավ, հարություն առավ մեռելներից. մեր նահատակների արյան լճերից բողբոջեցին կարմիր կակաչներ, իրականացավ Սուրբ Օգոստինոս հայրապետի խոսքը՝ «Մարտիրոսների արյունը սերմն է քրիստոնյաների»: Իրականացավ Եզեկիել մարգարեի տեսիլքը. հարություն առան, վերակենդանացան նահատակները, դալարեցին չորացած ճյուղերը մեր պարտեզի, և անապատները պտղատու ծառերով զարդարվեցին:

Հայ ժողովուրդը 1918 թվականի մայիսին Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի իր հերոսական մարտերով կարողացավ ապահովել իր հայրենիքի սահմանները և հաստատել իր գոյության իրավունքը: Սարդարապատի հաղթանակով մենք մեկընդմիշտ ցույց տվեցինք ողջ աշխարհի մարդկությանը, թե հայ ժողովուրդը իր կյանքի ճգնաժամային պահին ի գին իր արյան գիտի պաշտպանել իր հայրենիքն ու իր սրբությունները:

Վարդանանց հերոսամարտի ոսկեդեղնիկ պատմիչը՝ Եղիշեն, Ավարայրի հերոսների կատարած սխրագործությունները նկարագրելիս հետևյալ բառերով է բնորոշում իրենց հայրենիքի ու հավատի հանդեպ նրանց ցու-

ցաբերած նվիրումը. «Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:

Հայ ժողովուրդը իր ողջ պատմության ընթացքում այս նշանաբանով է ապրել, մահվամբ մահին է հաղթել, ինչպես Քրիստոս Գողգոթայի բարձունքում խաչափայտի վրա իր մահվամբ հաղթեց մահվան:

Սիրելի հավատացյալներ, ազգ մենք՝ հայերս, ի Հայաստանս և ի սփյուռս աշխարհի, բացառությամբ Մերձավոր Արևելյան մի շարք երկրների, ապրում ենք ավելի բարօր և երջանիկ պայմաններում, քան անցյալում: Այնպես «մահվամբ մահը հաղթելու» վիճակները թվում է, թե իսպառ հեռացել են մեր երկրից և մեզանից: Այդ իսկ պատճառով լավ է, որ ներկայիս մի փոքր փոփոխելով Եղիշեի վերոհիշյալ ասույթը՝ ապրենք ու գործենք՝ «Կյանք իմացյալ անմահություն է» բնաբանով: Եթե մեր ապրած կյանքը լինի գիտակցված, նպատակասլաց և այն իսպառ դրվի ազգիվ ու վսեմ ծրագրերի իրագործման, փատահաբար հայ ժողովուրդը և մեր հայրենիքը կկարողանան մեծ օգուտներ քաղել մեր կյանքից: Եթե գիտակցենք մեր ներկա կյանքի մեջ ընկեռած բարիքները և կարողանանք նպատակասլաց և իմաստավորված մի կյանք ապրել, մի նոր փիլիսոփայական հայացքով, կյանքի հանդեպ մեր ըմբռնումը վերափոխելով, կարող ենք մեր երկիրը դարձնել մի դրախտավայր և մեր առօրյա կյանքը՝ երջանիկ:

Հասել է ժամանակը ձեռք-ձեռքի տալու, իրար զորավիգ կանգնելու, մեր ժողովրդի պայծառ ապագան կերտելու, գալիք սերունդների կյանքը ապահով ուղու վրա դնելու և նոր դարերի համար ճանապարհներ բացելու: Մենք համայն մարդկության ապագայի համար օգտակար մի կյանք ապրելով, պետք է ապացուցենք աշխարհին՝ թե՛ չարակամներին և թե՛ բարեկամներին, որ անիրավ էր և սխալ այն դառն բաժակը, որ մենք ըմպեցինք մեծ Եղեռնի շրջանում:

Տասներեք տարի հետո փոխվելու է մեր դարը. մարդկությունը թևակոխելու է մի նոր դարաշրջան, մի նոր այգաբաց է տեղի ունենալու մեր աչքերի առաջ: Այդ նոր դասը պետք է դիմավորենք լավատեսությամբ, հույսով և հավատով: Փոխանակ առօրյա տաղտկալի, մանր-մունր վեճերով մենք մեզ հյուծելու, ժամանակն է, որ կյանքի հանդեպ ավելի լայն հայացք ունենանք: Փորձենք ծանոթացնել մեր պատմությունը մարդկության, փորձենք մեր ընտանեկան բարոյական առաքինությունները դրսևորել մեր շրջապատում, փորձենք հայ մշակույթի արժեքները դարձնել սեփականությունը ամբողջ մարդկության: Հոգով և սրտով փարվենք մեր ծաղկուն ու ծաղկող Այրարատյան աշխարհին՝ մեր Մայր Հայրենիքին, որը մեր նախնյաց արբազան ավանդն է մեզ ժառանգ թողնված:

Սիրելի եղեռնահար տարեց քույրեր և եղբայրներ, մենք գիտենք, թե դուք ինչպիսի դժոխքի կրակներից փրկվելով հասել եք ներկա օրերին, իրրև մեկ-մեկ նշխարներ հայ ժողովրդի արբազան պատարագումից: Հասել եք մեզ ձեր հայեցի նկարագրով, ձեր հայրենասիրությամբ և բազում զոհողությունների գնով: Կաթոգին նվիրումով դաստիարակել եք ձեր զավակներին հայեցի ոգով, և նոր սերունդը ձեզ է պարտական իր հայեցիությամբ, հայրենասիրությամբ և իր հավատով:

Այսօր, Ս. Էջմիածնի գահակալը՝ Ամենայն Հայոց Հայրապետը, եկել է մեր վերածնված Հայաստան աշխարհից՝ ձեզ բերելու համար իր լուսավորչապարգև օրհնությունները և հայրենի մեր ժողովրդի եղբայրական սիրո ողջույնները:

Թող մեր ժողովրդի երիտասարդ զավակները ապրեն ձեր հավատով ու նվիրումով՝ գալիք սերունդներին փոխանցելով այն լուսավառ ջահը, որը դուք ժառանգաբար հանձնել եք մեզ:

Թող Տիրոջ սերն ու ողորմությունը առատորեն բաշխվեն բոլորիս վրա՝ պարգևելով մեր աշխարհին խաղաղություն, մարդկանց միջև եղբայրություն այժմ և միշտ և հավիտյան:

Հարգանք մեր նահատակներին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ամեն:

Հավարտ ս. պատարագի իր օրհնությունն ու պատգամն է տալիս Վեհափառ Հայրապետը՝ մի անգամ ևս խանդավառելով ներկաների սրտերը և հորդորելով նրանց հավատարիմ մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հայ ժողովրդի ստեղծած ոգեկան արժեքներին, Մայր Հայրենիքի պայծառ իրականությանը և շարունակել օտար ափերի վրա եկեղեցական, կրթական ու մշակութային օգտակար գործունեությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը թափորով ուղղվում է դեպի առաջնորդարանի սրահ, որտեղ ընդունում և օրհնում է օրվա երգեցիկ խմբի անդամներին և հյուրերին: Այս առթիվ պոլսեցի երկու քարեպաշտ երիտասարդներ՝ Հրանտ Գալյանը և Հրաչ Գաբրիելյանը, Վեհափառ Հայրապետին են նվիրում նրա այցելության առթիվ իրենց կողմից հատկապես պատրաստված քառանկյունի մի մարմար, որի վրա ամրացված են հայերեն Ա, Բ և Գ տառերը՝ շողշողուն ադամանդներով զարդարված: Մարմարի վերևում պատկերված է Ս. Վարդան Մամիկոնյանը:

ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Նույն օրը, ժամը 15-ին, «Հիլթոն» հյուրանոցի մեծ դահլիճում տեղի է ունենում ողջերթի շքեղ ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Նորին Սրբությունը հանդիսավոր շքերթով մուտք է գործում մեծ դահլիճ՝ ներկաների խանդավառ ծափերի ներքո, և առաջնորդվում պատվո սեղան:

Հրաժեշտի ընդունելությանը ներկա են շուրջ 1.500 հրավիրյալներ:

Ընդունելությունը բացվում է ԱՄՆ-ի ազգային հիմնով, որը կատարում է տիկ. Քեյ Արմենը: Հանդիսության հայտագիրը վարում է ընդունելության հանձնախմբի ատենապետ պրն. Ս. Ֆեսճյանը: Բացման խոսքով Վեհափառ Հայրապետի ներկայությունը ողջունում է օրվա ընդունելությունը կազմակերպող մարմնի ատենապետ պրն. Զավեն Տատիքյանը:

Գործադրվում է գեղարվեստական պատշաճ մի հայտագիր, որի ընթացքում իրենց ելույթներով ճաշկերույթը ճոխացնում են Ռուզաննա և Կարինե Լիսիցյան քույրերը և Քեյ Արմենը հայ և օտար հեղինակների ստեղծագործությունների վարպետ կատարումով:

Ճաշկերույթի ընթացքում հաջորդաբար խոսք են առնում պրն. Ս. Ֆեսճյանը, պրն. Էդուարդ Մարտիկյանը, պրն. Պերի Զորթյանը և Հ. Բ. Ը. Միության նախագահ պրն. Ալեք Մանուկյանը:

ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՇԱՀԵՐՈՒՅԹԻՆ

Այսօր անսահման հրճվանքի մեջ է Հիւսիսային Ամերիկայի հայությունը, որովհետև երկու տասնամյակներու բացակայութենե մը ետք ահա մեզի այցի կուգա Ամենայն Հայոց Հայրապետը՝ իր հետ բերելով մեր պատմության ձայնը:

Ալեկոծումի մեջ է բովանդակ Սփյուռքը և գրեթե ամբողջովին դիմագիծ փոխած է ամերիկահայությունը: Այսօր միևնույնը չէ մեր կյանքը, ինչ որ էր 20 տարիներ առաջ, երբ Վեհափառը եկած էր աշխարհի այս հզորագույն ոստանին սիրտին վրա օծելու Սուրբ Վարդան Մայր տաճարը:

Փոխված է ամերիկահայությունը և փոխված են անոր արժեչափերը: Այսօր քիչ մը ավելի շատ է մեր կյանքը, անորոշ է մեր ներկան և անստույգ է մեր ապագան: Հարբականի տակ դրված են մեր նվիրականությունները և ավանդական բարոյական արժեքները: Ինչ որ սրբություն էր երեկ, այսօր նշանակ կրառնա դատափետումի: Կխախտին բարոյական հեղինակությունները ու կցնցվի ամբողջ կառույցը մեր ազգային-եկեղեցական կյանքին:

Վեհափառ Հայրապետը մեզի կվերադարձնե մեր ինքնությունը, մեզի կհասցնե մեր ծաղկած Մայր երկիրը և մեր հոգիները կօծե Սուրբ Էջմիածնի լույսով: Մենք մեր Հայրապետին մեջ խորհրդանշված կգտնենք մեր ժողովուրդին **միությունն ու միասնությունը.** միասնությո՛ւն՝ հատվածներու ու երկրամասերու միջև և միասնությո՛ւն՝ մեր մայր հողին ու Մայր Աթոռին և մեր ազգի բեկորներուն միջև:

Ամերիկահայությունը կրնա հեռու ապրիլ իր հայրենիքեն ու գոյատևել, սակայն **չի կրնար անջատ ու անկախ ապրիլ իր հողեն:**

Որքան ալ ժամանակներն ու պատմությունը մեր երազեն տարբեր բնույթ մը տված ըլլան Մայր Հայաստանին, ան չի դադրիր ըլլալե մեր ժողովուրդին օրրանը, ինչպես չի կրնար Էջմիածինը դադրիլ ըլլալե **մեր ժողովուրդին մայրը:**

Մեր երկիրը որևէ ժամանակե ավելի ապահով ու ծաղկուն է. Մայր Աթոռը որևէ ատենե ավելի պաշտան է: Եվ եթե այսօր ընկալենք մայր հողին լույսը և Սուրբ Էջմիածնի օրհնությունը՝ մենք պիտի կարողանանք վերագտնել մեր վերապրումի ուղին, մեր հայեցիության ակունքը և մեր ապագային երաշխիքը:

Այսօր Վեհափառ Հայրապետին օրհնաբեր այցով Սփյուռքը **կմիանա** Հայաստանին, և անոնք իրարմով զորացած, իրենց հայացքը կուղղեն մեր ժողովուրդի հավերժության խորհրդանիշ **Սպիտակափառ Արարատին:**

Բարի եկած եք, Վեհափառ Տեր, որ մեր կյանքը բոցավառեցիք հայրենի արևով, խնկեցիք Էջմիածնի հոգիով ու զորացուցիք Արարատի ամրակուռ ուժով:

Մոտիկ ապագային Ձեզ կրկին տեսնելու հույսով երկար կյանք ու բարի ճանապարհ կմաղթենք Վեհիդ:

Ապա թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը հուզումով և ապրումով իր թեմի հավատացյալների մերն ու որդիական հավատարմությունն է հայտնում Հայոց Հայրապետին՝ ընդգծելով Նորին Սրբության հովվապետական այցելության դերը հայ հոգիների մեջ:

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Թույլ տվեք հայտնել իմ և թեմական խորհուրդի երախտագետ զգացումները հանդես գալ Ձերդ Սրբության, մեր թեմին շնորհված այս օրհնաբեր այցելության համար:

Գեղի Միացյալ Նահանգներ ե Գանատա Վեհիդ երրորդ ա,ս հովվապետական այցելությունը թեև իր հետ բերավ մտահոգության և ցավի ապրումներ՝ Ձեզի պատճառված ֆիզիկական տկարության հետեանքով, և սակայն փառք կու տանք Աստուծո, որ աղբյուրը Ձեր հոգիի ուժերուն, կորովին ու դիմացկունության, առատահոս է, և իր աշխուժությունը կստանա Սուրբ Հոգիին բուժիչ զորությենեն, զոր մեր սրբազան շարականագիրը կոչած է «առատահոս աղբիւր շնորհաց»:

Արդարև, Դուք ֆիզիկական բուժումի ակնկալությամբ էր գլխավորաբար, որ հանձն առիք այս ճամփորդությունը: Մեր շնորհակալությունը կհայտնենք դոկտ. Էդգար Հովսեփյանին, որ անմիջականորեն կարգադրությունները կատարեց, անհրաժեշտ խնամքը ապահովելու համար, իրեն գործակից մասնագետ բժիշկներու օժանդակությամբ:

Գոհություն մեր Տիրոջ, որ Դուք ոտքի կանգնեցաք, և մեր թեմի ընդունելության հանձնախումբի կազմած մանրամասնյալ ծրագիրներուն գոնե մեկ մասը կարելի եղավ իրագործել, ցավախառն գոհունակության պատեհություն տալով բազմահազար Ձեր զավակներուն:

Կխնդրեմ, որ Ձերդ Սրբության օրհնությունը բաշխեք բազմսթիվ այն հոգիներուն, որոնք խանդավառությամբ և նախանձախնդրությամբ ծրագրեցին և աշխատեցան, որպեսզի Ամենայն Հայոց Հայրապետին բացառիկ այս այցելությունը արժանավայել պատշաճությամբ իրագործվեր:

Եվ արդարև, տասնչորս օրերու Ձեր շնորհաբաշխ կեցության ընթացքին խանդավառվեցան մանուկները և երիտասարդները, մխիթարվեցան տարեցները և եղեռնեն վերապրողները:

Դուք քաջալերեցիք մեր թեմին հոգևորականները, թեմական մարմինները, ուսանողները, մտավորականները, արվեստագետները, գիտնականները և մեր ազգին ապագայով մտահոգ և անոր ծառայության նվիրված հայ հոգիները և կազմակերպությունները, որպեսզի հայու հոգին անմեռ մնա և շարունակե աճիլ և ստեղծագործել ամերիկյան այս բազմամշակույթ ընկերության մեջ, Աստուծո մեզի շնորհած տաղանդներուն օգտագործումով:

Այդ նույն հոգիով, հավատքով և հույսով Դուք խոսեցաք էկումենիկ շրջանակներու մեջ, և՛ Միացյալ Ազգաց ընդհանուր քարտուղարին և 50-ե ավելի դեսպաններու ներկայության, և՛ Միացյալ Նահանգաց նախագահ Ռոնալդ Ռեյգանի հետ Ձեր պատմական տեսակցությունը ընթացքին:

Վեհափառ Տեր, Ձեր անձին շնորհը և Ամենայն Հայոց Հայրապետի Ձեր ծաղկյալ գավազանը, ճշմարիտ վեհություն մը և անոր շուքն ու շնորհը դրոշմեցին Ձեր բոլոր զավակներուն մտքին, հոգիին և անոնց կյանքի «երանելի յիշատակներուն» վրա:

Ո՞րքան ավելի երանելի պիտի ըլլային այդ հիշատակները, եթե «մորկաւ բաժանեալ» Ձեր զավակները նս լսեին Վեհիդ հայրաշունչ հրավերը՝ միասին աղոթելու և «ազգիս հայոց՝ սէր, միութիւն» հաստատելու ըղձանքով:

Երևի Աստված այլ կերպ է տնօրինած։ Եվ մեր հավատալոր ժողովուրդը վարժված է գիտակցաբար ընելու՝ «Օրհնեալ է Աստուծոյ կամքը։ Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ»։

Ա.—Կխնդրենք, Վեհափառ Տեր, որ ընդունիք Ձեր զավակներուն փոքրիկ մեկ նվերը։ Արդիական քոմփյութըր (հաշվակարգիչ) գրամեքենա մը, որ ունի թե՛ անգլերեն և թե՛ հայերեն տառեր, հայերեն այլազան տառատեսակներ (շեղագիր, բոլորգիր), և նույն ատեն տարը կարելի է մեծցնել և տպել։ Եվ նաև լեզվի փրինթըր՝ տպագրիչ գործիք մը ասոնց ընկերացող, որով կարելի է անմիջականորեն բազմաթիվ օրինակ ապահովել։

Բ.—Ասոնց կարգին, կուզենք Ձերդ Սրբության ներկայացնել նաև ուրրտաբուխ ուրիշ նվեր մը։ Գիտենք, թե Հայաստանի կառավարության հավանությամբ Վեհիդ պիտի հանձնվին հայկական հին վանքերեն չորս հատը։ Տեր և տիկին Գեորգ և Սիրվարդ Հովնանյան սիրահոժար հանձն կառնեն վերանորոգումը Բամբակաշատի գեղակերտ եկեղեցիին։

Գ.—Այս առիթով, թույլ տվեք, Վեհափառ Տեր, Վեհիդ ներկայացնել դիմանկար արվեստի հիշատակ-նվեր մը։ Ահավասիկ, թե արվեստագետը ինք՝ Սոս Եփրեմ Մելիք Շահնազարյան, ինչպես կարտահայտվի այդ մասին։

ՍՈՍ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԳՐԱՎՈՐ ՈՒՂԵՐԶԸ

Ձերդ Սրբություն,

Արտոնեցեք մի քանի բառ ասել այն դիմանկարի մասին, որի իրականացման համար շնորհ արիք ինձ Էջմիածնի Վեհարանին մեջ։

Իմ դատումն էր ներկայացնել կաթողիկոսին Ամենայն Հայոց այնպես, ինչպես նա կհայտնվեր ինձ. համադրումը ամենեն կիրթ և հատկանշորեն հայկական դիմագիծին, ուր կմիախառնվին հատկությունները ազնվասիրտ, այլև շատ հաստատակամ անձնավորության մը։

Նկարագրի այդ գիծերը ես նշմարեցի մի քանի այն նստաշրջաններու ընթացքին, երբ յուրաքանչյուր անգամուն Ձերդ Սրբությունը կտեղավորվեր աթոռին մեջ, նստելով պարզունակ վեհությամբ և անսեթևեթ ազատ շարժումով, վճռականություն մը Ձեր նայվածքին մեջ, և գրեթե ամեն անգամուն Ձեր աջ ձեռքի մատները ամրորեն սեղմած և ձախ ձեռքը ազատ ու թույլ ձգված։ Այս է Վազգեն Առաջինը, կաթողիկոս Ամենայն Հայոց, շրջահայաց և վճռական, որուն ձախ ձեռքը միշտ բաց է դեպի իր ժողովուրդը, և որուն աջ ձեռքը արտահայտիչ է տիսիրլինի, հեղինակության և վճռականության։ Այս բոլոր շարժումները որքան բնական, նույնքան խորհրդանշական իմաստ ունին։

Այս տպավորություններն էին, զորս ջանացի բռնել և արձանագրել։ Եվ եթե այս դիմանկարը փոխանցե այդ ոգին անոնց, որոնք պիտի դիտեն զայն, ես վարձատրված պիտի զգամ ինքզինքս։

Խոր համակրանքով և նվիրումով հանդեպ Ձերդ Սրբության,

Մնամ ակնածանքով։

Այնուհետև Տ. Թորգոմ սրբազանը խանդավառ ու սրտագին մթնոլորտում հրավիրում է Հայոց Հայրապետին մի անգամ ևս օրհնելու իր սիրելի

զավակներին և տալու իր հայրապետական օրհնություններն ու պատգամները:

Խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը շուրջ մեկ ժամ էլեկտրականացած մթնոլորտի մեջ է պահում ներկաներին իր ներշնչող բովանդակալից ճառով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

«Յաւել ի մեզ՝ Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Սիրելյալ հոգևոր եղբայրներ Մեր, հարգարժան տիարք և տիկնայք, այս աղոթքը իմ շրթներուն, կուզեմ բաժնվիլ ձեզմե: Ահա երրորդ անգամն է, որ այցի եկա ձեզի, ձեր թեմին, ձեր եկեղեցիներուն, մեր հավատացյալ ժողովուրդին: Եկա և վերստին գտա ձեզ ամենքդ, ծանոթացա ձեր համայնքներու կյանքին, ձեր կրոնական-դաստիարակչական աշխատանքներուն, ձեր կրթական և մշակութային գործունեության: Հոգեկան մխիթարություն եղավ ինձ համար հաստատել ձեր թեմի հոգևոր սպասավորներու նվիրյալ ու կազմակերպյալ աշխատանքը ժրաջան առաջնությանը ներքև գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, որ ահա մոտ երեք տասնամյակներ կղեկավարե այս ընդարձակ թեմը միշտ հավատարիմ իր սրբազան ուխտին, միշտ հավատարիմ մեր Սուրբ Եկեղեցվո կարգ ու կանոնին, միշտ հավատարիմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Այս հանդիսավոր պահուն իմ գնահատանքը և քաջալերանքը կբերեմ թեմական առաջնորդ Նորին Սրբազնության և բոլոր եկեղեցիներու հովիվներուն, որոնք նվիրված են Քրիստոսի Ավետարանը քարոզելու առաքելության իրենց վստահված հոտին, ի շինություն մեր ժողովուրդի հոգևոր կյանքին:

Նույնպես հոգևոր մխիթարություն եղավ ինձ համար հաստատել, թե ձեր թեմական-եկեղեցական կյանքին մեջ հոգևոր մշակներու կողքին իրենց շատ կարևոր աշխատանքի բաժինը կբերեն հավատացյալ աշխարհական անձինք, ընտրյալ ներկայացուցիչները ժողովուրդին, որոնք կծառայեն նույն առաքելության, որ Եկեղեցվո հոգևոր առաքելությունն է: Իմ սրտաբուխ գնահատանքը և քաջալերանքը բոլոր անձնվեր անդամներուն, թեմական և եկեղեցական-վարչական մարմիններուն:

Իմ մաղթանքն ու կոչն է ձեզի բոլորիդ ուղղյալ, հոգևոր սպասավորներ և աշխարհական գործիչներ, որ հավատարիմ մնաք Քրիստոսի Ավետարանին, հավատարիմ մնաք ձեր հոգեշեն ու ազգանվեր պարտականություններուն:

Կապրինք դարաշրջան մը, որ կրոնական կյանքի մակարդակի վրա կբնորոշվի «էկումենիկ» հասկացողությամբ, որուն հիմնական առաջադրանքն է քրիստոնեական Եկեղեցիներու միության և համաշխարհային քրիստոնեական եղբայրության ամրապնդումը Քրիստոսի սիրով և Քրիստոսի սիրույն մեջ: Մեր Եկեղեցին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, որ պատմականորեն կպատկանի Արևելքի հին ուղղափառ Եկեղեցիներու մեծ ընտանիքին, բնական է, հեռու չի կրնար մնալ մեր օրերու էկումենիկ շարժումեն, իր նպաստը բերելով անոր, իրեն հատուկ վկայությունն-

ներով, իր հայրերու և վարդապետներու աստվածաբանական ուսմունքով և իր գործակցությամբը՝ արդի աշխարհի առաջ դրված կրոնա-բարոյական և ընկերային հարցերու լուծման ճանապարհին:

Հետևաբար հույժ ողջունելի կգտնեմ թեմիդ գործոն մասնակցությունը Միացյալ Նահանգաց Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի աշխատանքներուն:

Ինչպես ծանոթ է ձեզի, նույն մասնակցությունը կբերե նաև Մայր Աթոռս Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի աշխատանքներուն, իր մնայուն ներկայացուցիչները ունենալով Կեդրոնական Կոմիտեի և քանի մը հանձնաժողովներու մեջ:

Մեր հարաբերությունները Ժնևի այս միջեկեղեցական կեդրոնի հետ շատ սիրալիր են, և մխիթարություն է ինձ համար այստեղ վկայել, որ Սուրբ Էջմիածինը, մեր Առաքելական Եկեղեցին, կվայելե գնահատանքը և հարգանքը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ղեկավարության, որուն վերջին արտահայտությունը եղավ՝ Ստրասպուրկի մեջ Եվրոպական պառլամենտի գումարման առթիվ իր բերած կարևոր նպաստը՝ ի խնդիր 1915-ի հայոց ցեղասպանության ճանաչման:

Ինչպես հայտնի է ձեզի բոլորիդ, Եվրոպական պառլամենտի գումարման նախօրյակին, 14 մայիս 1987-ին, հատուկ գրությամբ դիմեցինք Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ընդհանուր քարտուղար Հայր Դոկտ. Էմիլիո Կաստրոյին, որ իր կազմակերպության նպաստը հաճի բերել հայոց արդար դատի պաշտպանության ի խնդիր: Ծանոթ է ձեզի, որ նույնիմաստ դիմում մը ներկայացուցած էինք նաև Եվրոպական պառլամենտի նախագահ մեծահարգ Լորդ Բլամպ Գոլեշիին: Երախտապարտ զգացումով երջանիկ եմ ձեզի հայտարարելու, թե հարգարժան Լորդ Բլամպ և Դոկտ. Էմիլիո Կաստրո, հանուն քրիստոնեական մարդասիրության և պատմական ճշմարտության, հաճեր էին ընթացք տալ իմ խնդրանքին և իրենց օժանդակությունը ապահովել ի նպաստ մեր դատին:

Այս առթիվ պարտք կզգամ ձեզի հայտնելու, թե 18 հունիս 1987-ին ստացանք կարևոր նամակը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Մարդկային Իրավանց Քաղաքական Հանձնաժողովի նախագահ դոկտ. Նինան Գոշիի, որ մանրամասն կերպով կզեկուցեր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի անունով իր Հանձնաժողովի միջոցառումներու և դիմումներու մասին՝ ուղղյալ Եվրոպական պառլամենտի երեսփոխաններուն, ի նպաստ ցեղասպանության ճանաչման:

Նույնպես ճշգրիտ տեղեկություններ ստացանք նաև նախագահ Լորդ Բլամպեն, լոնդոնաբնակ՝ Մայր Աթոռիս բարեկամ և բարերար տիար Մորճ Քյուրքճյանի միջոցավ, որ այս հարցի առթիվ կարևոր դրական դեր կատարեց՝ բարեխոս միջնորդ հանդիսանալով մեր և Լորդ Բլամպի միջև:

Թույլ տվեք այս հանդիսավոր պահուն, այս բեմեն մեր բոլորիս, մեր Եկեղեցվո և համայն մեր ժողովուրդի շնորհակալության խոսքը ուղղել հարգարժան Լորդ Բլամպին և դոկտ. Էմիլիո Կաստրոյին ու դոկտ. Նինան Գոշիին: Բնականաբար առանձին նամակներով իմ երախտագիտությունը և օրհնությունը ուղղեցի անոնց, հույս հայտնելով, որ իրենց հեղինակավոր նպաստը պիտի շարունակեն ընծայել հայ ժողովուրդի դատին, մինչև վերջնական միջազգային ճանաչումը 1915-ի ցեղասպանության, Միացյալ Ազգերու Կազմակերպության կողմե պաշտոնապես:

Թող ճարդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» (Սաղմոս 84—11):

Մեր Եկեղեցիին համար, մեզի համար 1915-ի ցեղասպանության ճանաչման հարցը, մանավանդ քրիստոնեական խղճի, քրիստոնեական արդարության հարց է:

Իմ մեկնումի պահուն կկամենայի իմ գնահատանքը բերել այն ծավալուն աշխատանքին համար, զոր կկատարեն թեմիդ առաջնորդ սրբազան հայրը և բազմաթիվ հոգևոր հովիվներ, ի խնդիր նոր սերունդներու կրոնական և բարոյական հայեցի դաստիարակության:

Ձեր առաջ դրված կարևորագույն խնդիրներեն մին է այս, որ կխորհինք, թե առավել կազմակերպվածությամբ, առավել նպատակաուղաց կերպով պետք է առաջ տարվի:

Երիտասարդ սերունդները մեր Եկեղեցվո ապագան են, մեր ազգի գոյատևումը ապահովողներն են: Իմ աղերսն է՝ ուղղյալ թեմական խորհուրդդիդ, եկեղեցական համայնքներուդ, ձեզի բոլորիդ, որ ամեն միջոցի դիմեք, որպեսզի ձեր երիտասարդներեն ոչ մեկը դուրս մնա եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպություններեն, որպեսզի ձեր երիտասարդներեն ոչ մեկը գրկվի կիրակնօրյա հայկական վարժարաններեն: Նաև իմ աղերսն է՝ բոլորիդ ուղղյալ, որ քաջալերեք ամենօրյա հայկական վարժարաններու կազմակերպումը: Քաջ ծանոթ եմ այս տեսակետեն ձեր դժվարություններուն, ձեր տեղական պայմաններուն, սակայն, այնուամենայնիվ, իմ պարտքը կնկատեմ ահազանգել հրամայական անհրաժեշտությունը՝ մեր մայրենի լեզվի պահպանման և զարգացման: Մեր մայրենի լեզուն մեր ազգային զգացողության ճառագայթումն է: Մեր ազգը հայերեն լեզվով դրոշմեց իր քրիստոնեական հավատքը: Հայերեն լեզվով մենք ճշմարտապես ազգություն եղանք, մեր հերոսական պատմությունը կերտեցինք, մեր մշակույթի գանձարանը ստեղծեցինք: Մենք հայ ենք հայերեն լեզվով:

Աշխարհի առաջ մենք ճակատաբաց հպարտ կրնանք ըլլալ մեր քրիստոնեությամբ և մեր ազգային մշակույթով, որոնք մեր մայրենի լեզվով աճած են ու ծաղկած:

Վերջին տարիներուն մեր ազգային կյանքին նոր ջերմություն, նոր թափ, նոր եռանդ տվողը հայ դատի հետապնդումն է, ազգային պահանջատիրության գարթոնքն է: Շատ լավ է, որ այդպես է: Սակայն, սիրելիներ, չմոռնանք, որ առանց մեր մայրենի լեզվի պահպանման, հայ դատի սրբազան իդեալը գրեթե կդատարկվի ներքին ուժականութենեն:

Հետևաբար, ամեն ճիգ ի գործ դրեք պահպանելու հայերեն լեզուն ձեր եկեղեցիներեն ներս, ձեր հանրային կյանքեն ներս, ձեր ընտանեկան հարկերու ներքև:

Հայաստանյայց Եկեղեցին քրիստոնեական առաքելություն մըն է աշխարհի վրա ահա 17 դարերե ի վեր: Հպարտ եղեք ձեր քրիստոնեական հավատքով, հպարտ եղեք ձեր եկեղեցանվեր իրագործումներով, հպարտ եղեք ձեր ազգային ոգեկանությամբ: Մի՛ տկարանաք, մի՛ տարակուսիք, մի՛ երկմտիք: Ամուր, անշարժ մնացեք ձեր սուրբ հավատքի վեմին վրա, հավատարիմ մեր նախնյաց ուղղափառ վարդապետության, հավատարիմ մեր Եկեղեցվո ավանդությանց և կարգ ու կանոնին: Ապրեցեք ու գործեցեք սիրով միաբանած, ձեր շուրջ համախումբ պահելով համայն հավատացյալ ժողովուրդը որ ի Միացյալ Նահանգներ: Մի՛ հավատաք ներքին բաժանումներու և անհասկացողություններու: Ժամանակավոր, խաբուսիկ երևույթներ

են ատոնք: Ես չեմ հավատար, որ Սուրբ Էջմիածնեն բաժնված հայեր կան: Կսպասեմ, որ միության և գործակցության մասին խորհողները միանան Սուրբ Էջմիածնին, և Աստված օրհնե այն առավոտը, երբ բոլորս եղբայրացած խոստովանինք մեր հավատքը, վերանորոգենք մեր եղբայրության ուխտը՝ ծունկի եկած Փրկչի Իջման Սուրբ Սեղանի առաջ, Արարատի նայվածքին տակ: Մեկ Եկեղեցի ենք Սուրբ Էջմիածինով, մեկ ազգ ենք սրբազան Արարատով: Ես՝ Հայրապետ Ամենայն Հայոց, հայրական սիրո և միության հրավեր կկարդամ այս երկրի բոլոր եկեղեցական համայնքներուն, բոլոր Մեր հոգևոր զավակներուն:

Այո, միություն և գործակցություն Սուրբ Էջմիածնով: Միություն կնշանակե միանալ Սուրբ Էջմիածնին:

Տեր Աստված, արդյոք իմ կյանքի վերջալույսին պիտի տեսնե՞մ այդ առավոտը:

Այո, մեր Մայր Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, կարիք ունին, որ Էջմիածնի վեմին վրա հաստատապես խարսխված մնա՝ կանոնական մեկությունը և միությունը մեր Եկեղեցիին, իրավասությանց սահմաններու փոխադարձ հարգանքով, երբ Կիլիկյան Աթոռի միաբանության առաջ պիտի բացվի հոգևոր-ազգային առաքելության առավել լայն հորիզոն, համազգային գործունեության հորիզոն թե՛ ամբողջ հայ Սփյուռքի և թե՛ Մայր Հայրենիքի տարածքի վրա: Ճշմարիտ է, որ միության հարցի շուրջ կան լուրջ տարակարծություններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կիլիկյան Աթոռի միջև. սակայն վերջին տարիներուն բարյացակամություն կա երկու կողմեն այ:

Մեր Աթոռներու միջև տեղի կունենան բանակցություններ, հանդիպումներ, թղթակցություններ: Ես հույս ունիմ, որ այն, ինչ որ բաժանում կնկատվի, անցողական երևույթ է:

Ինչպես ես, Ամենայն Հայոց կաթողիկոս, այնպես ալ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը մեր ճիգերը պիտի շարունակենք ի գործ դնել, հասնելու համար բաղձալի օրինական միության և գործակցության: Պետք է պահպանենք մեր հավասարակշռությունը, մեր համբերությունը և մեր լավատեսությունը, «զի Աստուած ընդ մեզ է»:

Հայերը երբեմն կրնան անջատ քալել. կարևորը այն է, որ վճռական պահերուն անոնք գիտնան միատեղ գործել:

Այս պահուն, երբ կխոսիմ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության առաքելության մասին, չեմ կրնար մոռնալ այն տխուր կացությունը, որ ավելի քան տասը տարիներե ի վեր ստեղծված է Լիբանանի մեջ իբրև հետևանք ներքին քաղաքացիական հակամարտություններու, որով ծանրորեն կտուժեն բոլոր մահմետական և քրիստոնյա համայնքները, անոնց շարքին նաև հայոց համայնքի զավակները:

Մեր մշտական աղոթքն է, որ Աստված իր խաղաղարար ոգին իջեցնե սուրբ գրական Լիբանանյան երկրի վրա, և մոտ ապագային այդ երկիրը վերագտնե իր նախկին բարգավաճ, ծաղկյալ կյանքն ու իր միջազգային հեղինակությունը:

Մեր բոլորին գիտակցության մեջ, Լիբանանի մեզի հավատակից հայությունը, եկեղեցական ու մշակութային առումով, հարազատ ու անբաժան մասն է մեր մայր երկրի, արդի Հայաստանի հավատացյալ ժողովուրդի:

Պետք է եղբայրական օգնության ձեռք երկարել Լիբանանի տառապող մեր քույրերուն և եղբայրներուն, մանավանդ հայ վարժարաններուն:

Աստուծո ողորմությունը և օգնությունը Լիբանանի մեր Եկեղեցիի զավակներուն և մեզի եղբայր բոլոր քրիստոնյա և մահմետական համայնքներուն:

Հարազատներ Մեր, միացած ու համերաշխ, զորացած ու ոգեշնչված ամերիկյան քրիստոնյա այս աշխարհին մեջ, արդար հպարտությամբ Քրիստոսի Ավետարանը քարոզեցեք, Սուրբ Լուսավորչի կանթեղը վառ պահեցեք, Ս. Էջմիածնի փառքը երգեցեք, մեր ազգի հերոսական անցյալի սքանչելիները պատմեցեք, մեր օրերու հայրենական վերածնունդով քաջալերվեցեք, մեր Եկեղեցվո ու ազգի արդար երազանքները շեփորեցեք, ձեր հոգիներու հայացքը միշտ սևեռած դեպի սուրբ գրական Արարատը, դեպի Երևանի լույսերը, դեպի Սուրբ Էջմիածինը, ուր Քրիստոս խոսեցավ մեր ազգին և վառեց անմար կանթեղը Սուրբ Լուսավորչին:

Հանուն Հայաստանյայց մեր Սուրբ Եկեղեցիին, հանուն մեր նախնյաց սրբազան վկայությունների, հանուն մեր ազգի բյուրավոր նահատակների՝ «վասն հաւատոյ և վասն հայրենեաց», սիրելիներ, եկեք այսօր միաբերան աղերսենք Աստուծո՝ «Յաւել ի մեզ՝ Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14): Ամեն:

Հոտնկայս երգված «Հայր մեր»-ով և Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է հրաժեշտի սույն ճաշկերույթը, որ սահմանված է հիշատակելի մնալու Նյու Յորքի հայության սրտում:

Նոյեմբերի 2-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, «Ուալդորֆ Աստորիա» հյուրանոցում Վեհափառ Հայրապետին այցելում է Հ. Բ. Ը. Մ.-ի ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանը իր դստեր՝ Լուիզ Սիմոնի հետ:

Նույն օրը, ժամը 12-ին, Նյու Յորքի «Արարատ» ռեստորանում տեղի է ունենում ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի՝ կազմակերպված ընդունելության հանձնախմբի անդամների կողմից: Այս առթիվ Զավեն և Արլեն Տատեքյանները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին են նվիրում մի կարևոր գումար՝ Հայաստանում վերաբացվող երկու եկեղեցիների վերանորոգման համար:

ԲԱՑՈՒՄ «ԳՐԻԳՈՐ ԵՎ ԿԼԱՐԱ ՋՈՀՐԱՊ ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»-Ի

Նույն օրը, երեկոյան ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը նախագահում է «Գրիգոր և Կլարա Զոհրապ տեղեկության կենտրոն»-ի բացման հանդիսությանը: Բացման հանդիսությանը ներկա է գտնվում նահատակ գրող Գրիգոր Զոհրապի դուստրը՝ Դոլորես Զոհրապ Լիբմանը: Ներկա են նաև բազում հրավիրյալներ՝ մտավորականներ, մշակույթի գործիչներ և այլն:

Վեհափառ Հայրապետը Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի և Գրիգոր Զոհրապի դամբի՝ Դոլորես Լիլիթմանի հետ

Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը բացման խոսքով ընդգծում է նպատակն ու կարևորությունը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար նման մի կենտրոնի ստեղծման, որտեղ ի մի պիտի բերվեն հատկապես վերջին շրջանի պատմությանը վերաբերող փաստաթղթեր և վավերագրեր՝ լայն շրջանառության մեջ դրվելու համար:

Ահա թե ինչպես է բնութագրում այդ նպատակը մեծ գրողի դուստրը.

ԴՈԼՈՐԵՍ ՋՈՀՐԱՊ ԼԻԲՄԱՆԻ ԽՈՍՔԸ

Ծնողաց՝ Գրիգոր և Կլարա Զոհրապի հանդեպ տածած սիրով և իմ հայկականությամբս զգացած հպարտությամբ է, որ կդիմավորեմ այս օգտակար կեդրոնին բացումը: Որպես տեղեկատվությանց կեդրոն մեր պատմության և մշակույթի՝ իմ ջերմ փափաքս է, որ այս կեդրոնը օգտագործվի բոլոր անոնց կողմե, որոնք կհետաքրքրվին Հայաստանով և հայ ժողովուրդով: Գլխավորաբար կհուսամ, որ այս կեդրոնը պիտի վերածվի գործուն հավաքատեղիի մը մեր երիտասարդներուն համար, որոնք հայկական փառավոր ժառանգության ապագայի երաշխավորությունը կներկայացնեն:

Հանդիսության վերջում գնահատանքի ջերմ խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔԸ

Կշնորհավորեմ Ձեզ, սիրելի սրբազան, որ ձեր առաջնորդարանը օժտվեցավ այսպիսի կեդրոնով մը, որ պիտի ծառայե մեր մտավորական գործունեության զարգացման:

Ինձի համար բացառիկ հոգեկան մխիթարություն մը եղավ հանդիպիլ Ձեզի, տիկին Դոլորես, շնորհալի դուստր Գրիգոր Զոհրապի: Այժմ, երբ Ձեզի կենդանի և քաջառողջ տեսա, խորապես հուզվեցա, որովհետև Պոլսո այն մտավորականները, որոնք զոհվեցան 1915-ին, և որոնց մեջ առաջին շարքերուն էր Գրիգոր Զոհրապը, մեզի համար պայծառ խորհրդանիշ կհանդիսանան և մեռած չեն: Անոնց հիշատակը կապրի, և մենք՝ այսօրվանները, եթե հայ ենք և կշարունակենք հայ մնալ, անոնց հիշատակն ալ խորհրդավոր դեր մը կատարած է մեր կյանքին մեջ:

Գրիգոր Զոհրապ բազում անգամներ իր ձեռքը դրած է Ձեր վրա: Ես ալ իմ ձեռքս կդնեմ: Մենք պաշտամունքը ունինք մեր բոլոր նահատակներուն: Գրիգոր Զոհրապ անոնց շարքին մեջ իր բացառիկ և յուրահատուկ տեղը ուներ, անփոխարինելի, կրնամ ըսել: Դանիել Վարուժան հանճար մըն էր իբրև բանաստեղծ: Գրիգոր Զոհրապ բանաստեղծ չէր, բայց իբրև գրող կարելի չէ ըսել, թե Դանիել Վարուժանեն ետ կմնար: Գիտեք, մեծ գրողներու միջև կարելի չէ այդպիսի համեմատություններ ընել: Ամեն մեկը իր մեծությունը ունի: Կարելի չէ ըսել, օրինակ, թե Վիկտոր Հյուգոն ավելի մեծ է, քան Բալզակը: Երկուքն ալ մեծ են, թեև բոլորովին տարբեր իրարմե: Այո՛, մեծություն մըն է Գրիգոր Զոհրապ: Հայաստանի մեջ բացառիկ գնահատանքով կհիշվի անոր անունը, հայ մեծանուն գրողներու շարքին:

Թարգմանված է բազմաթիվ լեզուներու՝ ռուսերեն, վրացերեն և այլն: Հաճախ Երևանի հեռուստացույցեն Գրիգոր Զոհրապի պատմվածքները կհաղորդվին բեմականացված, արևմտահայերեն անշուշտ, առանց լեզուն փոխելու: Այսպեսով, Գրիգոր Զոհրապ նոր կյանք մը կապրի Սովետական Հայաստանի մեջ:

Օրհնություն նահատակ Զոհրապի հիշատակին:

Օրհնություն Ջեզի, ազնիվ տիկին Դոլորես:

Գրիգոր և Կլարա Զոհրապ տեղեկությանց կենտրոն»-ի հանդիսությունը, փոքր հյուրասիրությունից հետո, փակվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

Կալիֆոռնիան ԱՄՆ-ի ամենամեծ և ամենաբազմամարդ նահանգն է: Հայտնագործվել է 1542 թ. և գաղութացվել իսպանացիների կողմից 1769 թ.: 1848 թ. Հիդալգոյի դաշնագրով Կալիֆոռնիան մտնում է Միացյալ Նահանգների կազմի մեջ: Նահանգի գլխավոր քաղաքներից է Լոս Անջելոսը: Այն հիմնադրել են իսպանացիները 1781 թ.: Այժմ քաղաքն իր արվարձաններով ունի շուրջ 8 միլիոն բնակչություն:

19-րդ դարի 90-ական թվականներից հայերն սկսում են հաստատվել նաև Կալիֆոռնիայի նահանգում: 1906—1908 թվականներին գաղթականության մի նոր հոսանք է սկսում դեպի Լոս Անջելոս քաղաք, որտեղ հաստատվում են գլխավորապես Շիրակի դաշտավայրից գաղթած հայերը, որոնց թիվը այդ տարիներին հասնում էր 500-ի: Հայկական համայնքն այստեղ ստվարանում է հատկապես համաշխարհային առաջին պատերազմի ու նրան հաջորդող տարիներին Արևմտյան Հայաստանից գաղթող հայերով: Մեծ թվով հայեր գաղթում են նաև համաշխարհային երկրորդ պատերազմից հետո: Այսօր էլ հայ համայնքն աճում է Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից գաղթող հայերի հաշվին: 1970-ական թվականներից այստեղ սկսում է համախմբվել հայ մտավորականությունը, որի շնորհիվ աշխուժանում է համայնքի ազգային-հասարակական կյանքը: Հիմնվում և լայն գործունեություն են ծավալում բազմաթիվ մշակութային, հայրենակցական միություններ: Ներկայումս Լոս Անջելոսում գործում են մեկ տասնյակից ավելի հայկական եկեղեցիներ՝ հարակից կազմակերպություններով: 1976 թ. այստեղ հիմնվեց առաջին հայկական կոլեջը: Բացի կիրակնօրյա և մեկօրյա վարժարաններից, քաղաքում կա ամենօրյա չորս հայկական դպրոց և երկու մանկապարտեզ: Կանոնավոր կերպով լույս են տեսնում «Նոր օր», «Նոր կյանք», «Փարոս», «Քաջ Նազար», «Ապրիլ», «The Armenian Observer» և տարբեր բնույթի պարբերականներ ու թերթեր: 1965 թվականից Կալիֆոռնիայի նահանգային համալսարանում հաստատվել է և առ այսօր գործում է հայագիտական ամբիոն:

Ներկայումս Լոս Անջելոսում բնակություն հաստատած հայերի թիվը անցնում է 100 հազարից:

Նոյեմբերի 8-ին, երեքշաբթի օրը, առաւօտեան, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով օդային ճանապարհով մեկնում է Կալիֆոռնիա: Նորին Սրբութեանը և իր շքախմբի անդամներին փոխադրող օդանաւը վայրէջք է կատարում Սան Ֆրանցիսկոյի օդանաւակայան: Այստեղ ԱՄՆ-ի հայոց արևմտեան թեմի առաջնորդ Տ. Վահէ արքեպիսկոպոս Հովսեփեանը, ընկերակցութեամբ Սան Ֆրանցիսկոյի, Օքլենդի, Սակրամենտոյի և նահանգի այլ շրջանների հայոց հովիվների, դիմաւորում և բարի գալուստ է մաղթում Նորին Սրբութեանը:

Օդանաւակայանի ընդունարանի՝ պատվո հյուրերին հատկացված սենյակում մեկ ժամ հանգստանալուց հետո, Հայոց Հայրապետը իր շքախմբով և առաջնորդությամբ թեմական առաջնորդի, վերստին օդանաւ է բարձրանում մեկնելու Ֆրեզնո:

Շուրջ մեկ ժամ տևող հանգիստ թռիչքից հետո, Վեհափառ Հայրապետին տանող օդանաւը վայրէջք է կատարում Ֆրեզնոյի օդանաւակայան, որտեղ Հայոց սիրելի Հայրապետին դիմավորելու էին եկել շրջանի հոգևոր դասի և եկեղեցական վարչության անդամները, ինչպես նաև հոծ թվով հայորդիներ, որոնք արտակարգ խանդավառությամբ ողջունում և բարի գալուստ են մաղթում Նորին Սրբությանը: Ուրախ էին բոլորը: Ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, Հայոց Հայրապետը առաջնորդվում է «Centre Plaza» հյուրանոց և տեղավորվում իր համար պատրաստված հարմարավետ հարկաբաժնում:

Ֆրեզնոն Կալիֆոռնիայի նահանգի քաղաքներից է և գյուղատնտեսական կարևոր կենտրոն: Քաղաքը իր արվարձաններով ունի ավելի քան կես միլիոն բնակչություն: Հիմնադրվել է 1872 թ.:

Ֆրեզնոն եղել է Միացյալ Նահանգների արևմտյան շրջանները գաղթած հայերի առաջին հանգրվանը: Հայերը Ֆրեզնոյում և նրա շրջակայքում բնակություն են հաստատել 19-րդ դարի երկրորդ կեսին: Մինչև 1900-ական թվականները Միացյալ Նահանգների հայ գաղթականությունը առավելաբար կենտրոնացած էր այնտեղ: Ֆրեզնոյում հաստատված առաջին հայերի կյանքը լի է եղել դժվարություններով: 20-րդ դարի սկզբներից համայնքն սկսում է ստվարանալ և կազմակերպվել: 1900 թ. հիմնվում է Ֆրեզնոյի հայ առաջին առաքելական եկեղեցին: Աստիճանաբար աշխուժանում է գաղութի ազգային կյանքը: Քաղաքում այժմ գործում են տասնյակ հայկական կազմակերպություններ՝ հայրենակցական, բարեգործական, մշակութային, երիտասարդական և այլն: Ներկայումս Ֆրեզնոյի հայ ազգաբնակչության թիվը անցնում է 50 հազարից: Հայերն այստեղ գլխավորաբար զբաղվում են երկրագործությամբ, խաղողի և այլ մրգատու այգիների ու բանջարեղենի մշակությամբ: 1943 թ. կառուցվում և սկսում է գործել Ս. Պողոս հայ առաքելական եկեղեցին: 1978 թվականից գործում են նաև հայկական ամենօրյա վարժարաններ: Աշխույժ գործունեություն են ծավալում Հ. Բ. Ը. Միության տիկնանց, երիտասարդական և թատերական հանձնախմբերը: 1981 թվականից Ֆրեզնոյում գործում է «Հայք» հայկական ռադիոժամը:

Ֆրեզնոյի նահանգային համալսարանում իրականացվում է հայագիտական ուսումնասիրությունների ծրագիրը, որը տեղի հայ ուսանողների միության հետ 1979 թվականից հրատարակում է «Հայ շարժում» թերթը:

Ֆրեզնոն ծննդավայրն է հայազգի աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանի, որի անունն է կրում Ֆրեզնոյի քաղաքային թատրոնը:

Երեկոյան ժամը 16.30-ին հյուրանոցի իր հարկաբաժնում Նորին Սրբությունը հարցազրույց է ունենում տեղական հայ և օտար մամուլի թղթակիցների հետ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՖՐԵԶՆՈՅԻ Ս. ԱՆՏՈՆԻՈՍ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, ժամը 18.30-ին, Ֆրեզնոյի կաթողիկ Ս. Անտոնիոս եկեղեցում տեղի է ունենում ս. պատարագ։ Օրվա պատարագիչն է Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը։ Ս. պատարագին ներկա են Ֆրեզնոյի Կաթողիկ Եկեղեցու եպիսկոպոսի ներկայացուցիչ հայր Ռեմոն Տրայլինգը, Եպիսկոպոսական Եկեղեցու պետ Վիկտոր Ռիվերա եպիսկոպոսը և այլ հարանվանությանց հոգևոր ներկայացուցիչներ։

Այդ օրը բազմահազար հայ հավատացյալներ եկեղեցի էին փութացել՝ ստանալու Լուսավորչի Աթոռի գահակալի օրհնությունն ու պատգամը և մխիթարվելու ս. պատարագի հոգեպարար արարողությամբ։

Հայ և օտար բարձրաստիճան հոգևորականների, սարկավագների և դպրաց դասի մեծ թափորով և «Հրաշափառ»-ով Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես մուտք է գործում եկեղեցի և օրհնում հայ հավատացյալներին։

Ֆրեզնոյի և շրջակայքի եկեղեցիների միացյալ խառն երգչախումբը հաջողությամբ կատարում է Եկմալյան ս. պատարագի երգեցողությունը։

«Հայր մեր»-ից առաջ, ոգեշնչված սրբազան պահից, կրոնաշունչ մի քարոզ է արտասանում Վեհափառ Հայրապետը։ Նորին Սրբության քարոզը անկորնչելի կերպով քանդակվում է ներկաների սրտերի և հիշողության մեջ։ Քարոզի անգլերեն թարգմանությունը կատարում էր Տ. Վարդան ավագ քահանա Գասպարյանը։

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է եկեղեցուն կից հովվատուն՝ իր ճանապարհին օրհնություն և մխիթարություն բաշխելով իր հոգևոր զավակներին, որոնք սիրով և կարոտով, երանության արցունքներով գալիս էին համբուրելու Նորին Սրբության Ս. Աջն ու քղանցքը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՖՐԵԶՆՈՅՈՒՄ

Նոյեմբերի 4-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան իր աղոթքը կատարելու համար, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է հյուրանոցի դիմացը գտնվող հայոց Ս. Երրորդություն եկեղեցի։ Եկեղեցում Հայոց Հայրապետին ողջունում է եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հրանդ քահանա Սիրապյանը։ Ս. Սեղանի առջև իր աղոթքը կատարելուց հետո, Նորին Սրբությունը օրհնում է ներկա գտնվող մի խումբ հավատացյալների, ապա ավտոմեքենաներով մեկնում է՝ այցելելու Ֆրեզնոյի նորաբաց ազգային նախակրթարան-վարժարան։

Ամենօրյա վարժարանի մուտքի առջև Վեհափառ Հայրապետը ընդունվում է տնօրենության, ուսուցչական կազմի և խնամակալության անդամնե-

ի կողմից: Դպրոցի սրահում հավաքված աշակերտությունը պատագին ծափերով ողջունում է սիրելի Հայրապետին:

Այս առթիվ կրթական հաստատության ժրաջան տնօրեն պրն. Ասատուր Ասատուրյանը, ուսուցչական կազմի և աշակերտության անունից, ջերմորեն ողջունում է Հայոց Հայրապետի ժամանումը և բարի գալուստ մաղթում:

Ապա խոսք է առնում վարժարանի հոգաբարձության ատենապետ դոկտ. Դենիս Ծամլյանը և, հանուն հոգաբարձության և ծնողական խորհրդի, իր շնորհակալությունն է հայտնում Նորին Սրբությանը՝ նրա օրհնաբեր այցելության համար:

Այնուհետև տեղի է ունենում աշակերտական ուժերով կազմակերպված գեղարվեստական մի կոկիկ հանդիսություն՝ երգերից և արտասանություններից բաղկացած, որին ներկա են լինում նաև բազում ծնողներ և դպրոցի հոգաբարձությունը:

Հանդիսության ավարտին Վեհափառ կաթողիկոսը տալիս է իր հայրապետական պատգամը՝ գեր հանելով այս կրթական հաստատության կատարած դաստիարակչական և ազգային առաքելությունը Ֆրեզնոյի հայ համայնքի ծոցում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆԸ

Առաջին անգամն է, որ իմ այս ուղևորությունս առիթով հայկական վարժարանի մը այցելելու պատեհությունը կունենամ՝ տեսնելու ձեր փոքրիկներուն հայկական անուշիկ աչքերը և լսելու անոնց երգն ու արտասանությունները, լսելու նաև իմաստալից խոսքերը, որ քիչ առաջ արտասանվեցան այս վարժարանի տնօրենին և հոգաբարձության կողմե:

Ես շատ զգացված եմ և Սուրբ Էջմիածնեն Աստուծո օրհնությունը կբերեմ այս վարժարանին, ուսուցչական կազմին, հոգաբարձության, մանչուկներուն և աղջիկներուն, որոնք կսորվին այստեղ մեր մայրենի լեզուն: Բարձրորեն կգնահատեմ այն հերոսական ճիգերը, որ դուք և Ֆրեզնոյի հայությունը ի գործ կդնեք այս հաստատությունը պահպանելու և հետզհետե ավելի զարգացնելու համար: Քիչ առաջ մեծ գոհունակությամբ լսեցի, որ ծրագիր ունիք այս վարժարանը ընդարձակելու, իբրև շենք և իբրև դասարաններու կազմություն, որպեսզի ան հասնի երկրորդական վարժարանի մը մակարդակին, ուր ուսանին մինչև տասնչորս տարեկան հայ աշակերտներ: Սքանչելի հեռանկար մըն է այս, և սրտանց կմաղթեմ, որ հաջողությամբ պսակվի այդ ծրագիրը, տարվետարի աճի աշակերտության թիվը, և դասարանները հետզհետե ավելնան, որպեսզի ամբողջական միջնակարգ վարժարան մը ունենաք Ֆրեզնոյի մեջ: Ֆրեզնոն կարծեմ արժանի է այդպիսի դպրոց մը ունենալու: Մեծ գաղութ մը չէ անշուշտ, Լոս Անջելոսի կամ Նյու Յորքի հետ չի համեմատվիր հայության թիվով, բայց իր ավանդություններով, իր անցյալով, իր ազգաշունչ ոգիով արժանի է այդ պատվին:

Այս գաղութը հիմնած են հայաստանցի հայեր, Արևմտյան Հայաստանի քաղաքներեն և գյուղերեն գաղթած, անցյալ դարու կեսերուն, Օսմանյան կայսրության դաժան շրջանեն: Անոնք եկած են ամերիկյան այս հյուր-

ընկալ ափերը՝ ապաստան և ազատություն գտնելու: Ես գիտեմ նաև, որ Ֆրեզնոյի հայերը այդ օրերեն մինչև այսօր պահած են իրենց հայրերու, իրենց նախահայրերու, հայաստանցիի ոգին: Անոնք ապրած են ամերիկյան հողի վրա, իրենց հոգվո մեջ պահպանելով իրենց հայրենիքի պատկերը: Այս ավանդությունը, իմ կարծիքով, պետք է պահպանվի նաև այսօր, և այդ ոգին պահպանելու լավագույն գրավականն է եկեղեցիի կողքին ունենալ նաև հայկական վարժարան, ամենօրյա վարժարան, որով պիտի ապահովվի նոր սերունդներուն հայկական դիմագիծը: Նման առիթներով ես հաճախ արտահայտված եմ ըսելով, որ, եթե արտասահմանի հայերը կուզեն Հայաստանին նվեր մը մատուցանել, ամենաթանկագին նվերը հայկական վարժարաններն են:

Մեր այսօրվան Խորհրդային Հայաստանը զարգացած երկիր մըն է, հին ժամանակներու ողբի և որբի երկիրը չէ այլևս և կարիքը չունի արտասահմանի հայության նյութական օգնության: Բայց Հայաստանը կարիքը ունի և ցանկությունը, որ արտասահմանի հայությունը պահպանե իր ինքնությունը, իր կրոնական հավատքը, իր Եկեղեցին, իր բարոյական ավանդությունները, իր ընտանեկան սրբությունը, այլ մանավանդ իր մայրենի լեզուն, որովհետև ժողովուրդ մը չի կրնար ապրիլ տեսականորեն, եթե իր սեփական լեզուն կորսնցնե: Մեր հին գրողներեն Խաչատուր Աբովյանն իր նշանավոր «Վերք Հայաստանի» գիրքին մեջ կըսե՝ «Ազգը պահողը հավատն է և լեզուն»: Այս ճշմարտությունը այսօր մանավանդ մեր Սփյուռքի հայության համար առաջնորդող ոգի պետք է մնա:

Անհավասիկ կարևորությունը ձեր գործին, հարգելի պարոն տնօրեն, հոգաբարձուներ և դուք՝ տիկիններ, պարոններ, որոնք բոլորդ ալ կապված եք այս դպրոցի աշխատանքներուն հետ. կուզեմ ձեզի հաղորդել այս բոլորը, որպեսզի դուք գիտնաք, համոզվիք, վստահ ըլլաք, թե Հայաստանի ժողովուրդը, բոլորը անխտիր, պարզ գյուղացիեն և բանվորեն մինչև մտավորականը կբաղձան, որ հայկական վարժարանները գոյատևեն, և հայ լեզուն ազատ և հզոր հնչե նաև ամերիկյան այս երկրին մեջ: Իմ գնահատանքը, իմ օրհնությունը ձեր աշխատանքին, ձեր նվիրումին:

Հիմա ես իմ խոսքը կուզեմ աշակերտության ուղղել: Սիրելի երեխաներ, դուք գիտեք, որ Հայաստանի մեջ կգտնվի Էջմիածնի վանքը, Էջմիածնի եկեղեցին: Ս. Էջմիածինը հայկական եկեղեցիներու ամենեն հինն է, կառուցված է 303 թվականին, 1700 տարիներ առաջ գրեթե: Ուրեմն այդ եկեղեցին հայոց Մայր եկեղեցին է, և ես այնտեղեն կուգամ և ձեզի կբերեմ Աստուծո օրհնությունը: Կաղոթեմ, որ Աստված ձեզի առողջություն պարգևե, որպեսզի աճիք, զորանաք և հետզհետե դառնաք բարի և ազնիվ երիտասարդներ, մարմնով և հոգիով գեղեցիկ: Մենք շատ կսիրենք ձեզ, որովհետև դուք հայերեն կխոսիք: Մենք ալ Հայաստանի մեջ անշուշտ հայերեն կխոսինք: Հայաստանը հայերու երկիրն է. հոն ալ հայկական շատ դպրոցներ և մանկապարտեզներ կան՝ հարյուր հազարավոր աշակերտներով: Բոլորն ալ կխոսին հայերեն, կկարդան հայերեն, կգրեն հայերեն, կպարեն հայերեն, ինչպես դուք՝ այստեղ: Դուք կսիրե՞ք հայերենը:— Այո՛: Ես կփափագիմ, որ դուք հայերեն լեզուն ալ սիրեք, անգլերեն լեզուն ալ սիրեք: Եվ տակավին կմտածեմ, որ կրնաք ուրիշ լեզուներ ալ սորվիլ: Ինչո՞ւ չէ: Մարդ ինչքան լեզու գիտնա, այնքան հոգիով կհարստանա: Ահա մեր սրբազանները, օրինակ, կամ ձեր դասախոսները, որոնք քանի մը լեզու գիտեն: Հայերը ընդհանրապես շատ լեզուներ կխոսին: Շատ հայեր

կան, որոնք թե՛ անգլերեն գիտեն, թե՛ ֆրանսերեն, արաբերեն և շատ ուրիշ լեզուներ: Ուրիշներ կան, որոնք ռուսերեն գիտեն: Հայաստանի մեջ ռուսերեն ալ կսորվին:

Կփափագիմ նաև, որ երբ ավելի մեծնաք, օր մը Հայաստան այցելեք, Հայաստանի մայրաքաղաքը տեսնեք: Երևանը բավական մեծ քաղաք է, Ֆրեզնոյեն մեծ է: Մեկ միլիոնեն ավելի բնակչություն ունի և գեղեցիկ քաղաք է: Ընդհանրապես Հայաստանը բնությամբ գեղեցիկ է: Բայց դուք գիտե՞ք: Հայաստանի մեջ ի՞նչն է ամենագեղեցիկը: Արարատ լեռը: Իսկապես, Արարատ լեռը բացառիկ գեղեցկություն ունի. երկրի վրա դեպի երկինք բարձրացող հսկա լեռ՝ մըն է, կողքին ալ Փոքր Մասիսը: Ես կկարծեմ, որ ամբողջ աշխարհի ամենահմայիչ լեռն է: Բայց դուք գիտե՞ք, թե Արարատը ո՞ւր կգտնվի. Հայաստանի մե՞ջ է, թե Հայաստանեն դուրս: Արարատը Հայաստանի սահմանին շատ մոտ է: Մենք ամեն օր կտեսնենք, բայց Արարատին մոտը չենք կրնար երթալ, որովհետև սահման կա: Բոլոր հայաստանցիները ամեն առավոտ, երբ կտեսնեն Արարատը, անպայման կմտածեն, թե օր մը արդյոք պիտի կարողանա՞ն անոր մոտենալ: Այդ մեր երազանքն է: Եվ ես կփափագիմ, որ դուք ևս այդ երազանքը ունենաք, դուք ևս նկատեք ձեզ Հայաստանի զավակներ, Արարատի զավակներ: Ես ձեզ կհրավիրեմ, որ օր մը Հայաստան անպայման այցելեք:

Ձեզի կրկին կմաղթեմ առողջություն: Աստուծո շնորհները առատորեն թող բաշխվին ձեզի, և օրհնյալ ըլլաք այժմ և միշտ. ամեն:

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Ֆրեզնոյի «Հայ Տարեցներու Տուն»՝ ծերանոց, ուր օրհնում և մխիթարում է այդ հարկի տակ իրենց կյանքի վերջալույսը խաղաղության և ապահովության մեջ անցկացնող հայ պապիկներին և մամիկներին: Հուզիչ էր միաբերան երգված «Հայր մեր»-ը՝ Վեհափառ Հայրապետի ընկերակցությամբ, ծերանոցի խաղաղ և անդորր հարկի տակ:

Հայոց Հայրապետին ողջունում է ծերանոցի խնամակալության պատասխանատուներից պրն. Ք. Կարապետյանը:

Ապա մխիթարական խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

Վերջում Նորին Սրբությունը և նրա շքախմբի անդամները մեծ գոհունակությամբ ծանոթանում են ծերանոցի բոլոր հարկաբաժիններին: Ամեն կողմ մաքրություն, կանոնավորություն, խնամք և հիանալի պայմաններ հայ պապիկների ու մամիկների համար:

Ֆրեզնոյի հայկական ծերանոցը արժանի է ամեն գնահատանքի և մեր ողջ ազգի ուշադրությանն ու խնամքին:

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը հարցազրույց է ունենում Ֆրեզնոյի «The Fresno Bee» թերթի թղթակցի հետ:

Ժամը 17.45-ին Վեհափառ Հայրապետին հյուրանոցի նրա հարկաբաժնում այցելություն են տալիս հայ ավետարանական համայնքի վերապատվելիները՝ գլխավորությամբ վերապատվելի Հարություն Մսրլյանի:

ՃԱՇԿԵՐՈՒԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ավելի ուշ, երեկոյան ժամը 19-ին, Ֆրեզնոյի «Convention Center»-ի շքեղ դահլիճում Հայոց Հայրապետի բարձր պատվին տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են շուրջ 700 հրավիրյալներ:

Վեհափառ Հայրապետի մուտքը դահլիճ դիմավորվում է խանդավառ ծափերով և բացառիկ ջերմությամբ: Ապա Նորին Սրբությունը իր շքախմբի և օրվա պաշտոնական հյուրերի հետ առաջնորդվում է պատվո սեղան:

Ճաշկերույթն սկսվում է հայրապետական աղոթքով: Սեղանը ղեկավարում և միաժամանակ ելույթները թարգմանում է Տ. Վարդան ավագ քահանա Գասպարյանը:

Գործադրվում է գեղարվեստական մի ճոխ ծրագիր:

Ճաշկերույթի սկզբում ամբողջ դահլիճը հոտնկայս երգում է «Տէր, կեցո» մաղթերգը:

Ընդունելության ընթացքում բարիգալստյան խոսքով հանդես է գալիս սեղանավար Տ. Վարդան ավ. քհն. Գասպարյանը: Ապա իր սրտի խոսքն է ասում վերապատվելի Հարություն Մսրլյանը:

Հանուն Միացյալ Նահանգների Եպիսկոպոսական Եկեղեցու, ողջույնի ուղերձով հանդես է գալիս Տ. Վիկտոր Ռիվերա եպիսկոպոսը:

Գեղարվեստական ծրագրին իրենց մասնակցությունն են բերում երեցկին Արաքսի Թաթուլյանը՝ արտասանությամբ, և ջութակահար պրն. Հերոլդ Հակոբյանը, որը դաշնամուրի ընկերակցությամբ կատարում է Սայաթ Նովայի և Կոմիտաս վարդապետի ստեղծագործություններից:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետին ուղղված սրտագին խոսք է ասում թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը, հայրական գորովով բաշխում է բոլոր ներկաներին իր սրտաբուխ օրհնությունը և իր գոհունակությունն ու շնորհակալությունն է հայտնում սրտագին հյուրասիրության և գեղեցիկ խոսքերի համար:

Ճաշկերույթն անցնում է ջերմ և խանդավառ մթնոլորտում՝ հայրենասիրական զգացումներով համակելով բոլոր ներկաների սրտերը:

Նոյեմբերի 5-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով Ֆրեզնոյից մեկնելու ճանապարհին այցելում է տեղի հայոց Ս. Պողոս եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով: Այստեղ Հայոց Հայրապետին բարիգալստյան խոսք է ուղղում տեղի հոգեվոր հովիվ Տ. Շահե ավ. քհն. Այթունյանը:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը Ս. Պողոս Նորակառույց եկեղեցուն նվիրում է մի գեղեցիկ արծաթե բուրվառ՝ պատրաստված Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Ապա աղոթքից և կարճ հանգստից հետո, Նորին Սրբությունը իր շքախմբով մեկնում է օդանավակայան՝ ուղևորվելու դեպի Լոս Անջելես:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 15.30-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ժամանում է Լոս Անջելոս:

Կալիֆոռնիայի եկեղեցասեր և հայրենասեր հայ գաղութը շուրջ երեք շաբաթից ի վեր անսահման կարոտով, հուզումով և անհամբերությամբ սպասում էր Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությանը: Եվ ահա այսօր վերջապես իրականություն է դառնում փայփայված այդ երազը՝ Կալիֆոռնիայի բովանդակ հայության սրտերը ողողելով լիաբուռն հրճվանքով և հոգեհույզ խանդավառությամբ: Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնից, Արարատյան դաշտից, հայրենի աշխարհից հազարավոր մղոններով հեռու գտնվող այս գաղութի հայրենակարոտ հայությանը բերել էր լույս Ս. Գրիգոր Լուսավորչի մշտավառ կանթեղից, բերել էր օրհնություն, ողջույն և սեր հավերժական Ս. Էջմիածնից և հայրենի ժողովրդից:

Ժամանակից շատ առաջ անհամբեր հոծ բազմությունը լցրել էր Լոս Անջելոսի ընդարձակ օդանավակայանը: Կալիֆոռնիայի թեմի հայ հավատացյալներին այդ օրը հազվագյուտ բախտ էր վիճակվել վայելելու իր սիրելի Հայրապետի ներկայությունը, նրա շուքն ու շնորհը:

Օդանավակայանում Էջմիածնի գահակալը դիմավորվում է աննախընթաց խանդավառությամբ, բարեմաղթությունների սրտառուչ արտահայտություններով: Հայոց Հայրապետը օրհնում է իրեն մատուցված բարիգալիստյան ավանդական աղն ու հացը: Այնուհետև ավտոմեքենաների շարասյունով, հանդիսավոր երթով ճանապարհ է ընկնում դեպի Հոլիվուդ և ուղղվում Թեքեյան Մշակութային Միության «Արշակ Տիգրանյան» վարժարան: Այստեղ քաղցր և անմեղունակ ժպիտներով մի խումբ հայ աշակերտներ 12 ճերմակ աղավնիներ են բաց թողնում դեպի կապույտ երկինք և, ի նշան հարգանքի ու սիրո, թարմ ծաղիկներ են շաղ տալիս Հայոց Հայրապետի ոտքերի առջև՝ բարի գալուստ մաղթելով նրան:

Ապա Ամենայն Հայոց կաթողիկոսը մուտք է գործում վարժարանի տեսչարան, ուր տեղի է ունենում մամուլի ասուլիս հայ և օտար վեց թղթակիցների հետ:

Կարճ հանգստից հետո հայրապետական թափորը «Հրաշափառ»-ով ուղղվում է դեպի Ս. Հովհաննես եկեղեցի, որտեղ հավաքվել էր հայ հավատացյալների խուռներամ բազմությունը:

Եկեղեցում, կարճ արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետին բարի գալուստ է մաղթում արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը՝ հետևյալ խոսքերով.

Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊՍ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Այսօր հոգեկան անսահման ուրախության և ցնծության մեջ է Հայց. Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմը և հատկապես առաջնորդանիստ Ս. Հովհաննու Կարապետ Մայր տաճարը Հոլիվուդի մեջ, Կալիֆոռնիա, որովհետև ազգիս Ամենայն Հայոց Սրբազնագույն և առաքելաշավիղ կաթողիկոսը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջին Հայրապետը իր շնորհաբաշխ այցելությամբ կօրհնե մեր թեմն ու հավատացյալ ժողովուրդը:

Ձերդ Ս. Օծությունը որպես Ընդհանրական Հայրապետ Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, Արարատի սուրբ գագաթեն և Մայր Հայրենիքեն կբերե իր հայրապետական օրհնությունները և հայրական սերն ու գուրգուրանքը մեր բոլոր հավատացյալներուն: Անկեղծ սիրով և երախտագիտական ամենաջերմ զգացումներով կողջունենք Ձերդ Սրբության օրհնաբեր այցելությունը: Բարի եկած եք, Վեհափառ Տեր, Ձեր հարազատ Տան մեջ:

Արդարև, մենք Ձերդ Սրբության մեջ մարմնավորված կտեսնենք Հայց. Եկեղեցվո անմահ սուրբերը և հայրապետները՝ Լուսավորիչը, Սահակն ու Մեսրոպը, Նարեկացին, Շնորհալին և Տաթևացին, որոնք իրենց կամքով, գործով ու խոսքով քրիստոնեական հավատքի սերմերը հաստատապես ցանեցին Մայր Հայրենիքի հողին վրա և պայծառացուցին մեր Եկեղեցին և հոգևոր գրականությունը: Անոնց հարազատ շավիղն ընթացավ Ձերդ Ս. Օծությունը՝ իր հոգևոր, կրթական, մարդասիրական և շինարարական բեղուն գործունեությամբ, որու հաջողության համար ազգովին երախտապարտ ենք Ձերդ Սրբության:

Վեհափառ Տեր, Դուք մեր ժողովուրդի հավատքի, լեզվի ավանդությանց մշտարթուն պահապանն եք: Ձերդ Սրբության հովվապետական այցելության պատմական այս բարեբաստիկ առիթով՝ մեր սրտերեն բխած շարականն է, որ կերգենք՝ ըսելով.

«Հայրապետ սուրբ և անբիծ և ընտրեալ յորովայնէ.
սքանչելագործ վկայ և պարծանք ազգի մարդկան...»:

Ամերիկայի այս խաղաղ ափերուն վրա՝ քրիստոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությամբ, արևմտյան թեմեն ներս կշարունակենք մեր հոգևոր առաքելությունը՝ հոգուտ մեր սիրեցյալ ժողովուրդին:

Թեև պարագաներու բերումով արտասահմանեն և Հայաստանեն Լոս Անջելոս գաղթած հավատացյալներ ունինք մեծ թիվով, սակայն կվստահեցնենք Ձերդ Ս. Օծության, թե մեր ժողովուրդը հոգեպես կապված է Մայր Աթոռին ու զորավոր է հայրենասիրությամբ և կջանա Հայրենիքի դարավոր ավանդությունները պահպանել այս հողին վրա:

Արդարև, Մայր Աթոռի շունչը և ծաղկյալ Մայր Հայրենիքի իրականությունը մեզի կներշնչեն նոր կյանք և նոր եռանդ: Իսկ Ձերդ Ս. Օծու-

թյան օրհնաբեր հովվապետական այցելությամբ առալել ևս կամրապնդվին մեր հավատքն ու հայրենասիրական զգացումները:

Բարի եկած եք, Վեհափառ Տեր, Աստուծո և Ձեր հոգևոր Տան մեջ: Մեր ժողովուրդը հավատարիմ է իր Հովվապետին և կարոտ է Ձերդ Սրբության խոսքին ու օրհնության:

Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված ժողովրդական այս խանդավառությունից և իր նկատմամբ ցուցաբերված ջերմ սիրո և հարգանքի արտահայտություններից, տալիս է իր պատգամը՝ օրհնելով բոլոր ներկաներին:

Լոս Անջելոսում իր կեցության բոլոր օրերին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով հյուրընկալվում է «Registery» հյուրանոցում:

Երեկոյան ժամը 20-ին հյուրանոցի սրահներից մեկում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի օրհնաբեր գալստյան, տրվում է ընթրիք թեմական խորհրդի անդամների կողմից: Ընթրիքն անցնում է ջերմ և սիրալիր մթնոլորտում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ 2.500 ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 8-ին, առավոտյան ժամը 11-ին, Լոս Անջելոսի և շրջակայքի հայկական ամենօրյա և կիրակնօրյա վարժարանների 2.500 աշակերտ-աշակերտուհիներ հավաքվել էին Փասադենայի ամերիկյան կոլեջի «Սեքսըն» հանդիսասրահում՝ տեսնելու համար Վեհափառ Հայրապետին և նրանից ստանալու հայրական օրհնություններ:

Հանդիսասրահի մուտքի առաջ Հայոց Հայրապետը ջերմորեն ընդունվում և ծափերի տարափի տակ մուտք է գործում սրահ: Հանդիսությանը, բացի բազմահազար աշակերտներից, ներկա են հայ դպրոցների ուսուցիչներ, հոգաբարձությունների և խնամակալ մարմինների անդամներ, ինչպես նաև մեծ թվով ծնողներ:

Այստեղ «Լավեռն» կոլեջի տնօրեն դոկտ. Կարպիս Տեր-Եղիայանը Վեհափառ Հայրապետին դիմում է ողջույնի և բարիգալստյան հետևյալ ուղերձով.

ԴՈԿՏ. ԿԱՐՊԻՍ ՏԵՐ-ԵՂԻԱՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Լոս Անջելոսի հայկական վարժարաններու աշակերտներու համար պատմական անմոռանալի խանդավառող և ներշնչող պահ մըն է: Ժամ մը, որ անքակտելիորեն դրոշմված պիտի մնա յուրաքանչյուր աշակերտի, աշակերտուհիի սրտին, հոգիին ու մտքին մեջ: Տասնյոթ դարեր ի վեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին լույս և հույս սփռած է մեր ասպնջական ժողովուրդին: Սակայն վերջին երեսուներկու տարիներու ընթացքին, շնորհիվ Ձեր իմաստուն ղեկավարության, մեր ժողովուրդը Հայրենիքի և Սփյուռքի մեջ կարձանագրե շարունակական նվաճումներ: Երեկ կեսօրե ետք հուզիչ էր օդակայանին մեջ: Հուզիչ էր և հպարտություն ներշնչեց մեր բոլորին, երբ փոքր աղջիկ մը, պատասխանելով ամերիկացի պատանիի մը հարցումին, թե ո՞վ է եկողը, այսպես կպատասխաներ. «Եկողը մեր

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

[illegible]
[illegible] Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի

[illegible] հանար սրտանձնեալ շնորհակալութիւն եւ գոհութիւն [illegible] Ձեզ [illegible] Ձեր [illegible] Ձեզ [illegible] Ձեր [illegible], [illegible] եւ [illegible] Ձեր [illegible]

Մեր [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Սիրելի եւ [illegible] [illegible],
Ս. Հայոց [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Ձեր [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Է՛ֆեսցիա [illegible],
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [

հայ ժողովրդի թագավորն է»: Հանուն Լոս Անջելոսի հայկական վարժարանների աշակերտներուն այս պահուն կողջունենք Ձեր օրհնաբեր ներկայությունը մեր մեջ, որպես քրիստոնյա աշխարհի կարկառուն դեմք, որպես քրիստոնեական հավատքի ռահվիրա, 130-րդ առաքելաշավիղ հաջորդը Ս. Գրիգոր Լուսավորիչի, որպես Հովվապետ և Ծայրագույն Պատրիարք, որպես առաքելատիպ կաթողիկոս Ամենայն Հայոց, որպես շինարար և կրթասեր հովվապետ և որպես ուսուցիչ, ուսուցչապետ և մանկավարժ և, ի մասնավորի, որպես խաղաղության առաքյալ:

Վեհափառ Տեր, Դուք մեր սրտերը հպարտությունով լեցուցիք, երբ Սպիտակ Տան մեջ նախագահ Ռեյգընի խաղաղության կոչ ուղղեցիք: Մենք, որ եղած ենք խաղաղության ժողովուրդ, Վեհափառ Տեր, և Դուք որպես խաղաղության առաքյալ, մենք մեծ բան կպարտինք Ձեզի: Մենք կհավատանք որ խաղաղություն պիտի տիրե և արդարությունը պիտի հաղթանակե: Մենք կհավատանք, որ օր մը այս աշակերտությունը պիտի համախմբվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ՝ մեր խորհրդանիշը հոգևոր սրբություններու, և Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն պիտի մագլցի մեր ազգային խորհրդանիշը եղող Արարատի գագաթը:

Վեհափառ Տեր, այս հայտագիրը պատրաստելով և ներկայացնելով, Լոս Անջելոսի հայ աշակերտությունը իր երախտագիտությունը կներկայացնե Ձերդ Սրբության՝ մաղթելով Ձեզի արևշատ և երկար օրեր: Միշտ մեր գլխուն վրա ողջ մնաք, Վեհափառ Տեր:

Ապա հերթականությամբ յուրաքանչյուր վարժարանի աշակերտությունն հանդես է գալիս գեղարվեստական ճոխ ծրագրով: Հստակապես հետաքրքրքրական էր դիտել Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի 7—8 տարեկան աշակերտների կողմից ներկայացված թատերախաղը, որը պատկերում էր Վեհափառ Հայրապետի մանկությունը Բուխարեստում:

Արշակ Տիգրանյան վարժարանի սաներից մեկը կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված 2.000 աշակերտների ստորագրությունը կրող մի նամակ, որի մեջ աշակերտները հայտնում էին իրենց հավատարմությունն ու ջերմ զգացումները Ս. Էջմիածնի, Հայաստանի և Արարատի հանդեպ:

Այս առթիվ Հայ Քույրերի Ակադեմիայի անունից հնգամյա երկու աղջնակներ Վեհափառ Հայրապետին են հանձնում գեղեցիկ մի հուշանվեր:

Այնուհետև խոսք է առնում արևմտյան թեմի բարեջան առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոսը:

Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Տեսարանը շատ գեղեցիկ է այս օրը, բախտավոր եմ: Եթե ուշադրությամբ հետևեցաք Ս. Գրիգոր Լուսավորիչ մեր վարժարանի աշակերտությանը տրամախոսության, Վեհափառ Հայրապետի կենսագրությունը սքանչելիորեն ներկայացուցին մեր փոքրիկները մեզի: Ես, որպես համեստ ծառան Հայաստանյայց Եկեղեցվո արևելյան թեմի, այս պահը կնկատեմ գերագույն երջանկության պահ ինձի համար, որովհետև ինձի առիթը կտրվի պաշտոնապես ձեզի ներկայացնելու Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, որ կուգա Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, թեև

երկար ճամփորդություններ, սանալն Վեհափառ Հայրապետի համար ասիկա սիրո ճամփորդություն է, որովհետև կուրախացնե իր զավակները՝ պանդխտված այս հեռավոր Կալիֆոռնիայի մեջ։ Ուստի, սիրելի աշակերտներ, ոտքի ելեք բոլորդ միասին, որոտընդոստ ծափահարություններով Վեհափառը ընդունենք մեր մեջ։

Ապա Վեհափառ Հայրապետը, խորապես տպավորված հայ դպրոցներում տարվող կրթական և հայրենասիրական մեծ աշխատանքից, դպրոցներ, ուր դաստիարակվում են հայության նկարագիր և կրոնաշունչ դաստիարակություն, ներկաներին տալիս է իր օրհնությունը հետևյալ գնահատական խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Անսահման է իմ մխիթարությունը այս պահին։ Քիչ անգամ է պատահում իմ ուղևորության ընթացքում, որ այսքան մեծ թվով հայ աշակերտներ՝ աղջիկներ և տղաներ, ինձ դիմավորեն այսպիսի խանդավառությամբ։ Ինձ մի պահ թվաց, թե գտնվում եմ Մայր 'Հայրենիքում' Հայաստանում, այն հայրենիքում, որի մասին քաջ առաջ երգեցիք դուք՝ «Իմ հեռավոր հայրենիք, իմ փառավոր հայրենիք, իմ անուշիկ Հայաստան»։ Իսկապես, ես միայն Հայաստանում նման տեսարանների առջև եմ գտնվում, մեծ դահլիճներում կամ բացօթյա հրապարակում, որտեղ հավաքվում են ոչ թե տասնյակ, այլ հարյուր հազարավոր ձեզ նման հայ աղջնակներ և մանչուկներ, որոնք ձեզ նման երգում են ու արտասանում հայերեն լեզվով։ Ահա հուզումը, որ ապրում եմ ես այս պահին, և իմ հուզումի ճանապարհով բերում եմ ձեզ ողջույնը Մայր Հայրենիքի, օրհնությունը Ս. Էջմիածնի, ողջույնը ձեր հայաստանցի եղբայրների և քույրերի։ Ես մեծ գնահատանքով, հիացումով դիտեցի ձեր հանդեսը՝ տարբեր վարժարանների աշակերտների մասնակցությամբ։ Բոլորդ էլ երգեցիք, պարեցիք և ձեր խոսքը ասացիք վայելուչ կերպով, գեղեցիկ կերպով, ճաշակավոր, մանավանդ հայաշունչ ոգով։

Ինձ համար անակնկալ եղավ այն փոքրիկ ներկայացումը, ուր հանդես եկավ Լևոն Կարապետը։ Այս առիթով ուզում եմ մի փոքրիկ ուղղում մտցնել այս ներկայացման մեջ, ինչ վերաբերում է իմ մոր գուշակման իմ ապագայի մասին։ Երբ վեց տարեկան էի Պուքրեշում, մայրս ինձ լուսանկարեց և լուսանկարի ետևը գրեց փոքրիկ մի ոտանավոր, ուր գուշակում էր իմ ապագան։ Ինչքան հիշում եմ, մոտավորապես այսպես էր այդ ոտանավորը.

Անունս է Լևոնիկ,
Բոլորած եմ վեց տարիք,
Մաղթեցեք, որ Աստված զիս անփորձ պահե,
Որպեսզի ըլլամ քաջ, արի,
Զինվոր Մայր Հայաստանի։

Գուցե այս գուշակումը, այս մաղթանքը, իբրև պատգամ, ուղղենք նաև ձեզ՝ սիրելի աշակերտներ, որպեսզի ձեզ էլ Աստված անփորձ պահի, և դուք էլ մի օր այս կամ այն կերպով դառնաք զինվորները Մայր Հայաս-

տանի, որովհետև դուք այս ամերիկյան աքաղաքի երկրում, անգլերեն գեղեցիկ լեզվի կողքին նաև հայերեն եք սովորում: Դուք հայերեն եք սովորում Հայաստանի համար, վերածնված ու ծաղկած Մայր Հայրենիքի, հավիտենական Հայաստանի համար:

Այս առիթով, խոր գնահատանքով ես ուզում եմ իմ շնորհավորանքը, քաջալերանքը և օրհնությունը բերել բոլոր նրանց, ովքեր այս երկրում՝ Միացյալ Նահանգներում, վերջին տասը-քսան տարիների ընթացքում ստեղծեցին հայկական վարժարաններ: Երբ ես 1960 թվին առաջին անգամ գտնվեցի Միացյալ Նահանգներում, տարբեր առիթներով բարեկամական շրջանակներում արծարծում էի հայ վարժարաններ ստեղծելու, կազմակերպելու միտքը: Սակայն լսում էի ամեն կողմից գրեթե այն առարկությունը, թե՝ Վեհափառ, մեր երկրի պայմաններում այդ հնարավոր չէ պարզապես: Եվ ես հիշում ես, վերջին հրաժեշտի ճաշկերույթին, որ տեղի ունեցավ Նյու Յորքում 1960 թվականին, իմ բաժանման պահին ես մաղթանքներ և հրավերներ էի ստանում, որպեսզի վերստին այցելեմ Միացյալ Նահանգներ: Ես հայտարարեցի՝ կգամ, էլի՛ կգամ, եթե դուք հայկական վարժարաններ բաց անեք: Եվ ահա տարիներ անցան և, փառք Աստուծո, այդ երազանքը սկսեց կամաց-կամաց իրակա՛նություն դառնալ: Ասում եմ՝ կամաց-կամաց, որովհետև, թույլ տվեք ասել, ես տակավին բավարարված չեմ այսօրվա վարժարանների թվով: Վստա՛հ եմ, որ ավելի կազմակերպված ջանքերով, հավատքով, հարատևության ոգով և հայկականության զգացումով կարելի է մոտ ապագայում ձեր վարժարանների թիվը կրկնապատկել: Ես մաղթում եմ ուժ, կարողություն և աստվածային շնորհներ ձեզ բոլորիդ, մանավանդ ղեկավար մարմիններին, եկեղեցիներին, հոգաբարձուներին ու նվիրատուներին, որոնք նպաստում են հայկական վարժարանների ստեղծմանն ու գործունեությանը: Այս առիթով ես ուզում եմ իմ հարգանքի և օրհնության խոսքը ուղղել մանավանդ ձեր վարժարանների կրթական մշակներին՝ ուսուցիչներին, ուսուցչուհիներին, որոնք, ես գիտեմ, հերոսական աշխատանք են կատարում և մեծագույն ծառայություն մատուցում հայ ժողովրդին ու հայրենիքին: Անվասիկ իմ պատգամը՝ ուղղյալ ձեզ և բոլոր ամերիկահայերին: Ուժ, կարողություն բոլորիդ: Շատ երջանիկ պիտի լինեմ Ս. Էջմիածնում, եթե հետագա տարիներին լսեմ անը, զարգացումը հայկական վարժարանների, Միացյալ Նահանգների տարածքի վրա:

Իսկ այժմ ես ուզում եմ իմ խոսքը շարունակել՝ դիմելով հատկապես ձեզ, սիրելի երեխաներ: Դուք ինձ հասկանո՞ւմ եք: Տեսնո՞ւմ եք, որ արևելահայերեն եմ խոսում: Ես կարող եմ արևմտահայերեն էլ խոսել անշուշտ: Ես ինքս արևմտահայ եմ: Բայց չգիտեմ ինչու, իմ սիրտը թելադրեց ինձ, որ այսօր ձեզ հետ խոսեմ այնպես, ինչպես խոսում են ձեր ընկերները և ընկերուհիները Հայաստանում: Արևմտահայերեն և արևելահայերեն նույն լեզուն է, մեկ լեզու է՝ տարբեր երանգավորումներով, տարբեր գույներով, երբեմն տարբեր բուրմունքով, մեկը մյուսին հարստացնող, ճոխացնող և գեղեցկացնող: Ուզում եմ ձեզ հիշեցնել մեր մայրենի լեզվի մասին: Աշխարհի վրա բազմաթիվ լեզուներ կան, հարյուրավոր լեզուներ: Ամեն լեզու իր տեղը, իր արժեքը, իր առաքելությունը ունի: Սակայն լեզուների պատմության մեջ մեր մայրենի լեզուն բացառիկ տեղ է գրավում մեր ժողովրդի կյանքում: Եվ այդ բացառիկ պարագան պարտական ենք մեր քրիստոնեական հավատքին: Քրիստոնեությունը ընդունելուց առաջ հայ ժողովուրդ կար, Հայաստան էլ կար, Տիգրան Մեծի ժամանակ նույնիսկ Մեծ Հայաստան

կար, բայց հայերեն լեզուն մշակված, գրված գոյություն չուներ: Գուցե հայերից շատերը խոսում էին տարբեր լեզուներով, համենայնդեպս գրագրությունները կատարվում էին պարսկերեն կամ ուրիշ լեզուներով: Մենք քրիստոնեությունը ընդունեցինք, ինչպես գիտեք, չորրորդ դարի սկզբին: Եվ նույնիսկ քրիստոնեությունը ընդունելուց հետո մեր Եկեղեցին օգտագործեց հունարեն և ասորերեն լեզուները իբրև պաշտամունքի լեզու: Սակայն կարճ ժամանակ անց՝ հետզհետե լուսավորվեց հայկական գիտակցությունը, արթնացավ հայի ստեղծարար ոգին Քրիստոսի Ավետարանի լույսի ազդեցության ներքև, և Ս. Մեսրոպ, հանդիսանալով ներկայացուցիչը այդ հայկական ոգեկանության զարթոնքի, ստեղծեց հայ տառերը: Այդ ձևով սկիզբ առավ հայ գիրն ու գրականությունը: Ս. Գիրքը թարգմանվեց հայերեն լեզվով, կատարյալ, գեղեցիկ լեզվով: Հայ ժողովուրդը կերտեց իր Ոսկեդարը՝ հայ լեզվի, գրի, գրականության ստեղծումով: Ուրիշ ազգություններ էլ ունեցել են ոսկեդարեր: Շատ հատկանշական է, սակայն, որ պատմականորեն հայ ժողովուրդը իր Ոսկեդարը կերտեց քրիստոնեությունը ընդունելուց անմիջապես հետո: Ուրիշ ազգություններ, օրինակ, հին հույները՝ հելլենները, իրենց հոյակապ Ոսկեդարը ստեղծեցին Քրիստոսի ծննդից հինգ հարյուր տարի առաջ: Կամ ֆրանսիացիները, որոնք իրենց Ոսկեդարը ստեղծեցին Լյուդովիկոս ԺԴ-ի օրոք, 17-րդ դարում միայն, թեև վաղուց քրիստոնյա էին: Հայերի մեջ Ոսկեդարը եղավ հանդիպումը, միաձուլումը, շաղախումը Քրիստոսի Ավետարանի լույսի հայ ոգու զարթոնքի, հայ ոգեկանության հետ: Եվ այսպիսով ոչ միայն մեր լեզուն, այլև մեր ամբողջ մշակույթը կրում է դրոշմը քրիստոնեական հանճարի, քրիստոնեական լույսի: Ես ասում եմ՝ ամբողջ մշակույթը, որովհետև մեր մշակույթի բոլոր արժեքները սկիզբ առան էլի հայ գրից ու գրականությունից անմիջապես հետո: Ամեն հայ մշակութային ստեղծագործություն հորինվել է հայերեն լեզվով. ճարտարապետությունը, մանրանկարչությունը, երաժշտությունը և բոլոր արվեստները:

Հայ մշակույթը միաժամանակ քրիստոնեական արժեք է ներկայացնում, բայց նաև՝ ազգային, հայկական: Սա, ճիշտ է, վերաբերում է մեր հին մշակույթի արժեքներին: Մեր օրերին, անշուշտ, մանավանդ արդի Հայաստանի պայմաններում, երբ հայ մշակույթը նոր ծաղկում, վերածնունդ է ապրում, թվում է, թե անջատված է հին, դասական մեր քրիստոնեական մշակույթի ոգուց: Բայց իրականության մեջ շարունակությունն է նրա՝ նոր ձևերի մեջ, նոր բովանդակությամբ: Մեր այսօրվա բոլոր մեծ ստեղծագործողները՝ բանաստեղծներ, գրողներ, նկարիչներ, քանդակողներ, ճարտարապետներ, ներշնչվում են նաև մեր ոսկեդարյան մշակույթի արժեքներով: Մի անգամ ես մասնավոր խոսակցության ընթացքում հայտնի բանաստեղծ Պարույր Սևակի հետ, նկատեցի, որ նա բավական ծանոթ է Ս. Գրքին: Ասացի իրեն՝ «Դուք կարդացե՞լ եք Ս. Գիրքը»: «Վեհափառ,—պատասխանեց,—ինչպե՞ս կարելի է բանաստեղծ լինել առանց Ս. Գիրք կարդալու»: Անհավասիկ մի վկայություն:

Սիրելի երեխաներ, այս մի քանի խորհրդածություններով ուզեցի ընդգծել կարևորությունը հայերեն լեզվի իմացման: Ես ցանկանում եմ, որ դուք լավ սովորեք մեր մայրենի լեզուն, իմանաք ուղիղ գրել և սահուն կարդալ և վարժարանը ավարտելուց հետո էլ ազատ, համարձակ, ճակատաբաց խոսեք հայերեն լեզվով: Մի օրինակ բերեմ իմ անձնական կյանքից: Ես, ինչպես գիտեք, ռումինահայ եմ, այնտեղ ծնված, մեծացած և մեծ մասամբ

ռումինական դպրոցում դաստիարակություն ստացած: Ծատ լավ գիտեմ ռումիներեն լեզուն, գուցե հայերենից ավելի լավ: Եվ կարծում եմ նույնիսկ, որ հայերեն լեզուն իմանալը ինչ-որ նոր գեղեցկություն է տալիս մեր խոսած այլ լեզուներին: Հայերեն լեզվի ոգին կարող ենք բերել անգլերեն խոսելու ժամանակ, և անգլերենը նոր բուրմունք կստանա: Աստված մեզ ստեղծել է իբրև հայ և շնորհել մեզ մայրենի լեզու. մենք այդ լեզուն պետք է պահպանենք սրբությամբ և փոխանցենք մեր զավակներին ու թոռներին: Միջնադարյան մի ավանդություն եմ կարդացել մի գրքում: Միջին դարերում մի հրեա ռաբբի դատապարտվում է մահվան. նրա մարմինը պիտի այրվի խարույկի վրա: Ռաբբին իր հետ վերցնում է իրենց Սուրբ խոսքը՝ Աստուծո խոսքը, Թորան, մագաղաթի վրա գրված, երկու-երեք մետր երկարությամբ: Նա Թորայի մագաղաթը վերցնում և պտտեցնում է իր մարմնի վրա, փաթաթվում այդ մագաղաթով, այն հույսով, որ այդ սուրբ Թորան նրան պիտի պաշտպանի կրակի բոցերից: Խարույկը վառվում է, բոցերը բարձրանում են, և այրվում է ռաբբիի ամբողջ մարմինը: Թորայի թուղթն էլ է սկսում այրվել: Բայց պատահում է մի հրաշք. Թորայի վրա գրված խոսքերի տառերը վերածվում են թռչունների և բարձրանում են երկինք: Մեծ խորհուրդ կա այս ավանդության մեջ. մարդ կարող է իր մարմնով զոհվել, բայց խոսքը, գաղափարը թռչում է և բարձրանում դեպի երկինք: Մենք նույնպես մոտավորապես այս ճակատագիրը ունեցանք: Մենք էլ այդ հրեա ռաբբիի նման խարույկների վրա այրվեցինք Սիրիայի անապատներում, ամբողջ արևմտահայությունը գրեթե զոհվեց, սակայն ոգին հայության վերապրեց, ինչպես այս ավանդության մեջի թռչունները, որոնք երկինք բարձրացան: Ահա այս թռչունները, մեր պարագային, կենդանի են այսօր, մանավանդ մեր Մայր Հայրենիքում և նաև Սփյուռքի տարածքի վրա, որտեղ դուք ունեք հայկական վարժարաններ և պահպանում եք սրբությամբ, տարածում և հնչեցնում եք ձեր մայրենի լեզուն ազատ համարձակ:

Քիչ առաջ ասացի, սիրելի երեխաներ, որ դուք հայերեն լեզուն սովորում եք Հայաստանի համար, մեր օրերի Հայաստանի, հավիտենական Հայաստանի համար: Հավատացեք այդ ճշմարտության և մնացեք հոգևոր զինվորները Մայր Հայաստանի, հոգ չէ թե ամերիկյան հողի վրա եք ապրում: Ուր էլ որ գտնվեն հայերը, մեկ ամբողջություն են կազմում նրանք, մեկ և անբաժան ամբողջություն՝ իրենց Առաքելական Եկեղեցիով, իրենց քրիստոնեական հավատքով, իրենց մայրենի լեզվով, իրենց մշակութային արժեքներով, իրենց Մայր Հայրենիքով:

Հայ մշակույթը աշխարհի արժեքավոր մշակույթներից մեկն է: Մի պատմաբան ասել է ժամանակին, որ այս աշխարհում չկան ազգություններ, այլ կան մշակույթներ: Եթե այս խոսքի մեջ ճշմարտություն կա, և կա անշուշտ, այն առավելապես պատշաճում է մեր ազգին: Մենք իսկապես վավերական ազգություն ենք մեր լեզվով ու մեր մշակույթով և հպարտ կարող ենք լինել, ուր էլ որ գտնվենք աշխարհի վրա:

Ես ուզում եմ վերջացնել իմ խոսքը՝ ոգեկոչելով պատգամը նահատակ բանաստեղծ Դանիել Վարուժանի: Կամենում եմ, սիրելի երիտասարդներ, որ դուք անգիր սովորեք այն և միշտ կրկնեք ու բացականչեք՝ «Հանճարդ հայկյան... մենք՝ զավակներդ օգոստափառ, պիտի կերտենք նոր արշալույս»:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով. ամէն»:

Վեհափառ Հայրապետը ԱՄՆ-ի Ցայց արխեպիսկոպոս թեմի թեմական խորհրդի անդամների հետ

Նույն օրը, ժամը 15-ին, Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից մշակութային սրահում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տեղի է ունենում ճաշկերույթ: Այստեղ Հայոց Հայրապետին ողջունում և բարիգալստյան խոսք է ասում տեղի հոգևոր հովիվ Տ. Մուշեղ վրդ. Թաշճյանը:

Ճաշկերույթին ներկա են նաև ԱՄՆ-ի արևելյան թեմի և Կանադայի հայոց առաջնորդներ՝ Տ. Թորգոմ և Տ. Վազգեն սրբազանները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԻ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆՑ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, առաջնորդանիստ Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում Լոս Անջելոսի և շրջակայքի հայ հոգևորականների և եկեղեցիների հոգաբարձությանց անդամների հետ:

Հակիրճ խոսքով թեմական առաջնորդը ներկայացնում է թեմում իրագործված և իրագործելի ծրագրերը: Ապա յուրաքանչյուր շրջանի հովիվ, ներկայացնելով իր շրջանի հոգաբարձության կազմը, Հայոց Հայրապետին տալիս է հակիրճ տեղեկություններ իր եկեղեցու և տվյալ շրջանի եկեղեցական ու ազգային կյանքի մասին:

Հանդիպմանը մասնակցում են նաև Հայ Միացյալ Ավետարանական Համայնքի վերապատվելիներ՝ գլխավորությամբ վերապատվելի Զամբազյանի, որը բարիգալստյան սրտառուչ խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին և նրան հանձնում մի հուշանվեր իր համայնքի կողմից:

Հանդիպմանը ներկա են նաև Հ. Բ. Ը. Միության Լոս Անջելոսի մասնաճյուղի ղեկավարներ՝ գլխավորությամբ պրն. Բարսեղ Գարթայանի և «Կոմիտաս» երգչախմբի ղեկավար պրն. Հ. Հակոբյանի:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը տալիս է իր ներշնչյալ պատգամը, որն ունկնդրվում է լարված հետաքրքրությամբ և հոգեկան բավարարությամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՇԿԵՐՈՒՅԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նոյեմբերի 7-ին, շաբաթ օրը, ժամը 19-ին, 2650 հանդիսականներ ներկա են լինում Ամենայն Հայոց կաթողիկոսի պատվին կազմակերպված մեծ ճաշկերույթին Լոս Անջելոսի «Convention Center»-ի մեջ։

Ճաշկերույթն իրենց ներկայությամբ պատվում են Կալիֆորնիայի նահանգապետ Ջորջ Դեուքմեջյանը՝ իր տիկնոջ հետ, ազգային բարերար տեր և տիկին Արշակ Տիգրանյանները, քաղաքային վարչության բարձր պաշտոնատարներ, ծերակուտականներ, նահանգային կրթական պատասխանատու դեմքեր։ Օրվա հանդիսավարն էր «The Armenian Observer» շաբաթաթերթի խմբագիր պրն. Օշին Քեշիշյանը։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը՝ պատվո սեղանի շուրջ իր կողքին ունենալով իր շքախմբի անդամներին և մեծարգո հյուրերին։

Ապա հոտնկայս ունկնդրվում է ԱՄՆ-ի ազգային հիմնը, որ կատարում է օրիորդ Սյուզան Նազարյանը։

Ճաշկերույթի ընթացքում առաջինը հանդես է գալիս իրավաբան Վոլթեր Գարապյանը՝ Նորին Սրբությանը ներկայացնելով սրահում գտնվող հայ և օտար հոգևորական և պետական բարձրաստիճան անձնավորություններին։

Ապա Հայոց Հայրապետին բարիգալստյան և ողջույնի խոսքեր են ուղղում թեմական խորհրդի ատենապետ Տ. Վարդան ավ. քհն. Գասպարյանը, Մեթոդական Եկեղեցու անունից՝ Տ. Ջեկ Մ. Թուլ եպիսկոպոսը, Անգլիական Եկեղեցու կանոնիկոս Հերոլդ Հոլթ Կրեգը, Լոս Անջելոսի քաղաքագլխի օգնական պրն. Ֆիլիպ Դեփոյանը, որը, ի նշան բացառիկ մեծարանքի, Հայոց Հայրապետին է հանձնում քաղաքի բանալին։

Ելույթ է ունենում նաև Լոս Անջելոս գավառի վերակացուների մարմնի ատենապետ Մայքլ Անտոնովիչը։

Ապա ազգային բարերար տիար Արշակ Տիգրանյանը անձամբ Հայոց Հայրապետին է ներկայացնում Կալիֆորնիայի նահանգի մեծահարգ կա-

ռալարիչ հայազգի տիար Ջորջ Դեոքմեջյանին, որը, ողջունելով Ամենայն Հայոց կաթողիկոսին իբրև «հոգևոր առաջնորդ, ուսուցիչ և բանասեր, որ ներշնչեց հավատ, հույս և հոգևոր ուղղություն աշխարհի վրա ցրված միլիոնավոր հայերին», ջերմորեն ողջագուրվում է Վեհափառ Հայրապետի հետ և հայցում Նորին Սրբության օրհնությունը:

ՋՈՐՋ ԴԵՈՔՄԵՋՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ձերդ Սրբություն Զազգեն Ա կաթողիկոս,

Հոգեշնորհ հայրեր,

Հարգելի հյուրեր, որ հատկապես եկ հրավիրվել այս երեկո,

Տիկնայք և պարոնայք,

Ուզում եմ սկսել այն հաստատումով, որ ինձ համար պատիվ էր այսօր հրավիրվել իմ լավ ընկերոջ՝ պրն. Արչի Տիգրանյանի կողմից, որն առաջին անձն էր, որ ինձ ծանոթացրեց հարավային Կալիֆոռնիայի հայկական համայնքի բազում ղեկավարների հետ, երբ ես Կալիֆոռնիայի օրենսդրական մարմնի մարտունակ նոր անդամներից էի: Ես առավել պատվված եմ զգում, որ կարող եմ այս առիթով խոսել որպես այս մեծ նահանգի կառավարիչ:

Մոտավորապես քսան տարի է անցել այն օրից, երբ Նորին Սրբությունը վերջին անգամ այցելեց Կալիֆոռնիա: Ուստի ուզում եմ բոլոր կալիֆոռնիացիների անունից նրան բարի գալուստ մաղթել մեծագույն սիրով:

Որպես ծառա Աստուծո, որպես հոգևոր առաջնորդ, ուսուցիչ և գիտնական, Նորին Սրբությունը ներշնչեց հավատքի և առաջնորդության տիպար օրինակը, մեծ հույս և ուղղություն տվեց միլիոնավոր հայերին աշխարհով մեկ:

Մենք հարուստ և հպարտության արժանի ժառանգություն ունենք, բայց մեր ժողովուրդը նաև տառապել է հալածանքներից և կեղեքումներից: Եվ տակավին մենք հարատևեցինք Աստուծո նկատմամբ մեր հավատքով և մարդկային հոգու բարությունը ուժեղ մնաց մեր մեջ: Մեր հավատքը մեր մեջ արմատավորեց ազատության սեր և մարդկային իրավունքների հարգանք ու վճռականություն՝ գոյատևելու և բարգավաճելու: Պատերազմի և խաղաղության, փոթորկի ու հանդարտության միջով հայերի յուրաքանչյուր սերունդ հույսով նայեց ապագային: Ավելի լավ ապագայի հույսն էր, որ մեզնից շատերին, մեր ծնողներին և պապերին բերեց Միացյալ Նահանգներ: Այստեղ, Ամերիկայում, մենք հայտնաբերեցինք մի անվտանգ ապաստարան մեր երազների և ձգտումների համար այն խոստման հետ, որ մեր երեխաներն ու թոռները ավելի լավ կյանք կունենան: Տակավին: Մենք գիտենք, որ աշխարհում մեր հարևաններից շատեր դեռևս չեն վայելում ազատության բերկրանքը: Նրանք արժանի են ավելի լավ կյանքի: Մի կյանք, որ դրանց հնարավորություն կտա որոշելու իրենց իսկ ճակատագիրը: Ամերիկան երկար ժամանակ եղել է մի երկիր, որ նվիրվել է մարդկության լավագույն և համարձակ իդեալներին: Եվ որպես ամերիկացի հայ, որպես աստվածասեր ժողովուրդ, որպես կարեկից մարդ արարածներ, մենք պետք է մշտապես ջանանք վստահեցնել, որ մենք երբեք չենք դադարի մարդկային իրավունքների հպարտ պահապանները լինելուց: Միշտ հավատք ունենալով Աստուծո նկատմամբ, մենք չենք հանգստանա, մինչև որ այն



Վեհափառ Հայրապետը Կալիֆորնիայի Ճանճգնապետ տիար Ջորջ Դեւոնշիրցին։ Ճաստ

ազատության և արժանավատվության երազը, որ մեր ծնողներին բերեց այս ափերը, ծննդյան իրավունքը չդառնա յուրաքանչյուր քաղաքացու, անկախ իր ցեղային պատկանելությունից ու կրոնից:

Ձերդ Սրբություն, մենք շնորհակալ ենք Ձեզնից սյն բանի համար, որ Դուք առաջնորդում եք մեզ՝ ձեռք բերելու այս երազները ողջ մարդկության համար, այն բանի համար, որ օգնում եք մեզ հասկանալու և գնահատելու այն ուժը և տեսիլքը, որ կա յուրաքանչյուրիս մեջ՝ սիրելու, հարատևելու և աստվածային գործ կատարելու համար: Դուք ցույց տվեցիք մեզ, որ այդպիսի ուժ կա բոլորիս մեջ: Եվ եթե մեր հավատքը Աստուծո նկատմամբ ուժեղ է, ապա սահման չկա այն ամենին, որ յուրաքանչյուրս ուզում է ձեռք բերել՝ մեզ համար, մեր ընտանիքների համար և մարդկության համար:

Իսկ այդ ես հաճույքն ունեմ ներկայացնելու Նորին Սրբությանը մի փոքրիկ ընծա Կալիֆոռնիայի նահանգի բնակչության կողմից, որ նա իր հետ կտանի Ս. Էջմիածին՝ որպես հիշատակ մեր մեծ նահանգ իր այցելության մասին:

Մեծապես շնորհակալ ենք Ձեզ:

Իր խոսքի ավարտին հարգարժան նահանգապետը, ի հիշատակ սույն հիշարժան հանդիպման, Հայոց Հայրապետին է նվիրում սեղանի ոսկեզօծ մի ժամացույց:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական մի ծրագիր, որի ընթացքում կատարվում են Մ. Եկմալյանի «Ով Հայոց աշխարհ», «Տեր, կեցո» (մշակումը՝ Ճ. Ալմուխյանի), Ալեմշահի «Իմ հեռավոր Հայրենիք», Ճ. Մինասյանի «Խոսք իմ որդուն», ինչպես նաև «Գեղեցիկ Ամերիկան» խմբերգերը՝ ղեկավարությամբ խմբավար Ալֆրեդ Մարտոյանի, ընկերակցությամբ դաշնակահարուհի Ռիտա Հովհաննիսյանի և մասնակցությամբ մեներգչուհի Քեչյան-Նազարյանի:

Ճաշկերույթի ավարտին խոսք է առնում թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

Տ. ՎԱՉԵ ԱՐՔԵՊՍ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Հոգեկան անհուն հրճվանքով, երախտագիտական զգացումներով և որդիական սիրով, հանուն արևմտյան թեմի հոգևորականաց դասուն, բոլոր կազմակերպությանց և հավատացյալներուն, բարի գալուստ կմաղթենք Ձերդ Ս. Օծության, որ իր հովվապետական այցելությամբ օրհնության կարժանացնե մեր թեմը:

Այս հանդիսավոր պահուն և Ձեր մյուս հանդիպումներու ընթացքին, Վեհափառ Տեր, պիտի նկատեք մեր թեմեն ներս կատարված հոգևոր, կրթական և ընկերային ծառայությանց արգասիքը, ծառայություններ, որոնք հաջողությամբ պսակվեցան շնորհիվ մեր ունեցած անխախտ հավատքին և վստահության դեպի Ձերդ Սրբությունը և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ուրկե 16 դարերե ի վեր Քրիստոսի կենարար լույսը կսփռվի համայն հայության:

Այսու մխիթարված հոգիով կրնանք հայտարարել, թե արևմտյան թեմը ներկայիս կապրի իր կազմակերպված լավագույն շրջանը՝ շնորհիվ մեր գի-

տակից ու ընկերային հոգևոր հայրերուն, բոլոր կազմակերպությունց և հավատացյալներու համագործակցության ոգիին:

Վերջին տարիներուն, պարագաներու բերումով, Միջին Արևելքեն բավական մեծ թիվով հայեր գաղթեցին Կալիֆոռնիա և անոնց մեծամասնությունը բնակություն հաստատեց Լոս Անջելոսի շրջանին մեջ: Արևմտյան թեմը իր լավագույնը կրնե՝ օգտակար հանդիսանալու համար անոնց:

Ուրախությամբ կուզենք շեշտել, թե անցնող 15 տարիներու ընթացքին թեմես ներս ունեցանք խումբ մը երիտասարդ եկեղեցականներ, օծեցինք մի քանի եկեղեցիներ, և ներկայիս մի քանի ուրիշ եկեղեցիներ ալ կառուցման ընթացքի մեջ կգտնվին:

Արևմտյան թեմեն ներս մեղվաջան աշխատանք կտանին Տիկնանց Միությունը և Երիտասարդաց Կազմակերպությունը՝ իրենց բազմաթիվ մասնաճյուղերով: Անոնք ոգիրումով և սիրով կծառայեն Հայց. Եկեղեցվո և կկազմակերպեն կրոնական, մշակութային և ընկերային ու մարզական ձեռնարկներ: Իսկ մեր ժողովուրդին հետ սերտ կապ հաստատելու նպատակով, 1979-են ի վեր կհրատարակենք «Մայր Եկեղեցի» պաշտոնաթերթը:

Վեհափառ Տեր, մեր թեմը քաջաբար վճռած է ունենալ առաջնորդարանի իր նոր շենքը և Մայր եկեղեցին՝ արդիական բոլոր հարմարություններով: Կհուսանք Ձերդ Սրբության օրհնություններով և հավատացյալներու օժանդակությամբ, մոտ ապագային կիրագործվի մեր այս խիստ կարևոր ծրագիրը:

Կազմակերպչական և վարչական աշխատանքներու համընթաց շատ բնական կերպով Միջին Արևելքեն գաղթած հայությունը մեր թեմը դրավ ծանր պարտավորության ներքև՝ տիրող անորոշ, անկայուն և անբնական կացության պատճառավ:

Ասոր դեմ-հանդիման կգտնենք երրորդ և չորրորդ ամերիկահայ սերունդը, որոնք իրենց կարգին հայերեն լեզուն գրեթե ամբողջությամբ կորսնցուցած են և որոշ պահանջներ կներկայացնեն ընկերային, բարոյական և կրոնական հարցերու մասին ու լուծում և ուղղություն կակնկալեն Հայց. Եկեղեցվո ղեկավար մարմնեն:

Հատկապես 20-րդ դարու երկրորդ կեսեն սկսյալ Ամերիկայի մեջ ծանոթ պատճառներով մեր կրոնական առաքելական աշխատանքները մեծ տոկոսով բարդված են: Սակայն մենք ուխտած և որոշած ենք անզիջող վճռակամությամբ առաջնորդելու մեր ժողովուրդը և ամուր պահելու քրիստոնեական մեր սուրբ հավատքը և ազգային թանկագին փառավոր ժառանգությունը:

Սիրելի սեղանակիցներ, բոլորիս համար այսօր բացառիկ պատիվ մըն է մեր մեջ ունենալ ազգընտիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոսը, որ արժանավոր Գահակալն է Ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռին վրա: Նորին Սրբությունը 130-րդ Ամենայն Հայոց կաթողիկոսն է մեր Եկեղեցվո, որ ավելի քան 32 տարիներե ի վեր որպես քաջ Հովվապետ՝ ամբողջ հայ ժողովուրդը կկապե Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Մայր Հայրենիքին: Ազգովին երախտապարտ ենք, որ Վեհափառ Հայրապետը Հայց. Եկեղեցին միշտ բարձր մակարդակի և վեհության վրա պահեց հաչս հայ և օտար շրջանակներու:

Նորին Ս. Օծությունը բացառիկ հարգանքի և սիրո կարժանանա Մայր Հայրենիքի մեջ: Կրնանք ըսել, որ իր մեջ մարմնավորված կտեսնենք վերածաղկյալ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Մայր Հայրենիքը, ուր մեր ժո-

ղովուրդը ապահով և խաղաղ կերպով կապրի և կստեղծագործե։ Նորին Սրբությունը ապահով և խաղաղ միջոցներով կհետապնդե մեր հողային արդար դատը և պետական բարձրաստիճան անձնավորությանց հետ իր հանդիպումներու ընթացքին միշտ կբարձրացնե իրավատերի իր արդար ձայնը։ Վերջերս, գլխավորաբար Վեհափառ Հայրապետի կոչին ընդառաջելով, Եվրոպական Խորհրդարանը պաշտոնապես ճանչցավ հայկական ցեղասպանության իրականությունը և արդարություն պահանջեց մեր ժողովուրդին համար։

Հայ ժողովուրդը հավետ երախտագիտական ոգիով միշտ պիտի հիշե Հայց. Եկեղեցվո և հայ ժողովուրդի վերազարթոնքի ավելի քան 80 տարիներու շրջանը։ Նորին Սրբության միջոցավ առավել ևս ամրապնդվեցավ ու խարսխվեցավ Հայց. Եկեղեցվո Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գերագահությունը և Հայրենիք-Սփյուռք երջանիկ միությունը։

Նորին Սրբությունը իր գահակալության առաջին օրեն իսկ լծվեցավ շինարարական աշխատանքի։ Ան չբավականացավ միայն շենքեր շինել տալով, այլ կերտեց հոգևոր տաճարներ, այսինքն պատրաստեց գիտակից և նվիրյալ բազմաթիվ եկեղեցականներ, որոնք կծառայեն Մայր Հայրենիքի և արտասահմանի մեջ։ Նորին Սրբության հսկողությամբ տպվեցան Նոր Կտակարանը, գունավոր ալբոմներ և արժեքավոր այլ գիրքեր, որոնք գեղեցիկ ճաշակի մտահղացումներ են։ Հայ ժողովուրդը բախտավոր է, որ Վազգեն Առաջինի նման աստվածառաք Հայրապետ մը ունի Ս. Գրիգոր Լուսավորչի գահին վրա։

Կաղոթենք Բարձրյալն Աստուծո, որ Ձերդ Սրբության պարգևե քաջառողջություն և արևշատ տարիներ, որպեսզի Ձերդ Վեհափառության հովվապետական հովանիին ներքև առավել ևս պայծառանան և բարգավաճին Հայց. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և համայն հայ ժողովուրդը ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի»։

Վերջում, խանդավառ և սրտագին ծափերի մեջ, հետևյալ հայրական պատգամն է տալիս Նորին Սրբությունը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ

Իմ սիրտը այս պահուն ալեկոծված է քաղցր հուզումներով։ Անհունորեն մխիթարված է իմ հոգին՝ տեսնելով այս հիասքանչ տեսարանը, երբ բազմահազար մեր ժողովրդի զավակներ կուգան իրենց Հայրապետին մատուցելու իրենց որդիական սերը։ Ձեր այս գնահատանքի ցնծագին արտահայտությունները իմ անձի մեջեն կուղղվին դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որի առաջին սպասավորն եմ ես իմ տկար ուժերով։ Եվ եթե այս 32 տարիներու ընթացքին ես բախտը ունեցա կարևոր եկեղեցաշեն, հոգեշեն իրագործումներ կատարելու, կպարտիմ ոչ թե իմ անձին, այլ այն ուժին, զոր ես ստացա Ս. Էջմիածնի բազմադարյան սուրբ քարերեն։ Եվ եթե ես արժանիք մը ունեցա, այդ այն եղավ, որ ես իմ հոգիով ու սրտով անձնատուր եղա Ս. Էջմիածնին և հայրենի հողին։

Կրկին շնորհակալություն ձեր այս սքանչելի վերաբերմունքին և սիրույն համար։ Պիտի վերադառնամ ավելի զորացած, ավելի երիտասար-

դացած գուցե, համենայն դեպս ավելի լավատես դեպի մեր Սուրբ Եկեղեցվո և մեր ազգի ապագան:

Ես հոգեպես մխիթարված եմ այսօր, որ մեր մեջ ունինք քուր Եկեղեցիներու բարձրաստիճան հոգևորականներ, նաև պետական, քաղաքային իշխանությանց բարձրաստիճան պաշտոնատարներ, որոնցից ոմանք խոսք առին և իրենց հարգանքը մատուցեցին մեր Եկեղեցվո և ձեր համայնքին հանդեպ: Հանուն մեր Եկեղեցվո և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իմ երախտագիտությունը կհայտնեմ բոլոր այս հարգարժան անձնավորություններուն:

Անշուշտ ինձ համար հրճվանքի և հպարտության քացառիկ առիթ մը հանդիսացավ այս հավաքույթը, ուր հանդիպեցա, առաջին անգամ ըլլալով, ձեր սիրեցյալ նահանգապետ մեծանարգ տիար Ջորջ Դեռքմեջյանին: Շնորհակալություն նաև իր շատ իմաստալից և հարգալից խոսքերուն համար մեր Եկեղեցվո և Ս. Էջմիածնի հանդեպ: Կուզեի վկայություն բերել նաև Հայաստանեն, որ, իրոք, համայն աշխարհի հայությունը հպարտ է իրմով:

Հարգելի պրն. Դեռքմեջյան, Դուք ամենաբարձր մակարդակի վրա գտնվող պաշտոնատարն եք այս երկրի մեջ իբրև ամերիկյան ամենամեծ նահանգի նահանգապետը: Կարծեմ չեմ սխալիր արտահայտվելով, որ առաջին անգամն է, որ հայ ծագումով ամերիկացի քաղաքացի մը կհասնի նման բարձր աստիճանի: Սակայն հայ ժողովուրդի պատմության մեջ Դուք միակը չեք, որ նմանը բարձր պատասխանատվության աստիճանին հասած եք: Մեր ժողովուրդի քաղաքական դժբախտություններու հետևանքով, Հայաստանեն քանի անգամներ, դարերու ընթացքին, զանգվածային արտագաղթ եղած է, և շատ հայեր, հազարավոր, տասնյակ հազարավոր ընտանիքներ ցրված են ու հաստատված հյուրընկալ երկիրներու մեջ, տակավին նույնիսկ 7-րդ դարեն սկսյալ, բայց մանավանդ 11-րդ դարեն հետո, թե՛ Միջին Արևելք, թե՛ Լեհաստան, թե՛ Բալկանյան երկիրներ, թե՛ Եգիպտոս և նույնիսկ մասամբ Եվրոպա:

Եվ ամեն տեղ, ուր հայերը կայք հաստատեցին, մնացին հավատարիմ ոչ միայն իրենց Մայր Եկեղեցիին, այլ եղան նաև հավատարիմ քաղաքացիները հյուրընկալ երկիրներու: Ավելին, անոնցմե ոմանք հասան իսկապես բարձրագույն պաշտոններու այդ երկիրներու ծառայության ճանապարհի վրա: Բազմաթիվ պատմական օրինակներ կարող եմ նշել այստեղ: Կբավականանամ բերելով մի քանի վկայություններ: Բյուզանդական կայսրության շրջանին 18 կայսրեր եղած են ծագումով հայեր: Մոլդավիան, այսօր՝ Ռումանիա, 17-րդ դարուն ունեցած է իշխան մը Յոհան անունով, հայ ծագումով, որ ռումեն պատմության մեջ կկոչվի Յոհան Հայը: Ան իշխած է երեք տարի միայն, սակայն հերոսական անուն թողած է ռումանական պատմության մեջ, որովհետև հերոսի մահով ինկած է թուրքերու դեմ պատերազմի մը ընթացքին: Եգիպտոսի անկախություն ստանալեն հետո առաջին վարչապետը եղած է հայ հայտնի Նուբար փաշան: Լեհաստանի պատերազմի նախօրյակին արտաքին գործոց նախարար դոկտ. Բեքը հայ եղած է: Այսպիսի օրինակներ տակավին շատ կարող ենք հիշել, երբ մեր ժողովուրդի զավակները իրենց բնակած երկիրներու մեջ ոչ միայն պետական-քաղաքական, այլև մշակութային և տնտեսական կյանքի մեջ բացառիկ նպաստ մատուցած և մեծ մարդիկ տված են այդ երկիրներուն:

Այնպես որ, սիրելի տիար Ջորջ Դեռքմեջյան, Դուք պատմական հայկական ավանդությունն է, որ կշարունակեք Միացյալ Նահանգներու մեջ: Հայ կյանքի երկնակամարի վրա Դուք փայլող աստղն եք հիմա բոլորիս

համար։ Ս. Էջմիածնեն Ձեզի կբերեմ իմ հարգանքը, իմ քաջալերանքը, իմ մաղթանքը, որ Դուք շարունակեք Ձեր սքանչելի շինարար իրագործումները ձեր այս մեծ նահանգին մեջ։ Կբերեմ նաև իմ օրհնությունը Ձեզի և Ձեր ընտանիքին, Ձեր ազնիվ տիկնոջը։ Ձեզի երկար կյանք և շատ արև։ Այս առիթով խնդրեմ ընդունիք այս փոքրիկ հիշատակը, հայկական ոճով սափոր մը՝ Հայաստանի մեջ պատրաստված, որուն մեկ երեսին կա Ս. Էջմիածինը, մյուս երեսին՝ մեր Արարատը հավիտենական, և կեդրոնը խաչի նշանը՝ իբրև արտահայտություն մեր հավատքի։

Ինձ համար խղճի պարտք կհամարեմ ընդգծել այստեղ նաև ներկայությունը մեծահարգ տիար Արշակ Տիգրանյանի, որ ձեր համայնքի շինարար հայրն է բազում տարիներե ի վեր և որ այնքան մեծ վաստակ ունի այս շրջանի եկեղեցական և կրթական կյանքի հառաջդիմության գործի մեջ։ Հարգելի պրն. Տիգրանյան, բարձրորեն կգնահատեմ Ձեր կրթանվեր մեծ սխրանքը և կվստահեցնեմ Ձեզ, որ Հայաստանի մեջ ամբողջ մեր ժողովուրդը ամեն մեկ հայկական դպրոց շինվելու առիթով մասնավոր հրճվանք և ուրախություն կապրի, ամեն մեկ վարժարան նկատելով հայ կյանքի արևածագ մը արտասահմանի պայմաններու մեջ։ Կուզեի այս առիթով Ձեզի հայկական մանրանկար մը ներկայացնել՝ իմ օրհնությամբ։

Պարտք կզգամ նաև իմ հարգանքի խոսքը ուղղել հարգելի Վոլթեր Գարապյանին, որ նախագահն է իմ այցելության առիթով կազմված ընդունելության հանձնաժողովի և իրեն հատուկ իմաստությամբ, եռանդով և հեղինակությամբ, բոլոր այս ընդունելությանց ծրագիրները, իր շուրջ հավաքված ընկերներով մշակին, իրագործած է փայլուն հաջողությամբ։ Կբերեմ Ս. Էջմիածնեն Աստուծո օրհնությունը իրեն և իր գավակներուն և կուզեմ հանձնել իրեն այս փոքրիկ հիշատակը, որ կներկայացնե էջ մը 1814 թվ. մեր մանրանկարներեն։

Ես անշուշտ պետք է շարունակեմ իմ գնահատանքի խոսքը՝ այս անգամ իմ հայացքը դարձնելով դեպի աջ, ուր նստած է ձեր սիրելյալ թեմական առաջնորդը՝ գերաշնորհ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյան, որ բազմաթիվ տարիներե ի վեր ղեկավարն է և հոգևոր ու վարչական առաջնորդը այս ընդարձակ թեմին և որու պաշտոնավարության 16 տարիներուն կատարված են բազմաթիվ եկեղեցաշեն, դպրոցաշեն իրագործումներ։ Ես իմ այս այցելությամբ մանավանդ կենդանի աչքով տեսա իր այդ իրագործումները և սրտանց կշնորհավորեմ զինքը, խոր գնահատանքով։ Ձեզի, սիրելի սրբազան, կբերեմ օրհնություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն, մաղթելով անսպառ ուժ ու եռանդ։ Տակավին երկար տարիներ թող ճառագայթեն Ձեր եռանդը, Ձեր նվիրումը, որպեսզի բարձունքե բարձունք տանիք Կալիֆոռնիո հայ եկեղեցական-համայնքային կյանքը։ Հատկապես կմաղթեմ, որ շուտով հաջողությամբ պսակվի Ձեր և թեմական խորհուրդին մեծ ծրագիրը՝ ձեր մեծ թեմը օժտելու նոր Մայր եկեղեցիով մը, որ պիտի հանդիսանա, կկարծեմ, Լոս Անջելոս այս հսկա, գեղեցիկ քաղաքին զարդերեն մեկը, և որով Հայ Եկեղեցվո խաչ մը ևս պիտի բարձրանա դեպի երկինք։ Վստահ եմ, որ դուք բոլորդ, նաև քաղաքային պատկան իշխանությունները պիտի օգնության ձեռք երկարեն, որպեսզի այս սքանչելի եկեղեցաշեն գործը իր ավարտին հասնի մոտ ապագային։ Պիտի փափագեի այդ եկեղեցվո օծումին անձնապես ներկա գտնվիլ, մանավանդ որ ձեր քաղաքի բանալին մոտս է և հետս պիտի տանիմ։

Վեհափառ Հայրապետը օրհնում է տիար Ջորջ Ռեդքլիֆին

Իբրև առաջին սպասավորը Հայ Առաքելական Եկեղեցվո, պարտք կզգամ այսօր բերելու ձեզի չորս վկայություններ։ Առաջին վկայությունն այն է, որ Հայ Առաքելական Եկեղեցին բազում դարեր տառապանքներ և հալածանքներ կրելե հետո, 1915-ի օսմանյան ցեղասպանության ավելի քան երկու միլիոն զոհեր տալե հետո, աստվածային տնօրինությամբ, հրաշքի համազոր պայմաններու մեջ, կարողացավ իր ժողովուրդի մնացած կեսին հետ վերածնունդ ապրիլ թե՛ Արևելյան Հայաստանի տարածքի վրա, հիմնադրումովը այսօրվա Խորհրդային Հայկական Հանրապետության, թե՛ հայ Սփյուռքի տարածքի վրա։ Այդ տխուր օրերը հիշեցնող փաստաթուղթ մը բերած եմ ինձ հետ Ս. Էջմիածնե։ Հայրապետական կոնդակ մըն է՝ ստորագրված Գևորգ Ե կաթողիկոսի կողմե, 11 հունվար 1916-ին, աճավոր տարի մը հայ ժողովուրդի համար, երբ ցեղասպանության հետևանքով ամբողջ Թրքահայաստանի հայությունը բնաջնջված էր։ Վան-Վասպուրականի շրջանի հայությունը, շուրջ 250.000 հոգի, շնորհիվ Վանի քաջերու ինքնապաշտպանության և ապա ռուսական բանակի հառաջխաղացումին, կրցավ փրկվիլ օսմանյան ցեղասպանութենե և փախչիլ Արևելյան Հայաստան՝ թշվառ վիճակի մեջ։ Ամեն օր շատ գաղթականներ հիվանդութենե, անոթութենե կմեռնեին, և Երևանի փողոցները լեցուն էին անտեր-անտիրական որբերով։ Այդ օրերուն Հայոց կաթողիկոսը իր հայացքը ուղղած էր դեպի Ամերիկա, ուր կկազմակերպվեր օգնության մեծ գործ մը ամերիկյան քույր Եկեղեցիներու ղեկավարությամբ, ամերիկյան օգնության կազմակերպություններու միջոցավ։ Այդ օրերուն է, որ Գևորգ Ե կաթողիկոս կոնդակ մը կուղարկե Հյուսիսային Ամերիկայի այն ժամանակվա առաջնորդ Տ. Արսեն ծ. վրդ. Վեհունիին՝ իր երախտագիտությունը հայտնելով ամերիկյան մարդասեր ժողովուրդին և մանավանդ ամերիկացի հոգևորականներուն, որոնք օգնության կհասնեին հայ թշվառներուն։ Թույլ տվեք փոքրիկ հատված մը կարդալ այդ գրութենե.

«Մի ինչ-որ յուրօրինակ սիրո նշան ենք տեսնում Ամերիկայում ընդհանրական հանգանակություն կատարելու որոշման մեջ անօրենների ձեռքից ազատվածներին փրկելու, որբերին և այրիներին, ծերերին, անդամալույծներին, ամսականով հիվանդ կանանց, և ոչ ոք չունեցողներուն խնամելու համար, որպեսզի թերևս կարողանանք կենդանության ոգի ներարկել նրանց մեջ մեր ցրված հոտը ի մի հավաքելու, չորացած ոսկորները միմյանց կցելու և նոր ազգ, նոր ժողովուրդ ոտքի կանգնեցնելու համար։ Մեր տառապյալ որդիների թշվառության չափը արդյոք պիտի կարողանա՞նք որոշել խոսքով. ո՞վ դրեց ծովի սահմանը, կամ ո՞վ չափեց աշխարհը, որ մենք էլ կարողանանք գտնել մեր վրա թափված տառապանքների չափը, կշիռը, սահմանը, կամ կշռել չքավորության կամ կարիքների ինչքան լինելը. իմ ցրված ու վտարանդի որդիները, ոմանք սահմանի այս կողմում, մեզ մոտ, ոմանք էլ Սիրիայի և Միջագետքի խորշակեզ վայրերում միշտ մեր օգնության և գթառատ հոգածության են սպասում. անսահման են նրանց կարիքները, իսկ մեր հնարավորությունները անբավարար՝ նրանց օգնության հասնելու համար»։

Այս շատ հուզիչ կոնդակով վշտալի հայրապետը իր երախտագիտությունը կհայտնե ամերիկյան մարդասեր ժողովուրդին։

Մեր օրերուն մեր Եկեղեցվո զավակներու թիվն է շուրջ յոթը միլիոն. երեք ու կես միլիոն Սովետական Հայաստանի մեջ, մեկ և կես միլիոն սովետական դրացի հանրապետություններու մեջ, և մոտ երկու միլիոն ար-

տասահմանի տարբեր երկիրներու մեջ, մեծագույն հայ համայնքը գտնվելով ձեր երկրին մեջ, ուր ավելի քան յոթը հարյուր հազար հայեր կապրին:

Հայ ժողովուրդի պատմական կոչումն է հավատարիմ մնալ Քրիստոսի Ավետարանին: 5-րդ դարուն պարսիկները հարձակեցան Հայաստանի վրա՝ արմատախիլ ընելու քրիստոնեական կրոնը: Հայերը պատասխանեցին՝ ըսելով. «Մենք քրիստոնեությունը ընդունած ենք ոչ իբրև արտաքին հագուստ, այլ ան մեր մարմինն է և հոգին, և մեռնիլ Քրիստոսի համար, մեզի համար շահ է»: Հետևաբար, սիրելի հայեր, ուր որ գտնվիք աշխարհի վրա, մնացեք հավատարիմ ձեր այս քրիստոնեական հավատքին:

Իմ երկրորդ վկայությունը այն է, որ Առաքելական մեր Հայ Եկեղեցին կապրի վերանորոգման և վերաշինության նոր շրջան մը մեր Մայր Հայրենիքի մեջ իր Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, իր պատմական հոչակավոր վանքերով, ուխտատեղիներով, շեն ու պայծառ եկեղեցիներով, աստվածաբանական ճեմարանով, իր հավատավոր ու զարգացած միաբաններով, կրոնական հրատարակություններով և մանավանդ իր հավատացյալ ժողովուրդի լայն զանգվածներով, որոնք իրենց հոգեկան սնունդը և մխիթարությունը կստանան ազատ ու անկաշկանդ: Հայաստանի մեջ Եկեղեցին հարգանքի ու հոգածության առարկա է ոչ միայն հավատացյալներու, այլ նաև մեր պետական իշխանությանց կողմե: Հեռավոր անցյալի թյուրիմացությունները և դժվարությունները շատոնց չքացած են:

Իմ երրորդ վկայությունը այն է, որ Հայ Եկեղեցին, մեր օրերուն, իր ժողովուրդի զավակներու զգացումներուն և իդեալներուն հավատարիմ՝ թե՛ Հայաստանի և թե՛ Մփյուռքի տարածքի վրա վառ կպահե գիտակցությունը իր հերոսական պատմության և ազգային մշակույթի արժեքներուն և սուրբ կպահպանե հիշատակը՝ հավատքի, հայրենիքի և ազատության համար զոհված իր հերոսներուն և նահատակներուն՝ 5-րդ դարու Վարդանանց քաջերեն սկսյալ մինչև Սարդարապատի հերոսները: Հայ Եկեղեցին սուրբ կպահպանե մանավանդ հիշատակը երկու միլիոն իր հավատացյալ զավակներուն, որոնք զոհ գացին 1915 թ. օսմանյան պետության կազմակերպած ցեղասպանության:

Պարտք կզգամ նաև այստեղ բերել չորրորդ վկայություն մը. այն, որ Հայ Եկեղեցին, իր գլուխն ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, անձանձրույթ կաղոթե և կգործե ի խնդիր աշխարհի խաղաղության պահպանման, ի խնդիր ընդհանուր զինաթափման, ատոմական զենքերու ոչնչացման, ի խնդիր ազգերու համերաշխ գոյակցության:

Քանի որ կգտնվինք շատ մոտիկ Սան Ֆրանցիսկո քաղաքին, չենք կրնար չհիշել, որ այնտեղ 1945-ին հաղթական պետությունները ստորագրեցին պատմական փաստաթուղթ մը, ուխտագիր մը, ուր ըսված է. «Ուխտենք ցուցաբերել հանդուրժողականություն, ապրիլ խաղաղությամբ մեկս մյուսի հետ, բարիդրացիական ոգիով, միացնել մեր ուժերը՝ պահպանելու համար միջազգային խաղաղությունը և անվտանգությունը:

Այս ուխտագիրը, այս իդեալը հրամայականորեն այժմեական է մեր օրերուն, և մենք աղոթող ենք, որ աշխարհի պետությունները և մանավանդ Միացյալ Նահանգներն ու Սովետական Միությունը Սան Ֆրանցիսկոյի ուխտագրի ոգիով ձեռք-ձեռքի տան և կառուցանեն նոր աշխարհ մը՝ առանց սուրի, առանց հուրի, Եսայի մարգարեի տեսիլքով: Հայ Եկեղեցին պիտի մնա միշտ աղոթող, որ մեծ մարգարեի տեսիլքը կյանքի կոչվի մեր տառապյալ երկրագունդին վրա: Ես, իբրև առաջին սպասավորը Հայ Եկեղե-

ցիին, մտահոգված եմ մանավանդ, որովհետև, նկատի ունենալով մեր երկրի՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը, համաշխարհային նոր պատերազմի մը պարագային շատ հավանական է, որ մեր ժողովուրդը ամբողջապես բնաջնջվի: Եմ՝ Ամենայն Հայոց Հայրապետ, Աստուծո առաջ պատասխանատու եմ իմ խնամքին հանձնված Եկեղեցիին և ժողովուրդի կյանքին անվտանգության համար:

Սիրելի հավատացյալներ, նաև ձեր ընտանեկան, ընկերային կյանքի մեջ, նաև իբրև օրինապահ քաղաքացիները ձեր ամերիկյան երկրի, ամեն ինչ կատարեցեք սիրով միաբան և խաղաղությամբ, իբրև եղբայրներ հարազատ, իբրև որդիներ միևնույն Հայր Աստուծո: Ս. Էջմիածնի կամարներու ներքև ես մշտապես պիտի աղոթեմ, որ ձեր հոգիները լուսավորված մնան Քրիստոսի Ավետարանի լույսով, հավատարիմ մեր Մայր Եկեղեցիին:

«Օրհնեալ եղերուք ի շնորհաց Ս. Հոգւոյն, երթայք խաղաղութեամբ, և Տէր Յիսուս եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ»: Ամեն:

Վեհափառ Հայրապետը Ամերիկայի Արևելյան թեմի Ընդհանուր ժողովի դահլիճում՝ պատգամավորների հետ



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ «ՀՈԼԻՎՈՒԴ ԲՈԼ»-ՈՒՄ

Նոյեմբերի 8-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 8-ից, այստեղ, ջերմեռանդ հավատքով և վառ հայրենասիրությամբ առլեցուն, Լոս Անջելոսի հայությունը, ավելի քան 15 հազար հոգի, ալիք-ալիք իրար հաջորդելով, գալիս-հավաքվում են «Հոլիվուդ Բոլ»-ի ամֆիթատրոնաձև բացօթյա ընդարձակ հանդիսավայրը և տեղ գրավում շարք առ շարք դասավորված աթոռների վրա՝ մասնակցելու ս. պատարագի արարողությանը և լսելու Ամենայն Հայոց կաթողիկոսի հոգեշահ և հայրենասիրական զգացումներով տոգորված վեհիմաստ քարոզը:

Օրվա պատարագիչն է Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա են նաև քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ: Հավանաբար առաջին անգամն էր, որ այսքան հայորդիներ, համատեղ խմբված, ներկա էին գտնվում բացօթյա մատուցված հայոց ս. պատարագի հոգեզմայլ արարողությանը:

Պատարագի Սուրբ Սեղանի ետնում ավելի քան երկու հարյուր անդամներից բաղկացած երկսեռ երգչախումբը, կազմ ու պատրաստ, սպասում է Հայոց Հայրապետի ժամանմանը: Շուտով Ամենայն Հայոց Հայրապետը, եպիսկոպոսների, քահանա հայրերի, սարկավագների, խաչվառաքիրների, բուրվառակիրների և քշոցակիրների հանդիսավոր թափորով և «Հրաշափառ»-ով, ծովածավալ ժողովրդի ցնծագին ծափերի տակ, առաջնորդվում է դեպի պատարագի խորան և գրավում իր գահը:

Երգչախումբը, խմբավար Ստեփան Կեոզյումյանի ղեկավարությամբ, կատարում է Կոմիտասյան պատարագի քառաձայն երգեցողությունը:

Հանդիսավոր և ազդեցիկ է պահը: Բազմահազար հայ հավատացյալներ, վերացած, հուզումնախառն ապրումներով հետևում են եպիսկոպոսական այս մեծահանդես պատարագին:



Բանվորությունը և գյուղացիությունը Հայաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեի նախագահ Ս. Գրիգորյանի հետ

Ի տես տարասփյուռ իր հոգևոր զավակների հարգանքի և հավատարմության համաժողովրդական այս արտահայտության, հուզված, վեհափառ Հայրապետը «Հայր մեր»-ից առաջ հայրենասիրական խորունկ ապրումով և ներշնչումով արտասանում է հետևյալ հոգելից քարոզը.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ «ՀՈԼԻՎՈՒԴ ԲՈԼ»-ՈՒՄ

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Ես փառք կուտամ Աստուծոյ, որ կգտնվիմ այս պահուն այս հիասքանչ տեսարանին առջև, ուր համախմբված եք հազար-հազարներով՝ ձեր մասնակցությունը բերելու սուրբ պատարագին, որ կմատուցվի այստեղ, այս պայծառ երկնքի ու արևի շողերուն ներքև: Իմ առաջին աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված միշտ պայծառ ու խաղաղ պահե ամերիկյան երկինքը, և միշտ անոր արևը շողա առատ լուսարձակումներով:

Սիրելի հավատացյալներ, Հայ Եկեղեցվո հարազատ զավակներ, որ ճակատագրի բերումով կապրիք այս մեծ երկրին, նոր աշխարհին մեջ, կփափագիմ, որ ուղիղ գնահատեք ձեր բարօր կյանքը և մնաք օրինապահ և շինարար քաղաքացիները ամերիկյան հայրենիքին: Ես երեկ երեկոյան, ճաշկերույթի ընթացքին, պատեհությունը ունեցա գրկախառնվելու ձեր նահանգապետի՝ Ջորջ Դեոքմեջյանի հետ, և իմ օրհնությունը տալու իրեն և իր ընտանիքին, իմ օրհնությունը մանավանդ իր շինարար առաքելության, զոր ինք այնքան շռայլությամբ կծավալե այս մեծագույն նահանգին մեջ, արժանի դառնալով համայն Կալիֆոռնիո բնակչության հարգանքին և սիրույն: Ես իր անձին մեջ կտեսնեմ խորհրդանիշը հայ ժողովուրդի զավակներու արժանավորության: Իսկապես, ոչ միայն դուք այստեղ, այլ ողջ հայությունը աշխարհի հպարտ է Ջորջ Դեոքմեջյանով: Երկար կյանք և շատ արև իրեն և նորանոր հաջողություններ, հիրականացումն Կալիֆոռնիո շինարարական նոր ծրագիրներու:

Սիրելիներ, իմ պատգամն է ձեզի, որ մնալով հավատարիմ քաղաքացիները ամերիկյան հայրենիքին, սրբությամբ պահպանեք ձեր հոգևոր և մշակութային ինքնությունը, մնաք հավատարիմ զավակները Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, մնաք հավատարիմ ձեր ազգային-մշակութային ժառանգությանց, ձեր մայրենի լեզվին և հայկական արդար երազանքներուն: Ես գիտեմ, որ արտասահմանի տարածքի վրա հայերու մեջ կան տարակարծություններ, գաղափարախոսական տարբեր հոսանքներ, բազմաթիվ միություններ, ընկերակցություններ, ինչ որ բնական երևույթ կնկատեմ, եթե անոնք արտահայտվին ողջմտության սահմաններուն մեջ: Բայց այդ բոլորեն վեր, իմ իղձն է և իմ աղոթքը, որ Ափյուռքի համայն հայությունը մնա մեկ և անբաժան իր Եկեղեցիով և Սուրբ Էջմիածնով, մեկ և անբաժան իր Մայր Հայրենիքի պայծառ պատկերով, մեկ և անբաժան Ապրիլ 24-ով, մեկ և անբաժան Սարդարապատի հաղթանակով, մեկ և անբաժան սրբազան Արարատով, մեկ և անբաժան իր երազանքով, թե պիտի գա օրը, երբ համայն հայությունը պիտի համախմբվի Արարատի շուրջբոլորը: Բանաստեղծին խոսքերով՝ «Եվ պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած»: Իսկապես հրաշք մը պիտի ըլլա այդ օրը: Բայց մենք կհավատանք հրաշքներուն: Մեր պատմության ընթացքին հայ ազգը բա-

զում անգամներ հրաշքներ կյանքի կոչած է: Եվ ով որ հայոց պատմության հրաշքներուն չի հավատար, անիկա իրապաշտ չէ:

Եվ ասաց Աստված. «Եղիցի լոյս և եղև լոյս»: Եվ Աստված ըսավ. «Լույս թող ըլլա և լույս եղավ»: Այսպես սահա ծնունդ առավ աշխարհի ստեղծագործությունը, լույսի ճառագայթումով: Ապա երկրորդ «եղիցի լույս» մը եղավ, նույնպես աստվածային տնօրինությամբ, ծնունդը Ադամին, ծնունդը առաջին մարդուն՝ մարմնով ու հոգիով: Այդ լույսով մարդկությունը ապրեցավ, աճեցավ ու զարգացավ դարեր ու դարեր, շատ անգամ անկումներով և նույնիսկ Աստուծո հանդեպ ապերախտությամբ, բայց նաև սխրագործություններով, հերոսություններով, ստեղծագործ արարքներու բարոյական հաղթանակներով: Ս. Գրքի պատմությունը պատմությունն է այդ լույսի ծավալման ու ծաղկման՝ մարդկային կյանքի ճանապարհի վրա: Մեր ազգը հեռու չմնաց այդ լույսի ճառագայթումեն: Հայ ժողովուրդը իր ուրույն տեղը ունի և մինչև այսօր կպահպանե այդ լույսի ոգեկանությունը: Նախ մեր հայրենի հողով՝ Հայաստան աշխարհը սուրբգրական երկիր մըն է: Ինչպես գիտեք, անոր վրա հաստատվեցավ Նոյ նահապետ իր զավակներով, իջնելով Արարատեն, և հոն առաջին անգամ մշակեց խաղողը և գինի պատրաստեց: Նոյի սերունդները աճեցան, զարգացան և տարածվեցան աշխարհով մեկ դեպի բոլոր հորիզոնները: Հայ ժողովուրդը մնաց հավատարիմ Արարատին, կառչած մնաց այդ սուրբ լեռան և իր պատմությունը ստեղծեց բազում հիասքանչ իրագործումներով: Հայաստան սուրբգրական երկիրը եղավ նաև առաջին դարուն, երբ Քրիստոսի լույսը հասավ այնտեղ: Հայերը իրենց սիրտը բացին այդ լույսին Թադեոս և Բարթողիմեոս առաքյալներու քարոզչության շրջանին: Եվ կարճ ժամանակ անց՝ հայ ժողովուրդը, առաջին անգամ ըլլալով պատմության բեմի վրա, քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն: Ստեղծեց իր գիրն ու գրականությունը, մշակույթը, Քրիստոսի լույսի շաղախումով: Ինչպես անցյալ օր երեխաներուն կբացատրեի, բացառիկ երևույթ է համաշխարհային պատմության մեջ մեր պարագան. հայ ժողովուրդը Քրիստոսի Ավետարանով կազմավորեց իր ոգեկանությունը, իր հոգին, կաղապարեց իր մտածումը, իր հանճարը, ստեղծեց իր ոճը ստեղծագործության բոլոր մակարդակներու վրա: Կարծեք թե հայ ժողովուրդը Քրիստոսին կսպասեր Քրիստոսի ծնունդեն ալ առաջ: Հիշենք նաև հրաշք տեսիլքը Ս. Գրիգոր Լուսավորչի, որուն հավատաց հայ ժողովուրդը մինչև այսօր, երբ Հիսուսի լուսեղեն կերպարանքը իջավ Արարատյան դաշտ և հիմնեց հայոց առաջին աղոթքի տունը՝ Ս. Էջմիածինը: Անհավասիկ վկայություն մը ևս հայոց քրիստոնեության վավերականության: Կարճ ժամանակ անց, Արևելքեն մեր դրացիները՝ կրակապաշտ պարսիկները, հարձակեցան Հայաստանի վրա, որպեսզի արմատախիլ ընեն քրիստոնեական կրոնը հայ ժողովուրդի կյանքեն: Հայերը պաշտպանվեցան, նույնիսկ նախընտրեցին մեռնիլ, քան թե փոխել իրենց կրոնը՝ ըսելով. «Քրիստոսի համար մեռնիլը մեզի համար շահ է»: Այսպիսով, նորեն պատմության բեմին վրա առաջին անգամ ըլլալով, տեղի ունեցավ պատերազմ վասն պաշտպանության Քրիստոսի, վասն պաշտպանության խղճի ազատության և հայրենիքի:

Սիրելի ժողովուրդ, այս հին ճշմարտությունները լավ է, որ դուք երբեք չմոռնաք, որովհետև անոնք կբնորոշեն մեր ազգը: Այդ ճշմարտություններով առավել կհասկնաք, թե ո՛վ եք դուք՝ հայերդ, այս աշխարհի վրա, և ի՛նչ կոչում ունիք, ի՛նչ առաքելություն ունիք: Այդ վկայություններ-

յով կճանչնան մեզ նաև մեր եղբայր ժողովուրդները, թե ո՛վ ենք մենք: Կհիշեմ սուրբգրական ավանդություն մը Երեմիա մարգարեի հետ կապված: Երբ մ. թ. ա. Զ դարուն բաբելացիները քարուքանդ ըրին Երուսաղեմը, կործանեցին Սողոմոնի տաճարը և հրդեհեցին զայն, հրեաները անհուն

Էմիաքսոր Հայրապետը «Հոլիվուդ Բոլ»-ում տալիս է իր հայրապետական պատգամը բազմահազար ժողովրդին

հուսահատության մեջ ինկան: Անոնք չէին կրնար ըմբռնել, չէին կրնար հավատալ, թե Աստուծո Տունը, այսինքն՝ Սողոմոնի տաճարը, մարդկային ձեռքով կրնա քանդվիլ: Բայց քանդվեցավ: Եվ ահա հուսալքումը այդ օրերուն: Կըսվի, թե Երեմիա մարգարեն քարուքանդ եղած Սողոմոնի տաճա-

ոի փլատակներեն չորս աղյուս առավ և ամեն մեկ աղյուսի վրա գրեց մեկ-
մեկ տառ, չորս տառերե կազմելով հրեերեն լեզվով Աստուծո անունը: Եվ
նետեց բոցերու մեջ: Այս ձևով արտահայտեց իր վհատությունը, թե Աստ-
ված այլևս մեռած է, թե այլևս ամեն ինչ կորսված է: Բայց ավանդությունը
կըսե, թե հրաշք մը պատահեցավ: Ամեն ինչ այրեցավ և փոշիի վերածե-
վեցավ, մնացին այդ չորս աղյուսները չփշրված, սակայն անոնց վրայի տա-
ռերը փոխված էին: Այս անգամ չորս տառերով կկարդացվեր «կյանք» բա-
ռը: Այսինքն՝ կյանքի հաղթանակը, գաղափարի հաղթանակը:

Ահա ավանդություն մը, որ մեր սրտին կխոսվի: Մենք ալ ունեցանք
բազում տաճարներու քանդում, ավերում և հրդեհում ամբողջ Արևմտյան
Հայաստանի տարածքի վրա: Մեր ողբերգություններեն հետո, սակայն,
մնաց կյանքի գաղափարը և գաղափարի անմահությունը: Ես կհավատամ,
որ այսօր, մեր անցյալի բոլոր դժբախտություններեն հետո, մեր բոլորի ճա-
կատներուն վրա գրված է՝ կյանք և հաղթություն:

Սիրելի հավատացյալներ, այս հուզումնալի սուրբ պահուն կմաղթեմ,
որ դուք այս մեծ երկրին մեջ շարունակեք ապրիլ, այո, իբրև օրինապահ
քաղաքացիներ, սակայն միշտ բարձր պահեք Հայ Եկեղեցվո սուրբ խաչը
և հայ ժողովուրդի ազնիվ անունը: Պահեք-պահպանեք ձեր սրբազան ծա-
ռանգությունը և հավատքը դեպի հայ ժողովուրդի ու հայ հայրենիքի պայ-
ծառ ապագան: «Մի՛ երկնչիք, հոտ փոքրիկ, այլ միայն հավատա»:

Կմաղթեմ նաև, որ պահպանեք ընտանեկան բարոյականը հայկական
ավանդական հասկացողությամբ: Մեծցուցեք ձեր երեխաները և ձեր թոռ-
ները հայաշունչ դաստիարակությամբ, Աստուծո պատվիրաններով, որ-
պեզի անոնք չհեռանան հայկական ոգեկանութենեն, զոհ չդառնան ան-
կումի կամ վատասերումի հակումներուն, ինչպես երբեմն կպատահի մեր
օրերու աշխարհին վրա: Պետք է հսկել, որ ձեր նոր սերունդը աճի և մեծ-
նա իսկապես մարմնով և հոգիով առողջ:

Կբաժնվիմ ձեզմե թե՛ ուրախությամբ, թե՛ տխրությամբ: Համենայն-
դեպս, պիտի տանիմ այսօրվան հիշատակը ինձի հետ հայրենիք, Սուրբ
Էջմիածին, և այս հիշատակներով, վստահ եղեք, առավել պիտի ճառա-
գայթե Արագածի կատարին՝ Լուսավորչի կանթեղը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղի-
ցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն»:

Ս. հաղորդության պահին ներկա հավատացյալները, խոստովանու-
թյունից և թողություն ստանալուց հետո, հաղորդվում են: Քսան հոգևոր-
ականներ իրենց սկիհներով մտնում են ժողովրդի մեջ և բազմահազար
հավատացյալներին մատուցում Քրիստոսի Մարմինն ու Արյունը:

Ս. պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը, Հայրապե-
տական մաղթերգի հնչյունների տակ, օրհնություն բաշխելով և Ս. Էջմիած-
նի լույսն ու սերը դրոշմելով Լոս Անջելոսի ավանդապահ հայ ժողովրդի
սրտում, հրաժեշտ է առնում իր հավատացյալ զավակներից:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, ընդունելության հանձնախմբի ատե-
նապետ տիար Վոլթեր Գարապյանի ընտանեկան հյուրընկալ հարկի տակ,
ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ընթրիք, որին մասնակցում
են նաև Նորին Սրբության շքախմբի անդամները ու գաղութի մի շարք ազ-
գայիններ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 9-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Լոս Անջելոսի Հայոց առաջնորդարանում բարեհաճում է ընդունել տեղի հայ հոգևորականներին:

Այնուհետև, ժամը 13-ին, առաջնորդարանի սեղանատանը թեմի Եկեղեցասեր Տիկնանց Հանձնախումբը ճաշկերույթով պատվում է Վեհափառ Հայրապետին և ներկա բոլոր հոգևորականներին:

Ժամը 17-ին առաջնորդարանի ընդունարանում Վեհափառ Հայրապետին են այցելում Հնչակյան կուսակցության մի խումբ ղեկավար անդամներ և ունենում զրույց ջերմ մթնոլորտում:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻ «ԱՐՄԻՆԻԸՆ ԱՍԱՄԲԼԻ»-Ի ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, «Արմինիրը Ասամբլի»-ի ղեկավարները կազմակերպում են ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի: Ճաշկերույթն անցնում է ջերմ, խանդավառ մթնոլորտում:

Այս առթիվ ելույթ է ունենում պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը և ասում.

ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, Սրբազան Հայր,

Պատիվ է ինձի «Հայկական Հայմագումար»-ի («Արմինիրը Ասամբլի») կողմանե բարի գալուստ մաղթել Ձեզի և շնորհակալություն հայտնել, որ մեզի այս ժամը հատկացուցիք: Ես կուզեմ, եթե կարելի է, երկու րոպեով շեղվիլ ի հիշել, որ իմ ծանոթությունը Ձեզի հետ ունի ավելի քան երեսուն տարվա պատմություն, ես համալսարանը նոր ավարտած, Լիբանան գացած էի մեկ տարիով, որպեսզի հայերեն սորվիմ: Իմ կյանքի հուզումնալից օրերեն մեկն էր այն օրը, երբ մեր Ամենայն Հայոց Վեհափառը եկած էր Լիբանան: Եվ որովհետև ես ամերիկացի էի, որոշ դյուրություններ տվին ինձի և կրցա մուտք գործել այն Վեհարանի մեջ, ուր շատեր կդիմեին Ձեզի, և Դուք կփորձեիք հարթել մեր ալեկոծ ծովը հայ աշխարհի:

Անկե հետո, 1959-ին, առաջին անգամ ես կարողացա այցելել Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Շուտով արդեն երեսուն տարի կըլլա: Եվ չեմ գիտեր, թե մեր Համագումարի անդամներեն որոնք եղած են 1959-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Տարբեր էր Հայաստանը այն ժամանակ. շատ դժվարին օրերեն դուրս կուգար: Անկե հետո 18 անգամ, Վեհափառ Տեր, եղած եմ Հայաստան և ամեն ետ գալուս կտեսնեմ հառաջդիմությունը, կտեսնեմ, որ Ձեր ջանքերով մեկիկ-մեկիկ մեր սրբավայրերը, մեր եկեղեցիները կվերակառուցվին, ինչպես Տաթևը, Մակարավանքը և շատ ուրիշ վանքեր:

Վեհափառ Տեր, լավ կհիշեմ Ձեր անցյալ այցելությունը Ամերիկա: Այն ժամանակ ես Հայ նահատակաց հուշարձանի հանձնախումբի ատենապետն էի, ինձի պատիվ տրվեցավ Ձեր կուրծքին զետեղել հուշարձանի մեդալիոնը: Այդ օրը մեզի համար պատմական օր մըն էր: Դուք այդ օրը ոգեշունչ ճառ մը արտասանեցիք, կապեցիք մեր ժողովուրդի անցյալը և ներկան: Դուք կարողացաք իրարու կապել 1915-ի ցեղասպանությունը՝ մեր

ժողովուրդի խաչելությունը, և անոր հարությունը 1918-ի Սարդարապատով։ Եվ Դուք խելացի կերպով կապեցիք Մայիս 28-ը և Նոյեմբեր 29-ը, կապեցիք Հայաստանի Հանրապետությունը և Խորհրդային Հայաստանը։ Դուք իմաստությունը ունեցաք կապելու մեր ժողովուրդի պատմությունը հին ժամանակներեն մինչև այսօր։ Հայաստանի մեր առաջադեմ պատմաբանները այսօր նույն այդ մոտեցումը ունին, նույն ողջամիտ տեսակետները, ինչ որ Դուք դեռ քսան տարի առաջ կհայտնեիք։

Վեհափառ Տեր, անցյալ տարի առիթով մը Ներսես սրբազան Պոզապալյանը, որ ներկա է այստեղ, գեղեցիկ մաղթանք մը ըրավ՝ բաժակ առաջարկելով Ձեր կենացը։ Այն նկատելով, որ Մասիսի ճերմակ ձյունը թափած և խառնված է Ձեր ալեհեր գլխուն, մաղթեց, որ Դուք դառնաք Մասիսի հետ մեկ, Մասիսի պես վեհ, Մասիսի պես խրոխտ։ Մենք կմաղթենք այս գիշեր, որ այն ձյունը, այն վեհությունը, որ թափած է Մասիսեն Ձեր գլխուն, թափի նույնպես մեր գլխուն, որպեսզի մենք ունենանք մաս մը, գոնե փաթիլ մը այն ձյունեն, որ կհատկանշե Ձեր իմաստությունը, Ձեր խելացությունը, որպեսզի կարողանանք զանազանել կարևորը և ոչ կարևորը, որպեսզի իմանանք, թե հայկական կյանքի մեջ այնպիսի խնդիրներ կան, որոնց շուրջ կարելի չէ բաժնված ըլլալ։ Մանավանդ հայ դատի շուրջ հայ ժողովուրդը պետք է համախմբվի։

Վեհափառ Տեր, «Հայկական Համագումարի» ստեղծման պատմությունը մոտավորապես հետևյալն է. ըսեմ շատ հակիրճ ձևով։ Խումբ մը հայեր, շատերը ամերիկածին, բայց նաև անոնք, որ Ամերիկա եկած և հաստատված էին, տարիներ առաջ, մոտավորապես տասնհինգ տարի առաջ, մտածեցին, որ այստեղ, Ամերիկայի մեջ, գոյություն ունի շատ գեղեցիկ սերունդ մը, բայց, դժբախտաբար, այդ սերունդեն շատ քիչերը կրցած են կապվիլ հայկական ազգային կյանքին։ Մտածեցինք, ինչպես Դուք կըսեք, որ լավ պիտի ըլլար, եթե միասնական աշխատանք տարվեր, և բոլոր հայ երիտասարդները համախմբվեին։ Այդ նպատակով, իրարու քով գալով, որոշեցինք Վաշինգտոնի մեջ կազմակերպել համագումար մը։ Երեք տարվա ընթացքին տեղի ունեցան երեք համագումարներ, որոնց հրավիրեցինք բազմաթիվ հայ երիտասարդներ զանազան հոսանքներե՝ և՛ կուսակցական, և՛ եկեղեցական, և՛ առաքելական, բողոքական, կաթոլիկ, դաշնակցական, ռամկավար, ամեն շրջանակե հայեր, որպեսզի մտածենք միասնաբար, ազգովին, թե ինչ է պետք մեր ազգին համար այս երկրի մեջ։ Առաջին անգամ ըլլալով, այդ զանազան հոսանքներու ներկայացուցիչները, մեկտեղված և երեք օր անընդհատ խոսելով իրարու հետ, հասկցան, որ իրենց նպատակները ոչինչով չեն տարբերիր իրարմե, որ բոլորն ալ նույն նպատակները ունին։ Ուրեմն, այս տասնհինգ տարվա ընթացքին հաջողեցանք Վաշինգտոնի մեջ բանալ գրասենյակ մը, որ կգրաղի ամերիկյան պետական գործերով, իր մեջ ունենալով ամերիկացի և հայ գիտնականներ։ Այդ գրասենյակի գործերը կապված են հայկական համայնքի նպատակներու և հայ դատի հետ։ Այսօր ունինք մեզի զորավիգ կանգնող այսպիսի հասարակություն մը։ Այսօր, Վեհափառ Տեր, այստեղ կգտնվին Հարավային Կալիֆոռնիո շրջանի խնամակալները, որոնք տարեկան իրենց տուրքը տալով զորավիգ կկանգնին մեր գործունեության։

Մեր գործունեությունը ունի զանազան երեսներ՝ թե՛ պետական, թե՛ հայկական։ Կփորձենք մեր աշխատանքները հիմնել գիտական առողջ գետնի վրա։ Մեր գործունեության ծրագրին մաս կկազմե, օրինակի հա-

մար, ղեցասպանության վերաբերյալ բոլոր փաստաթուղթերը աշխարհի չորս կողմերեն հավաքելը և ապա հրապարակելը։ Մեր գործունեության մեջ շատ կարևոր բաժին ունին նաև ուսումնական ծրագիրները։ Այս տարի մենք հաջողեցանք այս նահանգին մեջ մեր օրենսգետներու միջոցավ օրենք մը անցընել, որովհետև կնախատեսվի Կալիֆոռնիո պետական դըպրոցներուն մեջ դասավանդել ցեղասպանությունը, ոչ միայն հրեաներու ցեղասպանությունը, այլև՝ հայերու։ Չեմ ուզեր թվել և մանրամասն խոսիլ այն դժվարություններու մասին, որոնց հանդիպեցանք, որովհետև, ինչպես գիտեք, մեր հակառակորդները պետություն ունին և ամեն ձևով կփորձեն խափանել և չեղյալ համարել տալ այս ծրագիրը։ Բայց որովհետև հայության թիվը այս նահանգին մեջ մեծ է, և ունինք այնպիսի խնամակալներ, որոնք կօգնեն մեզի, մենք կարողացանք մեկ ամիս առաջ Կալիֆոռնիո նահանգի ուսումնական խորհուրդի միջոցավ անցընել վերոհիշյալ ծրագիրը, որուն մեջ լրիվ գլուխ մը հատկացված է հայկական ցեղասպանության և որուն հեղինակը ըլլալու պատիվը ունիմ ես։ Այսպիսի հաջողություններ, իհարկե, մենք չէինք կրնար ունենալ, եթե չունենայինք մեր շուրջը «Հայկական Համագումարի» նման կազմակերպություն մը և Վոլթեր Գրասլյանի, Ջորջ Ամիրյանի կամ Արշակ Տիգրանյանի նման ազգայիններ, որոնք ծանոթություն ունին օրենսդրական մարմինի անդամներու հետ։

Այսքանով կվերջացնեմ իմ խոսքը։ Այս գիշեր մեր մեջ կգտնվին ամերիկահայ ակնառու, բայց համեստ անձեր, զորս առիթը չունիմ առանձին-առանձին ներկայացնելու Ձեզի։ Անոնք ծանոթ բժիշկներ, փաստաբաններ, գաղութիս ազգային կյանքը կառուցողներ են, որոնցմով մենք մեծապես հպարտ ենք։ Շնորհակալ եմ, որ այս գեղեցիկ առիթը ընծայեցիք մեզի՝ Ձեզի հետ այս պահը անցընելու։ Ձեր կենացը, Վեհափառ Տեր։

Ապա, հանուն «Արմենիքը Ասամբլի»-ի, հուզիչ խոսքով հանդես է գալիս Ռիչարդ Հովհաննիսյանի որդին՝ իրավաբան Բաֆֆի Հովհաննիսյանը։

ԲԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, նախ մեր բոլորի կողմե Ձեզի բարի գալուստ կմաղթեմ Լոս Անջելոս՝ կեդրոնը Սփյուռքի։ Այստեղ Ձեր ներկայությունը մեզի համար թարմանուշ է, որովհետև Ձեզի հետ կբերեք Հայրենիքի պատգամը, մեր հայրենակիցներու մաղթանքները և Ձեր տուրբ օրհնությունը։ Բայց նաև դառն է մեր հանդիպումը այսօր, Վեհափառ Տեր, որովհետև կանդրադառնանք, թե ինչու բաժնված ենք, և Դուք հազարավոր մղոններ պիտի կտրեք և գաք Լոս Անջելոս, որպեսզի Ձեր հոտին այցելեք։

Բոլորս ալ տեղյակ ենք այն իրողությանը, որ մեզի ցրեց ի սփյուռս աշխարհի, և մեր պարտականությունն է Սփյուռքի և Հայրենիքի մեջ պայմաններ ստեղծել, որպեսզի մեր Վեհափառը այլևս պետք չունենա գալու Լոս Անջելոս կամ Սան Ֆրանցիսկո, այլ կարենանք «Հրաշափառ»-ը կատարել Վարագա վանքի մեջ, Տարոն աշխարհի Ս. Կարապետ վանքին մեջ։

Վեհափառ Տեր, առայժմ մենք Սփյուռքի մեջ կապրինք, հետևաբար այս կազմակերպությունը՝ «Հայկական Համագումար»-ը, ստեղծվեցավ, որպեսզի հայ համայնքի շահերը հետապնդե Ամերիկայի ամբողջ տարածքին։ Զանազան ասպարեզներու մեջ կաշխատի «Հայկական Համագու-

մար»-ը: Առաջինը, լսենք, պատմա-քաղաքական է, ուր կվորձենք ճանչցնել և վավերացնել հայկական ցեղասպանությունը: Գիտենք, որ օգոստոս ամսուն մեծ պայքար մը մղեցինք, բայց տասներկու քվեով կորսնցուցինք. Ամերիկյան կոնգրեսը չընդունեց Ապրիլ 24-ը իբրև ազգային հիշատակի օր: Սակայն այդ ընթացքին՝ ձախողության ժամանակ, ուրախ ենք տեղեկացնելու Ձեզի, որ բոլոր հայ կազմակերպությունները ամեն կողմե միացան և առաջ տարին այս մեր պայքարը, որպեսզի ճշմարտությունը հաղթանակե ընդդեմ խավարի և խեղաթյուրումի: Վստահ ենք, որ «Հայկական Համագումար»-ի աշխատանքով և նաև ամբողջ հայ համայնքի ջանքերով և աջակցությամբ այս բանաձևը, այս գիտակցությունը պիտի տարածենք համայն աշխարհի մեջ: «Հայկական Համագումար»-ը կզբաղի նաև կրթության գործով: Ինչպես նշվեցավ, Կալիֆոռնիա նահանգը անցուց օրենք մը, որուն համաձայն յուրաքանչյուր օտար, ամերիկացի, հայ, ամեն աշակերտ Կալիֆոռնիո նահանգի մեջ հայկական ցեղասպանության մասին տեղեկություններ պիտի սորվի: Շատ կարևոր գործ է. խեղաթյուրողները, ուրացողները շատ են, բայց կհետապնդենք մեր շահերը՝ համագործակցելով բոլոր մյուս կազմակերպություններու հետ: Նվիրված ենք նաև մարդկանց իրավունքներուն, հատկապես փոքրամասնություններու հետ կապված գործ կտանինք Եվրոպայի մեջ: Նաև կմտածենք այստեղ՝ Կալիֆոռնիո մեջ կազմակերպել ցեղասպանության ենթարկվածներու հավաք մը, համագումար մը, ոչ միայն հայ, այլ կամբոջիացի, հրեաներ, որպեսզի մեր բոլոր ցավերը, կսկիծը բաժնենք և միասին սորվինք, որպեսզի մարդկության դեմ այսպիսի ոճիրներ այլևս չպատահին: Այս բոլորով, սակայն, Վեհափառ, իմ կարծիքով, «Հայկական Համագումար»-ի ամենամեծ գործը երիտասարդությունն է: Տասը տարի է արդեն, որ «Հայկական Համագումար»-ը կվարե ձեռնարկ մը «Ուաշինգթոնը Նյուս»-ի մեջ, ուր ամեն ամառ հիսուն հայ երիտասարդներ կհովանավորե: Այս երիտասարդները կաշխատին ծերակուտականներու, ուրիշ քաղաքական դեմքերու գրասենյակներու մեջ, կաշխատին գիտությանց լաբորատորիաներու մեջ: Ամեն ճյուղի մեջ հայ երիտասարդները կսորվին, մեր ապագա ղեկավարները իրենց արմատը կդնեն, որպեսզի իրապես մեր ապագայի ղեկավարները ըլլան: Բայց այս ընթացքին միայն իրենց աշխատանքով հետաքրքրված չեն այս հայերը: Հայ երիտասարդներեն շատեր ամերիկածին են, և իրենց առաջին կապը հայ համայնքի հետ այս մեկ ամառն դասընթացքն է: Եվ այդ հայ երիտասարդները, որ զրկված են հայ լեզվեն, հայ մշակույթեն, հայ պատմութենեն, առաջին անգամ ըլլալով կուգան Վաշինգտոն, ուրիշ հայ մը կտեսնեն, երկու ամիս միասին կերթան-կաշխատին, բայց նաև հանրակացարանի մեջ միասին կապրին, կխաղան, կխնդան և կսորվին: Հայեր, որոնք առաջին անգամ քոչարի կպարեն, առաջին անգամ այբ, բեն, գիմ կսորվին, իրենց ժողովուրդի պատմությունը և մշակույթը կուսումնասիրեն: Շատ կարևոր բան է ասիկա մեզի համար, որովհետև կկապենք մեր մատղաշ սերունդը, չենք ձգեր, որ ձուլվին բոլորովին: Ուրեմն, «Հայկական Համագումար»-ն ալ մեծ ջանք կթափե հայապահպանության համար: Այս ձեռնարկը քով-քովի կբերե երիտասարդներ մեր բոլոր հոսանքներեն: Յուրաքանչյուր հոսանք կներկայանա այնտեղ: Եվ երբ վերջին օրը կուգա այս ձեռնարկին, մեծապես օգտված և մեկ ազգի պատկանելու զգացումով կբաժնվին: Մեզի համար օրինակելի է ասիկա, որովհետև, ինչպես գիտեք, ինչպես այս երիտասարդները կփաստեն, այդ միասնությունն է, այդ համագործակցությունն

է, որ մեզի պիտի հասցնե մեր սուրբ գործի ավարտին և ոչ թե նեղմտությունը:

Վեհափառ Տեր, յուրաքանչյուր անձ և կազմակերպություն, իր կարողության համաձայն, իր կրցածը կընե մեր Դատի վերաբերյալ, իր առպարեզի մեջ և իր մասնագիտությամբ: «Հայկական Համագումար»-ն ալ իր համեստ բաժինը կբերե մեր ազգային գործին: Ձեր ներկայությունը այսօր ոչ միայն հրճվանքի պատճառ է մեր համայնքի համար, մեր կազմակերպության ներկա անդամներու համար, այլ, ինձի համար հատկապես ուղղակի նվեր է Ձեր ներկայությունը: 55 տարի առաջ այս օրը Ֆրեզնոյի գյուղերու մեջ ծնավ մի տղա, որ մեծցավ միայն անգլիախոս օտար շրջանակի մեջ, դպրոց կերթար, գիրքեր կկարդար և կտեսներ, թե Հայաստան բառը չկա, հայոց պատմությունը չէ նշված. այդ երիտասարդ տարիքեն այս մարդը որոշեց նվիրել իր ամբողջ կյանքը իր ազգին և իր ժողովուրդի պատմության: Այս մարդը եղավ ոչ միայն իմ հայրս, այլ եղավ այս մեր «Հայկական Համագումար»-ի հիմնադիրներեն մեկը: Ուրեմն, շատ զգացված եմ, որ Ձեր ներկայությամբ, Վեհափառ, կտոնենք իմ հորս տարեդարձը և նաև իմ մոր ներկայությամբ, մեծ մայրիկի՝ Սիրուն Հովհաննեսյանի ներկայությամբ: Կխնդրեմ, որ Դուք օրհնեք իմ հորս և իր կարևոր աշխատանքը, և մեծ մորս: Իրենց միջոցով, Վեհափառ, օրհնեցեք նաև մեր գոյատևման պայքարի նվիրյալները՝ հայտնի և անհայտ, և նաև մեր ազգի բոլոր մայրերը, որոնք կփոխանցեն մեր հույսի և հավատքի ջահը սերունդ-սերունդ: Վեհափառ Տեր, մեր բոլորին կողմե Ձեզի բարի երթ կմաղթենք, Ձեր սուրբ առաքելության մեջ: Բոլորս ալ կաղոթենք և կաշխատինք, որ օր մը մեր բոլորին երազանքը պսակվի իրականությամբ: Շնորհակալություն:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով «Արմինիրն Ասամբլի»-ի ազգասիրական գործունեությունը, ասում է.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Իմ ուղևորության ճանապարհին գրեթե ամեն օր ունեցա նոր ապրումներ և նոր խանդավառություններ: Այսօր ձեր մեջ, «Արմինիրն Ասամբլիի» անդամներու և բարեկամներու մեջ, կրկին խանդավառ մթնոլորտ մը կա: Խոստովանիմ, որ թեև ես ծանոթ էի ձեր կազմակերպության, բայց ոչ հարկ եղած չափով: Այսօր խոսողները ներկայացուցին ձեր կազմակերպության պատմությունը, նպատակները, գործունեության դաշտը և հեռանկարները: Այսպիսով ես ամբողջական գաղափար կազմեցի «Արմինիրն Ասամբլիի» մասին: Առավել ամբողջացավ իմ պատկերացումը Բաֆֆի Հովհաննիսյանի ճառով, որով և հաստատեցի, թե «Ասամբլիի» ոգին դուք կարողացած եք փոխանցել նաև նոր սերունդներուն, ինչ որ կարևոր նշանակություն ունի: Եթե Բաֆֆիի նման երիտասարդներ հետզհետե համախմբեք ձեր շուրջը, ձեր գործունեության դաշտը ապահովված կըլլայ ընդմիշտ, ինչ որ շատ ողջունելի կգտնեմ:

Ինչքան կարողացա հասկնալ, հիմնական երեք ուղղություններ կտեսնեմ ձեր գործունեության դաշտի ճամփուն վրա: Նախ քաղաքական իմաստով, որու կեդրոնը կգտնվի ցեղասպանության ճանաչման հարցը: Սա

հարց մըն է, որու շուրջ, Հայաստանեն սկսյալ մինչև Սփյուռքի ամբողջ տարածքը, տարակարծություն չկա հայերու մեջ: Հայաստանցի ժողովուրդը, ամենահամեստ բանվորեն և գյուղացիեն սկսյալ մինչև մտավորական գործիչը, բուռն կերպով կկամենան, որ ցեղասպանությունը ճանաչում ստանա աշխարհով մեկ ու հասնի այն աստիճանին, որ ճանաչումը հռչակվի Միացյալ Ազգերու Կազմակերպության կողմե: Եվրոպական պառլամենտը այդ ճանաչումը տվավ այս տարվան հունիսի 8-ին: Պայքարը շատ սուր էր: Որոշ չափով ես ալ փորձեցի նպաստ մը բերել այդ հաղթանակին մեջ: Ես այդ մասին խոսեցա Նյու Յորք մեծ ճաշկերույթի ընթացքին: Ցեղասպանության ճանաչումը, այս պահուն, հայ ժողովուրդի քաղաքական կարևորագույն հարցն է: Անշուշտ հայկական դատի հետ կապված հարցերը միայն այդ ճանաչումով չեն լուծվիր, բայց այդ ճանաչումը, եթե վերջնականապես հաստատվի, համենայնդեպս, կարևոր քայլ մը պիտի հանդիսանա դեպի լուծումը հայկական դատին: Կմաղթեմ ձեզի հարատևության ոգի, որպեսզի այդ ուղղությամբ շարունակեք մտածել և գործել:

Աշխատանք մը ևս, որ ձեր առջև կդրվի, կվերաբերի պատմագիտության: Պայքարը, որ կտարվի այս վերջին տարիներուն, պայքար է նաև պատմագիտության ճանապարհով: Դուք գիտեք, որ թուրք պատմաբաններ և անոնց բարեկամները (եվրոպացի, ամերիկացի) գիրքեր հրատարակած են և կշարունակեն հրատարակել՝ ի պաշտպանություն թրքական տեսակետներու: Այս ուղղությամբ նույնպես կազմակերպված և գիտական աշխատանք պետք է տարվի, որպեսզի ճշմարտությունը ազատ հնչե նաև պատմագիտության միջոցավ: Այս հարցով մտահոգված են և կաշխատին նաև Հայաստանի պատմաբանները: Արտասահմանի մեջ ևս հայերը պետք է պատմագիտական լուրջ աշխատանք տանին: Կարևոր է, որ ոչ միայն հայ պատմաբաններ հանդես գան, այլև օտարազգի պատմաբաններ: Պետք է ծանոթություններ հաստատել, բարեկամություններ շահիլ և անոնց միջոցավ, օտար պատմաբաններու միջոցավ, ճշմարտությունը հանդես բերել:

Եվ վերջապես, ձեր խոսքերեն ես գոհունակությամբ հաստատեցի, որ ձեր կազմակերպությունը կուսակցական բնույթ չի կրեր և բոլորի հետ կգործակցի: Հայկական հարցերը, քաղաքական հարցերն ալ ներառյալ, իմ կարծիքով, կթելադրեն ոչ միայն «Արմենիքն Ասամբլիին», այլ ամբողջ մեր ժողովուրդին, որ իրենց բոլոր ուժերը կեդրոնացնեն մեկ կետի վրա: Մենք մեկ թշնամի ունինք: Այդ ուղղությամբ պետք է կեդրոնացնենք մեր ուժերը: Եվ պետք է գիտնանք սիրաշահիլ բոլոր պետությունները, բոլոր օտար կազմակերպությունները մեր դատի օգտին, առանց գաղափարախոսական կամ այլ կողմնակի նկատումներու: Այս տեսակետեն ես ողջունելի կգտնեմ ձեր կազմակերպության կապերու հաստատումը մեր հայրենի իրականության հետ, անկախ գաղափարախոսական նկատումներե, միայն համահայկական մտահոգություններով: Ես վստահ եմ, թե Հայաստանի իշխանությունները ուղիղ պիտի հասկնան և պիտի գնահատեն ձեզ:

Կբերեմ ձեզի Աստուծո օրհնությունը Սուրբ Էջմիածնեն և իմ սրտեն բխած հաջողության մաղթանք, որպեսզի քայլ առ քայլ ավելի տարածվիք, զորանաք, երիտասարդություն համախմբեք ձեր շուրջը՝ հիմնական ձեր այդ նպատակներուն հետապնդման ճանապարհի վրա: Ս. Էջմիածինը ձեզի հետ է. ամեն:

Այնուհետև տեղի է ունենում Կիլիկիայի տեսարժան վայրերը պատկերող, ինչպես նաև հայկական ցեղասպանության վերաբերյալ վաստակագրական կինոժապավենների ցուցադրում:

Սույն ընդունելության ամբողջ ընթացքում Վեհափառ Հայրապետի կողքին էր գտնվում Կալիֆոռնիայի նահանգապետ տիար Ջորջ Դեոքմեջյանի ծերունազարդ մայրը:

Նոյեմբերի 10-ին, երեքշաբթի օրը, ժամը 11-ին, Ս. Հովհաննես Մկըրտիչ եկեղեցուն կից շենքում Վեհափառ Հայրապետը ջերմ հանդիպում է ունենում Լոս Անջելոսում հաստատված ռումինահայ իր նախկին աշակերտների, բարեկամների և ծանոթների հետ, շուրջ 350 հոգի:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետին ուղղված ողջույնի և բարիգալստյան հուզիչ խոսքերով հանդես եկան ռումինահայ ծանոթ ազգայիններ: Այս առթիվ Նորին Սրբությունը հայտնեց իր գոհունակությունը՝ ցուցաբերված սիրո և հարգանքի սրտագին արտահայտությունների համար, և ներկաներին բաշխեց իր հայրական օրհնությունները:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍԻ Ս. ՍՈՖԻԱ ՏԱՃԱՐՈՒՄ

Նույն օրը, ժամը 19.30-ին, ԱՄՆ-ի Հույն Օրթոդոքս Եկեղեցու արևմտյան թեմի առաջնորդ Տ. Անտոնի եպիսկոպոսի հրավերով Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Ս. Սոֆիա գեղակերտ հսկա տաճար՝ միջեկեղեցական աղոթքի: Տաճարի շրջափակում հավաքված հազարավոր հայ հավատացյալներ իրենց հույն եղբայրների հետ ջերմորեն դիմավորում են Վեհափառ Հայրապետին: Ապա քույր Եկեղեցիների հոգևորականների հետ միասին, հանդիսավոր թափորով և «Հրաշափառ»-ով, ամպհովանու ներքո Նորին Սրբությունն առաջնորդվում է տաճար:

Տաճարում Վեհափառ Հայրապետին ողջույնի սրտառուչ խոսք է ուղղում Տ. Անտոնի եպիսկոպոսը:

Տ. ԱՆՏՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր, մեծարգո հյուրեր, եղբայրներ և քույրեր,

Շատ զգացված եմ և հուզված: Դուք պատվեցիք ինձ և մեր ժողովրդին, որպեսզի մասնակցենք այս ընդունելությանը՝ բարի գալուստ մաղթելով այս մեծ մարդուն՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին:

Ձերդ Սրբություն, երեկ գիշեր ես պատիվ ունեցա երեք կարճ ժամեր վայելելու Ձեր ներկայությունը, և ես ունեցա իմ կյանքի ամենից հիասքանչ փորձառությունը. իմ թաշկինակը թաց էր ուրախության և երջանկության

Վեհարան Հայրապետը ԱՄՆ-ի Հույժ Օրթոդոքս Եկեղեցու արևմտյան թեմի առաջնորդ Տ. Ներսեսի եպիսկոպոսի հետ

արցունքներից։ Եռ լսում էի ձայներ, որ մինչ այդ չէի լսել. ես լսում էի ձեր մարտիրոսների ձայնը, ձեր ժողովրդի ձայնը, դարերից հառնող ձայներ, որոնք ասում էին. «Հիշեցեք մեզ, հիշեցեք մեզ»։ Եվ ես փորձեցի հիշել նրանց՝ տխուր և ուրախ արցունքներով։

Ձերդ Սրբություն, նորից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ։ Այժմ ես կարող եմ կատարել իմ խոստումը. Նորին Սրբությանը պիտի տամ իմ խորին ակնածանքի և զգացումների նշանակը՝ այս պանակեն։ Սա երկգլխանի արծիվ է, որ խորհրդանշում է պետական իշխանությունը և Եկեղեցու իշխանությունը։ Ես այս պանակեն ընտրեցի նվիրելու, որովհետև Ձերդ Սրբությունն էլ ներկայացնում է ոչ միայն Հայաստանյայց Եկեղեցին, այլև հայ ազգը, հայ ժողովուրդը՝ ուր էլ որ նրանք գտնվեն։ Սա ունի մի ուրիշ խորհուրդ ևս. մենք շատ ենք սիրում և հարգում Ձեզ. մենք մեկ ենք. այստեղ հայերն են և Կիպրոսի հույները, մենք պետք է պայքարենք միասին, և թող Աստված օգնի մեզ։ Մենք միասին կհարատևենք դարեր ու դարեր։

Ապա հայ և օտար հոգևորականների մասնակցությամբ տեղի է ունենում էկումենիկ պաշտամունք։

Պաշտամունքի ավարտին Հայոց Հայրապետը, զգացված Հույն Օրթոդոքս քույր Եկեղեցու կողմից ցուցաբերված եղբայրական սրտագին ընդունելությունից և մեծարանքի անկեղծ արտահայտություններից, խոսում է հետևյալ սրտաբուխ քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ Ս. ՍՈՖԻԱ ՏԱՃԱՐՈՒՄ

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»։

Գոհություն բարձրյալն Աստծուն, որ կշնորհե ինձ այս պահը։

Կգտնվիմ հիասքանչ կամարներում ներքև Հույն Օրթոդոքս այս եկեղեցվո և իմ շնորհակալությունը կհայտնեմ Նորին Սրբազնություն Անտոնի եպիսկոպոսին այս փառավոր ընդունելության համար։ Կզգամ, որ Սուրբ Հոգին խորհրդավոր կերպով ներկա է այստեղ մեր վրա։

Թույլ տվեք հիշել ուրիշ մեկ պահ, նման պահ մը, զոր ես ապրեցա Կ. Պոլսո մեջ 1961 թ., երբ ողջագուրվեցանք Հույն Օրթոդոքս Եկեղեցվո հովվապետ՝ Նորին Սրբություն Աթենագորաս Տիեզերական Պատրիարքի հետ։ Պատմության մեջ քիչ անգամ պատահած է, որ Ամենայն Հայոց կաթողիկոս մը ողջագուրվի Հունաց Օրթոդոքս Եկեղեցվո Տիեզերական Պատրիարքին հետ։ Տիեզերական Պատրիարք Աթենագորասը հոյակապ հոգևոր անձնավորություն մը էր, որ հմայեց զիս։ Իմ կյանքի լավագույն հիշատակներեն մեկը հանդիսացավ այդ։

Մեր Եկեղեցիներու, ընդհանրապես քրիստոնեական քույր Եկեղեցիներու սիրո հարաբերությունները, որ հետզհետե կուճին և կզարգանան մեր դարաշրջանին, կպարտինք էկումենիկ շարժումին։ Ես կխորհիմ, թե էկումենիկ ոգին իսկապես Աստուծմե շնորհված պարգև մը է բոլոր քրիստոնյա Եկեղեցիներուս։ Հայ Եկեղեցվո եղբայրական սիրո հարաբերությունները Հույն Օրթոդոքս Եկեղեցվո հետ հնագույն ժամանակներեն կուգան տակավին։ Կրնամ ըսել նույնիսկ, թե երկու Եկեղեցիներ ենք, որ գրեթե միատեղ ծնունդ առինք և միատեղ զարգացանք։ Քրիստոնեությունը

ընդունելէ հետո, երբ Հայ Եկեղեցին տակավին իր այբուբենը չուներ, հունարեն լեզուն եղաւ մեր Եկեղեցիներու պաշտամունքի լեզուն ավելի քան հարյուր տարի: Հայաստանի մեջ որոշ հնագույն եկեղեցիներու պատերուն վրա հունարեն լեզվով արձանագրություններ կան, որոնք կվկայեն այդ մասին: Նույնիսկ Էջմիածնի Մայր տաճարի հյուսիսային պատին վրա փոքրիկ արձանագրություն մը կա՝ գրված հունարեն լեզվով 303 թվականին, երբ կառուցվեցավ Էջմիածնի Մայր տաճարը քրիստոնեությունը պաշտոնական կրոն ընդունվելէ անմիջապես հետո: Հինգերորդ դարուն սկիզբը հայ տառերը հորինվեցան, և թարգմանվեցավ Ս. Գիրքը հունարեն բնագրի հիման վրա: Հետագային, տիեզերական ժողովներում եղբայրաբար մասնակցեցավ նաև Հայաստանյայց Եկեղեցին: Քաղկեդոնի չորրորդ ժողովին Հայ Եկեղեցին չկրցավ մասնակցիլ, որովհետև նույն շրջանին, գրեթե նույն օրերուն, պարսիկները հարձակեցան Հայաստանի վրա, որպեսզի նոր ընդունված քրիստոնեական կրոնը արմատախիլ ընեն և պարտադրեն իրենց զրադաշտական կրոնը: Պարսկական բանակներու հարձակումեն առաջ պարսիկ թագավորը՝ Հազկերտ Բ, նամակով մը հայ իշխաններուն հրավեր կարդաց հրաժարիլ քրիստոնեութենեն և ընդունիլ իրենց կրակապաշտ կրոնը: Օրվան կաթողիկոսը մեծ ժողով գումարեց և նշանավոր պատասխան մը ուղարկեց Հազկերտ թագավորին: Սքանչելի, քրիստոնեական ոգիով խմբագրված փաստաթուղթ մըն է այդ, ուր, ի միջի այլոց, կըսվի, թե՝ «հայ ժողովուրդը քրիստոնեությունը ընդունած է ոչ իբրև արտաքին հագուստ, այլ ան իր մարմնի մասը նկատմե մինչև աշխարհի վերջը: Եվ մենք պատրաստ ենք զոհվելու մեր հավատքին համար, որովհետև մեռնիլ Քրիստոսի սիրույն, մեզի համար պիտի ըլլա շահ»: Հայկական բանակը տասնապատիկ հզոր ուժերու հարձակումին չդիմացավ, և բոլորը իրենց կյանքը զոհեցին և պսակվեցան նահատակության պսակով՝ գլխավորությամբ հայոց իշխան Վարդան Մամիկոնյանի: Պարսիկները գրավեցին Հայաստանը և սկսան քարուքանդ ընել մեր եկեղեցիները, հալածել, աքսորել հոգևորականները: Կաթողիկոսը ինքն ալ զոհ գնաց այդ հալածանքներուն: Եվ ինչպես հայտնի է պատմութենեն, Ավարայրի դաշտին վրա Վարդան և իր քաջերը ինկան, սակայն կռիվները շարունակվեցան, և 33 տարի հետո կրկին հայկական բանակներ կազմակերպվեցան և այս անգամ հաղթեցին պարսիկներուն: Այսպեսով Հայ Եկեղեցին վերստին ազատ իր կյանքը շարունակեց Հայաստանի տարածքի վրա: Թեև հետագա դարերուն Հայաստանյայց Եկեղեցին զուտ ազգային բնույթ ստացավ և առանձին ճանապարհով զարգացավ, սակայն միշտ կարևոր չափով մը հաղորդության մեջ մնաց Հույն Օրթոդոքս Եկեղեցիին հետ, հեռու չմնաց երբեք Արևելքի Օրթոդոքս Եկեղեցիներու մեծ ընտանիքեն:

Ես այս փոքրիկ պատմական ակնարկը կատարեցի, անգամ մը ևս վկայությունը բերելու մեր և Հույն Օրթոդոքս Եկեղեցվո ճշմարիտ եղբայրության և փոխադարձ սիրո: Այսօր ալ մեր Եկեղեցվո հարաբերությունները Օրթոդոքս Եկեղեցիներու հետ, այս էկումենիկ շրջանին, իբրև հիմք ունին մեր պատմական անցյալը: Այսօր մեր Եկեղեցին գործոն կերպով իր մասնակցությունը կբերե քրիստոնեական Եկեղեցիներու էկումենիկ շարժումին: Մեր հարաբերությունները, առաջին հերթին Օրթոդոքս Եկեղեցիներու հետ, սքանչելի են: Ես երջանիկ եմ, որ այսօր կհանդիպիմ Հույն քույր Եկեղեցվո բարձրաստիճան ներկայացուցիչներու հետ: Կխնդրեմ ընդունիլ իմ եղբայրական ողջույնը:

ԱՑՍ ՈՍԿՅԱ ՊԱՆԱԿԵՆ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՆՎԻՐԵՑ ԱՄՆ-Ի ՀՈՒՅՑՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ԱՆԴՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Հայաստանյայց Եկեղեցին, պատմության բերումով, սփռված է աշխարհով մեկ։ Գրեթե մեր ժողովուրդի կեսը կգտնվի Մայր Հայրենիքի սահմաններեն դուրս։ Այսօր Հայաստանի մեջ մոտ երեք և կես միլիոն հայեր կապրին։ Մեր զգացումն է և իղձը, որ հետզհետե խորանա և զարգանա էկումենիկ ոգին և զորանա համաշխարհային քրիստոնեական եղբայրությունը։ Կխորհիմ, թե մանավանդ մեր ժամանակներուն, երբ աշխարհը տարբեր շրջաններու մեջ տարբեր տագնապներ և ալեկոծումներ կապրի, այժմեական է Քրիստոսի Ավետարանը, որ կբերե մեզի սիրո և խաղաղության պատգամը։ Եվ կհավատամ, որ համաշխարհային մակարդակի վրա քրիստոնեական եղբայրության զորացումով Քրիստոսի Եկեղեցին ավելի անմիջական կերպով պիտի կարողանա իր բարերար ազդեցությունը տարածել այսօրվա տառապող մարդկության վրա՝ հանուն խաղաղության և արդարության։ Ես կակնարկեմ մանավանդ այն ողբերգական վիճակներուն, զոր մեր օրերուն քրիստոնյաները կապրին Մերձավոր Արևելքի որոշ երկիրներու և հատկապես Կիպրոսի մեջ։ Կաղոթեմ առ Աստված, որ խաղաղությունը և արդարությունը վերականգնվին այդ շրջաններուն մեջ։ Թող Աստված միշտ մնա օգնական և մարտակից Ձերդ Սրբազնության և ձեր սուրբ Եկեղեցիին։

Սիրելի հավատացյալներ, ջերմ սրտով իմ օրհնությունները և բարի մաղթանքները կբաշխեմ բոլորիդ։

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն»։

Էկումենիկ պաշտամունքի ավարտին տաճարին կից ընդունելությանց սրահում տեղի է ունենում հյուրասիրություն։

Հյուրասիրությանը ներկա է լինում քաղաքային իշխանությանց ներկայացուցիչ պրն. Նեյթ Հոյդնը, որը հանդես է գալիս Հայոց Հայրապետին ուղղված մեծարանքի գեղեցիկ խոսքով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՅՈՒՄ ԺԱՄԱՆՈՒՄ

Նոյեմբերի 11-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոսի և իր շքախմբի մնայուն անդամների ուղեկցությամբ ժամանում է Սան Ֆրանցիսկոյի միջազգային օդանավակայան:

Սան Ֆրանցիսկոյի, Օկլենդի և Սան Հոզեի հայոց եկեղեցիների հոգևոր հովիվները, համայնքային եկեղեցական կազմակերպությունների ղեկավարներն ու ժողովուրդը բախտավորությունն ու երջանկությունն են ունենում երրորդ անգամ վայելելու Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը, արժանանալու նրա օրհնությանն ու ողջույնին:

Օդանավակայան ժամանելուց առաջ հոծ բազմությունը լցրել էր օդանավակայանի ընդունելության դահլիճը: Այստեղ Վեհափառ Հայրապետին դիմավորում են, տեղի հոգևոր հովիվ Տ. Արիս եպս. Շիրվանյանի գլխավորությամբ, թեմական և ծխական խորհուրդների անդամները, զանազան ազգային և մշակութային կազմակերպությունների ներկայացուցիչներ, տեղի քույր Եկեղեցիների հոգևորականներ և հավատացյալներ:

Նորին Սրբությունը ողջագուրվում է հայ և օտար հոգևորականների հետ և ողջունում բոլորի ներկայությունը:

Օդանավակայանի դահլիճում տեղի է ունենում մամուլի ասուլիս:

Այնուհետև օդանավակայանից Վեհափառ Հայրապետը իր շքախմբով ուղևորվում է Սան Ֆրանցիսկոյի հայոց Ս. Հովհաննես եկեղեցի և մուտք գործում «Հրաշափառ»-ով, հավատացյալների բարի մաղթանքի ցնծագին արտահայտությունների ներքո:

Եկեղեցում, հանուն բոլոր ներկաների, Վեհափառ Հայրապետին ողջունում և բարի գալուստ է մաղթում տեղի հոգևոր հովիվ Տ. Արիս Եպս. Շիրվանյանը:

Ապա եկեղեցուն կից կիրակնօրյա վարժարանի պատանի սան-սանու-

հիները երգերով և արտասանություններով ողջունում են Հայոց Հայրապետի բարի ժամանումը ի Սան Ֆրանցիսկո:

Վերջում ներկաներին իր օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը:

Սան Ֆրանցիսկո քաղաքը խոշոր նավահանգիստ է ԱՄՆ-ի խաղաղ-օվկիանոսյան ափին, Կալիֆոռնիայի նահանգում: Բնակչությունը, արվարձաններով հանդերձ, հաշվվում է հինգ և կես միլիոն: Քաղաքը հիմնադրվել է 1776 թ. իսպանացի գաղութարարների կողմից: Սան Ֆրանցիսկոն Միացյալ Նահանգների կազմի մեջ մտնելուց հետո մեծ զարգացում ապրեց հատկապես 19-րդ դարի երկրորդ կեսից և այժմ համարվում է Կալիֆոռնիայի առևտրական, արդյունաբերական, ֆինանսական և մշակութային կարևոր կենտրոններից մեկը: Քաղաքը հռչակված է համանուն ծովախորշի մուտքին գտնվող «Ոսկե դարպաս»-ով, իր երկու համալսարաններով, երաժշտանոցով և այլ մշակութային հաստատություններով: Քաղաքին առանձնահատուկ գեղեցկություն են հաղորդում ճարտարապետական ուրույն ոճի կառույցները, մասնավորապես՝ հռչակավոր կամուրջը:

Սան Ֆրանցիսկոյի հայ համայնքն սկսել է կազմավորվել 19-րդ դարի 80—90-ական թվականներին: Հայերի հոսքը այստեղ շարունակվել է ընդհուպ մինչև համաշխարհային երկրորդ պատերազմը և դրանից հետո: Այժմ Սան Ֆրանցիսկոյում և նրա արվարձաններում ապրում են ավելի քան 25 հազար հայեր, որոնք ներգրավված են կյանքի բոլոր ասպարեզներում: Համայնքի ազգային-հասարակական կյանքը կազմակերպում են զանազան միություններ՝ «Ամերիկահայ առաջադիմական միության» տեղական կազմակերպությունը, Հ. Բ. Ը. Մ.-ի, ՀՕՄ-ի, Հայ կարմիր խաչի, «Թեքեյան», «Համազգային» և այլ մշակութային միությունների մասնաճյուղերը: Համայնքի հավատացյալների մեծ մասը Հայ Առաքելական Եկեղեցու զավակներ են: Կան նաև հայ ավետարանական և հայ կաթոլիկ փոքրաթիվ համայնքներ, որոնք ունեն իրենց աղոթատները: Ներկայումս Սան Ֆրանցիսկոյում և նրա արվարձաններում գործում են Ս. Վարդան, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Հովհաննես Մկրտիչ հայ առաքելական եկեղեցիները՝ իրենց կից կիրակնօրյա կամ երեկոյան դպրոցներով: 1980 թ. այստեղ գործում է Հայ Կենտրոնը՝ իր սրահով և ամենօրյա վարժարանով: Տեղի հայ համայնքը սերտ կապի մեջ է Մայր Հայրենիքի հետ:

Եկեղեցում տեղի ունեցած ընդունելության կարճ արարողությունից հետո, Նորին Սրբությունը ինքնաշարժերի շքերթով և պատվո ոստիկանների ուղեկցությամբ հանդիսավորապես առաջնորդվում է «Հիլթոն» հյուրանոց, ուր նրան հատկացվում է մասնավոր հյուրաբաժին:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԳՐԵՅՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, եպիսկոպոսական Գրեյս եկեղեցում տեղի է ունենում սուրբ և անմահ պատարագ: Օրվա պատարագիչն է հայրապետական շքախմբի անդամ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Եպիսկոպոսական տաճարը լցված է խուռն բազմությամբ: Ս. պատարագին ներկա են քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ,

քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ և ավելի քան 4.000 հայ հավատացյալներ:

Հանդիսավոր թափորով և «Հրաշափառ»-ով Հայոց Հայրապետը մուտք է գործում տաճար և ողջունում շրջանի Եպիսկոպոսական Եկեղեցու առաջնորդ գերաշնորհ Ուիլյամ Սուինգին:

Ս. պատարագի ընթացքում սուրբ գրական ընթերցումները, որոնց մասնակցում են նաև օտար եկեղեցականներ, կատարվում են հայերեն և անգլերեն լեզուներով: Փառաշուք տաճարի կամարների տակ վեհորեն հնչում է Խորենյան քառաձայն պատարագը՝ հայկական միացյալ երկսեռ երգչախմբի կատարումով և փորձառու խմբավար տիար Էդգար Կոտոշյանի հմուտ ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ Նորին Սրբությունը խոսում է ոգեշունչ մի քարոզ:

Ս. հաղորդության պահին բազմաթիվ ջերմեռնադ հավատացյալներ ընդունում են Քրիստոսի Մարմինն ու Արյունը ութ հայ քահանա հայրերի ձեռքից:

Պատարագի արարողության ավարտին Հայրապետական մաղթերգի հանդիսավոր հնչյունների տակ Նորին Սրբությունը դուրս է գալիս տաճարից՝ իր օրհնությունները բաշխելով հայ հավատացյալներին:

Նոյեմբերի 12-ին, հինգշաբթի օրը, առավոտյան, Նորին Սրբությունը «Հիլթոն» հյուրանոցի սեղանատանը բարեհաճում է ընդունել Սակրամենտոյի հայոց հոգևոր հովիվ Տ. Սասուն աբեղա Զմրուխտյանին և շրջանի եկեղեցական-ծխական խորհուրդների անդամներին, որոնց հետ ունենում է ջերմ զրույց:

ԱՅՑ ԳՈՌՈՒՋՅԱՆ—ՋԱՔԱՐՅԱՆ ԱՄԵՆՈՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆ

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Գոուզյան—Զաքարյան ամենօրյա վարժարան: Վարժարանի մուտքի առջև Հայոց Հայրապետին և նրա շքախմբի անդամներին հարգանքով ողջունում են վարժարանի տնօրենուհի տիկին Արսինե Օշականը, դպրոցի ուսուցիչ-ուսուցչուհիները և հոգաբարձության մի խումբ անդամներ:

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվում է դեպի տեսչարան, ուր կարճ տեսակցություն է ունենում վարժարանի տեսչական, ուսուցչական կազմի և հոգաբարձության անդամների հետ: Ջերմ և մտերմիկ մթնոլորտում Վեհափառ Հայրապետին մանրամասն ծանոթություններ են տրվում վարժարանի կրթական ծրագրի, հայագիտական առարկաների դրվածքի և ուսուցման վերաբերյալ:

Հայոց Հայրապետին այս առթիվ ջերմորեն ողջունում է հայ անվանի գրող և քննադատ Հակոբ Օշականի որդին՝ Վահե Օշականը:

Ապա Վեհափառ Հայրապետը այցելում է վարժարանի մի շարք դասարաններ, հարցեր ուղղում աշակերտներին և տալիս իր օրհնությունը:

Այնուհետև դպրոցի բացօթյա բակում հավաքվում է վարժարանի ողջ աշակերտությունը՝ տնօրենուհու և ուսուցիչների գլխավորությամբ՝ երգերով, արտասանություններով և ուղերձներով ուրախացնելու Հայոց Հայ-

յուպետին: Խոր ապրումով կատարված երգերն ու արտասանությունները, իրենց հայկական հոգով ու շնչով, հարազատ մանկականությամբ, հուզումով էին լցնում Վեհափառ Հայրապետի սիրտը: Աշակերտների մանկական շրթների վրա թրթռալով կրկնապես քաղցրանում էր հայոց մեծասքանչ լեզուն և որպես նշխար ու սրբություն բաշխվում բոլոր ներկաներին:

Խորապես զգացված և հուզված խոսք է առնում Հայոց Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԳՌՈՒՉՅԱՆ—ՋԱՔԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՈՒՄ

Հայկական առաջին եկեղեցին, ինչպես գիտեք, հիմնվեցավ Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի օրոք, 808 թվականին, և հայ ժողովուրդը քրիստոնեական կրոնը ընդունեց պետականորեն, 801 թվականին: Այդ օրերեն ի վեր հայ ժողովուրդը մնաց քրիստոնյա ժողովուրդ, և Էջմիածինը մնաց կեդրոնը Հայ Առաքելական Եկեղեցիին: Ես Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսն եմ և իմ պարտքը կնկատեմ այցելել արտասահմանի մեր եկեղեցիները, որովհետև Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը կապրին աշխարհի վրա Հայաստանեն դուրս: Գուք Ամերիկայի մեջ եք, ուրիշներ՝ Հարավային Ամերիկա, ուրիշներ՝ Ֆրանսա, Անգլիա և այլն, բայց բոլոր հայերը, բոլոր հայկական եկեղեցիները միասին՝ մեկ և անբաժան Եկեղեցի կկազմեն, միևնույն հավատքը ունին և միևնույն ազգային, մշակութային առաքելությունը: Ահա այդ պարտականությունն է, որ զիս կմղե այցելության գալ, և ես շատ կուրախանամ, որ մեր եկեղեցիներու կողքին, շատ տեղեր, կան նաև հայկական վարժարաններ, ինչպես այս քաղաքին մեջ:

Ես այս առիթով իմ անկեղծ գնահատանքը կբերեմ այս դպրոցը հիմնողներուն, բարերարներուն, հոգաբարձության, ամբողջ ուսուցչական կազմին, ի մասնավորի տիկին Օշականին, որ ձեր տնօրենուհին է: Վստահ եղեք, որ հայաստանցիները, այսինքն Հայաստան ապրող բոլոր հայերը, բոլորն ալ գիտեն և ուրախ են, որ արտասահմանի մեջ հայկական եկեղեցիներ կան, հայկական դպրոցներ կան: Հայաստանցիներեն շատերը կըսեն՝ նախ դպրոց, հետո եկեղեցի: Եկեք ըսենք՝ եկեղեցի և դպրոց միատեղ: Երկուքն ալ առաջնահերթ նշանակություն ունին մեր ազգին համար, և՛ Հայաստանի մեջ, և՛ Սփյուռքի տարածքի վրա: Բոլոր անոնք, որոնք արտասահմանի մեջ կաշխատին, հերոսական ճիգեր ի գործ կդնեն, որպեսզի մեր մայրենի լեզուն ազատ և բարձր հնչե բոլոր երկինքներու տակ: Անոնք իսկապես արժանի են մեր հիացումին, մեր քաջալերանքին և մեր օրհնության: Արտասահմանի ամեն հայկական եկեղեցի ամենաթանկագին նվերն է Մայր Հայրենիքին:

Սիրելի երեխաներ, ես Հայաստանեն կուգամ: Այնտեղ ալ շատ հայկական դպրոցներ կան՝ հազար-հազար աշակերտներով ամեն մեկ դպրոցի մեջ: Բոլորը կսորվին նույն մայրենի լեզուն, ինչպես դուք՝ այստեղ: Եվ գրեթե նույն երգերը կերգեն, նույն արտասանությունները կարտասանեն: Եվ ամենքն ալ կսիրեն հայերեն խոսիլ, հայերեն գրել և հայերեն պարել:

Ես կմաղթեմ, որ ձեր վարժարանը հետագա տարիներուն իր դասարանների թիվը ավելցնե և հասնի մինչև տասներկուերորդին, և աշակեր-

տության թիվն ալ առնվազն կրկնապատկվի, նույնիսկ եռապատկվի: Ես պիտի բաժնվիմ ձեզմե քիչ հետո և երևի այլևս ձեր կողմերը չեմ գար՝ ձեզ տեսնելու, բայց պիտի ուզեի լսել Էջմիածնեն, որ ձեր աշակերտության թիվը հետզհետե կաճի, և դուք կպատրաստեք իսկապես հայ ժողովուրդին արժանի զավակներ:

Սիրելի եղեխաներ, դուք հայերեն կսորվիք Հայաստանի համար, այն երազանքով, որ օր մը բոլոր հայերը աշխարհով մեկ պիտի հավաքվին Արարատի շուրջ, և մեր ազգը իր բոլոր արդար իդեալներու իրականացման պիտի հասնի: Այս մաղթանքներով կրկին կօրհնեմ զձեզ և կցանկամ, որ դուք մարմնով և հոգիով աճիք, զորանաք, զարգանաք և օր մը ըլլաք Հայաստանի զինվորներ: Զինվորներ բառը գործածեմ ոչ թե զինվորականի իմաստով, այլ հավատարմորեն հայ ժողովուրդին և Հայաստանին ծառայելու իմաստով:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ. ամէն»:

Որպես իր այցելության հիշատակ, Վեհափառ Հայրապետը դպրոցին նվիրում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Արարատի մենադիր նկարները:

Մեկնելուց առաջ վարժարանի ուսուցչական կազմը մոտենում է Վեհափառ Հայրապետին և աջահամբույրով ստանում նրա օրհնությունը:

Ժամը 13-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ճաշկերույթ է տալիս Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու Սան Ֆրանցիսկոյի առաջնորդ Ջոն Քաինզ արքեպիսկոպոսի փոխանորդ Ֆրանսիս Հեյս եպիսկոպոսը, Ս. Մարիամ եկեղեցու առաջնորդարանում:

Ճաշկերույթի ընթացքում, որն անցնում է եղբայրական ջերմ մթնոլորտում, փոխանակվում են փոխադարձ ողջույնի և գնահատանքի հարգալից խոսքեր և հուշանվերներ:

Ապա Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է դիտելու Ս. Մարիամ նորակառույց հոյակերտ եկեղեցին:

Ժամը 14.30-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով քաղաքավարական այցելություն է տալիս Սան Ֆրանցիսկոյի Սովետական Միության հյուպատոսարան և հանդիպում ունենում հյուպատոս Վլադիմիր Կամենևի հետ բարեկամական ջերմ մթնոլորտում:

Այս առթիվ հյուպատոսարանի ծովահայաց շքեղ սրահում տեղի է ունենում ընդունելություն:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ

Ավելի ուշ, երեկոյան ժամը 19.30-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, Սան Ֆրանցիսկոյի հայոց եկեղեցական համայնքը «Հիլթոն» հյուրանոցում Հայոց Հայրապետին պատվում է համաժողովրդական մեծ ճաշկերույթով, որին մասնակցում են հայ և օտար 400 հրավիրյալներ:

Ընդունելության գեղարվեստական բաժինն սկսվում է Ամերիկյան ազգային քայլերգով և «Հայրապետական մաղթերգ»-ով:

Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ջերմ խոսքերով ողջունում են Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ Ջոն Քեան

վարդապետը, հայ ավետարանական համայնքի վերապատվելի Նշան Պագալյանը, շրջանի Հույն Օրթոդոքս Եկեղեցու թեմական առաջնորդ Տ. Անտոնի եպիսկոպոսը։

Գեղարվեստական պատշաճ մի հայտագրի գործադրությունից հետո, ելույթ է ունենում նաև Տ. Վաչե արքեպիսկոպոսը, որը, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին՝ նրա օրհնաբեր այցելության համար արևմտյան թեմ, հրավիրում է նրան տալու հայրապետական իր օրհնությունն ու պատգամը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Այս երեկո ես և՛ ուրախ եմ, և՛ քիչ մըն ալ տխուր։ Ուրախ եմ, որ կգտնվիմ ձեր մեջ, դուք, որ զիս շրջապատած եք այսքան սիրով և այսքան հարգանքով։ Քիչ մըն ալ տխուր, որ ստիպված եմ ձեզմե բաժնվիլ և ինձ հետ տանիլ միայն ձեր բարի հիշատակները։

Այս պահուն ես կուզեմ գնահատանքի խոսք ուղղել ձեր եկեղեցիներու հոգևոր հովիվներուն, որոնց անձնապես ճանչցա իրենց աշխատանքի ճանապարհի վրա և հաստատեցի, որ այստեղ, Կալիֆոռնիո այս ընդարձակ թեմին մեջ, քրիստոնեական դաստիարակության, հոգևոր կյանքի մշակման աշխատանք կկատարվի։ Այս հոգեշեն աշխատանքը ամբողջ թեմի տարածքին վրա կղեկավարե ձեր ժրաջան և նվիրյալ հոգևոր առաջնորդը՝ գերաշնորհ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան։ Ես զինք կճանչնայի անշուշտ մինչև հիմա, սակայն այս այցելության առիթով հաստատեցի իր բացառիկ հոգևոր եռանդը՝ ի գործ դրված եկեղեցիներու պաշտաոությանև համայն մեր հավատացյալներու հոգևոր կյանքի շինության ի խնդիր։ Ես կբերեմ իրեն իմ ողջույնը և իմ հայրական սերը՝ մաղթելով, որ Աստված զինք քաջառողջ պահե տակավին երկար, շատ երկար տարիներ, և Սուրբ Հոգին առաջնորդե զինք բարձունքե բարձունք հոգևոր իր առաքելության ճանապարհին վրա։ Մանավանդ կմաղթեմ, որ իր մեծ երազանքը՝ Լոս Անջելոսի Մայր եկեղեցվո շինության իր երազանքը կարճ ժամանակի մեջ կյանքի կոչվի, և դուք բոլորդ՝ Կալիֆոռնիո հայ հավատացյալներդ, հպարտանաք այս հոյակապ ձեռնարկով։ Մայր եկեղեցվո շինությունը պիտի ըլլա ձեր պատիվը, ձեր հպարտությունը և մեր հոգեկան մխիթարությունը։

Ես քաղցր զգացումներով տոգորված եմ այս երեկո և իմ շնորհակալության խոսքը կուզեմ ուղղել բոլոր այն անձնավորությանց, աշխարհական թե հոգևորական, որոնք խոսք առին՝ ողջունելով իմ գալուստը, իմ այցելությունը Սան Ֆրանցիսկո։ Շնորհակալություն մեր քույր եկեղեցիներու մեծահարգ ներկայացուցիչներուն, մեր սիրելյալ եղբայրներուն ի Քրիստոս։

Ես այս պահուն իմ հայացքը կուղղեմ դեպի Նորին Սրբազնություն Անտոնիոս եպիսկոպոսը, որ իմ սրտին վրա զետեղեց այս ոսկե պանակեն։ Ես կգնահատեմ այս թանկագին նվերը՝ իր հիշատակը, բայց կգնահատեմ առավելապես իր ոսկե սիրտը։ Ձայն պիտի պահեմ իբրև սուրբ հիշատակ, որ ինձ միշտ պիտի հիշեցնե մեր երկու Եկեղեցիներու բազմադարյան եղբայրությունը, պիտի հիշեցնե ինձ իր եղբայրական վերաբերմունքը դեպի մեր Եկեղեցին և իմ անձը։ Ես երբեք չպիտի մոռնամ այն

միատեղ աղոթքը, զոր կատարեցինք Լոս Անջելոսի Օրթոդոքս Եկեղեցվո հոյակերտ տաճարին մեջ, և այս պանակեն պիտի միշտ հիշեցնե ինձ նաև մեր երկու ժողովուրդներուն ճակատագիրը, մանավանդ պիտի հիշեցնե, որ թե՛ հույն ժողովուրդը և թե՛ մենք՝ հայերս, կսպասենք, որ արդարության դռները բացվին մեր ազգերուն առջև: Ես կակնարկեմ մասնավորապես Կիպրոսի ողբերգության: Թող բարին Աստված մեր Եկեղեցիներուն և մեր ժողովուրդներուն միշտ մնա օգնական: Նաև շնորհակալություն ուրիշ հիշատակի մը համար, զոր ինձ ներկայացուց Ջեկսկիս Ֆայլերը Կալիֆոռնիո երեսփոխանական ժողովին կողմե:

Սիրելիներ, ահավասիկ կմոտենա պահը, երբ պետք է ձեզմե բաժնվիմ: Կալիֆոռնիո շրջանի իմ այցելությունը, առաջին օրեն մինչև այսօր, ընթացավ սքանչելի կերպով, վառահեղ, սրբազան արարողություններով, ճաշկերույթներով և հանդիպումներով: Շնորհակալություն ամեն բանի համար ձեզի բոլորիդ:

Իմ այցելության ճանապարհին, Կալիֆոռնիո մեջ, բարձր կատար մը եղավ իմ հանդիպումը Լոս Անջելոսի մեջ ձեր նահանգապետ Ջորջ Դեոքմեջյանի հետ, որ իմ վրա սքանչելի տպավորություն թողուց իբրև հայ քրիստոնյա, իբրև պատասխանատու պաշտոնատարը, իբրև նահանգապետը Ամերիկայի Միացյալ Նահանգներու ամենամեծ նահանգի: Ես կխորհիմ, թե Ջորջ Դեոքմեջյանն հայ ժողովուրդի ընտրն է Ամերիկայինն: Այդ ընտրով հայ ժողովուրդը ինքզինքը ավելի գորավոր կզգա և ավելի լավատես կդառնա իր ապագայի իդեալներով իրականացման ճանապարհի վրա: Թող բարին Աստված օրհնե մեզ բոլորս ամեն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԿԱՆԱԴԱՅՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՆԱԴԱՅՈՒՄ

Կանադայի առաջին հայ բնակիչները եղել են վեց երիտասարդներ, որոնք Մոնրեալ են հաստատվել 1908 թվականին, և որոնց գալիս են միանալու 12 այլ երիտասարդներ՝ գաղթելով Արևմտյան Հայաստանից: 1923-ին 110 հայ որբերի մի խումբ Կանադական Որբախնամ Ընկերության կողմից բերվում է Օնթարիո նահանգի Ջորջթաուն քաղաք: Նրանք որոշ ժամանակ այստեղ մնալուց հետո ցրվում են մոտակա քաղաքները, և նրանց հաջորդները կազմում են կորիզը Տորոնտոյի և շրջակայքի հայության:

1950-ական թվականների սկզբից սկսվում է դեպի Կանադա հայերի գաղթի զանգվածային մի շարժում: Վերջին երեսուն և ավելի տարիների ընթացքում Կանադայում բնակվող հայերի թիվը համալրվել է Թուրքիայից, Իրանից և Մերձավոր Արևելքից գաղթած հայերով: Ներկայումս Կանադայում ապրում է ավելի քան 50.000 հայ ազգաբնակչություն՝ տեղաբաշխված Մոնրեալ, Տորոնտո, Նիագարա, Սենթ Քեթրինզ, Համիլթոն, Կալթ, Լոնդոն, Վանկուվեր, Քելկրի և Իտմոնթոն քաղաքներում:

Կանադայում հայերի հիմնական կայքերը եղել են Մոնրեալն ու Տորոնտոն, որոնք զարգացած ու շքեղ քաղաքներ են:

Կանադայի առաջին հայկական եկեղեցին կառուցվում է Սենթ Քեթրինզի մեջ 1930 թվականին: Տորոնտոյի Ս. Երրորդություն եկեղեցին օծվում է 1953-ին, իսկ Մոնրեալի Հայաստանյայց Եկեղեցու օրինական պետական արձանագրությունը կատարվում է 1957-ին:

1950-ական թվականներից Մոնրեալի և Տորոնտոյի մեջ կազմվում են բազմաթիվ մշակութային, բարեսիրական, մարզական, երիտասարդական միություններ, ինչպես՝ Հ. Բ. Ը. Միության տեղական մասնաճյուղերը, Ալեք Մանուկյան կենտրոնը, Թեքեյան Մշակութային Միությունը, Պոլսահայերի Միությունը և այլն:

Զույգ քաղաքներում կազմակերպված հայկական համայնքներն այժմ ունեն ամենօրյա հայկական վարժարաններ, ակումբներ և հոգևոր ու մշակութային այլ հաստատություններ:

Կանադայի կենսունակ գաղութը ունի նաև իր մամուլը: Մոնրեալի մեջ հրատարակվում են «Ապագա» եռալեզու շաբաթաթերթը՝ հիմնված 1975-ին, «Հորիզոն» շաբաթաթերթը՝ հիմնված 1979-ին:

Կանադայի արագորեն աճող հայ գաղթօջախը առանձին թեմական առաջնորդությամբ օժտելու անհրաժեշտություն է ստեղծվում սկսած 1960-ական թվականներից: Երկար կազմակերպչական աշխատանքների շրջանից հետո, Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակով 1980 թ. նոյեմբերի 15-ին հռչակվում է Կանադայի հայոց թեմի կազմությունը: 1983-ին Վեհափառ Հայրապետը վավերացնում է Կանադահայ թեմի նոր կանոնադրությունը, իսկ 1984 թվականի ապրիլի 13-ին իրագործվում է Կանադայի թեմի պետական օրինական արձանագրությունը:

Ներկայումս թեմական առաջնորդ Տ. Վազգեն արքեպս. Քեշիշյանի ղեկավարության ներքո նորակազմ կանադահայ թեմում գործում են Հայ Առաքելական յոթը եկեղեցիներ, որոնք գրեթե բոլորն էլ օժտված են հոգևորականներով:

Վերջին շրջանում հատկապես նկատելի է կանադահայերի մեղվաջան աշխատանքն ու զոհաբերության գնահատելի ոգին հանուն ազգապահպանման:



ԺԱՄԱՆՈՒՄ ՏՈՐՈՆՏՈ

Նոյեմբերի 18-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով հովվապետական այցելության է մեկնում Կանադա՝ հայ համայնքին տանելով ողջույն և օրհնություն:

Տորոնտոյի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը, Տորոնտոյի հոգևոր հովիվ Տ. Հովնան վրդ. Տերտերյանը, թեմական խորհրդի անդամներ, ընդունելության հանձնաժողովի անդամներ և հազարավոր հավատացյալներ:

Հանուն Օնթարիոյի շրջանի վարչապետ Դեյվիդ Պետերսոնի, Վեհափառ Հայրապետին դիմավորելու էր եկել նրա ներկայացուցիչ Ջերրի Ֆիլիպսը:

Օդանավակայանի սրահում Վեհափառ Հայրապետը հարցազրույց է ունենում «The Toronto Star» թերթի թղթակցի հետ: Հայ հասարակությունը երկյուղածությամբ, հիացումով և հոգեկան հրճվանքով է շրջապատում իր առաքելաշնորհ հովվապետին, որը իր օրհնությունները բաշխելով ընտում է իրեն հատկացված ավտոմեքենան և մեծահանդես շքերթով առաջնորդվում դեպի «Ռենեսանս» հյուրանոց:

Երեկոյան ժամը 19-ին Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Տորոնտոյի Ս. Երրորդություն հայոց եկեղեցի՝ ներկայությամբ խուռներամ հավատացյալների:

Եկեղեցում բարիգալստյան խոսք է ասում թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Քեշիշյանը:

Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Կանադահայ այս թեմը թեև ամենափոքրը և սակայն իր հոր հանդեպ ամենահավատարիմն է, ամենանվիրյալը, և իր սիրո մեջ անսահման ծով մը՝ բացված իր հոր առջև, որ կուգա հովվապետական, հայրական իր օրհնությունը բերելու իրենց: Երեք տարիներու ընթացքին այս թեմը վերա-

կանգնեցավ շնորհիվ Ձեր հայրական հոգատարության, Ձեր հայրական մասնավոր խնամքին ներքև, և մենք որպես տրուպ ծառան, ամեն կերպ աշխատեցանք, որպեսզի Ձեր հույսերը ի դերև չելնեն: Մենք այսօր, բազում անձկություններե անցընելե ետք, իսկապես հրճվանքի մեջ ենք, որովհետև մեր տունեն ներս կընդունինք մեր Հայրը, խնամատար Հայրը, սիրող Հայրը: Դուք կուգաք մեր սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնեն, Ձեզի հետ կբերեք 130 Հայրապետներու ոգին, Դուք կուգաք մեր Մայր Հայրենիքեն, Արարատի փեշերեն, և Ձեր կարոտաբաղձ զավակները կսպասեն Ձեր օրհնությունը: Դուք բացիք Ս. Էջմիածնի խորհուրդը մեր աչքերուն և մեր հոգիներուն այսօր, Վեհափառ Տեր, բաշխեցիք մեզի Ձեր օրհնությունը, որուն անսահմանորեն պետք ունինք:

Բարի եկաք, Վեհափառ Տեր, Ձեր գալուստը ըլլա բարի և օրհնաբեր:

Ապա Վեհափառ Հայրապետը տալիս է իր ողջույնն ու օրհնությունները եկեղեցում հավաքված հայրենակարոտ իր զավակներին:

Նոյեմբերի 14-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է Ս. Երրորդությունն Նորակառույց եկեղեցու նվիրատուներին և նախաճաշում նրանց հետ հյուրանոցի սեղանատանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը այցելություն է տալիս Հ. Բ. Ը. Միության Տորոնտոյի ամենօրյա վարժարան՝ արժանանալով սիրալիր ընդունելության:

Տորոնտոյի հինգ հայկական վարժարանների տեսուչները, ուսուցիչ-ուսուցչուհիները, խնամակալ մարմնի անդամները, մի շարք ծնողներ և ողջ աշակերտությունը, ավելի քան 2.000 հոգի, ցնծությամբ դիմավորում են Հայոց Հայրապետին, որը խանդավառ և դղրդագին ծափերի տակ մուտք է գործում վարժարանի հանդիսասրահ:

Այստեղ, հանուն վարժարանների տեսչության, ուսուցչական կազմի և աշակերտության, Վեհափառ Հայրապետին բարի գալուստ է մաղթում Ս. Սահակ և Ս. Մեսրոպ շաբաթօրյա վարժարանի տնօրեն տիար Կարո Աբրահամյանը հետևյալ ոգերձով.

«Վեհափառ Տեր,

Նախքան սրտես բխած խոսքերը Ձերդ Վեհափառության ուղղելը, Տորոնտոյի բոլոր հայ մանուկներուն և հատկապես Ս. Սահակ և Ս. Մեսրոպ ազգային շաբաթօրյա վարժարանի աշակերտության անունով, բարի գալուստ կմաղթեմ Ձեզի և կխորհիմ համբուրելու Ձեր Սուրբ Աջը և ընդունելու Ձեր օրհնությունը: Մենք անչափ ուրախ ենք և հպարտ, որ կվայելենք աշխարհով մեկ ցրված ամբողջ հայության հոգևոր և գերագույն Հոր բացառիկ ներկայությունը: Այս երջանիկ օրը անջնջելի պիտի մնա մեր հիշողության մեջ:

Հայ դպրոցեն ներս մեր ուսուցիչները շատ հաճախ կխոսին մեր Հայրենիքի և հավատքի կեդրոն Սուրբ Էջմիածնի մասին: Այսօր այդ խոսքերը ձև ու մարմին կառնեն, քանի որ մեր ամբողջ հայրենիքն ու ժողովուրդը կտեսնենք Ձեր աչքերուն մեջ: Ձեր ներկայությունը մեր հողին, մեր Հայրենիքին և մեր ազգին կարոտը կարթնցնե մեր մեջ:

Օտար երկիրներու մեջ շատ դժվար է հայ մնալը, բայց մենք, հավաքված մեր Եկեղեցիին, դպրոցներուն և մշակույթի կեդրոններուն շուրջ, հայ ծնողներուն և մեր ուսուցիչներուն օգնությամբ, մեր փոքրիկներուն կսորվեցնենք մեր անուշ լեզուն, մեր պատմությունն ու կրոնքը, որպեսզի գոյատևե հայ ազգը: Բայց այս բոլորը անօգուտ պիտի ըլլար, եթե չունենալինք մեր Հայրենիքը: Ձեր ներկայությունը կհաստատե, թե Հայրենիք ունինք և կզորացնե մեր հավատքը՝ շարունակելու հայ մնալու մեր պայքարը:

Մեր սրտի փափաքն է տեսնել մեր Հայրենիքը: Մեր մաքուր սրտերով կաղոթենք Աստուծո, որ Ձեզի պարգևե երկար և առողջ տարիներու կյանք, որպեսզի կրկին անգամ ուռիթը ունենանք Ձեր Սուրբ Աջը համբուրելու, այս անգամ Սուրբ Էջմիածնի մեջ»:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ներկա է լինում իր պատվին կազմակերպված աշակերտական ճոխ հանդեսին, որին իրենց մասնակցությունն են բերում Տորոնտոյի բոլոր հայ վարժարանների սաները: Այս առթիվ թեմական առաջնորդ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը ներկաների անունից բարիգալստյան սրտագին խոսք է ուղղում Հայոց Հայրապետին:

Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր, ինչպե՞ս չհրճվիլ, չհուզվիլ և չլեցվիլ, տեսնելով հեռավոր Կանադայի այս ափերու վրա հայ բեկորներուս զավակները, որոնք տակավին հայերեն կբարբառին: Հերոսները միայն պատերազմի դաշտերու վրա չէ, որ կինան, իրենց հայրենիքի սահմանները, իրենց ազատությունը, իրենց անկախությունը պաշտպանելու համար: Հերոսները ամեն տեղ են, ամեն վայրկյան են: Եվ հայ հերոսները զանազան ձևերով կգործադրեն իրենց ազգային պատկանելության պարտականությունները: Հոս, Կանադայի այս տարածքի վրա, Տորոնտո այս քաղաքին մեջ, մեր ժողովուրդը իր հերոսական պայքարը կմղե՝ ըլլալու, մնալու հայ: Եվ այդ պայքարի մեծագույն հերոսները ծնողներն են, որոնք մեծ զիջումներով, մեծ ճիգերով իրենց զավակները կբերեն հայկական վարժարաններ, որպեսզի իրենց զավակները այս հողին վրա հայ մնան, հայ մեծնան, աճին և ուռճանան, և լավ կանադացի քաղաքացի ըլլալե առաջ և վերջ՝ ըլլան մաքուր, լավ, հարազատ հայեր: Երկրորդ ծնողները, երկրորդ հերոսները ուսուցիչներն են, որոնք կնվիրեն իրենք զիրենք, որպեսզի ապագա հայությունը այդ պզտիկներու մեջ հիմք դնե, արմատ նետե և մեծնա: Ձեր զավակները այս ափերուն վրա զոհողություններով և մեծ ճիգերով կջանան հայ մնալ: Վստահ եմ, որ այսօր Ձեր ներկայությունը մեր երեխաներու սրտերու մեջ ավելի ևս պիտի ամրապնդե իրենց հայկականությունը, իրենց հայերեն լեզուն:

Վեհափառ Տեր, պիտի խնդրեի Ձեզմե, որպեսզի բարձրանաք բեմ, խոսիք, տաք Ձեր հայրական զգացումները, ներշնչեք և ներշնչվիք այս երեխաներով ու անոնց ծնողներով, որպեսզի անոնք մնան հարազատ հայերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր Մայր Հայրենիքի:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը, գնահատելով սիդնիի քահանայ ուսուցիչների հայրենասիրական նվիրյալ աշխատանքը հանուն մայրենի լեզվի և հայ դպրության պահպանման, տալիս է իր հայրապետական օրհնությունն ու պատգամը ուսուցիչներին, աշակերտությանը և բոլոր ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Ժամը 12-ին նույն դահլիճում Վեհափառ Հայրապետը հանդիպում է ունենում Տորոնտոյի հայ երիտասարդության ներկայացուցիչների հետ, որոնք նույնպես, ի պատիվ Հայոց Հայրապետի, գործադրում են գեղարվեստական կոկիկ մի հայտագիր:

Հայ երիտասարդության անունից խոսք առնելով՝ թեմական առաջնորդ սրբազանը իր երախտագիտական զգացումներն է արտահայտում Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ նշելով, որ հայրենիքից հեռու, օտար ափերում, երիտասարդ հայ ժրաջան հոգիներ, նախանձախնդիր նոր սերնդի հայության պահպանման, միավորում են իրենց ջանքերը, որպեսզի Սիդնիի մեջ հասակ առնող մատաղ հոգիներում միշտ վառ մնա սերը Մայր Հայրենիքի, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և դարավոր հայ դպրության արժեքների նկատմամբ:

Վերջում Վեհափառ Հայրապետը իր հայրական հորդորն է տալիս ներկա երիտասարդությանը հետևյալ ոգեշունչ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Սիրելի երիտասարդներ՝ աղջիկներ և տղաներ, ուշադիր լսեցի ձեր ուխտագիրը խմբագրված սքանչելի ոգիով, հայկական շունչով: Բնական է, դուք չեք կրնար միայն իբրև հայ ապրիլ այստեղ: Դուք պիտի ապրիք նաև կանադական կյանքը, ամեն իմաստով: Դուք անգլերեն լեզուն գիտեք, Ֆրանսերեն ալ կխոսիք, պիտի կարդաք այդ լեզուներով գրականություն: Մեկ խոսքով՝ պիտի ապրիք և պետք է ապրիք կանադական կյանքը և ոչ թե կոզի մը ըլլաք՝ բոլորովին անհաղորդ կանադական միջավայրին: Այդ հնարավոր չէ նախ, և ապա անհրաժեշտ ալ չէ ու նույնիսկ լավ չէ: Պետք է, ընդհակառակը լայն չափերով մասնակցիք այսօրվա ձեր երկրի արդիական կյանքին: Բայց տեղ մը պիտի պահեք, անկյուն մը մնայուն՝ ձեր հայկականությունը պահպանելու համար: Եվ կփափագիմ, որ դուք ոչ միայն հայերեն խոսիլ գիտնաք. այդքանը չի բավեր: Պետք է նաև հայերեն կարդաք, հայ գրականություն կարդաք, թե՛ մեր հին և թե՛ նոր հեղինակները: Կուզեմ ձեզի հայտնել, որ հայաստանցիները գիրք կարդալ շատ կսիրեն, ընթերցասեր են: Անոնք ոչ միայն հայ գրականություն կկարդան, այլ նաև

օտար գրականություն, հայերեն թարգմանված կամ ռուսերենով: Ես հանդիպած եմ երևանցի շատ հայերու, 40—70 տարեկան մարդիկ, որոնք իրենց ժամանակին Երևանի դպրոցները ավարտած, բավական ընդարձակ ծանոթություն ունին արևմտյան գրականության մասին, մանավանդ ֆրանսական և անգլիական: Գրեթե բոլոր ֆրանսացի կարևոր հեղինակներուն ծանոթ են՝ Հյուգո, Բալզակ, Դյումա և այլն: Նույնպես անգլիացի մեծ հեղինակներուն: Օրինակ՝ Շեքսպիրը ամեն տեղ կներկայացվի Սովետական Միության մեջ, բայց բոլոր Հանրապետություններու մեջ Հայաստանը առաջին տեղը կգրավե, իբրև Շեքսպիրի գործերուն առավել ծանոթ ժողովուրդ: Երկու տարի առաջ էր, Շեքսպիրին նվիրված ֆեստիվալ մը կազմակերպվեցավ, որուն ամբողջ Սովետական Միության ժողովուրդները մասնակցեցան, և այդ ֆեստիվալը Երևանի մեջ եղավ, ի նշանավորումն այն իրողության, որ հայերը մյուսներեն ավելի ծանոթ են և թարգմանած են Շեքսպիրի գործերը:

Մշակույթները զիրար կամբողջացնեն և զիրար կհարստացնեն: Այն մարդը, որ իսկապես մշակույթ կրող մարդ է, ըսենք անգլիական մշակույթին պատկանող, այդ մարդը հայ մշակույթին ծանոթանալով ավելի պիտի հարստացնե իր հոգեկան աշխարհը: Թեև մեր ազգը փոքրիկ է հիմա, սակայն բարեբախտաբար հարուստ է իր մշակույթով: Հայությունը պատմության ընթացքին զոհվեցավ, նահատակվեցավ, բայց չզոհվեցավ անոր մշակույթը: Մենք այսօր մեծ ժողովուրդի մը հավասար մշակութային գանձատուն մը ունինք՝ և՛ հին, և՛ նոր: Մանավանդ այս վերջին հիսուն-վաթսուն տարիներու ընթացքին անհամեմատ ծաղկեցավ, աճեցավ հայ մշակույթը Խորհրդային Հայաստանի մեջ: Ես կփափագիմ, որ դուք հայ մշակույթ կրողներ ըլլաք կանադական մշակույթի արժեքներու կողքին: Այս իմ առաջին պատվերն է ձեզի:

Երկրորդ՝ շատ կարևոր է, որ դուք համախմբված ապրիք այս գաղութին մեջ. և այս տունը, Հայ Բարեգործական Միության այս սքանչելի շենքը, որ տակավին իր լրացումները պիտի ունենա դպրոցական նոր շենքով մը, փառավոր կրթական և մշակութային կեդրոն մըն է, որու մեջ համախմբված, սուրբ Եկեղեցվո օրհնության ներքև, դուք պիտի կարողանաք համախումբ ապրիլ և նվիրվիլ կրթական, մշակութային, գեղարվեստական գործի: Այսպես համախումբ ապրելով, դուք ձեր միջև պիտի ստեղծեք եղբայրական սիրո մթնոլորտ, պիտի մնաք անքաժան, ընտանիքներ պիտի կազմեք: Ավելի ամուր ընտանիքներ կկազմվին, երբ ամուսնացողները հայեր են: Այս ընդհանուր փորձառություն մըն է, որ ես գիտեմ նաև Ռումանիայեն: Այս ձևով, կխորհիմ, մեր ժողովուրդը ավելի պիտի կարողանա պահպանել այն, ինչ որ կկոչվի ընտանեկան բարոյական: Այսօրվա մոդեռն կյանքի պայմաններու մեջ, ընտանեկան կյանքի բարոյականը հետզհետե կտկարանա. ամուսնալուծումները շատ-շատ են, առանց ամուսնության ապրողները նույնպես կշատնան: Ես պիտի փափագեի, որ դուք հայ երիտասարդներդ, հեռու մնայիք նման վատառողջ հակումներե և ճաճապարհներե և պահպանեիք այն, ինչ որ կկոչենք ընտանեկան սրբություն, ընտանեկան բարոյական: Պետք է ըսեմ, որ Հայաստանի մեջ ընտանեկան բարոյականի զգացումը շատ ամուր է: Ընդհանրապես հայաստանցին ընտանիքի կապված մարդ է, ամուր հարաբերություններ կան ամուսիններու, ծնողներու ու երեխաներու միջև: Զավակները երբեք իրենց ծնողներեն չեն բաժնվիր: Չի պատահեր, որ հայ մարդը իր ծերացած

մայրը կամ հայրը ծերանոց տանի։ Այո՛, ընտանեկան ներքին սիրո և միության զգացումը սրբությամբ պետք է պահպանել։

Եվ վերջապես, կփափագիմ, որ դուք ձեր կյանքի ճամփուն վրա հավատարիմ մնաք այն ուխտին, զոր ստորագրեցիք հիմա։ Կբաժնվիմ ձեզմե լավատես ոգիով և կփափագիմ, որ երբ առիթ ունենաք, սրբազան հոր կամ հայր տուրքի հետ խորհրդակցելով, փոքրիկ խումբերով այցելության գաք Հայաստան՝ Ս. Էջմիածին, նաև այնտեղ ուղղակի Ս. Էջմիածնի կամարներու տակ ստանալու համար Աստուծո օրհնությունը և Արարատի ողջույնը. ամեն։

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը, շրջապատված իր շքախմբի անդամներով և խուռներամ ժողովրդով, «Հոգւոց» է ասում Հ. Բ. Ը. Միության շենքի շրջափակում գտնվող Ապրիլյան մեծ եղեռնի զոհերին նվիրված հուշարձանի առջև։

Երեկոյան ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը նախագահում է Ս. Երրորդություն նորակառույց եկեղեցու նավակատիքի արարողությանը։

Հավարտ արարողության Հայոց Հայրապետին Հ. Բ. Ը. Միության շենքի ընդունարանում այցելություն է տալիս Օնթարիոյի շրջանի վարչապետ մեծարգո Դեյվիդ Պետերսոնը։

ՃԱՇԿԵՐՈՒԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան ժամը 20-ին Ս. Երրորդություն հին եկեղեցուն կից մշակութային կենտրոնում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի և եկեղեցու նավակատիքի առիթով, ճաշկերույթ է տրվում Օնթարիոյի շրջանի հայ եկեղեցական վարչության անդամների կողմից։

Ճաշկերույթի ընթացքում խոսք է առնում եկեղեցու հոգաբարձու պրն. Ժիրայր Պերճյանը։

«Վեհափառ Տեր,

Ձեր օրհնաբեր և օրհնալիր այցելությունը մեր համայնքեն ներս հուզումնախառն կդարձնե մեր զգացումները մեր ուրախության հետ։ Խոնարհաբար նշանակված եմ այսօրվա թարգմանը ըլլալու բոլորին երախտագիտության և որդիական զգացումներուն՝ հանդեպ Ձերդ Սրբության անձին։

Վեհափառ Տեր, եթե սա պահուս այստեղ հավաքված ներկաներեն յուրաքանչյուրին սրտին մեջ գտնված սիրո կայծը, հանդեպ Ս. Էջմիածնի և իր Գահակալին, տեսանելի ըլլար, մենք պիտի տեսնեինք հոս բոցավառ հսկա հուր մը։ Այսպիսի հավատացյալ ջերմեռանդ հոգիներու շնորհիվ է, որ առկայծ պիտի պահվի Լուսավորչի կանթեղը։

Հայը ի Սփյուռս աշխարհի կփնտրե իր եկեղեցին իր ինքնուրույն դավանանքովը և ավանդություններովը, իր ազգային լեզվովը և ծեսերովը, իր հոգեզմայլ շարականներովը և հոգեպարար երաժշտությունովը։ Ուրիշ խոսքով՝ հայը կփնտրե ազգապահպանման ամենաամուր վահանը՝ անով միշտ սրբությամբ պահպանելու համար իր ինքնությունը։ Կհավատանք, թե Հայոց Եկեղեցին հաստատված է ավետարանական ճշմարիտ ապառաժի վրա։ Հայոց Եկեղեցին ոչ միայն առաքելական է, այլ անոր լուսեղեն հատակագիծը հորինողը եղած է նույն ինքն Քրիստոս՝ Աստուծո Որդին և Փրկիչը աշխարհի։

Երկնային լույսը կիջնե Հայաստան աշխարհ, և հոն կճառագայթե փառքը Քրիստոսի: Այդ տեսիլքը դարեր ամբողջ թափանցած է հայության հոգիեն ներս, և ահա այսօր նորակառույց Ս. Երրորդություն Հայաստանյայց եկեղեցին անոր կենդանի արտահայտություններեն մեկն է:

Վեհափառ Տեր, մենք կհավատանք, որ հայ ժողովուրդը ամենուրեք ըմբռնած է, թե Հայ Եկեղեցին ծննդավայրն է բոլոր հայ հոգիներուն, որոնք իրարու կապված են նույն հավատքով և ավանդությամբ: Այդ հայ հոգիներու միության կեդրոնն ու խարիսխն են Ս. Էջմիածինը և իր Գահակալը՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսը Ամենայն Հայոց:

Ս. Էջմիածինն է եղած Հայաստանի և ի սփյուռս աշխարհի ցրված հայության կենարար աղբյուրը. Հայ Եկեղեցիին մեջեն ծնունդ են առած մեր պատմության ամենեն պանծալի դրվագները, մեր մշակույթը և հոգևոր բոլոր արժեքները: Հայոց Եկեղեցին միշտ քարոզած է սեր, խաղաղություն և եղբայրություն:

Ս. Էջմիածինը, որ կեդրոնն է բոլոր հայ եկեղեցիներուն, երբեք չպիտի սասանի, այլ պիտի ապրի հավիտյան՝ հակառակ բազում փոթորիկներու և հարվածներու: Ինչպես կըսե Մատթեոս առաքյալը՝ «անձրև իջավ, և գետերը վազեցին, ու հովերը փչեցին ու զարկին այդ տունը, ու չփլավ, վասն զի ժայռի վրա հաստատված էր»:

Պահենք ու պահպանենք, շինենք ու շենցնենք, սիրենք ու փայփայենք Հայ Եկեղեցին ու միշտ ունենանք Ս. Էջմիածինը իբրև տեսիլք լույսի և հույսի և ճամփա հավերժության մեզ տանող դեպի Քրիստոս, որ իջավ այդ սուրբ վայրին վրա և զմեզ դարձուց Աստուծո որդեգիրներ:

«Ողջույն տուք միմեանց ի համբույր սրբութեան»:

Այնուհետև խոսք է առնում Տորոնտոյի հայոց Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հովնան վրդ. Տերտերյանը:

Տ. ՀՈՎՆԱՆ ՎՐԴ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Ինչպես այսօր առավոտյան մեր երիտասարդներեն մեկն իր խոսքի մեջ կըսեր, մենք ալ հայ ենք հայաստանցիի նման. տարբերությունը այն է, որ հայաստանցի հայը կապրի հայրենիքի մեջ, իսկ մեր պարագային հայրենիքը կապրի մեր սիրտերու մեջ: Բայց մեր աշխատանքը, մեր բովանդակ կյանքը այն ժամանակ միայն կմնա ամուր գրանիտին վրա Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, երբ Ձեզ նման իմաստուն, երեսունևերեք տարիներու իր ամբողջ կյանքը վայրկյան առ վայրկյան լեցուցած Հայրապետը առաջնորդե մեզ: Երեսուն և երեք տարիներու Ձեր կաթողիկոսական նվիրյալ կյանքը, Վեհափառ Հայրապետ, կպարտադրեն մեզի բոլորիս, որպեսզի մենք ալ դառնանք նվիրյալ ծառաները Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն, ըլլանք հավատարիմ զավակները Մայր Հայրենիքեն ծնունդ առած մեր նախնյաց, մեր սիրտերու մեջ այնքան խորունկ արմատներ նետած քրիստոնեական մեր հավատքին: Մեր կյանքը Սփյուռքի մեջ, գիտեք, Վեհափառ Տեր, հոգևոր հովիվներու կյանքը նման պետք է լիներ Ավետարանի այն պատգամին, ըստ որի ինքնունինը ոչխարը թողած, կորած մեկ հատիկի ետևից պիտի գնանք և փնտրենք ու բերենք

Վեհափառ Հայրապետը Տրոնտոյի հայոց Ս. Երրորդության եկեղեցու միակամ խորհրդի ամբողջության հետ

դեպի հոտը։ Բայց Սփյուռքի պարագային մեկը թողած, փնտրում ենք ինքնությունինը։ Փոխված է պատկերը։ Անդադրում աշխատանք է հարկավոր, որ միացնենք ոչխարները։ Եվ սակայն ինչպես կտեսնենք, հավատացյալ մեր ժողովուրդը Տորոնտո քաղաքի մեջ, օտար համայնքի մը մեջ, ինչպես Կանադայի ամբողջ տարածքին, կշարունակե իր գոյությունը՝ լույս առնելով Ս. Էջմիածնեն։ Տարիներ առաջ, սիրելի Վեհափառ, երբ Լոնդոնեն կվերադառնայի խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներով, որպեսզի զանոնք ծանոթացնեի Մայր Հայրենիքին և Ս. Էջմիածնին՝ անոնց արցունքը խառնելու հայրենի հողին, վերջին օրը, վաղ առավոտյան, արթնացրի բոլորին չորս անց կեսի մոտ։ Բոլորը զարմացան, որովհետև թռիչքը յոթի թե ութի ժամանակ էր։ Առի բոլորը և դեռ մթության մեջ տարի Էջմիածին, զանգակատան առջև, լուության մեջ կանթեղի աղոտ լույսին տակ բացատրեցի, թե ինչ է Էջմիածինը, խոսեցա անցած երեք շաբաթներու իրենց փորձառության մասին, որպեսզի բնավ երբեք չխզեն կապը Հայաստանի հետ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ, որոնք մեր ժողովուրդը կտանին դեպի հավիտենություն, որպեսզի մենք նորոգվինք մեր հայրերու հավատքովը ամեն օր և ամեն վայրկյան։ Այդ լուության մեջ մենք աղոթեցինք առ Աստված, որպեսզի Աստված Իր գծած ճանապարհի մեջ հաստատուն պահեր իր ժողովուրդի զավակները, որպեսզի հայրենիքեն հեռու և Ս. Էջմիածնեն հեռու մեր ժողովուրդի զավակները միշտ նայեին այս երկու սրբություն սրբոցներուն՝ Հայաստանին և Ս. Էջմիածնին, զույգ Արարատներու հովանիին տակ։ Հայրենասիրական շունչով և քրիստոնեական խոր հավատքով ես ալ բաժնվեցա տարիներ առաջ, վերջին անգամ Ձեզ մնաք բարով ըսի, որպեսզի այստեղ գալի հովվական պաշտոնի մը, որը կարգադրվեցավ, նախաձեռնվեցավ թեմիս բարեխնամ առաջնորդի ձեռամբ։ Ահա այսօր կտեսնեմ Ս. Էջմիածնի լույսը այս հավատացյալներու դեմքերուն՝ Ս. Էջմիածնով ներշնչված, Ձեր բարձր անձնավորությամբ զորացած, Ձեր հայրական հոգատարությամբ ուժեղացած։ Ձեր ներկայությամբ, սիրելի Վեհափառ Տեր, կուզեմ իմ սերը փոխանցել նաև այս փառավոր գաղութին, որոնք անխոնջ, անսակարկ և անդադար կշարունակեն իրենց աշխատանքը, իրենց սրբազան խենթությունը՝ ի շինություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, որպեսզի այսքան հեռավոր ափերեն մեր հոգիները միշտ կամրջված մնան Մայր Աթոռին, Մայր Հայաստանին և Ձեր այնքան սիրելի Վեհափառությանը։

Ողջույնի սրտահույզ խոսքով հանդես է գալիս նաև թեմական առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսը։

Վերջում թեմական սրբազան հոր հրավերով խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և տալիս իր հայրապետական պատգամը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Ս. ԵՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԻՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Կուզեի խոսքս սկսել շարականի այս տողերով՝ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: «Եկեք շինենք միասին լուսո սուրբ խորանը, որովհետև անով լույս ծագեցավ Հայաստան աշխարհի վրա»: Այս տողերը մեզի կտանին դեպի մեր պատմության անցյալը, երանելի օրերը Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի, երբ առաջին անգամ ընդունելով՝ հայերը այդ լուսո խորանը շինեցին և անոր միջոցավ լույս իջավ Հայաստան աշխարհի վրա, հայ ազգի վրա: Այդ լույսը, որու մասին կխոսի շարականագիրը, անշուշտ Քրիստոսի լույսն է, Քրիստոսի Ավետարանի լույսը, որ ճառագայթեց Հայաստանի երկնակամարի վրա այդ պայծառ օրերուն:

Բոլոր հայերը, ուր որ ալ ապրին աշխարհի ճանապարհներուն վրա, եթե կուզեն իրենց ազգային արժանապատվությամբ գոյատևել, պետք է հավատարիմ մնան քրիստոնեական ճշմարտություններուն և իրենց Մայր Եկեղեցվո հավիտենական կեդրոն Սուրբ Էջմիածնին, որ կխորհրդանշե Հայ Եկեղեցվո միությունն ու մեկությունը և հայ ազգի միասնությունն ու համերաշխումը:

Անհավասիկ այսօր դուք ապացույցը տվիք, որ իսկապես մեր ազգի հավատարիմ զավակներն եք, և այս սքանչելի տաճարը կառուցեցիք, այս լուսո խորանը բարձրացուցիք, որպեսզի այս սուրբ խորանեն լույսը միշտ ճառագայթե ձեր կյանքին մեջ, ձեր անհատական կյանքին մեջ, ձեր ընտանեկան կյանքին մեջ, ձեր ընկերային կյանքին մեջ, նույնիսկ ձեր աշխատանքի ճանապարհին: Մեր իղձն է և մաղթանքը, որ բոլոր հայերը, Հայ Եկեղեցվո բոլոր զավակները, սիրով միաբան, ապրին մեր Եկեղեցվո կամարներուն ներքև, որովհետև ուր որ սեր և եղբայրություն կա և համերաշխ գործակցություն հայ զավակներու միջև, այնտեղ կիջնե Աստուծո օրհնությունը: Հեռու ձեզմե բաժանումներ, ամեն տեսակ անհանկացողություններ: Երկրորդական հարցերու մեջ կարող են կարծիքներու, գաղափարներու տարբերություններ գոյանալ, բայց հիմնական ճշմարտությունները և մեր Եկեղեցվո ամբողջական միությունը պահպանելու համար մենք պետք է մնանք մեկ և անբաժան Սուրբ Էջմիածնի օրհնության և շնորհներու ներքև:

Ես շատ երջանիկ եմ, որ բախտ ունեցա իմ ձեռքով օծելու այս սուրբ խորանը, ձեր ներկայության: Իմ կյանքի ամենեն նշանակալից պահերեն մեկը կնկատեմ այս պահը, որովհետև հաճախ չէ, որ ես նորակառույց եկեղեցիներու հանդիսավոր բացման ներկա գտնվիմ: Այս պահը ինձի համար իսկապես նվիրական է: Կշնորհավորեմ ձեզ, կշնորհավորեմ ձեր թեմի առաջնորդը՝ մեր սիրելի Վազգեն եպիսկոպոսը, թեմական խորհուրդը, եկեղեցական վարչությունը, ձեր եկեղեցվո հովիվը՝ ժրաջան աշխատող ձեր Հովնան վարդապետը, բարերարները, շինության հանձնաժողովը և բոլոր անոնք, որոնք սատար հանդիսացան, օգնության ձեռք մեկնեցին, որպեսզի այս տաճարը ձև և մարմին առնե ոչ միայն իբրև նյութական շինություն, այլ նաև իբրև ոգեկանացած տաճար մը, ուրկե պիտի ճառագայթե Քրիստոսի լույսը բոլորիդ վրա, ուրկե պիտի բաշխվին Սուրբ Հոգվո շնորհները:

Թող Աստված անշարժ և հավետ անսասան պահե այս փառավոր տաճարը: Ձեր զավակները, թոռները, ձեր հաջորդ սերունդները թող միշտ վայելեն այս տաճարեն ճառագայթող շնորհները և հոգեպես մխիթարվին ու իրենց աղոթքներուն մեջ հիշեն նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ սկիզբն է մեր քրիստոնեական ճառագայթումին համայն հայության կյանքի տարածքին վրա:

Իմ օրհնության խոսքը այս պահուն կուզեմ ուղղել նաև այս հյուրընկալ երկրին՝ մարդասեր և քրիստոսասեր Կանադական հայրենիքին, որ իր դռները լայն բացավ և ընդունեց ձեզ: Թող Աստված խաղաղության, բարգավաճումի և ծաղկումի մեջ պահե Կանադական հայրենիքը և համայն բնակչությունը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՕԾՈՒՄ ՏՈՐՈՆՏՈՅԻ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ

Նոյեմբերի 15-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 9-ին, տեղի է ունենում Տորոնտոյի Հայոց Ս. Երրորդություն նորակառույց եկեղեցու օծումը: Այդ կապակցությամբ Նորին Սրբությունը 20 հուլիս 1897 թվակիր իր սրբատառ կոնդակում գրում էր.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ

Ողորմութեամբն Աստուծոյ ամենակալին, լրացան ահա նախապատրաստական և շինարարական աշխատանքները Թորոնթոյի մէջ հայկական ճարտարապետական ոճով կառուցուած Ս. Երրորդութեան գեղեցիկ Կաթողիկէին, որ Սուրբ Աւետարանի լոյսն ու շնորհները այսուհետև առատօրէն պիտի բաշխէ ձեզի բոլորիդ, ի մխիթարութիւն ձեր հոգիներուն և ի շինութիւն ձեր կրօնական ու մշակութային կեանքին, պահպանումովը մեր նախնեաց քրիստոնէական սուրբ աւանդութիւններուն:

Այսօր Ս. Երրորդութեան եկեղեցիի օծման հանդէսը մեծ տօն մըն է, որ կը հանդիսանայ մեր հեռաւոր զաւակներուն ոգեկան յաղթանակներէն մին, Գանատայի հիւրընկալ ու մարդասէր ժողովուրդի ծոցին մէջ: Տօն մըն է, որ ճշմարիտ աւետիս է նաև համայն մեր Եկեղեցիին և յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համար:

Այս յոյժ երջանիկ առիթով, անհուն օրհնէն մխիթարուած սրտով Մեր բարձր գնահատանքը, Մեր շնորհաւորանքը և հայրապետական օրհնութիւնը կը բերենք անձամբ Ձերդ Սրբազնութեան, համայնքիդ ժրաջան հոգևոր հովիւ Տ. Յովնան վարդապետին, Պատուարժան Հոգաբարձութեան և Շինութեան Յանձնաժողովոյ անձնուէր անդամներուն և մեծահոգի բարերարներուն և համայն մեր հաւատացեալ զաւակներուն, ամենաջերմ մաղթանքներով հանդերձ՝ որ քարեաց Պարգևատուն միշտ անսասան ու լուսառատ պահպանէ ձեր Աղօթքի Տունը և անոր Սուրբ Սեղանէն մշտապէս և առատապէս բաշխէ Սուրբ Հոգւոյ շնորհները ձեզի բոլորիդ և գալիք սե-

Տարոնացի հայրը Ս. Երուսաղեմում ինքնելու ծեսը

ղունդներուն, ի փառս մեր առաքելական Սուրբ Եկեղեցւոյ և ի պարծանս ազգիս հայոց:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա և զերկրպագուս անուանդ Քում, պահեա ի խաղաղութեան»:

Եւ արդ սիրելիներ մեր այսուհետև «Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13—14): Ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Յուլիսի
1987 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԼԶ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1501

Եկեղեցու օծումը կատարվում է հանդիսադրությամբ Ամենայն Հայոց Հայրապետի:

Վաղ առավոտյան Նորին Սուրբ Օծությունը զգեստավորված, եկեղեցական մեծ թափորով, խնկով ու աղոթքով, զանգակների ուրախ և տոնական հնչյունների տակ, «Հրաշափառ»-ով հանդիսավորապես մուտք է գործում եկեղեցի:

Հայրապետական շքերթի թափորին մասնակցում են նաև հանդիսությանը հրավիրված քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչները:

Օծման արարողությանը ներկա են Կանադայի հանրապետության վարչապետի ներկայացուցիչ Մայքլ Ուիտերը, պետական բարձրաստիճան պաշտոնատարներ և բազում հայ հավատացյալներ:

Արարողության սկզբում երկու քահանա հայրեր ջրով և գինիով լվանում են եկեղեցու Սեղանն ու սյուները և սաղմոսերգում. «Տէ՛ր, սիրեցի զվայելչութիւն Տան քո և զտեղի յարկի փառաց քոց»: Վեհափառ Հայրապետը բարձրանում է թեմ՝ իր կողքին ունենալով Տ. Ներսես արքեպիսկոպոսին և թեմական առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսին: Նորին Սրբության ձեռամբ կատարվում է Սեղանի օծման կարգը: Այնուհետև պատարագիչ Տ. Վազգեն եպիսկոպոսը հերթով կատարում է եկեղեցու 12 սյուների օծումը՝ ի հիշատակ Քրիստոսի 12 աշակերտների: Եկեղեցու կամարների տակ խորհրդավոր հնչում է «Առաքելոյ աղաւնոյ» շնորհաբաշխության շարականը:

Բազմախումբ հավատացյալներ զմայլանքով և հոգեկան անխառն հրճվանքով հետևում են օծման հանդիսությանը, որից հետո սկսվում է ս. պատարագի արարողությունը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը խոսում է հոգեշունչ մի քարոզ:

Իր քարոզի ավարտին Վեհափառ Հայրապետը նորաօծ եկեղեցուն նվիրում է Ս. Էջմիածնից բերված հայաոճ ոսկեզօծ մի սկիհ:

Վեհափառս Հայրապետը Տրոմսոյի Բայց Ս. Երրորդությունը եկեղեցու դարձից դաշի հետ

Այնուհետև եկեղեցական թափորը ժողովրդական խանդավառ և հուզիչ արտահայտությունների ներքո դուրս է գալիս եկեղեցուց: Ծքերթի պահին հայրապետական Սուրբ Աջը օրհնում է իր ազգային հպարտության մեջ ցնծալից, հավատավոր, բարեպաշտ հայ ժողովրդի զավակներին:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵԾ ՇԱՇԿԵՐՈՒԹ՝ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 19-ին, «Ռամադա Ռենեսանս» հյուրանոցի շքեղ դահլիճում, ի պատիվ Հայոց Հայրապետի, Տորոնտոյի հայ համայնքի կողմից տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են պետական և քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ, քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, հայ ավետարանական և կաթոլիկ հարանվանությունների պետեր, թեմական և համայնքային եկեղեցական մարմինների անդամներ, Եկեղեցու բարերարներ և բազմաթիվ հրավիրյալներ՝ շուրջ 800 հոգի:

Սեղանը օրհնում է Հայոց Հայրապետը:

Ճաշկերույթն սկսվում է Կանադական քայլերգով: Ապա գործադրության է դրվում գեղարվեստական մի հայտագիր՝ բաղկացած երգերից, արտասանություններից ու նվագից:

Ճաշկերույթի ընթացքում բարիգալստյան և ողջույնի ուղերձներ են կարդում Եպիսկոպոսական Եկեղեցու անունից՝ Տ. Հիլլ եպիսկոպոսը, Հույն Օրթոդոքս Եկեղեցու անունից՝ Տ. Աթենագորաս եպիսկոպոսը, Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հովնան վարդապետը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոսը, թեմական առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսը և այլ հրավիրյալներ:

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք է առնում Հայոց Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՇԱՇԿԵՐՈՒԹԻՆ

Ձեզի բարի լուր մը տամ՝ վերջին խոսողն եմ:

Երբ դեպի Նոր աշխարհ՝ դեպի Ամերիկա գալու համար Վեհարանեն թափորով դուրս եկանք միաբանքերով և տաճար պիտի մտնեինք, որպեսզի ծունկի գալով աղոթք մը կատարեի ես, ճանապարհին, տակավին Մայր տաճար չմտած, ինձ մոտեցավ պառավ կին մը, 92 տարեկան, անունը Սաթենիկ, մեր հավատացյալներեն, որոնք հաճախ եկեղեցի կուգան, և մաղթանք մը ուղղեց ինձի: Ես առաջին անգամ այդ մաղթանքը կլսեի: Ըսավ. «Վեհափառ, ուր որ երթաք, Լուսավորչի կանթեղը Ձեր գլխուն վրա կախված ըլլա»: Հիմա դուք, որ զիս կշրջապատեք այսքան ոգեշնչումով, սիրով, խանդավառությամբ և հիացումով, ինչպես կվկայեր քիչ ետաջ սրբազանը, երևի իմ գլխուն վրա Լուսավորչի կանթեղը կտեսնեք: Այո, իսկապես՝ ես չեմ, ես հարյուր երեսուներորդ Հայոց կաթողիկոսն եմ և ջահակիրը, իմ տկար ուժերով, այդ լույսին, Լուսավորչի կանթեղեն ճառագայթող: Ես կխորհիմ, թե այս առավոտ, երբ օծումը կատարվեցավ Ս. Երրորդություն ձեր Մայր եկեղեցվո, ես կարողացա, աներևույթ կերպով, Լուսա-

վորչի կանթեղեն ճառագայթ մը բերել և զետեղել զայն իմ օրհնությամբ, Նուրբ Սեղանի վրա, որպեսզի այդ լույսը հավիտյան ճառագայթե և բաշխվի անընդմեջ և անդադար, մշտապես մեր բոլոր հավատացյալ զավակներուն՝ ձեզի, ձեր զավակներուն, ձեր թոռներուն և հետագա սերունդներուն: Իսկապես, մեր ամբողջ պատմության ընթացքին, հազար յոթ հարյուր տարիներե ի վեր, մեր պատմության հրաշքներեն մեկը, առաջին հրաշքը, Ս. Էջմիածնի ստեղծումն է, գոյատևումը և անոր տևական ազդեցությունը մեր ժողովուրդի կյանքին ու պատմության վրա: Այսօր ալ համայն հայությունը հավատարիմ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Կարելի չէ Սուրբ Էջմիածնեն բաժնվիլ:

Քիչ առաջ կխոսեի Ս. Գրիգոր Լուսավորչի կանթեղեն ճառագայթող լույսի մասին: Այդ ճառագայթեն կաթիլ մը գոնե իջած և հաստատ տեղավորված է ձեր սիրելի հովիվ Հովնան վարդապետի ճակտին: Այո՛, Ս. Էջմիածնի լույսը իջած է իր հոգվույն մեջ, և ան անսակարկ եռանդով ու նվիրվածությամբ կգործե՝ իր երջանկությունը գտնելով եկեղեցվո ծառայության մեջ:

Սիրելի ժողովուրդ, ես կուզեմ վերջացնել իմ խոսքը տխուր պատկերով մը: Ձեզմե անոնք, որ կարդացած են Ֆրանց Վերֆելի նշանավոր գիրքը՝ «Մուսա լեռան քառասուն օրերը», կհիշեն կամ պետք է հիշեն երևի, որ հեղինակը, պատկերելով ամբողջ ողբերգությունը Թրքահայաստանի տարածքի վրա, երբ ամբողջ ազգ մը մահվան տառապանքներու մեջ իր վերջին շունչը կփչեր, Ֆրանց Վերֆել այդ ողբերգական պատկերին առջև պահ մը կխորհրդածե՝ ըսելով, թե եկած է ժամանակը, երբ այս արևի տակ այլևս կարելի չէ ապրիլ իբրև հայ: Ահա այս եղավ հայ ազգի ճակատագիրը 1915—16 թվականներին: Կթվեր, թե իսկապես հայ ազգի վերջին օրերն են, և մեր ժողովուրդը այլևս պատմության գիրկը պիտի անցնի, թանգարաններու մեջ միայն իր հիշատակը պիտի մնա կամ գերեզմաններու մեջ միայն: Սակայն հայոց պատմության նոր հրաշքը կատարվեցավ, և մեր ժողովուրդը, ինչպես Եզեկիել մարգարեի տեսիլքին մեջ, նորեն ոտքի կանգնեցավ և նոր կյանք, նոր ճակատագիր, նոր հայրենիք մը ստեղծեց:

Սովետական Հայաստանի մեջ այսօր երեք և կես միլիոն հայեր կապրին, և ամեն տարի վաթսուն հազար երեխաներ կծնին, իսկ Սփյուռքի տարածքի վրա հայ գաղութները կկազմակերպվին հետզհետե: Այսօր կտեսնենք կենդանի հայություն մը, որ իր եկեղեցական, հոգևոր, կրթական, մշակութային կյանքով իր ինքնությունը և իր հոգևոր ժառանգությունը պահպանելու պայքար կմղե վճռականությամբ: Ահավասիկ նոր հրաշք մը: Ես պիտի վերադառնամ Մայր Աթոռ Ս. Էջմիածին ավելի լավատես հոգիով, որ հայ ժողովուրդի ճակտին գրված է ապրիլ, հարատևել և հասնիլ իր բոլոր ազնիվ իղձերու իրականացման:

Փառք և օրհնություն հայ ժողովուրդին այժմ և հավիտյան. ամեն:

Ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ

Նոյեմբերի 16-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Տորոնտոյից օդային ուղերթով ժամանում է Կանադայի Մոնրեալ քաղաք: «Տորվալ» օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել թեմական խորհրդի, եկեղեցական մարմինների անդամներ, Հ. Բ. Ը. Միության Մոնրեալի մասնաճյուղի անդամներ, Թեքեյան Մշակութային Միության վարչական կազմը, Պոլսահայ Միության վարչական անդամները, ինչպես նաև հայկական դպրոցների խնամակալները և բազմաթիվ հավատացյալներ: Վեհափառ Հայրապետին ծաղկեփնջերով դիմավորում և բարի գալուստ են մաղթում Մոնրեալի «Ալեք Մանուկյան» միօրյա վարժարանի սաները:

Օդանավակայանի պատվո հյուրերին հատկացված սրահում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք է ուղղում Քեբեկ նահանգի ներգաղթի նախարար տիկ. Լուիզ Ռոբիկը:

Այստեղ Վեհափառ Հայրապետը հարցազրույց է ունենում օտար թերթերի լրագրողների և հեռուստատեսության աշխատակիցների հետ:

Այնուհետև Հայոց Հայրապետը առաջնորդվում է դեպի ինքնաշարժերի շարասյուն, որտեղ խմբված հայ հասարակությունը երկյուղածությամբ, հիացումով և հոգեկան անբացատրելի հրճվանքով հետևում է շքերթին, որը ոստիկանական պատվո ջոկատի առաջնորդությամբ, Մոնրեալի զանազան փողոցներով ուղղվում է հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցի:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԴԱՀԼԻՃԻ ԲԱՑՈՒՄ

Եկեղեցուն կից առաջնորդարանում կարճ հանգստից հետո, խուռներամ հավատացյալների ներկայությամբ, Վեհափառ Հայրապետը կատարում է հանդիսավոր բացումը առաջնորդարանի վերակառուցված դահլիճի: Բուռն ծափերի ներքո Հայոց Հայրապետը կտրում է ժապավենը և

Վենսիան Հայրապետը Կամճատրի Քէլեքկ ճամանգի էջմիածնի ռազմաքաղաքացիների և
ներգաղթի ճախարար տիկին Լուիզ Ռոբինի հետ

մուտք գործելով դահլիճ՝ խնդագին շնորհավորում է վերակառուցված սրահի բացումը:

Բացման հանդիսությանը ներկա են Մոնրեալում Սովետական Միության հյուպատոսի մշակութային կցորդ տիար Գրիգոր Բաղդասարյանը, Ութրմոնի քաղաքապետարանի ներկայացուցիչը, որը քաղաքապետի անունից Վեհափառ Հայրապետին է նվիրում բրոնզյա մի հուշատախտակ՝ ֆրանսերեն մակագրությամբ: Վեհափառ Հայրապետը այն նվիրում է նորակառույց դահլիճին:

Բացման արարողությունից հետո Նորին Սրբությունը հյուրասիրվում է եկեղեցու տիկնանց և խնամակալ մարմինների կողմից: Ապա խոսք է առնում թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանը.

«Ի խորոց սրտի շնորհակալություն կհայտնենք Ձերդ Վեհափառության, որ ընդառաջելով մեր թեմական խորհուրդի հրավերին եկաք այցելելու Ձեր այս բենիամին թեմը: Մենք Ձեր բազմաթիվ թեմերում մեջ ամենափոքրն ենք և թերևս ամենահամեստը, այնուհանդերձ մեր Հայրը ընդունելու համար մենք մեր գերագույն ճիգերը գործադրեցինք, որ այս կարճ շրջանին մեջ Ձեր գալուստը կարենանք հանգստավետ դարձնել: Եվ այս առիթով նաև ուզեցինք մեր նոր առաջնորդարանի այս դահլիճը զարդարել և վերանորոգել, և բարեբախտաբար տեր և տիկին Աշոտ Քարիբյանները մեզի ձեռք տվին, ինչպես կարգ մը ազգայիններ, որ այս սրահը Ձեզի նվիրենք: Բարի եկաք, Վեհափառ տեր, այս հարկը Ձեր տունն է»:

Վեհափառ Հայրապետը ջերմ շնորհակալություն հայտնեց և բարձր գնահատեց նվիրատուների պատրաստակամությունը այս ծախսարար ծրագիրը իրագործելու համար:

Հյուրասիրությունից հետո Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում ժողովրդից և ուղևորվում Մոնրեալի «Շերաթոն» հյուրանոց և տեղավորվում իրեն հատկացված հարկաբաժնում:

Որոշ ժամանակ անց Վեհափառ Հայրապետը իր հարկաբաժնում ունենում է հարցազրույց մամուլի աշխատակիցների հետ:

ԵՐԵԿՈՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄՈՆՐԵԱԼԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 19.30-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես, «Հրաշափառ»-ով մուտք է գործում Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ ներկա լինելու ս. պատարագի արարողությանը:

Եկեղեցին և նրա շրջափակը լցված էր խուռներամ հայ հավատացյալներով: Ս. պատարագին ներկա են նաև պետական պաշտոնական անձինք և օտար հոգևորական և աշխարհական հրավիրյալներ:

Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոսը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետին ողջույնի խոսք է ուղղում Տ. Վազգեն եպիսկոպոսը, ապա հրավիրում է Նորին Սրբությանը տալու իր օրհնությունն ու պատգամը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նոյեմբերի 17-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, առաջնորդարանի դահլիճում Վեհափառ Հայրապետը հաջորդաբար հանդիպումներ է ունենում Հ. Բ. Ը. Մ.-ի Մոնրեալի մասնաճյուղի, Պոլսահայ Միության վարչության և Թեքեյան Մշակութային Միության անդամների հետ:

Ժամը 16-ին Հայոց Հայրապետը իր շքախմբով այցելություն է տալիս Մոնրեալի Սովետական հյուպատոսարան և ջերմ զրույց ունենում հյուպատոս Եվգենի Կոչետկովի հետ:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՇԱՇԿԵՐՈՒԹ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Երեկոյան ժամը 20-ին «Շերաթոն» հյուրանոցի մեծ դահլիճում Վեհափառ Հայրապետի պատվին տրվում է համայնքային մեծ ճաշկերույթ՝ մասնակցությամբ հայ և օտար շուրջ 700 հրավիրյալների:

Սույն ընդունելությունը իր տարողությամբ, մթնոլորտով և իր պաշտոնական հանգամանքով պատմական էր ողջ մոնրեալահայության համար:

Ճաշկերույթին ներկա են՝ Կանադայի ներգաղթի մինիստր Ջերրի Ուիները՝ իր տիկնոջ հետ, Մոնրեալի քաղաքային վարչության անդամ տիկ. Կատլին Վերդոնը, Քեբեկի տոհմական հավաքականությունների և ներգաղթի մինիստր տիկ. Լուիզ Ռոբիկը, Կանադայում ՍՍՀՄ լիազոր դեսպան Ալեքսանդր Ռոդիոնովը՝ իր տիկնոջ հետ, Կանադայի Մելքիդ-Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդական տեղապահ հայր Ժորժ Կորիարթին, Մոնրեալի Անգլիկան Եկեղեցու պետ Տ. Հիլլ եպիսկոպոսը:

Պատվո սեղանի շուրջ, Վեհափառ Հայրապետի կողքին, տեղ էին գրավել նաև Տ. Թորգոմ. Տ. Ներսես արքեպիսկոպոսները, թեմական առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսը, թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Արշավիր Կյոնճյանը՝ իր տիկնոջ հետ, ինչպես նաև այլ պաշտոնական անձինք:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը: Ճաշի ընթացքում բարիգալստյան ողերձ է կարդում դոկտ. Արշավիր Կյոնճյանը:

ԴՈԿՏ. ԱՐՇԱՎԻՐ ԿՅՈՆՃՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Որդիական ակնածանքով կողջունենք Ձեր օրհնաբեր այս այցելությունը կանադական Ձեր հոտին: Թույլ տվեք, որ վերջացնենք այս խոսքերը մաղթանքներով:

Թող հայրապետական Ձեր առաքինազարդ անձնավորության այս այցը մեր ժողովուրդին բերե աստվածային օրհնություն, ազգային ուժեղացած գիտակցություն, սեր և համագործակցություն:

Բայց մանավանդ, Վեհափառ Տեր, քրիստոնեական Ձեր անձնավորութենեն բխող անսահման սերը և սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնի ներշնչումը թող թրթռացնեն, ներշնչեն և ջերմացնեն մեր ժողովուրդին հոգիները, որպեսզի հայ ժողովուրդը դառնա անքակտելիորեն միասնական, մեկ և անբաժանելի, հովանիին ներքև անփոխադրելի և անփոխարինելի

սրբություն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին և սնոր առաքինի գա-
հակալ Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա կաթողիկոսին:

Ձեր գալուստը բարի էր: Թող ծաղկած մնա նաև Ձեր վերադարձի ճանապարհը դեպի Սուրբ Էջմիածին:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետին ուղղված ողջույնի սրտագին խոսքեր են արտասանում մինիստր Ջերրի Ուինքլրը, տիկ. Լոիզ Ռոբինը, տիկ. Կ. Վերդոնը, հայր Ժորժ Կորիարթին, գերաշնորհ Հիլլ եպիսկոպոսը, թեմական առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոսը և ուրիշներ:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը, ի գնահատություն կանանդանայ մի շարք ազգային ների երկարամյա եկեղեցաշեն և կրթանվեր ծառայության, Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պատվում է տեր և տիկին Մկրտիչ և Շաքե Մալխասյանցներին, իսկ բազմավաստակ կրթական մշակ և Ալեք Սանուկյանց ամենօրյա վարժարանի տնօրենուհի տիկ. Վարդուհի Պալյանի կուրծքը զարդարում է «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» պատվո շքանշանով՝ համապատասխան հայրապետական կոնդակների ընթերցումից հետո:

Ճաշկերույթի ընթացքում գործադրվում է խնամքով պատրաստված գեղարվեստական մի ճոխ հայտագիր, որին իրենց մասնակցությունն են բերում մոնրեալահայ լարային քառյակը, երգիչ Արթո Մուհենտիսյանը, երգչուհի Անդա Ղարիբյանը՝ ընկերակցությամբ դաշնակահար Սարգիս Զավուշյանի, և ասմունքող Հուրի Հաքիմյանը: Կատարվում են միջնադարյան երաժշտության և Կոմիտասյան ստեղծագործությունների ընտիր նմուշներ:

Վերջում որոտընդոստ ծափահարությունների ներքո հոգեշահ ընդարձակ ճառով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ ՄԵԾ ՀԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

«Այսօր է զոր արար Տէր, եկայք շինեսցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմոս ՃԺԸ 24):

Սիրելյալ հոգևոր եղբայրներ Մեր, մեծահարգ ներկայացուցիչներ Կանադայի և Քեբեկի պետական ու քաղաքային իշխանությանց, ինչպես նաև բարեկամ պետությանց հարգարժան բարձրաստիճան ներկայացուցիչներ, որ կպատվեն մեզ իրենց ներկայությամբ, և սիրելի հավատացյալներ:

Սաղմոսերգուի ուրախությամբ, հայրական սիրով կողջունեմ ձեզ բոլորդ և շնորհակալություն կհայտնեմ բոլորիդ, որ ձեր բարի խոսքերով մխիթարեցիք իմ հոգին, որ ձեր ներշնչված արտահայտություններով գովքը հյուսեցիք Հայ Առաքելական Եկեղեցվո և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Ես երբեք պիտի չմոռնամ այս օրը, երբեք պիտի չմոռնամ ձեր հոգեշունչ մաղթանքները, որոնք աղոթքի պես, բուրումնավետ խունկի նման դեպի երկինք բարձրացան:

Իբրև պատասխան, թող Աստված իր հայրական քաղցր հայացքը ձեզի ուղղե և լուսավորե ձեր հոգիներն ու ձեր առաքելության ճանապարհը:

Կապրինք դարաշրջան մը, որ կբնորոշվի Եկեղեցյաց էկումենիկ շարժումով, շարժում մը, որ մեր օրերու աշխարհի գուցե ամենաաստվածահաճո և ամենամխիթարական երևույթն է ոչ միայն եկեղեցական, այլ նաև միջազգային իմաստով: Հիրավի, էկումենիկ շարժումը ոչ միայն կմիտի Քրիստոսի անունով գործող Եկեղեցիները միացնել, ոչ միայն աշխարհի քրիստոնեական եղբայրությունը գորացնել, այլ նաև Սուրբ Ավետարանի լույսով լուսավորել մեր օրերուն տագնապած աշխարհը, որպեսզի ազգերը մեծ ու փոքր գտնեն ուղիղ ճանապարհը դեպի ճշմարտություն, դեպի արդարություն և դեպի խաղաղություն:

Ես կու գամ հեռավոր երկրե մը, որ շատ բանով տարբեր է ձեր երկրեն, սակայն կվստահեցնեմ ձեզ, որ նաև այնտեղ սովետական աշխարհի մարդիկ նույն տագնապը կապրին, նույն երազանքը ունին գտնելու արդարության և խաղաղության ճանապարհը: Վասնզի, անկախ գաղափարախոսական և այլ տեսակի տարբերություններեն, բոլորը կգիտակցին, որ այս ատոմական դարաշրջանի մեջ համայն մարդկությունը անխտիր նույն ճակատագիրը, նույն ապագան ունի:

Իբրև առաջին սպասավորը Հայ Առաքելական Եկեղեցվո, իմ աղոթքը կուզեմ միացնել մեր քույր Եկեղեցիներու աղոթքներուն և աղերսներուն, որպեսզի համերաշխ գործակցությամբ պետություններու, հատկապես Սովետական Միության և Միացյալ Նահանգաց, հիմքերը դրվին համաշխարհային համաձայնության մը, որով ընդմիշտ ապահովվի խաղաղ գոյակցությունը և գործակցությունը բոլոր մեծ ու փոքր պետություններու, աստիճանաբար իրագործելով ընդհանուր զինաթափում, ինչ որ երազանքն է Միավորված Ազգերու Սան Ֆրանցիսկոյի ուխտագրի, կնքված 1945-ի հունիսի 26-ին, որուն մեջ հանդիսավոր կերպով հաղթական պետությունները հայտարարեցին. «Կուխտենք ցուցաբերել հանդուրժողություն, ապրիլ խաղաղությամբ մեկս մյուսի հետ բարի դրացիական ոգիով, միավորել մեր ուժերը՝ պահպանելու համար միջազգային խաղաղությունը և անվտանգությունը»:

Ահավասիկ, իմ կարծիքով, իրավական և բարոյական անժամանցելի սկզբունքները, որով պարտավորված են առաջնորդվելու պետությանց պատասխանատու ղեկավարները:

Մենք՝ Եկեղեցիներս, կխորհիմ մեր օրհնությունը պետք է բերենք աշխարհի վրա վերջնապես կյանքի կոչելու համար Սան Ֆրանցիսկոյի ուխտը:

Եվ թույլ տվեք ավելցնել, թե իմ Եկեղեցին, Հայ Առաքելական Եկեղեցին իր հավատացյալ ժողովուրդի հետ միասին, դարեր ու դարեր շարունակ, մանավանդ տասներորդ դարեն հետո, տառապած է և նահատակված իր իսկ մայր հողի վրա, Արևելքեն արշավող բարբարոս ցեղերու կողմե, որոնք հրո ճարակ դարձուցած են հայոց աղոթքի Տուները, գյուղերն ու քաղաքները: Իսկ առաջին համաշխարհային պատերազմի 1915 և 1916 տարիներուն, մեր Եկեղեցին ու ազգը իրենց գոդգոթան ապրեցան, երբ Օսմանյան կայսրության ծրագրի գործադրությամբ բնաջինջ եղավ Արևմտյան Հայաստանի ավելի քան երկու միլիոն հայ ազգաբնակչությունը:

Ահա ճակատագիրը փոքր ազգերու՝ պատերազմներու կրակին մեջ:

Ահա թե ինչու, իբրև սպասավորը իմ Եկեղեցվո ու ժողովուրդի, տիվ և գիշեր կաղոթեմ վասն խաղաղության աշխարհի, վասն ընդհանուր զինաթափման, վասն դատապարտման պատերազմներու՝ իբրև ոճիրներ մարդկության դեմ:

Հայ Եկեղեցվո ու ազգի երազանքն է հաղթանակը մարդասիրական իդեալներու, հաղթանակը մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի պատգամի՝ «Խաղաղութիւն հեռաւորաց, խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն ամենեցուն»:

Ահավասիկ, իմ կարծիքով, մեր օրերու էկումենիկ շարժման գլխավոր նպատակներեն մին: Թող Աստված զորացնե մեզ իր Սուրբ Հոգվով՝ իր իսկ կամքը իրագործելու համար երկրի վրա:

Իմ խոսքի սկզբին իմ ուշադրությունը ուղղեցի նաև այստեղ գտնվող այն մեծահարգ անձնավորություններուն, որոնք կներկայացնեն կանադական այս սքանչելի երկրին պետական և քաղաքային իշխանությունները և մտավորականությունը: Ինձ համար երջանկություն է վայելել անոնց ներկայությունը այս հավաքույթին, նաև բախտավոր աւիթ, որպեսզի իմ գոհունակության ու երախտագիտության խոսքը ուղղեմ անոնց միջոցավ կանադական հայրենիքին ու ժողովուրդին, այն բոլոր ազատություններուն և դյուրություններուն համար, զոր Հայ Առաքելական Եկեղեցվո համայնքները կվայելեն Կանադայի մեջ, կազմակերպելու և զարգացնելու իրենց կրոնական և մշակութային կյանքը, համաձայն իրենց հոգևոր-ազգային ավանդությանց, մնալով ու գործելով իբրև հավատարիմ և շինարար քաղաքացիները այս երկրին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն կբերեմ իմ օրհնությունը Կանադական պայծառ ու մարդասեր երկրին և քրիստոնասեր ազնիվ ժողովուրդին, աղոթելով, որ Տերը միշտ պահե-պահպանե այս երկիրը՝ անվտանգ, բարգավաճ ու ծաղկյալ:

Ես տեղյակ չեմ, թե պաշտոնապես ինչ կխորհրդանշե տերևը կանադական դրոշի վրա, սակայն կխորհիմ, թե կարելի է զայն նկատել խաղաղության խորհրդանիշ, քանզի այս երկրագունդի տարածքի վրա բուսական աշխարհը ամենախաղաղ տարրը կհանդիսանա:

Թող խաղաղասեր Կանադան հավետ կանաչ ու դալար մնա:

Եվ այժմ, սիրեցյալ բարեկամներ, թույլ տվեք իմ խոսքը շարունակել հայերեն լեզվով, ի մասնավորի ուղղյալ իմ հավատացյալներուն:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հայերեն լեզվով դիմեց իր զավակներին: Անդրադարձավ Ս. Էջմիածնի պատմական դերին և շեշտեց, որ Մայր Աթոռը այսօր էլ մարմնավորում է Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համերաշխությունն ու միավորությունը: Միածնաէջ Սուրբ Սեղանից է բաշխվում աստվածային օրհնությունը բոլորին անխտիր:

Ապա Նորին Սրբությունը խոսքը մասնավորեց կանադահայ գաղութի մասին, գնահատեց այստեղ տարվող մեծ ճիգն ու եռանդը՝ կազմակերպելու հայ կյանքը, մանավանդ Հայ Եկեղեցին և դպրոցը: Եվ ի վավերացումն կատարված հսկայածավալ աշխատանքի գնահատության՝ Նորին Սուրբ Օծությունը կանադահայ թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն Եպս. Քեշիշյանին շնորհեց արքեպիսկոպոսության կոչում: Ներկաները այս շնորհումը ընդունեցին որոտընդոստ ծափահարություններով՝ հաստատելով, որ առաջնորդ սրբազանը արժանի է արքեպիսկոպոսական պատվի:

Պաշտոնական սույն ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ

Նոյեմբերի 18-ին, չորեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Պոլսահայ Միության Սենթ Լորանսի կենտրոն և հանդիպում ունենում Միության անդամների հետ:

Նորին Սրբությունը Միության ղեկավար անդամների ուղեկցությամբ նախ այցելում և ծանոթանում է կենտրոնի զանազան բաժիններին, ապա հյուրասիրվում ընդունելությունների սրահում: Այստեղ բարիգալստյան սրտառուչ մի ուղերձ է կարդում Միության ատենադպիր պրն. Հերման Օտապաշյանը:

ՎԵՐՄԱՆ ՕՏԱՊԱՇՅԱՆԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Վեհափառ Տեր,

Այսօր մեզի համար մեծ ուրախություն է Ձերդ Վեհափառության այցելությունը մեր միութենական համեստ կեդրոնենք ներս:

Պոլսահայ Միության վարչության և հարակից մարմիններու անունով՝ բարի նկաք, Վեհափառ:

Ձեր ծանրաբեռնված և հոգեհոգեցուցիչ հովվապետական առաքելության մեջ քանի մը պահիկներ ալ մեզի շնորհելը երախտապարտ և շնորհակալ կթողու մեզ: Ձեր բարձր ներկայությունը կթարմացնե մեր անցյալի անմոռանալի հուշերը, երբ 1961-ին առաջին և վերջին անգամ ըլլալով այցելեցիք Պոլիս՝ մեր նախկին ծննդավայրը, ուր դիմավորվեցաք, հյուրընկալվեցաք և շրջապատվեցաք համագաղութային անկեղծ, խանդավառ և Ամենայն Հայոց կաթողիկոսին վայել սիրո և հարգանքի ցույցերով: Ամոքեցիք մեր վիշտերը, նոր եռանդ, հույս և առավել հավատք ներշնչեցիք մեզի:

Այսօր կրկին անգամ պանդխտացած կգտնվինք հոս՝ Կանադա: 1967-են ի վեր հիմնված մեր Պոլսահայ Միությունը կջանա իր անդամները և համակիրները ամփոփել այս տոհմիկ և ջերմ երդիքին տակ: Անոնք ունին նույն կարոտները, հիշատակները, բարքերը և ավանդությունները՝ կապված միշտ հայության արմատներուն և անոր դարավոր հավատքին:

Կկազմակերպենք ընկերային, մշակութային, երաժշտական, երգ-պարի ելույթներ, ձեռնարկներ, որոնք կխանդավառեն, կհուզեն մեզ, կապրեցնեն մեր փառավոր անցյալը, մասամբ մոռցնել կուտան մեզի մեր առօրյա հոգսերը, և մենք ավելի հուսալից ներշնչումներով կնայինք ապագային:

Այս առօրյայի տաղտուկներուն մեջ կլանված մեր հոգիներուն համար, Վեհափառ Հայրապետ, մեծ սփոփանք մը, մխիթարանք մը, ինքնության վերահաստատում մը եղավ Ձեր շնորհաբաշխ այցելությունը մեզի: Մեր սրտերը լեցվեցան հրճվանքով և հպարտությամբ: Կհուսանք, որ այսուհետև միշտ կարժանանանք Ձեր հայրագորով, աստվածահաճո օրհնություններուն և աղոթքներուն:

Անչափ շնորհակալություն, Վեհափառ Տեր, Ձեր պատմական և հովվապետական այս օրհնաբեր այցելության համար:

Աստված թող անսասան պահե մեր դարավոր և փառավոր հայ հավատքի կեդրոն Սուրբ Էջմիածինը և անոր առաքելատիպ, շինարար և աստվածաշնորհ գահակալը՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Այնուհետև ընթերցվեց Պոլսահայ Միության վարչության ողերձը։

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Վեհափառ Տեր,

Ձեր բարեհաճ և օրհնաձիր այցելությունը համալնքիս՝ մեզ պարգևած է անչափ հրճվանք և մխիթարություն մեր կարոտակեզ պանդուխտ հոգիներուն։

Պատմական և դպրավոր Միածնաէջ Ս. Աթոռին փառավորությունը և հմայքը բազմապատկած Ձերդ Վեհափառությունը որդիական սիրով և ակնածանքով կողջունենք։

Վստահ ենք, որ Ձեր հովվապետական շնորհաբաշխ այցելությամբ Լուսավորչի կանթեղին լուսափայլ և անշեջ լույսը ավելի պիտի ջերմացնե և զորացնե մեր Սփյուռք դարձած տխուր իրականությունը։

Այսուհանդերձ միշտ հավատքով և հույսով առնեցուն մեր կարոտալից հայացքը սևեռած վերածաղկած Մայր Հայրենիքին և անոր անթառամ պսակ հայ հավատքի կեդրոն Ս. Էջմիածնին, կսփոփվինք, կխանդավառվինք ու կհպարտանանք։

Ուրախ և շնորհակալ ենք նաև, որ մեր Միության կեդրոնին մեջ ալ պիտի վայելենք Ձեր օրհնաբեր և կենսանորոգ այցելությունը։

Բարի եկաք, Ամենայն Հայոց կաթողիկոս Վեհափառ Տեր։

Ընդհանուր խանդավառության մեջ խոսք է առնում Վեհափառ Հայրապետը, գնահատում է պոլսահայերի եկեղեցանվեր աշխատանքը՝ մաղթելով հաջողություններ հետագա աշխատանքներում ի պայծառություն Հայաստանյայց Եկեղեցու և համրապնդումն հայ ոգու և հավատքի կանադահայ համալնքում։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Նույն օրը, կեսօրին, Վեհափառ Հայրապետը այցելում է Թեքեյան Մշակութային Միության կենտրոն, որտեղ ընդունվում է ջերմ ծափողջույններով և առաջնորդվում ընդունելությանց դահլիճ։ Այստեղ Նորին Սրբությունը և նրա շքախմբի անդամները հյուրասիրվում են սուրճով և մրգերով։ Հյուրասիրությունից հետո, հանուն Թեքեյան Մշակութային Միության, բարագիլստյան մաղթանքով հանդես է գալիս Միության ատենապետ Արթո Մանուկյանը։

ԱՐԹՈ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Մոնրեալի Թեքեյան Մշակութային Միության մայր վարչության անունով և Միության զանազան հանձնախումբերուն ու բոլոր անդամակցության կողմե Ձերդ Սրբության ջերմագին բարի գալուստ կմաղթեմ մեր այս կենսունակ ու նորակազմ գաղթօջախեն ներս։

Ավելի քան 20 տարիներե ի վեր Թեքեյան Մշակութային Միությունը

կշարունակե բանաստեղծներու իշխան Վահան Թեքեյանի ավանդը՝ հայու հոգին վերակենդանացնելու այս հեռավոր ու ցուրտ ափերուն վրա նս, մշակութային, կրթական, հրատարակչական, ընկերային բազմաթիվ ու բազմազան նախաձեռնություններով:

Թեքեյան Մշակութային Միությունը անցնող 20 տարիներու ընթացքին առաջնորդվեցավ այլ միություններու հետ գործակցական բարձր ոգիով, միշտ մեր ժողովուրդին գերագույն շահերը նկատի ունենալով և միշտ վայելելով մեր Մայր Եկեղեցվո հովանավորությունը, Մայր Հայրենիքի մշակութային անփոխարինելի օժանդակությունը և Ձերդ Սրբության օրհնությունները:

Թեքեյան Մշակութային Միության վարչականները ու անդամները չսահմանափակվեցան միայն մեր Միության ծրագիրներու գործադրությամբ, այլև իրենց գործուն մասնակցությունը բերին նաև ազգային ու եկեղեցական բազում աշխատանքներու մեջ, ստանձնելով եկեղեցական, ծխական, երեսփոխանական կամ թեմական պատասխանատվություններ:

Ինչ կվերաբերի կանադահայոց առաջնորդության, զոր Ձերդ Վեհափառությունը իր մասնավոր հոգածության առարկան դարձուցած է, Թեքեյան Մշակութային Միությունը առաջին օրեն խանդավառությամբ բերավ իր դրական օժանդակությունը և զորավիգ հանդիսացավ թեմի հաստատումը օրինական և կանոնական կերպով իրագործելու պատվաբեր աշխատանքին:

Այս բարեբաստիկ առիթով շնորհակալություն կհայտնենք, Վեհափառ Տեր, որ կշնորհեք մեզի այս ունկնդրությունը և կփութաք գնահատել մեր անսակարկ հավատարմությունը, որդիական սերն ու նվիրումը հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու անոր առաքելաշավիղ գահակալին՝ Ձերդ Սրբության:

1968-ի Ձեր շնորհաբաշխ այցելության ընթացքին Դուք օրհնեցիք և քաջալերեցիք Թեքեյան Մշակութային Միության երիտասարդները, 1975-ին ուրախությամբ ողջունեցիք մեր «Ապագայ» շաբաթաթերթի ծնունդը, որպես կանադահայության առաջին շաբաթաթերթը, իսկ ճիշտ երկու տարի առաջ Ձեր սրբատառ կոնդակով օրհնեցիք մեր նորակերտ կեդրոնը ու շքանշաններով պատվեցիք երկու նվիրյալ ղեկավարներ՝ իրենց ազգային ու եկեղեցական բազմամյա ծառայություններուն համար:

Վեհափառ Տեր, ինչպես մեր խնդրանքը հայտնած էինք մեր սիրելի առաջնորդ սրբազան հոր՝ գերաշնորհ Տ. Վազգեն եպս. Քեշիշյանին, մեր ամենաջերմ փափաքն էր եղած Ձեր այս օրհնաբեր այցելության առթիվ ունենալ երջանկությունը՝ Հայոց Հայրապետը ընդունելու Թեքեյան Մշակութային Միության նորակերտ հարկին տակ և խնդրելու, որ Ձեր Սուրբ Աջով օրհնություններ բաշխեք, որպեսզի առավել պտղավորվի մեր ազգանվեր գործունեությունը:

Շնորհապարտք ենք, Վեհափառ Տեր, Ձեր հայրական գուրգուրանքին համար և կցանկանք, որ Ձեր օրհնությունները անպակաս ըլլան Հայաստանյայց եկեղեցվո, հայ ժողովուրդին և Թեքեյան Մշակութային Միության վրայեն:

Հանդիպման ավարտին խանդավառ մթնոլորտում ներկաներին հայրենաշունչ իր պատգամն է ուղղում Ամենայն Հայոց Հայրապետը և իր օրհնությունները բաշխում բոլոր մասնակիցներին:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՐԵԱԼԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԵՆՏՐՈՆ

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Հ. Բ. Ը. Մ.-ի Մոնրեալի մասնաճյուղի կենտրոն և հանդիպում ունենում մասնաճյուղի անդամների հետ: Այստեղ Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում Միության ատենապետ դոկտ. Հովհաննես Պալասպանյանը:

ԴՈԿՏ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱԼԱՍՊԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Շատ շուտ կսահին ժամերը, և խոր տխրությամբ է, որ կմոտենանք բաժանումի պահուն:

Հանուն Հ. Բ. Ը. Մ.-ի վարչության և անդամներուն մեր խորին շնորհակալությունները կհայտնենք Ձեզի, որ տրամադրեցիք Ձեր թանկագին ժամերեն պահ մը՝ օրհնելու այս կեդրոնը Ձեր ներկայությամբ:

Ձեր ներկայությունը, Վեհափառ Տեր, կխանդավառե մեզ և կլեցնե մեր սրտերը հայկական զգացումներով: Մասնաճյուղը հիմնվեցավ 1957-ին, գրասենյակի մը մեջ, հոգալու համար Մոնրեալի նորահաս հայերու կարիքները: Ապա 60-ական թվականներուն Բարեգործականը ձեռնարկեց իր սկաուտական, մշակութային և մարզական աշխատանքներուն՝ իր կեդրոնը տեղափոխելով շենքի մը մեջ, որ կկոչվեր «Հայ Տուն» և որ նույն ժամանակ կեդրոնն էր մեր համայնքին: 70-ական թվականներուն գաղութը տիրացավ իր սեփական եկեղեցիին, և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ տաճարի սրահներեն մեկուն մեջ Բարեգործականը շարունակեց իր վերոհիշյալ աշխատանքները: Այստեղ ծնունդ առին նաև Ալեք Մանուկյան վարժարանի մանկապարտեզի առաջին երկու դասարանները:

1976-ին մասնաճյուղը տիրացավ այս շենքին, և տարի մը վերջ Բարեգործականը օժտվեցավ Ալեք Մանուկյան վարժարանի ներկա շենքով: Այսօր Բարեգործականը կներկայացնե մեծ ուժ մը Մոնրեալի մեջ, կծառայե հայ ազգի զավակներուն՝ տալով անոնց հայեցի դաստիարակություն, հայրենասիրական զգացում, վառ պահելով հայ ավանդությունները և մշակույթը:

Վեհափառ Տեր,

Այժմ Դուք ականատես կըլլաք վերջին 20 տարվա ընթացքին մեր համայնքի ընդլայնմանը: Հայ ազգին զավակները, որոնք հաստատվեցան այս ափերուն վրա, իրենց հայկական մշակույթին և ավանդություններու շարքին բերին իրենց հետ զանազան երկիրներու սովորությունները: Բազմացան կազմակերպությունները, բազմացան նաև իրենց սեփական շենքերն ու սրահները, և բնականաբար ընդլայնվեցավ նաև կազմակերպությունների գործունեությունը:

Եվ ահա Դուք Ձեր սրբատառ կոնդակով հաստատեցիք նորակազմ Կանադայի թեմը և իր առաջին առաջնորդը: Հոգեշնորհ Տ. Վազգեն ծայր. վարդապետը, ապա Տ. Վազգեն եպիսկոպոսը համախմբեց, կազմակերպեց մեր համայնքը և իր հայրական հորդորներով իսկապես առաջնորդեց զանազան ուժերը, տալով անոնց մեկ ուղղություն և մեկ նպատակ:

Հ. Բ. Ը. Մ.-ի Մոնրեալի մասնաճյուղը հպարտ է այսօր, որ մեր առաջնորդը կվայելե Ձերդ Սուրբ Օծության սերն ու գնահատանքը։

Վեհափառ Տեր, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Մոնրեալի մասնաճյուղի վարչության և բոլոր անդամ-անդամուհիներուն անունով կուզանք Ձեզի բարի գալուստ և բարի կեցություն մաղթել ի Մոնրեալ։

Արհշատության մաղթանքներով և որդիական ջերմ զգացումներով թույլ տվեք մատչիլ ի համբույր Ձեր Սուրբ Աջույն։

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղված ողջույնի սրտաճույզ խոսք է ասում նաև Հ. Բ. Ը. Մ.-ի «Ոսկեայ տարիք» հանձնախմբի անդամ տիար Ներսես Տոլմաճյանը։

ՆԵՐՍԵՍ ՏՈԼՄԱՃՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

«Ոսկեայ տարիք» հանձնախումբի վարչության և բոլոր անդամ-անդամուհիներու կողմե բարի գալուստ կմաղթեմ Նորին Սուրբ Օծությունն Տ. Տ. Վազգեն Ա շնորհազարդ կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Մենք «Ոսկեայ տարիք»-ի բոլոր անդամներս, խոնարհելով կհամբուրենք իր սուրբ Աջը, մաղթելով առողջություն և երկար կյանք Էջմիածնի արժանավոր Գահակալին։

Թող միշտ փայլի և բարգավաճի Սուրբ Էջմիածինը։ Շինարար մեր Վեհափառին գահակալության երեսուներկու տարին վերջացավ։ Մենք ամբողջ սրտով կմաղթենք երկարատև գահակալություն, համայն աշխարհի խաղաղության պայմաններու մեջ, որպեսզի մեր ավերված մյուս եկեղեցիներն ալ նորոգվին ու բացվին, շնորհիվ Վեհափառի տոկուն կամքին, հայրենասիրության և ծառայասեր ոգիին։

Վեհափառ Հոր այցելությամբ մենք այսօր երջանիկ օր մը կապրինք։

Բարի եկաք, սիրելի Վեհափառ։

Հանդիպման ընթացքում 95-ամյա տիկ. Վերժինե Գրիգորյանը արտասանում է իր հեղինակած «Էջմիածին» բանաստեղծությունը։

ԷՋՄԻԱԾԻՆ

Էջմիածին, դու բառ մըն ես անգին,
Դու կարապետը մեր լույս հավատքին,
Մենք հետնորդներն ենք քո անմար լույսին,
Պահապանները քո Մայր տաճարին,
Քո Մայր Աթոռի սրբազան վանքին։

Չար ոսոխը մեզ քեզմե բաժանեց,
Դեպ օտար ափեր մեզ քշեց-նետեց,
Նա մեզ տարագրեց, քեզ քանդե՛լ ուզեց,
Բայց Աստծու շունչը քեզ միշտ պաշտպանեց,
Հայու հավատքն ալ զմեզ հայ պահեց։

Գիշեր-ցերեկ մենք քեզ ենք երազել,
Շարականներդ սիրով ենք երգել,
Զանգերիդ կանչին ականջ ենք դրել,
Արևշատությանդ համար աղոթել,
Ուխտել ենք ընդմիշտ քեզ սիրել, պաշտել։

Ու հիմա անցա՞ն օրերն այն դաժան,
Հասան օրերը մե՜ծ ուրախության.
Քո զանգի ձայնը ա՛լ մեզ կհասնի,
Ողջույնի խոսքդ մեր մեջ կլսվի,
Եվ քո օրհնությունն զմեզ կսփոփի։

Կանթեղիդ լույսը մեզ կզորացնե,
Քո զանգի զարկը մեզ տուն կկանչե,
Մեր Վեհին ձայնը սե՜ր կուսուցանե,
Այսքան բաժանում այլևս բա՛վ է,
Հայ Եկեղեցին միության կարոտ է։

Սույն հիշարժան հանդիպումն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄՈՆՐԵԱԼԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՄԵՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆ

Նույն օրը, ժամը 14.50-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելում է Ալեք Մանուկյան երկրորդական ամենօրյա վարժարան։ Դպրոցում գործադրվում է պետական կրթական հաստատությունների պարտադիր ուսումնական ծրագիրը և դրան զուգահեռ՝ հայագիտական մի շարք առարկաներ։

Վարժարանի մուտքի առաջ Ամենայն Հայոց կաթողիկոսը դիմավորվում է դպրոցի տնօրենության, ուսուցչական կազմի, խնամակալների և աշակերտության կողմից՝ ոգևորիչ խանդավառությամբ, ցնծագին ծափերով ու ծաղիկներով։ Վեհափառ Հայրապետը իր շքախմբի ուղեկցությամբ առաջնորդվում է դպրոցի հանդիսասրահ, ուր ողջ աշակերտությունը սրտատրոփ սպասում էր Հայոց Հայրապետին։ Այստեղ ողջույնի և բարիգալըստյան սրտահույզ մի ուղերձ է կարդում դպրոցի տնօրենուհի տիկ. Վարդուհի Պալյանը։

«Վեհափառ Տեր,

«Ես Հայաստանս կուզեմ, ինչո՞ւ չի գար Հայաստանս». այս բառերով գոհար արցունքները աչուկներեն կհոսեցներ Ալեք Մանուկյան վարժարանի տակավին երեքուկեսամյա աշակերտը, վախնալով, որ կարելիությունը չունենար տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետը։

Վեհափառ Հայրապետը իր Հայաստանն էր, Հայաստանը իր Վեհափառն էր։

Բյուր շնորհակալություն առաքելազարդ Հայրապետ Հայոց, որ այդ արցունքները այսօր վերածեցիք խինդի և ցնծության։



Վեհափառ Հայրապետը Մոսկվայի Ցոլ վարժարանների աշակերտուհիներ-մանկնարանների հետ

Հայաստանեայց Առաքելական Միածնաէջ Ս. Եկեղեցւոյ ծոցեն բխող, հայու երկարամյա անպարտ հավատքը ցոլացնող զանգակները կողողանջեն քանի մը օրերե ի վեր Մոնրեալի այս ցրտաշունչ հողին վրա, և անոնց խաղաղ ազդեցության ներքև կբարձրանա հազար օրհնանք Այեք Մանուկյան վարժարանի որմերեն վեր, հասնելու համար առ Աստված, որ արժանի ըրավ այս բազմահարյուր աշակերտությունը՝ հանդիպելու իր Վեհափառ Հայրապետին, խոնարհելու անոր առջև և իր հիացիկ նայվածքով իր սերը մատուցանելու Ամենայն Հայոց Հայրապետին:

Վեհափառ Տեր, մեր վարժարանի աշակերտությունը ապրելու վճռակամության իր ներշնչումը կստանա վերածնված Մայր Հայրենիքի իրականութենեն: Անոնք հայոց բառ ու բանին շքեղությամբ օծում՝ ամեն օր կճախրեն դեպի Սնան, Սարդարապատ, Մասիս ու Արագած: Իսկ Ս. Էջմիածին՝ փաստ...:

Որովհետև այս սիրասուն հայորդիները քաջ տեղյակ են, թե Ս. Էջմիածնի լուսակերտ կամարներու ճաճանչները դարեր ամբողջ լուսավորեցին մեր ժողովուրդը, տալով անոր ինքնության դրոշմ:

Մենք հավակնությունը չունինք երբեք Ձերդ Վեհափառության գործը արժանավորապես և լիովին բնորոշելու: Սակայն, որպես դաստիարակներ, կփոխանցենք Ձեր շրջանին կենսունակություն ստացած Հայաստանեայց Առաքելական Եկեղեցվո պատմությունը և Ձեր վաստակին հրաշքը, որ Սփյուռքի մեր կյանքը փրկեց ստորակայության զգացումեն, տվավ մեզի ավիշ և ապրելու վճռակամություն, Մայր Հայրենիքի և Ս. Էջմիածնի վեհությամբ ներշնչելով ապրելու արժանի մեր ժողովուրդը:

Վեհափառ Տեր, ցնծության այս անկրկնելի պահուն, թող ներվի ինձի, մեր աշակերտության և պատկառելի հյուրերու ներկայության, ամբողջական երախտագիտությունս հայտնելու Ձեզի, որ պարգևատրեցիք զիս «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով և Ձեր սրբազան կոնդակով:

Այժմ կգտնվիմ նվիրական նո՛ր պարտավորությանց առջև:

Այդ պատիվը ես կուզեմ բաժնել բոլոր պաշտոնակիցներուս հետ, մասնավորաբար հայ մշակներուն հետ, որոնք մայրենի լեզվի ջերմությամբ վառ կպահեն այս կրթական օջախը և հավատք կներշնչեն աշակերտության՝ հաղթահարելու դժվարություններ մեր գերագույն շահերուն ի խնդիր:

Վեհափառ Տեր, արդ կընծայաբերենք Ձեզի մեր աշակերտության և ուսուցչական կազմին ուխտը՝ մնալու Ս. Էջմիածնի հովանիին ներքև որպես մեկ ժողովուրդի, մեկ հայրենիքի և մեկ ու միակ Եկեղեցիի զավակ:

Ու կձոնենք Ձեզի Այեք Մանուկյան վարժարանի աշակերտության հիացիկ սերը, 20-րդ դարու խաղաղության առաքյալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ»:

Գեղարվեստական ծրագրի գործադրության սկզբին, հանուն վարժարանի աշակերտության, ողջույնի գեղեցիկ մի ուղերձ է ընթերցում դպրոցի սան Գևորգ Բիժեն:

«Վեհափառ Տեր,

Այսօր հոգեպարար ազգային տոն է մեզի համար, աներևակայելի ցնծություն, որովհետև կվայելենք մեր սիրելի վարժարանեն ներս Ձեր պատկառելի անձնավորության ներկայությունը:

Մենք, Վեհափառ Հայր, հայ ազգին նորահաս զավակներս,, մեր մա-

նուկ հասակեն, ամեն օր վայելած ենք Ձեր ներկայությունը մեր սիրելի վարժարանին դասասենյակներեն ներս: Մեր մանկական վճիտ աչքերը հառած Ձեր վեհ պատկերին՝ մեր ուսուցիչներեն սորված ենք, թե Դուք Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետն եք և գահակալը Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին, որ կգտնվի Մայր Հայրենիք Հայաստանի մեջ: Սորված ենք նաև մեր ազգին դարավոր ու հերոսական պատմությունը, տեղյակ ենք Հայ Եկեղեցվո պատմության և մեր հայրապետներու անձնազոհ գործունեության՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչեն սկսյալ:

Ի մեծ ցավ բոլորիս, ավերիչ փոթորիկներու հետևանքով մենք այժմ չենք բնակիր մեր բնօրրանին մեջ, այլ՝ հեռու հայրենիքեն և տարագիր: Սակայն Կանադայի այս ցրտաշունչ, բայց հյուրընկալ ափերուն ամեն բանե ավելի կսիրենք Մայր Հայաստանը: Կհավատանք, թե օր մը պիտի վերադառնանք հայրենի՝ տուն...

Այդ օրը փութացնելու համար մի՛շտ պիտի խոսինք հայերեն, շատ լա՛վ պիտի սորվինք մեր քաջ նախահայրերուն օրինակելի պատմությունը, ամենուրեք կանգո՛ւն և շե՛ն պիտի պահենք հայը հա՛յ պահող Հայ Եկեղեցին և դպրոցը հայկական:

Այս ուղիով է, որ կուխտենք արժանի ըլլալ տեսնելու Մասիսն ու Արագածը, Բյուրակն ու Տավրոսը, Վանն ու Սևանը, Ս. Էջմիածինը, Երեբունին ու Սարդարապատը:

Սիրելի Վեհափառ Հայր, իբրև հայ պատանիներ, այսօր մեր կյանքի բացառիկ ու երջանկագույն օրերեն մեկն է, որովհետև առիթը կտրվի մեզի տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետին մյուռանաբույր դեմքը, առնելու անոր կենարար օրհնությունը, համբուրելու անոր օծյալ սուրբ Աջը:

Բնա՛վ պիտի չմոռնանք այս օրհնաբեր ու հիշարժան այցելությունը:

Սրտի՛ս խորեն կգոչեմ՝
Բարի՛ եկաք, Վեհափառ.
Դո՛ւք ամենուս պե՛տ և հա՛յր,
Մաղթեմ՝ մնաք քաջառողջ,
Վերադառնաք ո՛ղջ-առո՛ղջ
Էջմիածին Մա՛յր Աթոռ,
Հայաստա՛ն, սրտի՛ս հատոր:
Տարեք սի՛րտս Հայրենիք,
Սփյուռքի մեջ ա՛լ հերիք
Թափառական մնացինք,
Շատ տառապանք կրեցինք:
Տարեք մե՛զ ալ Հայաստան,
Հայու միա՛ն ապաստան:
Օրհնեցե՛ք մեզ, Վեհափառ,
Ու ապրեցեք ճի՛շտ մեկ դար»:

Գեղարվեստական ծրագրի գործադրության ընթացքում վարժարանի շնորհալի աշակերտները խմբովին երգում են ազգային-հայրենասիրական և ժողովրդական մի շարք երգեր, կատարում են արտասանություններ, խմբական հայկական ժողովրդական պարեր: Մեծ է ոգևորությունը: Մթնոլորտը էլեկտրականացած է և պահը՝ հուզումնալից: Բոլորը անձնվագին կարոտով սպասում են առաքելատիպ Հայրապետի ներշնչող ու մխիթարող

խոսքերին: Զդաղարող խանդավառ ծափերի ներքո հանդես է գալիս Հայոց Հայրապետը և սրտառուչ խոսքով պատգամ տալիս հարատևել հայապահպանման իրենց ջանքերի մեջ, մնալ հավատարիմ զավակները Ս. Էջմիածնի և նվաճումներ արձանագրող Մայր Հայրենիքի:

Մեկնումից առաջ Նորին Սրբությունը, ի հիշատակ շնորհաբեր իր այցելության, վարժարանի տեսչությանն է հանձնում Ս. Էջմիածնից բերված կրծքանշաններ և մեդալներ:

Մեկնելու պահին, ընդառաջելով տեսչության փափագին, Հայոց Հայրապետը վարժարանի շրջափակում տնկում է եղևնու մի ճյուղ՝ իբրև կենդանի խորհրդանիշ իր այցելության:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամը 15.30-ին Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Տ. Թորգոմ, Տ. Ներսես և Տ. Վազգեն սրբազանների, այցելում է Սեն Լորանի քաղաքապետարան, ուր արտաքին դռան առաջ Հայոց Հայրապետին դիմավորում է քաղաքապետ Մարսել Լորենը, որը Նորին Սրբությանը ու իր հետևորդներին առաջնորդում է իր մասնավոր ընդունարան: Մեծարգո քաղաքապետը բարի գալուստ է մաղթում և հայտնում իր ուրախությունը՝ Հայոց Հայրապետին մեծարելու պատեհություն ունեցած լինելու համար՝ հավաստիացնելով նրան, որ այս այցելությունը կլինի շնորհաբեր Սեն Լորանի ողջ քաղաքացիների համար:

Այնուհետև հյուրասիրության սեղանի շուրջ Վեհափառ Հայրապետի և հարգարժան քաղաքապետի միջև տեղի է ունենում ջերմ զրույց, որի ընթացքում փոխանակվում են հուշանվերներ:

Ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով վերադառնում է Մոնրեալ և այցելում Մոնրեալի քաղաքապետարան, ուր Նորին Սրբությանը դիմավորում է քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատար տիկ. Կատլին Վերդոնը:

Հանդիպմանը ներկա են գտնվում ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի և Լիբանանի հյուպատոսները:

Այստեղ նույնպես տարբեր երկրների պետական բարձրաստիճան ներկայացուցիչների և Նորին Վեհափառության միջև տեղի է ունենում ջերմ զրույց և հուշանվերների փոխանակում:

Երեկոյան ժամը 20.30-ին «Շերաթոն» հյուրանոցի սրահներից մեկում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ընթրիք՝ մասնակցությամբ Կանադայի հայոց թեմական և ծխական խորհուրդների անդամների:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ ԲՈՍՏՈՆ

Բոստոնը Մասաչուսեցի նահանգի գլխավոր քաղաքներից է և վաճառաշահ նավահանգիստ համանուն ծովածոցում, Ատլանտյան օվկիանոսի ափին: Քաղաքն իր արվարձաններով ունի շուրջ 3 միլիոն բնակչություն: Հիմնադրվել է 1630 թ. անգլիացի գաղութարարների կողմից: Իր անկախության համար մղված ազատագրական երկարատև մարտերից հետո, 1776 թ. Բոստոնը ձեռք է բերում անկախություն:

Քաղաքում գոյություն ունեն 18-րդ դարից մնացած ճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ:

Բոստոնը հայտնի է իր գիտահետազոտական, մշակութային և ուսումնական հաստատություններով: Այստեղ են գտնվում հռչակավոր Հարվարդի համալսարանը, Մասաչուսեցի տեխնոլոգիական ինստիտուտը, Արվեստի և գիտության ամերիկյան ակադեմիան, Գեղարվեստի թանգարանը, ժամանակակից արվեստի ինստիտուտը և այլ անվանի հաստատություններ:

Հայերը Բոստոնում բնակություն են հաստատել 1880-ական թվականներից: Նրանց թիվը մեծացել է ԱՄՆ-ի հայ գաղութի ստվարացման համեմատ: Այժմ Բոստոնում և շրջակայքում ապրում են շուրջ 50 հազար հայեր: Այստեղ առաջին հայկական եկեղեցին բացվել է 1923 թ., իսկ նրան կից դպրոցը՝ 1924 թ.: Ներկայումս Բոստոնում գործում են քսանից ավելի եկեղեցական, մշակութային, հայրենակցական, երիտասարդական և այլ կազմակերպություններ (Թեքեյան մշակութային միություն, Հայագիտական համազգային ընկերակցություն, ՀՕՄ-ի վարչություն և այլն), ինչպես նաև հայկական մի շարք երգչախմբեր ու պարախմբեր:

Բոստոնի Հարվարդի համալսարանին կից գործում է հայագիտական ամբիոն: Այժմ Բոստոնում լույս են տեսնում «Պայքար», «Հայրենիք», „The Armenian Mirror Spectator", „The Armenian Review" և այլ պարբերականներ:

Նոյեմբերի 19-ին, հինգշաբթի օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը, Կանադայից վերադառնալով, այցելում է Բոստոն՝ Նյու Ինգլենդի

շրջանների եկեղեցական համայնքներին իր օրհնությունն ու ողջույնը բերելու: Բոստոնի օդանավակայանում Վեհափառ Հայրապետն արժանանում է ժողովրդական արտակարգ խանդավառ ընդունելության: Այստեղ Նորին Սրբությանը դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել շրջանի հայոց հոգևոր հովիվներ Տ. Պարետ ծ. վրդ. Երեցյանը, Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, ընդունելության հանձնախմբի անդամներ, մտավորականներ, արվեստագետներ և հավատացյալների հոծ բազմություն:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորելու էր եկել նաև Քեմբրիջի քաղաքապետ Սալիվանը:

Վեհափառ Հայրապետը օդանավակայանից ավտոմեքենաների շքերթով, ժողովրդի խանդավառ արտահայտությունների ներքո, ուղևորվում է դեպի «Ռից Կառլտոն» հյուրանոց և տեղավորվում իրեն հատկացված մասնավոր հարկաբաժնում:

Երեկոյան ժամը 18-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով և շրջանի հոգևորականաց դասով, եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով հանդիսավորապես մուտք է գործում Քեմբրիջի հայոց գեղակառույց Ս. Երրորդություն եկեղեցի: Եկեղեցում և նրա շրջափակում հավաքված հավատացյալների խուռներամ բազմությունը, որը անհամբեր սպասում էր Հայոց Հայրապետի գալստյան, ծափողջույններով և բուռն խանդավառությամբ է դիմավորում Նորին Սրբությանը:

Այստեղ կարճ արարողությունից հետո եկեղեցու երգչախումբը, ղեկավարությամբ Տ. Օշական վարդապետի, կատարում է «Հայրապետական մաղթերգ»-ը և մի շարք կրոնական երգեր:

Եկեղեցական արարողության ավարտին բարիգալստյան ջերմ խոսք է ասում թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, իր ողջույնի խոսքն ուղղելով բոստոնաբնակ հայ հավատացյալներին, օրհնում է նրանց և տալիս հետևյալ պատգամը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալներ,

Իբրև առաջին սպասավորը Հայ Եկեղեցվո, պարտականություններս մեկը կնկատեմ պարբերաբար այցի ելել արտասահման և մոտեն ծանոթանալ մեր հավատացյալներու հոգևոր կյանքին և անոնց բերել Սուրբ Էջմիածնեն՝ Աստուծո օրհնությունը: Իսկապես ինձի համար հույժ մխիթարական է հաստատել, որ մեր Եկեղեցվո զավակները, ուր որ ալ գտնվին աշխարհի վրա, կապրին համախմբված մեր սուրբ Եկեղեցվո կամարներուն ներքև, կրոնական համայնքներ կազմած, և կպահպանեն մեր սուրբ ավանդությունները, մեր մայրենի լեզուն և մեր հայկական բարոյական ըմբռնումները կյանքի նկատմամբ: Այդպիսով անոնք կմնան ոչ միայն հավատարիմ մեր Մայր Եկեղեցիին, այլ նաև կդառնան կարգապահ, բարոյական առաքինություններով տոգորված շինարար քաղաքացիները իրենց բնակած երկիրներուն:

Սուրբ Ավետարանի ճշմարտությունները հավիտենական այժմեություն

ունին, մշտապես այժմեությունն, ինչքան ատեն որ մարդիկ ապրին այս աշխարհի վրա։ Այս վկայությունը ես ձեզի կբերեմ նաև մեր կողմերեն, ուր կրոնական հավատքը նոր վերազարթոնք սկսած է ապրիլ։ Երիտասարդությունը սուրբ Ավետարանի մեջ նոր ճշմարտություններ կփնտրե։ Մարդկությունը, գուցե ամեն բանե առավել, մեր օրերուն ծարավի է այդ հոգևոր և բարոյական սնունդին, որպեսզի կյանքը դառնա ավելի ներդաշնակ ու հավասարակշռված, որպեսզի նոր սերունդները հեռու մնան վատառողջ մղումներե և այլասերիչ մոլություններե։ Մարդ ըլլալ՝ կնշանակե ազատ ըլլալ, ազատ ըլլալ՝ կնշանակե հպատակիլ հոգե-բարոյական օրենքի մը ազատ կամքով։

Իմ այս ուղևորության շրջանին, գոհունակ սրտով հաստատեցի, թե հոգևոր կյանքը հետզհետե առավել զարգացում կունենա ձեր մեծ երկրի հայ եկեղեցական համայնքներու ծոցին մեջ, շնորհիվ կազմակերպված ժրաջան այն աշխատանքին, որուն լծված են ձեր թեմի եկեղեցիներու հոգևոր սպասավորները։ Այսպիսով Եկեղեցին կծառայե իր բուն նպատակին, իր կրոնական և բարոյական դաստիարակության կոչումին՝ հայկական ավանդական ոգեշնչումով։

Այս մխիթարական կացությունը կհաստատեմ նաև այստեղ, Բոստոնի շրջանի մեջ, ուր կգործեն բացառիկ եռանդով և նվիրումով եկեղեցվո հովիվներ՝ իրենց գլուխը ունենալով Տ. Պարետ հոգեշնորհ ծայրագույն վարդապետը և արժանապատիվ Տ. Մամբրե քահանան։

Իմ հայրական սերը, գնահատանքը և օրհնությունը այս շրջանի բոլոր հոգևոր սպասավորներուն և հոգաբարձությանց անդամներուն։ Ամեն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՈՏԵՐՏԱՈՒՆՈՒՄ Ի ՊԱՏԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, ժամը 20-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Ուոտերտաունի հայոց Ս. Հակոբ եկեղեցուն կից մշակույթի սրահ։ Ծափահարությունների և ժողովրդական մեծ խանդավառության ներքո ներս է մտնում Վեհափառ Հայրապետը և, օրհնելով ներկաներին, առաջնորդվում է դեպի ընդունելության պատվո սեղան, ուր Հայոց Հայրապետին սեղանակից են լինում Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Պարետ ծ. վրդ. Երեցյանը, Տ .Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Մասաչուսեց նահանգի պառլամենտի նախագահ պրն. Ջորջ Գվրյանը։

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետին բարիգալստյան խոսք են ասում դոկտ. Զարեհ Դեմիրճյանը, տիար Ջորջ Գվրյանը, Տ. Պարետ ծ. վրդ. Երեցյանը, թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը և այլ անձինք։

Այնուհետև ողջույնի ջերմ և գոտեպնդող ու ոգևորիչ խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը։

Նոյեմբերի 20-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը Քեմբրիջի հայոց Ս. Երրորդություն եկեղեցուն կից մշակույթի փոքր սրահում հանդիպում է ունենում ԱՄՆ-ի արևելյան թեմի թեմական խորհրդի կողմից նշանակված եկեղեցական միության հանձնախմբի անդամների հետ։



Վիճակաւոր Հայրապետը Բոստոնի Հոմանվամբ Կաթողիկէ Եկեղեցու տեսնելու Բեռնարդ Լոսի մօտ

Ժամը 12.30-ին մշակույթի մեծ սրահում տեղի է ունենում ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթից առաջ Հայոց Հայրապետին է այցելում Բոստոնի շրջանի Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու կարդինալ Նորին Ամենապատվություն Բեռնարդ Լոուն, որը ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը Բոստոն և սրտագին զրույց ունենում նրա հետ:

Ճաշկերույթին ներկա են Նյու Ինգլենդի շրջանների հոգևորականները, թեմական և ծխական խորհուրդների անդամները, ինչպես նաև Բոստոնի հարգարժան կարդինալը:

Նույն օրը, ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը իր շքախմբով փոխադարձ այցելությամբ լինում է Բոստոնի կարդինալ Բեռնարդ Լոուի հարգելի հյուրը և նրա պալատում արժանանում ջերմ ընդունելության:

Պալատի մատուռ մեջ տեղի է ունենում էկումենիկ կարճ աղոթք:

Ապա Նորին Սրբությունը մտերմիկ մթնոլորտում զրույց է ունենում և հյուրասիրվում կարդինալի կողմից:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՈՏԵՐՏԱՈՒՆԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Ուոտերտաունի Ս. Հակոբ եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով: Եկեղեցում կարճ աղոթքից հետո, Հայոց Հայրապետը առաջնորդվում է եկեղեցուն կից մշակութային սրահ և հանդիպում ունենում Հայ Եկեղեցու Երիտասարդաց Կազմակերպության անդամների հետ:

Վեհափառ Հայրապետին ուղղված բարիգալստյան խոսք է ասում Երիտասարդաց Կազմակերպության կենտրոնական խորհրդի ատենապետ տիար Աքոթ Նաջարյանը:

Այնուհետև հանդես է գալիս Վահե Օհանեսյանը հետևյալ սրտահույզ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Մեր ժողովուրդի ավանդությունը մեզի կըսե, թե Արագած լեռան գագաթին կպպլա Սուրբ Գրիգոր Լուսավորչի կանթեղը: Մինչև հիմա այդ կանթեղը կփայլի՝ պայծառ պահելով Քրիստոսի լույսը մեր Մայր Հայրենիքի մեջ: Ինչպես երեկ գիշեր ըսիք, մեր ժողովուրդը կհավատա, թե այդ կանթեղի լույսը Ձեր վրա կփայլի, և Ձեր այս այցելության միջոցավ Լուսավորչի կանթեղը Ամերիկա եկած է:

Ուրիշ կանթեղ մը կա, որ փայլեցավ Բոստոնի Old North եկեղեցիեն, 1775-ի ապրիլ 19-ի երեկոյան՝ զգուշացնելու ամերիկացի հայրենասեր հեղափոխականները անգլիացի զինվորներու վտանգին մասին: Ամերիկայի մեջ դպրոցական մանուկներու մեծ մասը գիտե Longfellow-ի բանաստեղծությունը, որ անմահացուց այս դեպքը:

Մեր թեմի New England-ի շրջանի երիտասարդներու և մանուկներու կողմե Ձեզի կու տանք այս կանթեղը, որ վավերական օրինակ մըն է Old North եկեղեցվո կանթեղին: Այս կանթեղը, որ գործն է հայ վարպետի մը, նվիրված էր նախագահ Ֆորդին Ամերիկայի 200-ամյակին առթիվ, և վերջերս տրվեցավ կառավարիչ Ջորջ Դեոքմեջյանին: Ուրիշ օրինակ չկա:

Այս կանթեղը Ձեզի կու տանք որպես արտահայտություն մեր հավատքին, հույսին և սիրույն: Մեր աղոթքն է, որ այս կանթեղին լույսը միանա Լուսավորչի կանթեղի լույսին, որպեսզի Հայաստանի, Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի լույսը միշտ անպակաս ըլլա մեր վրայեն Ամերիկայի մեջ և Ամերիկայի հայության լույսը հավատարմության և պաշտպանության աղբյուր մը ըլլա Ձեզի»:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը խոսք առնելով՝ իր հայրապետական պատգամն է տալիս Ուոտերտաունի եկեղեցասեր հայ երիտասարդությանը՝ հորդորելով անսասան կամք և վճռակամություն ցուցաբերել շարունակելու իրենց հայրենանվեր գործը՝ առավել հայեցի կրթության, առավել հայեցի կյանքի համար՝ ի ծառայություն Մայր Եկեղեցու և Մայր Հայրենիքի:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԵՏՐՈՅՏՈՒՄ

Դետրոյտը Միչիգանի նահանգի գլխավոր քաղաքներից է և համարվում է Միացյալ Նահանգների արդյունաբերական չորրորդ քաղաքը: Հիմնադրվել է 1701 թվականին: Քաղաքն իր արվարձաններով ունի չորս և կես միլիոն բնակչություն: 1760 թվականին Դետրոյտը գրավվում է անգլիացիների կողմից և գաղութացվում: 1796 թ. միայն քաղաքն ազատագրվում է գաղութարարների լծից և վերջնականապես մտնում Միացյալ Նահանգների կազմի մեջ:

Դետրոյտը հայտնի է հատկապես իր ավտոմոբիլային արդյունաբերությամբ: Այստեղ զարգացած է նաև պողպատաձուլական և քիմիական արդյունաբերությունը: Քաղաքում գործում են երկու համալսարան, բազմաթիվ կոլեջներ և միջնակարգ ուսումնական հաստատություններ: Դետրոյտը առևտրական և տնտեսական բարգավաճում ապրեց սկսած 19-րդ դարի առաջին կեսից:

Դետրոյտում հայկական համայնքը կազմավորվել է 20-րդ դարի սկզբներին: 1910 թ. Դետրոյտում և նրա շրջակայքում ապրում էր ընդամենը 400 հայ: Դետրոյտի հայ համայնքն սկսել է ստվարանալ հատկապես համաշխարհային առաջին պատերազմից հետո: Այժմ քաղաքում և նրա շրջակայքում բնակություն են հաստատել ավելի քան 40 հազար հայեր:

Դետրոյտի հայկական համայնքը գործուն դեր է խաղացել ամերիկահայ ազգային կյանքում: Հայ Առաքելական Եկեղեցին այստեղ հիմնադրվել է 1915 թ., իսկ եկեղեցու շենքը կառուցվել և սկսել է գործել սկսած 1931 թվականից: Հայ կաթոլիկ և հայ ավետարանական համայնքները նույնպես ունեն իրենց աղոթքի տները: 1969 թվականից այստեղ գործում է Հ. Բ. Ը. Միության ամենօրյա դպրոցը: Համայնքում աշխույժ գործունեություն են ծավալում բազմաթիվ հայրենակցական և մշակութային միություններ, ակումբներ, թատերախմբեր, երիտասարդական և կանանց կազմակերպություններ և այլն: Ուեյն նահանգային համալսարանում ստեղծվել է հայագիտական ամբիոն:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում դետրոյտահայ համայնքը գործուն մասնակցություն ցուցաբերեց «Սասունցի Դավիթ» տան-

կային շարասյան ստեղծմանը և կարևոր ձեռնարկումներ իրականացրեց հայրենադարձության օգտին:

Դետրոյտում լույս է տեսել 19 անուն հայերեն պարբերական: Առաջին պարբերական հանդեսը լույս է տեսել 1916 թ. «Լուսավորիչ» անունով:

Նոյեմբերի 21-ին, շաբաթ օրը, Վեհափառ Հայրապետը իր շքախմբի ուղեկցությամբ ժամանում է Դետրոյտի «Մետրոպոլիտեն» միջազգային օդանավակայան, ուր ընդունվում է ժողովրդական խանդավառություններով:

Հայոց Հայրապետի ժամանումը ողջունում են Դետրոյտի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյանը, Հ. Բ. Ը. Մ.-ի ցկյանս նախագահ տիար Ալեք Մանուկյանը, Մայր Աթոռի բարերար պրն. Էդուարդ Մարտիկյանը, ծխական խորհրդի և հայրապետական ընդունելության հանձնաժողովի անդամները, տեղի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներ և ժողովրդի հոծ բազմություն:

Այնուհետև ավտոմեքենաների շարասյունով և պատվո ոստիկանների ուղեկցությամբ Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Դետրոյտի միջազգային օդանավակայանին կից Ալեք Մանուկյանի «Մասկո» ընկերության շենք:

Այստեղ կատարվում է աղ ու հացի ավանդական օրհնություն:

Ապա ավտոմեքենաների շարասյունը Հայոց Հայրապետին տանում է Դետրոյտ քաղաքում հայոց մեծ Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված Կոմիտաս վարդապետի արձանի առջև, որտեղ կատարվում է հոգեհանգստյան պաշտոն: Այս առթիվ հոգեհանգստյան արարողությանը ներկա գտնվող Դետրոյտի քաղաքապետ Կոլման Ցանգը Վեհափառ Հայրապետին է հանձնում քաղաքի բանալին:

Հավարտ արարողության Հայոց Հայրապետը իր շքախմբի անդամներով ուղևորվում է Սաուտֆիլդի «Ռադիսոն» հյուրանոց:

Երեկոյան ժամը 18-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, «Գոլֆ» ակումբի շքեղ սրահում ազգային մեծ բարերար տիար Ալեք Մանուկյանը տալիս է ընթրիք, որի ընթացքում գործադրվում է գեղարվեստական կոկիկ մի ծրագիր:

Ընթրիքին մասնակցում են շուրջ 100 հրավիրյալներ: Ընթրիքի ընթացքում Վեհափառ Հայրապետը, բարձրորեն գնահատելով պրն. Երվանդ Ազատյանի երկարամյա անձնվեր ծառայությունը հայ գրին ու դպրությանը, նրան պարգևատրում է «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով:

Պատվո ընթրիքին ներկա են նաև տեր և տիկին Սարգիս և Ծոլի Սողանալյանները:

Գեղարվեստական ծրագրի ավարտին խանդավառ մթնոլորտում օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը:

Խաչքարի օծում Դիլիջանի Գայլոց Ս. Հովհաննես եկեղեցում

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ

Նոյեմբերի 22-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Դետրոյտի Ս. Հովհաննես Մկրտիչ ոսկեգմբեթ եկեղեցում մատուցվում է հանդիսավոր պատարագ: Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա են Հույն Օրթոդոքս Եկեղեցու Դետրոյտի առաջնորդ Տիմոթեոս եպիսկոպոսը, Միչիգան նահանգի սենատոր Կարլ Լիվնը, Հ. Բ. Ը. Մ.-ի նախագահ Ալեք Մանուկյանը, պարոնայք Էդուարդ Մարտիկյանը, Սարգիս Սողանալյանը՝ իրենց տիկնանց հետ, ինչպես նաև Դետրոյտից և նրա շրջակայքից ժամանած մեծաթիվ հայ և օտար հավատացյալներ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով, ամպհովանու տակ, զանգերի ավետավոր ղողանջների ներքո առաջնորդվում է դեպի եկեղեցի, որը տոնականորեն զարդարվել էր այդ օրը և փողփողում էր լույսերի մեջ:

Պատարագի ընթացքում, Տ. Փառեն ծայրագույն վարդապետի առաջնորդությամբ, Վեհափառ Հայրապետը մի պահ այցելում է եկեղեցուն կից կիրակնօրյա և շաբաթօրյա վարժարանների սաներին հատկացված սրահ, ուր կարճ հանդիպում է ունենում աշակերտության հետ և տալիս նրանց իր հայրական օրհնությունները:

Ս. պատարագի դաշնալուր երգեցողությունը կատարում է եկեղեցու դպրաց դասը:

«Հայր մեր»-ից առաջ հոգեշունչ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի Նորին Սրբությունը նախագահում է եկեղեցու շրջափակում Եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված Խաչքարի բացման հանդիսավոր արարողությանը, ուր կատարվում է հոգեհանգստյան պաշտոն:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՇՈՒՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ժամը 16.30-ին Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից մշակույթի սրահում տեղի է ունենում համագաղութային մեծ ճաշկերույթ, որին մասնակցում են հայ և օտար շուրջ 800 հրավիրյալներ, որոնք եկել էին մի անգամ ևս ողջունելու և բարի ճանապարհ մաղթելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Որոշված ժամին Հայոց Հայրապետը մուտք է գործում սրահ՝ ընկերակցությամբ թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի, իր շքախմբի անդամների և գաղութի երևելի անձանց: Դղրդագին և խանդավառ ծափերը արտահայտությունն են հանդիսանում բոլոր ներկաների խոր ապրումների և նրանց հարգանքի՝ դեպի բոլորի սիրելի Վեհափառ Հայրապետը:

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը: Ճաշկերույթն սկսվում է ջերմ և հաղորդական մթնոլորտում: Առաջինը Վեհափառ Հայրապետին

բարիգալստյան խոսք է ուղղում ծխական խորհրդի ատենապետ տիար Արշավիր Եղիսյանը։

Ապա համայնքի հոգևոր հովիվ Տ. Փառեն ծայրագույն վարդապետը պատվո սեղանի շուրջ գտնվող հարգարժան հյուրերին մեկ առ մեկ ներկայացնում է ներկաներին և իր ողջույնի սրտագին խոսքն է ասում Հայոց Հայրապետին ուղղյալ՝ նրա այս շնորհաբեր այցելության առթիվ։

Այնուհետև, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ընկերակցության, ողջույնի սրտառուչ խոսքով հանդես է գալիս Ընկերակցության նախագահ տիար Էդուարդ Մարտիկյանը։

Ճաշկերույթի ընթացքում, խանդավառ ծափահարությունների ներքո, բեմ է հրավիրվում Հ. Բ. Ը. Մ.-ի նախագահ, համայն հայ ժողովրդի կողմից սիրված և գնահատված ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանը՝ Հ. Բ. Ը. Միության անունից իր երախտագիտական խոսքն ուղղելու Ամենայն Հայոց կաթողիկոսին։

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,
Գերաշնորհ Սրբազան Հայրեր,
Հայաստանյայց Եկեղեցվո զավակներ,
Սիրելի բարեկամներ,

Պատմական նոր ժամանակներու վրա բացվող լուսավոր իրականություն մըն է Նորին Սրբությանդ այցը Հյուսիսային Ամերիկա։ Այն մանուկները, որոնք ծնան ու մեծցան Ձեր նախորդ այցելութենեն ետք, այսօր հասած են 19 տարիքի սեմին։ Անոնք ծնան և աճեցան մթնոլորտի մը մեջ, որ օծված չէր Ձեր օրհնաբեր անձին ներկայությամբ։

Եվ այսօր անոնք Ձեր մեջ կգտնեն, ինչպես մենք կվերագտնենք, ծաղկող Մայր Հայաստանը՝ իր շենշող ժողովուրդով, և Սուրբ Էջմիածինը՝ իր լարավոր շքեղությամբ. անոնք Ձեր խոսքին մեջ կլսեն կոչն ու շունչը իրենց այրի նախահայրերուն ու դարձյալ կհայանա՛ն Ձեզմով։ Անոնց մատաղ հոգիները կլվացվին Հայաստանի արևին լույսով և կօծվին Սուրբ Էջմիածնի մյուռոնով։

Այսօր, համախմբված Ամերիկայի այս ափերուն վրա, հաջորդական բոլոր սերունդներով միացած, ցնծագին կողջունենք Ձեզ և ի սրտե բարի գալուստ կմաղթենք Նորին Սրբությանդ։

Մենք ժողովուրդ մըն ենք, որ բարոյական ուժին կհավատանք ու բարոյական ուժով կկառավարվինք. դարերով կորսնցուցինք մեր պետականությունը, բայց ո՛չ՝ միասնականությունը, որովհետև այդ բարոյական ուժը իրարու մո՛տ պահեց մեր ժողովուրդին բեկորները. և այդ բարոյական ուժը ուրիշ բան չէ, եթե ոչ մեր **Եկեղեցին**, իր Սուրբ Էջմիածնով և Ամենայն Հայոց Հայրապետությամբ։ Մեր **Եկեղեցի՞**ն է, որ պահպանած է մեր ժողովուրդի **ամբողջականությունը** իբրև հոգևոր պետություն ու բանակ, որովհետև այլապես ժողովուրդի մը կարգապահությունն ու միասնականությունը միայն կարելի է պահել պետական ուժով ու պետական հեղինակությամբ։

Մեր Մայր Հայրենիքը այսօր **ունի՛** իր պետականությունն ու ազգային միասնականությունը. Հայաստանը օժտված է **ա՛զգ** և **պետություն** բնորոշող **բոլո՛ր** տվյալներով. արտասահմանի ժողովուրդը, որուն սիրտը կտրո-

փե արյան միևնույն զարկով՝ բաժնված է իր մայր երկրեն և անոր պետական հովանիեն: Սակայն Սուրբ Էջմիածինը, իբրև հոգեկան շարունակությունը Հայաստանի իրականության, իր հեղինակությունը կծավալե բոլորի՛ս վրա, և հայ ժողովուրդի հարազատ զավակները, ուր որ ալ գտնվին, կդառնան հոգևոր քաղաքացիները պատմական ու հավերժական Հայաստանին:

Այսօր Ամենայն Հայոց Հայրապետին այցելությամբ մեր հոգևոր քաղաքացիությանն ստուգատեսն է, որ կկատարվի, մեր ինքնությունը անգամ մը ալ կմկրտվի հայեցիությամբ և հայ ժողովուրդի հատվածները դարձյալ իրարու կմիանան՝ Սուրբ Էջմիածնի մյուռոնին շաղախով...:

Մեզմե շատեր, իբրև տարահալած հայեր, այցելած են Մայր Հայրենիք՝ վայելելու համար Արարատի փառքը և տեսնելու համար մեր երկրին վերածնունդը. մեզի համար հոգեկան անսահման բավարարություն եղած է տեսնել Ս. Գրիգոր Լուսավորչի դարավոր Գահը իր պատմական փայլին ու շքեղանքի բարձունքին. և այդ Գահուն վրա տեսած ենք մեր իմաստուն Հայրապետը, որ խոհեմությամբ, հավատքով և հոգեկան կորովով կշարունակե Լուսավորիչներու գործը, որ սկսած էր 17 դարեր առաջ: Վազգեն Առաջին Հայրապետի 32 տարիներու գահակալության շրջանը շինարարական իր դրոշմը թողուցած է Հայրապետական Աթոռին վրա և շուրջ:

Ամենայն Հայոց Հայրապետը ոչ միայն հարգված է մեր հայրենի ժողովուրդեն, այլ նաև պետութենե՛ն. ու մենք, սփյուռքահայերս, քանի շարունակենք թիկունք կանգնիլ անոր եկեղեցաշեն և աստվածահաճո գործերուն, այնքան տևական և իրական կդառնա պետական վերաբերումը անոր անձին ու հեղինակության հանդեպ:

Ամենայն Հայոց Հայրապետը Սփյուռքի մեջ կներկայացնե Հայրենի՛քը, և Հայրենիքի մեջ՝ Սփյուռքը, իր իսկ պատմական Գահուն վրա՝ ամբողջ հայ ժողովուրդը, իր սրբություններով և սուրբերով, իր հավատքով, գործով, պատմական անցյալով և ապագայով:

Վեհափառ Հայրապետին գահակալության տարիները ոչ միայն շինարարական անընախընթաց տենդի շրջան մը հանդիսացան Սուրբ Էջմիածնի մեջ, այլ նաև հոգևոր վերածնունդի պայծառ հանգրվան մը՝ ամբողջ Սփյուռքի տարածքին:

Վազգեն Հայրապետը վերջին անգամ իր օրհնաբեր այցելությունը տված էր 1988 թվականին. այդ տարիեն ի վեր շատ մը փոփոխություններ կրած է ամերիկյան երկրամասին վրա բնակող հայությունը. ամբողջությամբ փոխվա՛ծ է դիմագիծը ամերիկահայության և կանադահայության. այդ փոփոխությանց ընթացքին այս ժողովուրդը հաճախ զգացած է կարոտը իր Հայրապետին, բացակայությունը՝ անոր խոհեմ թելադրանքներուն, և պակասը՝ անոր ներկայության հոգեկան և հոգեբանական ուժին. այն աստիճան, որ հաճախ ենթարկված է խարխափումներու, երբեմն խափանված է Էջմիածնի լույսը անոր աչքերեն և իր վերիվայրումներուն մեջ կրած է հիասթափումներ ու ցնցումներ. սակայն այսօր դարձյալ ոտքի է այդ ժողովուրդը, դարձյալ կապված է իր մայր հողին ու Մայր Աթոռին, երբ այս ափերուն վրա կվերագտնե իր Հայրապետը, կլսե անոր պատգամը և կառաջնորդվի անոր խոսքերով:

Ամենայն Հայոց Հայրապետը անդուլ և անվհատ աշխատած է Հայաստանյայց Եկեղեցվո միությունը անխախտ պահելու: Երկար տարիներու փորձերուն կողքին՝ մենք անձամբ բազմաթիվ անգամներ նախաձեռնած

ենք միասնականության առաջնորդող հաշտարար հանդիպումներու։ Սակայն, հակառակ մեր բոլոր ճիգերուն ու բաղձանքներուն, Հայաստանյայց Եկեղեցվո միությունը տակավին կմնա իբրև հեռավոր երազ մը. ավելին՝ հակառակ այդ բոլորին, Հայաստանյայց Եկեղեցին կմնա ավելի՛ բաժանյալ, ավելի՛ վտանգված և ավելի՛ վիրավոր՝ Անթիլիասի որդեգրած վարքագիծին պատճառով, որ կսնանի անձնական փառասիրություններով և քաղաքական հաշիվներով։ Դժբախտաբար այս վարքագիծը կտրվի «անկախ» դառնալու կարճատես հավակնություններով, մինչ ամեն ազնիվ հայ զարմացած հարց կուտա՝ «անկախ» որմե՞ն, Հայոց նվիրական Մայր Աթոռե՞ն, երբ մենք դարերով երազած էինք վերականգնել այդ Աթոռին հեղինակությունը և անոր հովանին ապահովել մեր գլխուն վերև։

Երբ Վեհափառը բարձրացավ Սուրբ Էջմիածնի Գահուն վրա, շատ մը բաղձանքներ ու երազներ անկարելի կթվեին. շնորհիվ իր իմաստության, վճիտ հոգիին, լեռնե՛ր մաշեցնող իր բարի ժպիտին՝ իրականություն դարձան անոնք։

Մայր Աթոռի համար պատմական լուսավոր շրջան մը հանդիսացավ Վազգեն Ա Հայրապետի գահակալությունը։ Ան իր ժողովուրդին ընծայեց մանավանդ Սուրբ Գրիգոր Լուսավորիչի տեսիլքին հրաշքը։ Ու երբ մենք կվհատինք մեր մահկանացու կյանքին մեջ ու կկորսնցնենք ամեն հույս ու ճար՝ մեր Եկեղեցին դարձյալ միացած տեսնելու, մենք կհավատանք, թե օր մը մեր հոգիներուն վրա նորեն պիտի բացվի Լուսավորչի այդ հրաշքը, ու մենք, իբրև ազգ, ժողովուրդ ու Եկեղեցի, միասնականորեն պիտի բոլորվինք մեր հավատքի կեդրոնին, Էջմիածնի Սուրբ Սեղանին շուրջ։

Վեհափառ Տեր, վստահ կրնաք ըլլալ, որ այդ լուսավոր օրվան համար Ձեր հավատավոր զավակները պիտի աղոթեն, հուսան ու պիտի պայքարին, որ անպայման հայ կյանքի վերև բացվի ծիածանը միության։

Այդ հավատքով և այդ ուխտով մեր հոգիները կբանանք Ձեր առջև ու կհայցենք Ձեր հայրապետական օրհնությունը։

Բարի եկաք, Վեհափառ Տեր։

Ձեզ կրկին տեսնելու հույսով և ակնկալությամբ բարի ճանապարհ կմաղթենք Ձեզի։

Այնուհետև գործադրության է դրվում հրաժեշտ-ճաշկերույթի գեղարվեստական բաժինը, որին մեներգերով իր բաժինն է բերում սիրված երգչուհի օրիորդ Մարո Փարթամյանը՝ ընկերակցությամբ շնորհալի դաշնակահարուհի օրիորդ Ալիս Հայտոսյանի։ Կատարվում են Կոմիտաս վարդապետի, հայրենի ծանոթ երգահան Էդգար Հովհաննիսյանի և Բարսեղ Կանաչյանի ստեղծագործությունները։

Ապա խոսք է առնում թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը։

ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻ ԽՈՍՔԸ ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Վեհափառ Տեր,

Քանի մը ժամ առաջ, Ձեր առանձնության սենյակին մեջ անդրադարձաք, որ վերջին օրն է այսօր տունդարձի Ձեր ճամփուն վրա: Եվ վերջին գիշերը: Ձեր ձայնին և Ձեր հոսքին մեջ կարդացի Ձեր ամբողջ հոգին: Այն հոգին, որ կուզե ամբողջովին ինքզինքը տալ: Այն հոգին, որ գիտե նաև, թե կապրի այս մարմինին մեջ: Եվ թե՝ պարտավոր է, թռչիլ ուզող այս հոգին միշտ զգալ և անդորրադառնալ, որ «բանտարկված» է այդ մարմինով: Եվ հետևաբար զգացի, որ Ձեր մտքեն անցան բոլոր այն կարելի իրագործումները, հանդիպումները, խրատները, որոնք կուզեք տալ Ձեր զավակներուն ամեն տեղ: Այն քաջալերանքը և այն հոգին, որ Դուք ստացեր էիք, ինչպես քանիցս ըսած եք, մինչև անգամ Ամենայն Հայոց Հայրապետ ընտրելե հետո, Հայաստանի հողին վրա՝ Արարատին դիմացը: Այդ բոլորը կուզեիք ամեն մեկուն մեջ առանձնապես, ամեն մեկուն հոգիին մեջ իջեցնել, բաշխել, հաստատել:

Եվ սակայն նույն ատեն Ձեր մտքեն կանցներ, որ հիվանդանոցեն պետք էր ելլեիք, որպեսզի կարենայիք Ձեր զավակներուն հասնիլ:

Եվ ըրիք: Ի՞նչ ըրիք: Ըրիք ա՛յն, ինչ որ կարելի էր: Եվ ըրիք վեհությամբ, վեհափառորեն:

Օտարներո՛ւն նախ: Բոլոր օտար և էկումենիկ շրջանակներուն մեջ, ուր որ եղաք: Անոնց դիմաց կանգնելով ինքնավստահորեն, իբրև տերը Ձեր ժողովուրդին հոգիներուն: Անոնց երազներուն: Անոնց ներկայի և ապագայի ցանկություններուն: Եվ ներկան ու ապագան հաստատեցիք, կապեցիք անոնց անցյալի պատմության և իրագործումներուն և կյանքին: Եվ կըսեիք Ձեր զավակներուն. «Գիտեք, թե ո՞վ եք, և մի՛ ամչնաք ըսելու, թե՝ ո՛վ եք»: Եվ այդ օտարներուն տվիք՝ էկումենիկ շրջանակներուն մեջ, Միացյալ Ազգերու շենքին մեջ, Միացյալ Նահանգներու նախագահին տունին մեջ, և ուր որ եղաք՝ ոչ-հայ շրջանակներու ներկայացուցիչներուն հետ, դիմագիծը հայ ժողովուրդին: Այդ բոլորը տվիք անոնց, զանոնք ևս կապելով Ձեր անձին, Ձեր վայելուչ անձին, և այդ դեմքեն ճառագայթող հայու իսկական հոգիին: Ցավոտ, վիշտով լեցուն և սակայն քաջությամբ զինված, վստահությամբ զրահված, և երբեք՝ հոռետես և հուսահատ: Ա՛յս հոգին Դուք պարզեցիք օտարներուն:

Իսկ Ձեր զավակներո՛ւն ի՞նչ տվիք: Շատ պարզ բան մը՝ Ձեր ներկայությունը:

Եվ այդ ներկայութենեն ճառագայթող ա՛յն հոգին, որ դարձյալ կու գար մեր պատմության խորերեն, կու գար Արարատի գագաթեն, կու գար Սուրբ Էջմիածնի հիմերեն: Եվ այդ բոլորը մեր գոյության խարիսխը, մեր գոյության ներկա ուժը և մեր գոյության ապագա հույսն է: Այս բոլորը տվիք մեզի: Եվ ինչպե՞ս տվիք: Թույլ տալով, որ Ձեր զավակները դպչին Ձեզի: Դպչին Ձեր Աչին, դպչին Ձեր ձայնին, դպչին Ձեր անձին:

Եվ ոչ միայն բոլոր անոնց, որոնք ներկա եղան և ֆիզիկապես Ձեր ձայնը լսեցին, Ձեր Աչը համբուրեցին, Ձեր անձին ձայնեցան, այլ ամենեն հուզիչը՝ ա՛յն, որ բացականերն անգամ ատիկա զգացին: Որովհետև այլևս իրողություն է, որ 85 տարեկան հայր մը թելեֆոն կընե իր զավակին, որ այստեղ ներկա է, և հեռախոսով կըսե անոր. «Տղաս, գնա՛, գնա՛ դպիր

Վեհափառին: Աջը համբուրե: Եվ ինձի եկուր: Ես ալ քեզի դպիմ: Այսպեսով ե՛ս ալ Վեհափառին դպած կըլլամ»:

Վեհափառ, թույլ տվեք, որ Ձեր զավակները դպչին Ձեզի: Ձեր ձայնին, Ձեր Աջին, Ձեր անձին: Եվ այդ օրհնությունը այդպեսով սերունդե սերունդ փոխանցեն:

Եվ հիմա, Վեհափառ Տեր, հրամեցեք և դարձյալ օրհնեցեք մեզի:

Ընդունելության ավարտին Վեհափառ Հայրապետը, խորապես ազդված արտակարգորեն խանդավառ մթնոլորտում Հայ Առաքելական Եկեղեցու և նրա գահակալի նկատմամբ ցուցաբերված սիրո և հարգանքի այս սրտազեղ արտահայտություններից, տալիս է իր օրհնությունն ու պատգամը սփյուռքահայ հավատավոր ու հայրենասեր իր զավակներին: Հրավիրյալները պերճախոս լռությամբ ունկնդրում են հայրապետական ոգեշունչ պատգամը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

Վերջին պահն է այս երեկո: Վաղը վերջ կգտնե իմ ուղևորությունը: Ինձի այնպես կթվի, թե այստեղ ներկա եք ոչ միայն դուք՝ Դետրոյտի ժողովուրդը, այլ նաև ամբողջ ամերիկահայ բազմությունները, որոնց հանդիպեցա տարբեր քաղաքներու մեջ՝ սկսելով Նյու Յորքեն: Իմ առաջին արտահայտությունը պիտի ըլլա բոլորիդ և բոլորին իմ շնորհակալությունը հայտնել: Իսկապես, ամեն տեղ և ամեն առիթով, ես զգացի ամերիկահայ մեր ժողովուրդի սրտի ջերմությունը, ոգևորությունը և ներքին հոգեկան ապրումներու պոռթկումը: Այդ բոլորը ուղղված էին իմ անձի միջոցավ՝ Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին:

Դուք ինձի կվերագրեք բազում հատկություններ և շնորհներ: Կուզեմ ձեզի խոստովանիլ, որ առաջին սպասավորն եմ մեր առաքելական սուրբ Եկեղեցվո: Իսկապես, առաջին օրեն մինչև այսօր, ես կզգամ, որ սպասավոր եմ և կկատարեմ կամքը ոչ թե իմ անձի, այլ այն, ինչ որ կթելադրե ինձի Սուրբ Էջմիածնի դարերու ոգին: Այսպես կներկայանամ ձեզի նաև այս պահուն: Ինձ համար հոգեկան խոր մխիթարություն եղավ, որ նաև այս իմ ուղևորության առիթով, Սուրբ Էջմիածնի անունը բարձր հնչեց մեկ անգամ ևս աշխարհով մեկ, իբրև քրիստոնեական հավատքի ամենավավերական և հնագույն կեդրոններեն մեկը: Եվ եթե իմ անձը դեր մը կատարեց այդ իրողության մեջ, այո՛, ադով ես հպարտ կզգամ ինքզինքս: Իսկապես, Նյու Յորքեն մինչև այստեղ, ամեն տեղ, ոչ միայն մեր ժողովուրդն է, որ բացառիկ խանդավառությամբ դիմավորեց մեր Եկեղեցվո առաջին սպասավորը, Սուրբ Էջմիածնի ծառան, այլ նաև քույր Եկեղեցիներու ներկայացուցիչներ և ամերիկյան ու կանադական պետական իշխանություններու պաշտոնական անձինք, որոնց գլուխը գտնվեցավ ձեր մեծահարգ նախագահ Ռոնալդ Ռեյգանը: Ես ալ համաձայն եմ Թորգոմ սրբազանի վկայության հետ, որ առիթ մը ընծայվեցավ ձեզի, մեզի, հայ ազգին ընդհանրապես, որպեսզի միջազգային մեծ հեղինակություն վայելող այս երկրին մեջ անգամ մը ևս բարձր հնչե Հայ Եկեղեցվո և հայ ժողո-

վուրդի պանծալի անունը։ Բանով մը ավելի ճանչվեցան և գնահատվեցան մեր Եկեղեցին և ժողովուրդը։

Ես Կուզեմ նաև իմ գոհունակությունը հայտնել, որ ձեր թեմի բոլոր հոգևոր ծառայողները իրենց գլուխն ունենալով ձեր թեմական առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոսը՝ մեր սրբազան եղբայրը, թեմական խորհուրդը, ընդունելությանց հանձնաժողովի անդամները, բոլոր ծխական խորհուրդները այն քաղաքներուն, զոր ես այցելեցի, բոլորը, բոլորը ինձ հանդեպ ցույց տվին իսկապես բացառիկ, որդիական հարգալիր, հոգատար, սիրալիր վերաբերմունք։ Կկարծեմ, որ այս ուղևորությունը հաջող անցավ, և ես կվերադառնամ անմոռանալի հիշատակներով։ Կխորհիմ նաև, թե դուք ալ երկար ատեն պիտի հիշեք այս փառավոր, խանդավառ օրերը։ Կուզեմ հայտնել նաև իմ գոհունակությունը Դետրոյտի ծխական խորհուրդին, բարեջան հոգևոր հովիվ Տ. Փառեն Ե. վրդ. Ավետիքյանին և բոլոր անոնց, որոնք այսօր խոսք առին՝ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Տիար Ալեք Մանուկյանին և Տիար Էդուարդ Մարտիկյանին, որոնք սքանչելի արտահայտություններ ունեցան, և անգամ մը ևս ես համոզվեցա, որ իրենց անձերու միջոցավ, այս թեմը, Դետրոյտի համայնքը, իրապես բացառիկ տեղ մը կգրավէ արտասահմանի հայ կյանքին մեջ։ Բոլորին և բոլորիդ իմ ջերմ շնորհակալությունը, իմ օրհնությունը։ Ամեն։

Հավարտ իր խոսքի Նորին Սուրբ Օծությունը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» առաջին կարգի շքանշանով պարգևատրում է տեր և տիկին Սարգիս և Շուլի Սողանալյաններին՝ իրենց կատարած մեծագումար նվիրատվության համար, որն ամբողջությամբ հատկացվելու է Տաթևի պատմական հոչակավոր վանքի վերանորոգությանը։

Ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ ՊՐՆ. ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆԻ ՀԵՏ

Ամերիկայի Միացյալ Նահանգներում կատարած շուրջ երկամսյա իր շրջապտույտի ավարտին Վեհափառ Հայրապետը Դետրոյտում, իր մեկնումի օրը, առավոտյան, իր վերջին հարցազրույցն է ունենում «Պայքար» և «Արմինիոն Միրոր Սփեքթեյթոր» շաբաթաթերթի ներկայացուցիչ պրն. Երվանդ Ազատյանի հետ՝ սոցիալական և եկեղեցական մի շարք կենսական հարցերի շուրջ։ Ստորև ներկայացնում ենք Հայոց Հայրապետի հարցազրույցը.

Վեհափառ Տեր, շատ շնորհակալ ենք և երախտապարտ, որ առիթը ընծայեցիք մեր մամուլին Ձեր վերջին խոսքը ըսելու Ամերիկայի և Կանադայի Ձեր շրջապտույտի ավարտին։ Կուզեմ Ձեզ վստահեցնել, թե Ձեր բացակայության վերջին 19 տարիները, որոնք հոգեկան մեծ պարապ մը ծգած էին ամերիկահայ և կանադահայ գաղութներուն մեջ, Ձեր այս այցելությամբ լիացան։

ՀԱՐՑՈՒՄ—Հիմա որ իր ավարտին հասավ Ձեր շրջապտույտը, կհաճի՞ք Ձեր տպավորությունները տալ մեզի ամերիկահայ և կանադահայ գաղութներեն։ Ի՞նչ տարբերություններ նշմարեցիք Ձեր նախորդ այցելության և այս այցելության միջև։

ՊԱՏԱՍԽԱՆ—Ինչպես իմ նախորդ երկու ուղեորություններու առիթով, այս անգամ ես կվերադառնամ շատ գոհ և անմոռանալի հիշատակներով։ Ամեն տեղ ես հանդիպեցա մեր ժողովուրդի խանդավառ վերաբերմունքին և մանավանդ պաշտամունքի աստիճանին հասնող սիրույն և հավատարմության դեպի Հայ Եկեղեցվո բազմադարյան կեդրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը։ Այս առումով ես կվերադառնամ իսկապես մխիթարված սրտով։ Այս անգամ ես նկատեցի հստակ կերպով, որ եկեղեցիներու շուրջ և եկեղեցական համայնքներեն ներս ավելի կազմակերպվածություն կա, և մանավանդ եկեղեցիներու կողքին կառուցված նոր դահլիճներ կծառայեն

իբրև հավաքատեղիներ, ուրիշ բաժիններ՝ կծառայեն շաբաթօրյա և կիրակնօրյա վարժարաններու. այդ բոլորը ավելի ծավալ ստացած են, ինչպես հիմա նկատեցի, և աշխույժ գործունեություն տեղի կունենա, հետևաբար եկեղեցական մակարդակի վրա հոգևոր դաստիարակությունը մանավանդ մեր նոր սերունդին և հնարավոր չափով նաև ուսուցումը մեր մայրենի լեզվին կկատարվին մխիթարական չափերով։ Որոշ տեղեր նույնիսկ ինձ հավաստիացուցին, որ եթե շաբաթօրյա հայերեն լեզվի դասերը կանոնավոր կերպով կազմակերպվին և ուսուցանողներ ըլլան, կրնան այն աստիճանի արդյունավետ ըլլալ անոնք, ինչքան ամենօրյա վարժարանները։ Համենայն դեպս ես ամեն տեղ քաջալերեցի և հորդոր կարդացի, որ ամենօրյա վարժարաններուն թիվը շատնա, որովհետև, ինչպես բազում առիթներով արտահայտվեցա, հայ լեզվի պահպանումը կնկատեմ վճռական նշանակություն ունեցող պարագա ամերիկահայության ապագային համար։ Եվ անշուշտ ես կհասկնամ, որ բոլոր ամերիկահայ երեխաները պիտի չկարենան դպրոց գալ. եթե գոնե տասը երեխաներեն մեկը հայերեն սորվի, այդ մեկը կրնա մյուս ինը հետը բերել հայ կյանքին մեջ. և այս ձևով հայությունը իր ինքնությունը պիտի կրնա պահպանել Միացյալ Նահանգներու տարածքին վրա։ Ուրիշ իրողություն մը հաստատեցի, այն, թե Միջին Արևելքի շրջաններեն եկողներ որոշ չափով փոփոխություն մտցուցած են հայ կյանքի մեջ, ավելի աշխուժություն, ավելի հայախոսություն բերելով իրենց հետ։ Այդ ալ կմտածեմ, թե դրական երևույթ մըն է այս երկրին համար, թեև անշուշտ նախընտրելի էր, որ այդ գաղթողները մնային իրենց երկիրներուն մեջ, Միջին Արևելքի մեջ, Լիբանան, Պարսկաստան և այլն, ուր հայապահպանումը ավելի մաքուր հիմքերու վրա կգտնվեր։ Բայց քանի որ կացությունը այս է, պետք է իրապաշտորեն ընդունինք զայն, և աշխատինք—ոչ՝ այստեղ, և մենք՝ այնտեղ—ամուր հիմքերու վրա դնելու համար հայության ինքնապահպանության ճիգերը։

ՀԱՐՑՈՒՄ—Վեհափառ, ի՞նչ է Ձեր տպավորությունը. կկարծե՞ք, որ Ձեր այս հորդորներեն թելադրված՝ մեր Եկեղեցին Ամերիկայի մեջ ավելի հիմնական և տարածուն գործ մը ունի ստանձնե կրթական մարզին մեջ։

ՊԱՏԱՍԽԱՆ—Ես կհուսամ. պիտի տեսնենք հետևանքները. անշուշտ իմ այս այցելության ընթացքին կարևոր կնկատեմ ընդգծել բարձր մակարդակի պետական մարդոց հետ հանդիպումները, այցելությունները, որոնք տեղի ունեցան, սկսելով Միացյալ Նահանգներու նախագահ Ռոնալդ Ռեյգանեն. ասիկա ես կնկատեմ ուշադրության և հարգանքի վերաբերում դեպի մեր Մայր Եկեղեցին, դեպի ամերիկահայ ժողովուրդը և դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

ՀԱՐՑՈՒՄ—Ատենե մը ի վեր մենք կտեղեկանանք, թե Ձեր նախաձեռնությամբ Հայաստանյայց Եկեղեցվո կանոնադրությունը կպատրաստվի։ Նախ կուզենք գիտնալ, թե ե՞րբ պատրաստ պիտի ըլլա այդ կանոնադրությունը. երկրորդ՝ ի՞նչ է անոր բնույթը. և այս առիթով, նախքան որ կանոնադրությունը հրապարակ դրվի, և նույնիսկ պատկան իշխանություններ և ժողովուրդ տեղյակ ըլլան, արդեն քննադատության հոսանք մը ծայր տվով սփյուռքահայ մամուլի որոշ օրգաններուն մեջ. այդ դիտողությունը կարծեք մասնավորաբար կհիմնվի եկեղեցականներու դերը գերակշիռ ըլ-

լալուն հաւար կանոնադրության նախատեսության մեջ, և աշխարհական-ներուն դերին նվազում մը կտեսնեն: Նախ կուզեինք, որ արտահայտվեիք կանոնադրության բնույթին մասին և ասա նաև այդ մտահոգության արդարացիության կամ ոչ արդարացիության մասին:

ՊԱՏԱԽԱՆ—Նախ ըսեմ, որ կանոնադրության նախագիծ պատրաստելու գաղափարը իմը չէ, այլ սկիզբ առած է 1922—24 շրջանեն, երբ Գեորգ Ե կաթողիկոսը իր կոնդակի մեջ արծարծած է այդ հարցը, ընդգծելով անհրաժեշտությունը, որ Հայց. Եկեղեցին ունենա կանոնադրություն մը: Այդ կոնդակը ժամանակին ուղարկված է նաև Երուսաղեմ, Պատրիարքության և տպված է: Ըսել կուզեմ, որ այդ կանոնադրությունը ծնունդ առած է առաջին համաշխարհային պատերազմեն անմիջապես հետո, երբ հայ կյանքի մեջ հիմնական փոփոխություններ եղան. հետևաբար անոնց անդրադարձը եղավ նաև Հայ Եկեղեցիի վրա, Օսմանյան կայսրության տարածքին վրա հայ ժողովուրդը բնաջնջվեցավ, Ազգային Սահմանադրությունը դադարեցավ գործելե. Արևելյան Հայաստանի մեջ նոր հեղաշրջումներու հետևանքով դադրեցավ Պոլոժենիան, որ արևելահայոց եկեղեցական կանոնադրությունն էր, և հետևաբար Հայ Եկեղեցին մնաց առանց կանոնադրության: Ահավասիկ բնականորեն այդ մտահոգությունը սկիզբ առավ այդ շրջաններեն: Բայց գործնական քայլեր չառնվեցան մինչև մեր օրերը: Ես կհիշեմ 1945-ին Գեորգ Զ կաթողիկոսի ընտրության առիթով Ազգային-Եկեղեցական Ժողովին մեջ այդ հարցը եկավ: Նույնիսկ կանոնադրության նախագիծ մը պատրաստված կար և կարդացվեցավ մասամբ, սակայն Ազգային-Եկեղեցական Ժողովը այդ մասին որոշում մը չկրցավ տալ և ձգեց, որ հետագային Գերագույն Հոգևոր Խորհուրդը վերամշակե այդ նախագիծը: Եվ այդպես, հետագային ալ մասնավոր աշխատանք չկատարվեցավ, և իմ օրով վերստին այդ հարցը արծարծվեցավ. քանի անգամ հանդիպումներ, ժողովներ գումարվեցան, աշխատանք տարվեցավ նախագիծ մը պատրաստելու, բայց գործնական արդյունքի մը չհասանք: Ահա այդ վիճակի մեջ էր, որ, չորս տարի առաջ, կրկին որոշեցինք այդ հարցով զբաղիլ և կազմեցինք հանձնաժողով մը: Այդ հանձնաժողովը աշխատանքը կատարեց և երկու ամիս առաջ է, որ իր աշխատանքը ավարտած նկատեց և նախագիծի մը նախնական շարադրանքը ներկայացուցին ինձ, այն թելադրանքով, որ եղածը վերջնական նախագիծ կարելի չէ նկատել, պետք է տակավին նոր քննության բովե անցնի, որպեսզի այդ շարադրանքը կարելի ըլլա նկատել նախագիծ: Մենք այս շրջանին, երկու տարի առաջ, երբ տակավին նախագիծի մշակման առաջին քայլերը կկատարվեին, հարմար գտանք հրավիրել Կիլիկյան Աթոռի ներկայացուցիչները, որպեսզի անոնք ալ մասնակցին: Թղթակցություն տեղի ունեցավ մեր միջև, Գարեգին կաթողիկոսի հետ, և նույնիսկ իմ նամակի մեջ հայտնեցի, որ տակավին ոչ մեկ բան շարադրված է, առաջին հոդվածեն մինչև վերջին հոդվածը վերաքննելի են, եկեք դուք ալ ձեր խոսքը ըսելու, միասին փորձենք: Երեք ներկայացուցիչներ ուղարկեցին, սակայն մեծ եղավ իմ հուսախաբությունը, որովհետև հայտնի եղավ, թե անոնք եկած են ոչ թե աշխատելու կանոնադրության նախագիծին վրա, այլ եկան հայտարարելու (և բանաձևեցին իրենց հայտարարությունը), որ Կիլիկյան Աթոռը ընդհանրապես համաձայն չէ, որ կանոնադրություն մը պատրաստվի, հնարավոր չէ այդպիսի կանոնադրություն գործադրել, և կարիք ալ չկա: Մենք սակայն շարունակե-

ցինք, և հանձնաժողովը իր գործը վերջացուց և մոտավորապես երկու ամիս առաջ հանձնեց։ Հիմա Գերագույն Հոգևոր Խորհուրդը պետք է քննարկե այդ հարցը, և ես հույս ունիմ, որ ապագային կկարողանանք վերջնական ձև մը տալ կանոնագրի նախագիծին։ Հետո զայն պիտի ուղարկենք մեր թեմերուն, պիտի հրապարակենք նույնիսկ, և յող բոլոր թեմերը իրենց կարծիքները, տեսակետները ուղարկեն Մայր Աթոռ։ Այս ձևով կխորհինք, մոտ ապագային, ունենալ վերջնական նախագիծ մը։ Հետո, անշուշտ, օրինական մարմինները՝ Եպիսկոպոսաց Ժողով, Ազգային-Եկեղեցական Ժողով, անոր վերջնական վավերացումը տան, և հոչակվի, հրապարակվի և գործադրության դրվի Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակով մը։ Անշուշտ այս աշխատանքը դյուրին գործ չէ, շատ աճապարանքով պետք չէ աշխատիլ, բայց ես կկարծեմ, որ անհրաժեշտություն մըն է։ Այս կանոնադրությունը պիտի չգբաղվի, իմ կարծիքով, մանրամասնություններով։ Այլ տեսակ մը սկզբունքներու հայտարարություն պետք է ըլլա. նախ պետք է ճշտվի, բնորոշվի մեր Եկեղեցվո տեղը, դիրքը քրիստոնյա Եկեղեցիներու ընտանիքին՝ Արևելքի քրիստոնյա Եկեղեցիներու ընտանիքին մեջ։

Երկրորդ՝ այդ կանոնադրությամբ պետք է արտահայտվին, ճշտվին մեր Եկեղեցվո նվիրապետական Աթոռներու իրավասության սահմանները, անոնց միջև հարաբերությանց ձևերը և ընդհանուր սկզբունքները թեմական-եկեղեցական կազմակերպություններուն, ժողովրդական ընտրության հիմքերու վրա, ժողովական ղեկավարման ձևերը, թե ինչպես փաստորեն կղեկավարվին մեր թեմերը արտասահմանի մեջ։ Թե կղերականներու դերը ավելի գերակշի՞ռ պիտի ըլլա—ատանկ պիտի չըլլա, այդպիսի հարց չէ դրված և չի ալ կրնար դրվիլ։ Եվ այն մեկ-երկու թերթերը, Բոստոնի «Հայրենիք»-ը, տարի մըն է որ անագին աղմուկ բարձրացուցած է այսպես կոչված հարցի վրա. ատիկա պարզապես երևակայության և հիվանդագին երևակայության արդյունք է, որովհետև ոչ մեկ փաստաթուղթի վրա հիմնված է։ Ոչ մեկ նախագիծ կա տակավին։ Եվ քանի որ հարց ըրիք, ըսեմ նաև, որ Էջմիածնի դեմ սանձազերծված այդ արշավին մեջ «Հայրենիք» թերթը, իր տասնյակ խմբագրականներով, շատ վատ ծառայություն մը մատուցեց Կիլիկյան Աթոռին՝ թունավորելով մթնոլորտը և արգելակելով, կարծես դիտումնավոր կերպով, մեր և Կիլիկյան Աթոռի գահակալին ճիգերը՝ հասկացողության մը և գործողության մը հասնելու։

ՀԱՐՑՈՒՄ—Վեհափառ Տեր, կուզեմ անդրադառնալ ուրիշ հարցի մը. մամուլի մեջ. և հաղորդակցության ու հարաբերության տարբեր միջոցներով, կտեսնենք, թե ներկայիս ամբողջ Խորհրդային Միությունը եղափոխության, նոր փոփոխություններու սեմին կգտնվի, և բնականորեն անոնք իրենց անդրադարձը պիտի ունենան մեր փոքրիկ Հայաստանին վրա, ինչպես նաև Մայր Աթոռին վրա, որոնք այդ պայմաններուն տակ կգործեն։ Ի՞նչ են Ձեր նախատեսությունները, ի՞նչ անդրադարձներ կնախատեսեք, որ այս փոփոխությունները ունենան կրոնական ազատության, եկեղեցական և հոգևոր կյանքի վերականգնումին, արտասահմանի հետ Ձեր և մեր ժողովուրդին ունեցած հարաբերություններուն վրա։

ՊԱՏԱՄԵԱՆ—Հայտնի է անշուշտ ամբողջ աշխարհին, որ իրապես Խորհրդային Միության մեջ, բարձր ղեկավարության առաջնորդությամբ, նոր շրջան մը կսկսի՝ այսպես կոչված վերակառուցում և բարեփոխումներ

մտցնելու, որոշ հեղաշրջում կատարելու՝ հատկապես տնտեսական, ընկերային կյանքի մակարդակին վրա, ինչ որ, իմ կարծիքով, ողջունելի է: Այնտեղ ոգևորություն կա. այս առնչությամբ, և վստահ եմ նաև որ կյանքի բոլոր մակարդակներում վրա, այդ նոր վերակառուցման ոգին իր բարերար ազդեցությունը պիտի տարածե: Ինչ կվերաբերի մեր Եկեղեցիին, տակայն, ես հաստատ գիտեմ, որ այսօրվա իսկ դրությամբ, մենք նպաստավոր պայմաններու մեջ կգտնվինք, և մասնավոր պատճառ մը չունիմ դժգոհ ըլլալու: Մեր հարաբերությունները պետական իշխանությանց հետ տարիներե ի վեր չափազանց լավ են. բացառիկ կերպով բարյացակամ վերաբերմունք և հարգանք կա դեպի Եկեղեցին, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և հետզհետե մեր երկրի, Հայաստանի ժողովուրդի ծոցին մեջ հոգևոր կյանքը զարթոնք մը կապրի. անոնք, որ կայցելեն Հայաստան և ներկա կգտնվին կրոնական պաշտամունքներու, ոչ միայն Էջմիածնի, այլև Հայաստանի մյուս քաղաքներու մեջ իսկ կզգան այդ զարթոնքը: Գավառական շրջանները հստակ կերպով կհաստատեն, որ իրապես կտիրեն կրոնական ազատության պայմաններ: Վերջերս, առավելապես, մենք, իբրև հետևանք հավատացյալներու աճին, նոր եկեղեցիներ պիտի բանանք. արդեն քանի մը հատը բացվեցավ: Պիտի շարունակենք նույնիսկ մեկ-երկու վանքեր բանալ: Այս ձևով, հետզհետե, ավելի լայն չափերով կազմակերպված հոգևոր կյանքը պիտի շարունակվի Հայաստանի մեջ:

ՀԱՐՑՈՒՄ—Հոգևոր ճեմարանը կրնա՞ բավարարել մեր եկեղեցականներու պատրաստության կարիքը, ըլլա Հայաստանի նոր բացվող եկեղեցիներեն ներս, ըլլա արտասահմանի մեջ: Գիտեք, թե արտասահմանի մեջ շատ լուրջ տագնապի մը առջև ենք. քանիցս Ձեզի հշվեցավ, մանավանդ երեկ, և մամուլով ալ հաճախ անդրադարձումներ կըլլան այս տագնապալի կացության մասին: Ի՞նչ վիճակի մեջ է հոգևոր ճեմարանը:

ՊԱՏԱՍԽԱՆ—Մեր հոգևոր ճեմարանը շատ կանոնավոր և ծրագրված ձևով կաշխատի և բավարար չափով հոգևոր ծառայողներ կպատրաստե Հայաստանի համար: Հայաստանի գրեթե բոլոր եկեղեցիներու ծառայողները մեր ճեմարանեն շրջանավարտ երիտասարդ հոգևորականներ են: Շատ մխիթարական է այս հաստատել. բոլորն ալ երիտասարդ ծառայողներ են, բոլորն ալ բավարար չափով զարգացած, լուսամիտ, իրենց գործին գիտակից և հայրենասիրական ոգիով ալ ներշնչված են: Հետզհետե նոր սերունդներ ալ կհասցնենք, որոնցմե մաս մը նույնիսկ արտասահման ալ կուղարկենք, որպեսզի ավելի բարձրացնեն իրենց ուսումնական մակարդակը, խորացնեն իրենց աստվածաբանական ուսումը և վերադառնան Մայր Աթոռ: Մինչև հիմա ուղարկած ենք ավելի քան տասը այդպիսի երիտասարդ հոգևորականներ՝ Գերմանիա, Վիեննա, Ֆրանսա, Անգլիա և Հունաստան: Այսօր մեր ներքին կարիքները բավարարված են: Սակայն նկատի ունենալով մեր եկեղեցիներու դարավոր հեռանկարը, անշուշտ պետք ունինք հավելյալ հոգևոր ծառայողներու, և այդ գործը մեր հոգևոր ճեմարանը լիությամբ պիտի կարողանա կատարել: Մեր ճեմարանի մեջ մենք կընդունինք արտասահմանեն ուսանողներ: Մոտ 20 տոկոսը արտասահմանցի են. անոնք ալ կուղարկվին արտասահման, որպեսզի իրենց ուսումը ամբողջացնեն և իրենց ծառայությունը շարունակեն: Անոնցմե լավագույն

թիվով կան արտասահմանի մեջ։ Անոնք աչքի կզարնեն իրենց հոգևոր պատրաստությամբ, կարգապահությամբ և շնորհալիությամբ։

ՀԱՐՑՈՒՄ—Վեհափառ, Դուք Ձեր արտասահմանյան շրջապտույտներեն անդրադարձաք, թե Ձեր հոտը աշխարհի վրա բազմալեզու է։ Հանախ Ձեր խոսքը լեզուներու այդ պատվարեն անդին չանցնիր։ Երբ Դուք հայտարարություն մը կընեք և Հայաստանյայց Եկեղեցվո կենսական հարցի մը մասին անդրադարձ մը կունենաք, ամիսներ, տարիներ կանցնին, և տակավին Ձեր հոտը անտեղյակ կմնա, և երբեմն ալ Ձեր խոսքը երբեք Ձեր ժողովուրդին չի հասնիր՝ լեզվական այս դժվարության պատճառով։ Օրինակի համար, մեր արևելյան թեմին մեջ միության հարցին շուրջ ահագին բանակցություններ կկատարվին, և մենք չենք տեսներ մեր եկեղեցական հրատարակություններուն մեջ տեղ մը, ուր Վեհափառ Հայրապետին դիրքը հստակ կերպով հայտարարված ըլլա։ Ասիկա՝ սկզբունքի վերաբերյալ։ Մյուս կողմե՝ նաև տեղեկատվության հարց մը կա, որ Մայր Աթոռի գործունեությունը տարբեր լեզուներով խոսող մեր զանգվածներուն հասնի։ Արդյոք կարևոր չե՞ք նկատեր, որ տարբեր լեզուներով լրատու ամսագիր մը ունենաք՝ ֆրանսերեն, անգլերեն, սպաներեն, գերմաներեն։ Վստահ եմ, որ լեզու գիտցողներ պիտի գտնեք և նյութական միջոցներն ալ կարելի պիտի ըլլա բավարարել։ Ներկայիս մեր եկեղեցիները նյութական շատ լավ վիճակի մեջ են. կրնամ ըսել, որ ավելի լավ են նյութական վիճակով, քան՝ հոգևոր։ Կարևոր չե՞ք նկատեր այս կետը։

ՊԱՏԱՍԽԱՆ—Նախ ըսեմ, որ Էջմիածինը իր պաշտոնաթերթը ունի, և այն բոլոր տվյալները, որոնց ակնարկեցիք, Էջմիածնի պաշտոնաթերթին մեջ կան և կուղարկվին արտասահման։ Սակայն, կերևի, բավարար չափով չեն օգտագործվիր այդ հրատարակությունները, չեն թարգմանվիր տեղական լեզուներով՝ տեղական մամուլի մեջ, և այդպիսով կստեղծվի այն վիճակը, որուն մասին կարտահայտվիք։ Երկրորդ՝ մենք ալ նկատելով, ինչ որ դուք նշեցիք, որոշած ենք «Էջմիածին» ամսագրի կողքին պարբերաթերթ մը հրատարակել, առայժմ երկու լեզուներով—անգլերեն և ֆրանսերեն—ճիշտ ծառայելու համար այն նպատակին, որուն ակնարկեցիք դուք։ Նյութականը չէ արգելքը, այլ՝ աշխատակիցներու պակասը։

ՀԱՐՑՈՒՄ—Վեհափառ Տեր, մեր ավելի վշտոտ հարցերուն անդրադառնալով՝ մեր ժողովուրդը կուզե գիտնալ, թե ի՞նչ վիճակի մեջ է ներկայիս Երուսաղեմի տագնապը։ Վերջին հանգրվանը, որ մամուլի մեջ հաղորդված էր, Վեհիդ հրահանգն էր Երուսաղեմի միաբանության, որ ժողով գումարեր և Հայրապետական Քննիչ Հանձնախումբի տեղեկագրին հիման վրա գտներ խախտումներ կատարող պատասխանատուները և տնօրինումներ ըներ։ Որքան որ գիտենք, Ձեր հրահանգը տակավին չէ գործադրված։ Հիմա ո՞վ պիտի առնե հաջորդ քայլը, և դեպի ո՞ւր կուղղվի տագնապը. դեպի լուծո՞ւմ, թե՞ դեպի տեղքայլ։

ՊԱՏԱՍԽԱՆ—Այս հարցով—արդեն դուք ալ ըսիք—Մայր Աթոռը իր դիրքը ճշդած էր՝ դիմելով Պատրիարքության, որ միաբանական ժողով մը գումարե՝ քննելու համար օրակարգի այդ հարցը և անհրաժեշտ եզրակացություններու գա ու կարգ-կանոն մտցնե իր տան ներքին գործերուն մեջ։

Մինչև հիմա արձագանք չգտավ մեր այդ առաջադրանքը, որովհետև մենք ավելին չենք կրնար ընել: Երուսաղեմի միաբանությունը կղեկավարվի իր կանոնադրությամբ, և այդ կանոնադրության տրամադրություններուն համաձայն միայն Երուսաղեմի միաբանությունը կրնա զբաղիլ այս հարցերով: Կսպասենք, լավատես, որ մեր այդ առաջադրանքը հարգվի, և Երուսաղեմի Պատրիարքությունը ավելի հստակություն մտցնե այդ հարցերու կարգավորման մեջ: Ես ուրիշ նախատեսություն մը չեմ կրնար ընել այդ ուղղությամբ:

ՀԱՐՑՈՒՄ—Վեհափառ Տեր, կուզենք ուրիշ ցավոտ հարցի մը անդրադառնալ, որ գրեթե Ձեր իշխանության երեսուներկու տարիները, որոնք այնքան գեղեցիկ իրագործումներ ունեցան, պղտորած է: Ատիկա մեր Հայց. Եկեղեցվո միության հարցն է: Մեր ամբողջ ժողովուրդը գիտե, թե ինչպիսի հսկա դեր մը կատարած եք Դուք, իբրև շինարար և միարար Վեհափառ, այդ ուղղությամբ: Այդ հարցը դարձյալ արծարծվեցավ Ձեր այցելության առիթով քիչ մը անհաճո դրսևորումներով: Պիտի ուզեինք, որ Եկեղեցվո միության հարցին շուրջ Ձեր նախատեսությունները ընեիք, մասնավորաբար Ամերիկայի թեմերեն ներս:

ՊԱՏԱՍԽԱՆ—(Այս հարցը շատ կենսական նկատելով՝ պատասխանը պատրաստած ենք Մեր ձեռագիրով և ահա զայն ձեզի կհանձնենք, որ արձագանքեք անոր): Միացյալ Նահանգներ և Կանադա Մեր այցելության ընթացքին, կհուսայինք, որ առիթ կստեղծվի առաջին քայլը առնելու դեպի միության կենսագործում՝ Հայ Եկեղեցվո ծոցին մեջ: Այդ իսկ հույսով հրավեր ղրկեցինք Կիլիկյան Աթոռի միաբան արքեպիսկոպոսներուն և բոլոր հայ հավատացյալներուն, որ իրենց մասնակցությունը բերեն մեր նախագահած սրբազան արարողություններուն: Իրենց ներկայացուցած պայմանը, որ Մենք պաշտոնական այց տանք իրենց եկեղեցիներուն իբրև անջատ թեմեր, պիտի նշանակեր նվիրագործել ստեղծված բաժանումը և այն տևականացնել, որմե բոլորս պետք է խուսափինք:

Մայր Աթոռիս իրավասության ներքն գտնվող թեմերեն ներս միություն կնշանակե **ՄԻԱՆԱԼ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ, ՎԵՐԱԴԱՌՆԱԼ Ս. Էջմիածնի** օրհնության տակ: Միացյալ Նահանգներն ու Կանադան Էջմիածնի իրավասության ներքն գտնվող թեմեր են իրենց կազմավորման օրերեն սկսյալ: Եկեղեցական կանոնական տեսակետե և պատմականորեն, Կիլիկյան Աթոռը իր իրավասության սահմանները ունի, որոնք եթե չպահպանվին, մեր Եկեղեցվո կյանքին մեջ տևապես տագնապալի կացություններ կստեղծվին, և կարգելակվի միության վերականգնումը:

Հայ Եկեղեցին մեկ է ու անբաժան, այդ իսկ պատճառավ պետք չէ բաժանում ըլլա Ս. Էջմիածնեն:

Միության վերականգնումով Կիլիկյան Աթոռի առջև գործունեության առավել լայն հորիզոն պիտի բացվի ամբողջ Սփյուռքի տարածքի վրա և նույնիսկ Հայաստանեն ներս, Սուրբ Էջմիածնի օրհնության ներքն:

Մեր խոր համոզումով՝ Կիլիկյան Աթոռի ղեկավարությունը սխալ կողմնորոշում ունեցավ մեր հրավերին չընդառաջելով:

Ափսոս, որ կողմնակի նեղ հաշիվներով կզոհվին լայն հորիզոնի վրա իրագործումներ:

Մենք միշտ կմնանք լավատես և կհավատանք, որ, ուշ կամ կանուխ, պիտի փարատին տարակարծությունները Մայր Աթոռին և Կիլիկյան Աթոռի միջև, և պիտի վերականգնվին կանոնական միությունը և գործակցությունը Սփյուռքի տարածքի վրա:

Այս տարի հունիս 9-ին Մենք հատուկ նամակ մը գրած էինք Կիլիկյան Աթոռի շնորհազարդ գահակալին այս հարցերու առնչությամբ և կըսպասենք պատասխանի:

ՀԱՐՑՈՒՄ—Դուք Ձեր իշխանության տարիներուն շատ մեծ իրականացումներ կատարեցիք. մեր մաղթանքն է, որ Ձեր իշխանությունը և Ձեր կյանքը տակավին շատ-շատ երկար տևեն, բայց կուզեինք գիտնալ, թե ի՞նչ երազ և փափաք ունիք, որ Ձեր իշխանության գալիք տարիներուն պիտի ուզեիք իրականացնել:

ՊԱՏԱՍԽԱՆ—Իմ առաջին իղձը այն է, որ մենք շարունակենք մեր սկսած գործը: Ուժեղացնենք մեր Եկեղեցին և դաստիարակենք մեր հավատացյալները քրիստոնեական ոգիով և Ավետարանի պատգամներով: Երկրորդ՝ իմ և ամբողջ հայ ժողովուրդին իղձն է, որ Հայոց Ցեղասպանությունը ճանաչում ստանա բարձր մակարդակի վրա, Միացյալ Ազգերու Կազմակերպության կողմե: Ես, որպես Հայց. Եկեղեցվո առաջին սպասավորը, քաղաքական հարց չեմ նկատեր Հայոց Ցեղասպանությունը, այլ՝ արդարության և խղճի հարց մը: Երրորդ՝ իմ ամենաջերմ փափագն է, որ իմ կյանքի վերջին տարիներուն տեսնեմ վերականգնումը մեր Եկեղեցվո միության: Անշուշտ մեր Եկեղեցին բաժանված չէ, սակայն բաժանվածություն կա Ս. Էջմիածնեն: Եվ ատիկա վտանգավոր է և՛ եկեղեցական իմաստով, և՛ ազգային տեսակետով: Չորրորդ՝ իմ վերջնական աղոթքն է, որ աշխարհի խաղաղությունը չխանգարվի, և միջազգային հարցերը լուծվին խաղաղ միջոցներով:

Շնորհակալություն, Վեհափառ Տեր, առողջություն Ձեզի և բարի ճանապարհ:

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի օրը, ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը նախաճաշում է «Ռադիսոն» հյուրանոցում՝ ընդունելության հանձնախմբի բոլոր անդամների հետ:

Ժամը 12-ին Նորին Սրբությունը իր շքախմբով այցելում է Ալեք Մանուկյան վարժարան և հանդիպում ունենում վարժարանի տեսչության, ուսուցչական կազմի և սաների հետ:

Ժամը 13.30-ին Վեհափառ Հայրապետը այցելում է Ալեք Մանուկյանի «Masco» արդյունաբերական հաստատություն, շրջում հաստատության գրասենյակները և ծանոթանում հաստատության տնօրեն տիար Ռիչարդ Մանուկյանի՝ ամերիկյան կերպարվեստի հայտնի վարպետների գործերի հավաքածուին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ

Նույն օրը, հետմիջօրեի ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ իր շքախմբի անդամների, գալիս է Դետրոյտի միջազգային օդանավակայան՝ մեկնելու Նյու Յորք: Օդանավակայանում Հայոց Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել Դետրոյտի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր հովիվներ Տ. Փառեն ծայրագույն վարդապետը, Տ. Հայկ քհն. Տոնիկյանը, պարոնայք Ալեք Մանուկյանը, Էդուարդ Մարտիկյանը, Ա. Սողոյանը՝ իրենց հարգելի տիկնանց հետ, ինչպես նաև բազմաթիվ հավատացյալներ:

Ներկաներին իր օրհնությունը տալուց և հրաժեշտ առնելուց հետո, Վեհափառ Հայրապետը բարձրանում է ինքնաթիռ և, մեկժամյա խաղաղ թռիչքից հետո, ժամանում Նյու Յորք:

Նյու Յորքի օդանավակայանում հավաքվել էին հարյուրավոր հավատացյալներ՝ իրենց ձեռքին բռնած պաստառներ՝ «Բարի ճանապարհ, սիրելի Վեհափառ» գրություններով:

Նյու Յորքից դեպի Փարիզ մեկնելու ճանապարհին Վեհափառ Հայրապետը կարճ դադար է առնում օդանավակայանի «Մարիոր» հյուրանոցում: Այստեղ Վեհափառ Հայրապետին բարի երթ են մաղթում հայրապետական ընդունելության հանձնախմբի անդամները: Հուզիչ է հրաժեշտի պահը: Բոլորի աչքերը տամկացել են բաժանումի ապրումներով: Սրտագին բարեմաղթություններ, հրաժեշտի հոգեբուխ խոսքեր, աջահամբույրներ:

Ի տես իր զավակների որդիական և հավատարմության զգացումների, Հայոց Հայրապետը, հուզված, իր օրհնություններն է բաշխում իր շուրջը հավաքված ժողովրդին հուզաթաթավ խոսքով:

Վեհափառ Հայրապետի հրաժեշտի խոսքից հետո Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը հաճելի մի անակնկալ է մատուցում ներկաներին՝ ընթերցելով ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանի հետևյալ նամակը՝ ուղղված Նորին Սուրբ Օծությանը.

THE WHITE HOUSE

WASHINGTON

November 16, 1987

Your Holiness:

It was an honor to welcome you and your colleagues in the Armenian Apostolic Church to the White House on October 26. I truly valued the occasion to reaffirm America's commitment to religious freedom and to express appreciation for the contributions of Armenian-Americans to life in the United States.

Please accept my sincere thanks for the handcrafted silver plaque, depicting the Mother Cathedral of the Armenian Apostolic Church, which you presented to me. This is a treasured remembrance of your friendship, and I'm most grateful for your special kindness.

With my best wishes,

Sincerely,

Ronald Reagan

His Holiness Vasken I
Supreme Patriarch
The Armenian Apostolic Church

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆ ՎԱՂԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի

Ձերդ Սրբություն,

Պատիվ էր բարի գալուստ մաղթել Ձեզ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ձեր գործակիցներին Սպիտակ Տանը հոկտեմբերի 26-ին: Ես իսկապես գնահատեցի առիթը կրկին հաստատելու, որ Ամերիկան կանգնած է կրոնական ազատության դիրքերում, և գնահատանք արտահայտելու այն ներդրումների համար, որ ամերիկահայերը ունեն Միացյալ Նահանգների կյանքում:

Խնդրում եմ ընդունել իմ անկեղծ շնորհակալությունները արծաթյա ձեռակերտ ափսեի համար, որ Դուք նվիրեցիք ինձ, որը պատկերում էր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Մայր տաճարը: Սա մի թանկագին հիշատակ է Ձեր բարեկամության, և ես շատ շնորհապարտ եմ Ձեր հատուկ սիրալիրության համար:

Իմ լավագույն մաղթանքներով,
Անկեղծորեն՝

ՌՈՆԱԼԴ ՌԵՅԳԱՆ

Վաշինգտոն, Սպիտակ Տուն,
18 նոյեմբերի 1987 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ

Նոյեմբերի 28-ին, երկուշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Նավասարդ աբեղա Կճոյանի, Նյու Յորքից ինքնաթիռով մեկնում է դեպի Փարիզ։

Հաջորդ օրը, առավոտյան, Փարիզի «Շառլ դը Գոլ» օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորում և բարի գալուստ են մաղթում Փարիզի հայոց առաջնորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, քահանաներից դասը, Կրոնական ներկայացուցչական և Վարչական ժողովների անդամները և հավատացյալներ։

Օդանավակայանում ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Փարիզի «Վեստ-մինստեր» հյուրանոց, ուր և բնակվում է երկու օր։



ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Նոյեմբերի 26-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Նավասարդ աբդ. Կճոյանի, Փարիզի «Շառլ դը Գոլ» օդանավակայանից մեկնում է Մոսկվա։

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար օդանավակայան էին եկել Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը, քահանայից դասը և Փարիզի հայոց եկեղեցական վարչության անդամները։

Շուրջ երեք և կես ժամ տևող թռիչքից հետո, օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի «Շերեմետևո—2» օդանավակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորում և բարի գալուստ են մաղթում Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը, Ռուս Ուղղափառ Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի նախագահի տեղակալ Տ. Ֆեոֆան եպիսկոպոսը, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի ներկայացուցիչ Ս. Ս. Կուզնեցովը և այլ անձինք։

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոց։ Այստեղ Վեհափառ Հայրապետին այցելում և բարի գալուստ է մաղթում ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Կ. Մ. Խարչևը։

Երեկոյան «Սովետսկայա» հյուրանոցում, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ընթրիք, որին մասնակցում են Կ. Մ. Խարչևը և Մինսկի ու Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը։

Նոյեմբերի 27-ին, ուրբաթ օրը, Մոսկվայի Պատրիարքարանի հրատարակչական բաժնում տեղի է ունենում մամուլի ասուլիս՝ Վեհափառ Հայրապետի և տեղական ու օտար թերթերի թղթակիցների միջև։

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոյեմբերի 28-ին, շաբաթ օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից ինքնաթիռով վերադառնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու համար Երևանի «Զվարթնոց» օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պաշտոնեությունը և բազմաթիվ հավատացյալներ:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու էին եկել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանը և տեղակալներ Անդրանիկ Հարությանն ու Ռաֆիկ Զարգարյանը:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Նորին Սրբությունը առաջնորդվում է Ս. Էջմիածին և Մայրավանքի զանգերի զվարթ ղողանջների ներքո, «Հրաշափառ»-ով մուտք գործում Մայր տաճար:

Տաճարում Հայոց Հայրապետին, ի դիմաց Մայր Աթոռի միաբանության և հավատացյալ ժողովրդի, բարիգալստյան ջերմ խոսք է ասում Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը:

ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Ծուրջ երկու ամիս Դուք բացակայեցիք Մայր Աթոռից: Քրիստոսի քաղցր լուծը Ձեր ուսերին գնացիք դեպի Ատլանտյանի ափերը, որտեղ հարյուր-հազարավոր հայեր՝ Ձեր զավակները, ապրում են: Երրորդ անգամ լինելով նրանք վայելեցին Ձեր օրհնաբեր և շնորհաբեր այցելությունը:

Թույլ տվեք այս առթիվ, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության, պաշտոնեության, ուսանողության, հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմի և ներկա հավատացյալների, սրտանց ողջունել Ձեր բարի վերադարձը Ս. Էջմիածին: Միացյալ Նահանգների հայոց արևելյան և արևմտյան թեմերի, ինչպես նաև Կանադայի եկեղեցիներում Դուք ընդունվեցիք մեծ հանդիսությամբ և «Հրաշափառ»-ով, իսկ ազգային հաստատություններում, մշակույթի օջախներում, հայկական դպրոցներում՝ ծափողջույններով և ծաղկեփնջերով: Ամենուրեք հազարավոր հայեր խոնվեցին Ձեր շուրջը, լսելու համար Ձեր հայրապետական պատգամը, Ձեր խոսքը:

Վեհափառ Տեր, մեզ և ամբողջ Հայաստանի ժողովրդի համար մեծագույն հրճվանքի և խոր գոհունակության առիթ հանդիսացավ այն լուրը, որ Ձերդ Սրբությանը մեծ հանդիսավորության պայմաններում ընդունել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, նաև Սպիտակ Տան մեջ Միացյալ Նահանգների այսօրվա նախագահը: Մեր հայրենի ռադիոկայանը, հեռուստացույցը և թերթերը արձագանքեցին այդ իրադարձությանը: Մեր մայրաքաղաքում, Էջմիածնում, ամենուրեք մեր ժողովրդի զավակները այդ օրերին խանդավառության և ցնծության մեջ էին, խանդավառություն, որի մեջ արտահայտվում էին մեր ժողովրդի անխառն զգացումները Ձերդ Վեհափառության և Ս. Էջմիածնի հանդեպ: Այդպես է եղել միշտ, տակավին Աշտարակեցու, Խրիմյանի, Գևորգ Ե-ի, Գևորգ Զ-ի ժամանակ ու նաև այսօր: Այդ զգացումները սուրբ են և վկայում են հայ բարեպաշտ ժողովրդի ջերմեռանդ հավատքն ու սերը իր Մայր Եկեղեցու նկատմամբ:

Մենք փառք կուտանք Աստուծո, որ Դուք այսօր ողջ ու առողջ մեր մեջ եք: Դուք Մայր Հայրենիքից հեռու ապրող Ձեր զավակների սրտերում թողեցիք քաղցր, գեղեցիկ, անջնջելի հիշատակներ, սեր հայրենիքի և հավատք՝ ապագայի նկատմամբ, որոնցով պիտի ապրեն նրանք ու հարատևվեն, մանավանդ երիտասարդները, որոնք կարոտ են Հայաստանին, հայ լեզվին, հայ մշակույթին, հայ շունչին:

Բարի գալուստ, Վեհափառ Տեր, թույլ տվեք համբուրել Ձեր Աջը:

Ապա վերադարձի կարոտով առլեցուն՝ Հայոց Հայրապետը նախ օրհնում է բոլորին, ապա Սփյուռքի հայության եղբայրական սերն ու ողջույնները հաղորդելով հայրենաբնակ ժողովրդին՝ ասում է.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հայոց Աստուծո սղորմությամբ, երրորդ անգամ լինելով, Մեր քայլերը ուղղեցինք դեպի Նոր Աշխարհ, այցելեցինք Միացյալ Նահանգներ և Կանադա: Երևի բավական տեղեկություններ ստացաք Մեր ուղևորության վերաբերյալ: Քիչ առաջ Հուսիկ սրբազանը բավական կենդանի և խանդավառ կերպով տվեց ընդհանուր գիծերի մեջ պատկերը Մեր ուղևորության: Եվ իսկապես, այդ պատկերը համապատասխանում է իրականության, որովհետև արտակարգ խանդավառ մթնոլորտ ստեղծվեց Մեր այցելության առիթով: Ես մի անգամ ևս համոզվեցի, որ մեր ժողովուրդի զավակները, թեև հազարավոր մղոններ հեռու Մայր Հայրենիքից և այլևայլ պայմաններու մեջ ապրող, այլևայլ ազդեցություններու ներքև, սակայն ամեն անգամ, երբ Ս. Էջմիածնի անունը, հմայքը և օրհնությունը հասնում է նրանց, նրանք իսկապես մեկ սիրտ, մեկ հոգի դարձած, արտահայտում են իրենց զգացումները, որոնք հորդում են իրենց սրտից ու իրենց խոսքերից: Այդ զգացումները վկայությունն են այն պաշտամունքի, որ նրանք ունեն դեպի Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Մի անգամ ևս նման առիթներով հաստատվում է Առաքել Դավրիժեցու խոսքը, թե՝ «Ի վերայ աջոյն Սրբոյ Գրիգորի և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»: Մեր այցելության օրերին ամերիկահայ և կանադահայ ժողովուրդը ապրեց և վերանորոգեց իր հավատքը դեպի մեր Եկեղեցին, իր հավատքը, հիացմունքը և հավատարմությունը դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, անշուշտ նաև իր ուրախությունը, մեր վերածնված Մայր Հայրենիքի նկատմամբ, որովհետև մեր ժողովուրդը քաջ գիտակցում է, որ եթե Հայաստանում Հայ Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այսօր կանգուն և ծաղկյալ վիճակի մեջ են և իրենց առաքելության ուղիղ ճանապարհի վրա, շինարարական, հոգևոր և նյութական իմաստով, այդ պարտական ենք նաև մեր հայրենիքի այսօրվա բարենպաստ պայմաններին, խաղաղ և ապահով կյանքին, մեր հայրենի պետության հույժ բարյացակամ վերաբերմունքին: Թեև մտահոգիչ բազում պատճառներ ունենք արտասահմանի հայության գոյատևման առնչությամբ, բայց նման առիթներով կարծեք թե այդ մտահոգությունները փարատվում են, և տեսնում ենք, որ հայ ժողովուրդը, իր ամբողջության մեջ առնված, արձագանքում է այն օրհնությանը, այն մաղթանքներին, այն ոգուն, որ տարածվում է և գնում է դեպի իրենց՝ Մայր Երկրից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Ես մխիթարված սրտով վերադարձա՝ հաստատելով այս իրողությունը: Իմ այս երրորդ այցելության առիթով ես նաև հաստատեցի, որ արտասահմանում մեր եկեղեցական կյանքը ավելի կազմակերպված վիճակի մեջ է գտնվում. նոր բազում եկեղեցիներ կառուցվել են այս վերջին քսան տարիների ընթացքում, և եկեղեցիների կողքին, ամեն տեղ գրեթե, կրթական և մշակութային նպատակների ծառայող բարեկարգ շինություններ, որոնք բուն հայ կյանքի կենդանության աղբյուր են դառնում եկեղեցու կողքին: Այսպիսի հրաշալի իրողություններ հաստատեցի ես նաև Կանադայում, որ թեև նոր կազմակերպված թեմ է, բայց համեմատաբար այն շատ կարճ ժամանակի ընթացքում՝ ընդամենը երեք տարի, շինարարական այդպիսի փառավոր աշխատանք է ծավալել, մանավանդ Տորոնտոյում, ուր նոր եկեղեցի է կառուցվել, բավական ընդարձակ, մեծ, գեղեցիկ և կողքին՝ շենքեր, հարմարություններ և այլն, որոնք հիացումի արժանի են: Որոշ տեղերում նոր ծրագիրներ կան տակավին, ավելի մեծ, ա-

վելի պայծառ աղոթքի տուներ կառուցելու, ինչպես, օրինակ, Լոս Անջելոսում, ուր ծրագրված է գեղատեսիլ մի բարձունքում կառուցելու մի Մայր եկեղեցի, որ իշխելու է ամբողջ Լոս Անջելոս քաղաքի վրա: Եկեղեցու նախնական նախագիծը ես հետս եմ բերել, որ նաև մեր հայրենի ճարտարապետները տեսնեն և գուցե իրենց խորհուրդները տան, որպեսզի այն կրի հայկական դասական ճարտարապետության կնիքը: Պետք է ուրախությամբ նշել, որ այս վերջին տասնամյակներին ամեն տեղ, որտեղ հայկական եկեղեցիներ կառուցվել են, դրանց նախաձեռնողները բոլորն էլ ժամանակին լսել են մեր այն խորհուրդը, որ հայկական եկեղեցիները արտասահմանում ունեն կնիքը հայ դասական ճարտարապետության՝ նորագույն ձևերու հետ ներդաշնակված:

Ահա այսպիսի հրաշալի առիթներ ունեցանք ուրախանալու, հրճվելու, ոգևորվելու և Մեր օրհնությունները բաշխելու Էջմիածնի օրհնության ճարավի հայ բազմություններին:

Շնորհակալություն ձեզ բոլորիդ, որ այսպիսի մեծ բազմությամբ եկած եք ինձ բարի գալուստ մաղթելու: Շնորհակալություն նաև Ձեզ, սիրելի Սրբազան, Ձեր հուզիչ խոսքերի համար: Շնորհակալություն Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին, մեր միաբաններին, պաշտոնյաներին, բոլորիդ, բոլորիդ: Աստված Մեզ օգնեց, որ հանգիստ, շատ հանգիստ ժամանենք մեր տունը՝ Ս. Էջմիածին: Սա ընդգծում եմ, որովհետև հետաքրքիր բան պատահեց. բազում քաղաքներ այցելեցինք, և ուր որ ժամանում էինք, այդ օրը երկինքը բացվում էր, արևը պայծառ շողում էր, և ոչ մի տեղ եղանակի պատճառով որևէ դժվարություն կամ անհանգստություն չունեցանք մեր ճանապարհորդության ողջ ընթացքում: Իրոք որ կարծեք Աստված ընդ մեզ էր:

Ձեզ կրկին Մեր օրհնությունը և բարի մաղթանքները այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

Հավարտ իր խոսքի, Նորին Սրբությունը առաջնորդվում է Վեհարան, որտեղ Մայր Աթոռի միաբանությանը և Մայրավանքի պաշտոնեությանը վերստին բաշխում է իր հայրական օրհնությունները:

Բարի գալուստ Հայոց Հայրապետին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

* * *

Վեհափառ Հայրապետի սույն ուղևորությունը Միացյալ Նահանգներ և Կանադա պատմական մեծ իրադարձություն հանդիսացավ Հայ Եկեղեցու մեր օրերի պատմության մեջ: Հովվապետական իր այս շնորհաբեր այցելությամբ Հայոց Հայրապետը մի անգամ ևս տարավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կենարար օրհնությունը և Մայր Հայրենիքի ողջույնը Անդրօվկիանոսյան հայ գաղութներին, հայ եկեղեցիներին և անխտիր բոլոր հայ հավատացյալներին՝ է՛լ ավելի զորացնելու համար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու միասնությունը և ամրապնդելու հայրենի երկրի և Սփյուռքի հայության հոգևոր կապերը:



ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Վեհափառ Հայրապետի Միացյալ Նահանգներ և Կանադա կատարած ուղևորության շրջանում այդ երկրների հայ և օտար մամուլը առանձին խմբագրականներով, հոդվածներով և հաղորդագրություններով լայնորեն անդրադարձել է Նորին Սրբության հովվապետական սույն այցելության ունեցած ազգային-եկեղեցական, հոգևոր, հայրենասիրական նշանակությանը վերոհիշյալ գաղթօջախների հայության կյանքում:

Ստորև քաղվածաբար տալիս ենք հատվածներ հայ և օտար մի շարք թերթերում, ամսագրերում և պարբերականներում այդ առթիվ լույս տեսած գրվածքներից:

Բոստոնում հրատարակվող «Պայքար» շաբաթաթերթը Հայոց Հայրապետին նվիրված իր 24 հոկտեմբեր համարում «Ամենայն սրտով ողջույն Ամենայն Հայոց Հայրապետին» վերնագրով խմբագրականում գրում է.

«Հյուսիսային Ամերիկայի հայությունը կոչված է պատմական անկրկնելի օրեր վայելելու Ամենայն Հայոց առաքինազարդ Հայրապետի շնորհաբեր այցին առիթով:

... Վեհափառ Հայրապետի վերջին այցելութենեն ի վեր անցած են գրեթե երկու տասնամյակներ, որոնց ընթացքին հայ գաղութներուն դիմագիծը փոխված է հիմնովին: Գաղթական հայերու նոր զանգվածները, ազգային գիտակցության նոր խմորումները, արժեքներու և ավանդությանց խախտումները խորվահույզ իրականության մը դիմաց դրած են Ամերիկայի և Կանադայի հայ գաղութները՝ անհրաժեշտ դարձնելով խաղաղարար ձեռքի մը օրհնաբեր ներկայությունը մեր կյանքին վերև: Օրհնաբեր այդ ձեռքը կհասնի մեր դարավոր Հայրենիքեն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինեն՝ պահ մը մեզ հրավիրելու ինքնաճանաչման փորձին ու մեր ազգին գոյատևման առաքելությունը շարունակելու պարտավորությանց:

... Այսօր Ս. Գրիգոր Հայրապետի 180-րդ ժառանգորդը այցի կուգա Ամերիկա՝ Լուսավորիչներու «երազ օրեր»-ու պատմական պատգամը բերելու մեզի:

Վազգեն Ա Հայրապետը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի գահոյն վրա բարձրացավ ճակատագրական այնպիսի մեկ պահոյն, երբ հայ ժողովուրդը որևէ ժամանակ ավելի պետք ուներ վարչագետ, իմաստուն, հեռատես ու ներշնչյալ հոգևոր պետի մը, և անոր 32 տարիներու իշխանությունը Սուրբ Էջմիածնի գահոյն վրա պատմական շրջադարձ մը բերաւ հայ ժողովուրդի կյանքին մեջ, հայրենիքի մեջ թե ի սփյուռս աշխարհի: Անկասկած, Վազգեն կաթողիկոսի իշխանության տարիները մեր պատմության մեջ պիտի արձանագրվին իբրև շինարարության շրջան, իբրև հոգևոր ու մշակութային զարթոնքի փառավոր հանգրվան:

... Վերջին երեսնամյակը Սուրբ Էջմիածինը վերածեց եռուն մեղվանոցի մը, իր վարչական ընդարձակ կազմով, հոգևոր ճեմարանով, հոգևոր ու պատմական հրատարակությանց ամբողջ շարքով մը:

Իր այս իրագործումներով Վեհափառը արժանացավ համայն հայրենի ժողովուրդին հիացման ու գուրգուրանքին: Համեստ բանվորեն մինչև նախարարն ու նախագահը հավասարապես ընծայեցին ու կշարունակեն ընծայել անսահման սեր ու հարգանք Հայոց Հայրապետին նկատմամբ:

... Հակառակ շինարարական, դաստիարակչական իր բազում պատասխանատվությանց, Ամենայն Հայոց Հայրապետը շուրջ 25 հովվապետական այցելություններ տվավ ներքին թեմերե ներս և 30 այցելություններ ալ արտասահմանի հեռավոր գաղութներուն: Հետևաբար աշխարհի տարբեր ցամաքամասերուն տարածված հայերը իրմով ճանչցան Սուրբ Էջմիածինը, հաղորդվեցան մեր նախնիներու հավատքով, և իրմով զորացան ու զորացուցին մեկ ու միակ ազգի մը պատկանելության գիտակցությունը: Վեհափառին անձով երկրամասերը կմոտենան իրարու, սիրտերը կլեցվին իրարմով ու կբաբախեն հայորեն՝ բոլոր երկինքներու տակ: Վեհափառը կհավատա մեր ժողովուրդի միասնութենեն բխելիք ուժին ու քարիքին, և ամենուրեք կնկրտի ատոր և կպայքարի անոր համար:

... Այսօր, խոնջած մարմինով և սակայն հոգեկան անսահման կորովով մեզի այցի եկած է մեր Հայրապետը: Վարչական, վարդապետական, ազգային ու եկեղեցական բազմաթիվ հարցեր վստահորեն պիտի ներկայացվին անոր՝ լուծումներու ակնկալությամբ. և ան իր գահակալությունը խորհրդանշող իմաստությամբ մը պիտի տա հայորեն արդար որոշումներ:

... Թող դողանջեն զանգերը, թող բացվին տաճարներուն և հոգիներուն դռները, որպեսզի անոնցմե ներս մուտք գործեն խաղաղության ու միության առաքյալին աստվածահաճո և ազգաշեն պատգամները»:

Նույն համարում «Քաջ Հովիվը, որ կպահպանե իր հոտը» վերնագրի ներքև Տ. Գրիգոր քահանա Մագուտյանը գրում է.

«...Պատմութենեն ծանոթ է, որ հայ ժողովուրդը դարեր առաջ կորսնցուց իր թագավորական գահը և ազգային անկախությունը: Սակայն մնաց հոգևոր վերին իշխանությունը՝ Հայրապետական գահը, որուն հառեց հայ ժողովուրդը իր աչքերը որպես իր ազգային ինքնության, հպարտանքի և իշխանության միակ աղբյուրը: Նույնիսկ թագավորության օրերուն՝ երբ պետություն կար, բայց թագավոր չկար, կաթողիկոսներ հաճախ որպես պետության գլուխ (head of state) բանակցեցան օտար իշխանությանց հետ: Իսկ դարեր շարունակ անոնք ներկայացուցին հայ ժողովուրդը, պաշտոնապես խոսեցան անոր անունով և հետապնդեցին Հայաստանի ազատագրու-

թյան սրբազան դատը: Անոնք որպես ճշմարիտ հովիվներ միշտ թիրախ դարձան հայ ժողովուրդի դեմ օտար բռնակալներու կողմե ծալալած բռնությանց. հայրապետներեն ոմանք ենթարկվեցան դառն կալանքի, բանտարգելության և չարչարանքներու: Հայ ժողովուրդը կարելի չէ, որ մոռացության տա Հայրապետական Աթոռի վրա ճնշուած գահակալներու անձնուրաց նվիրումը իրենց Աթոռին և ժողովուրդին:

Այսօր ևս հայ ժողովուրդը իր Ընդհանրական Հայրապետին՝ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին մեջ կտեսնե Հայաստանյայց հավատքի հոր՝ Ս. Գրիգոր Լուսավորչի արժանավոր հաջորդը, Հայ Եկեղեցվո գերագույն իշխանության, այսինքն՝ Այրարատյան նախամեծար Մայր Աթոռ գլուխը և հայ ժողովուրդի ազգապետը: Մի քանի օրեն, երբ Նորին Սուրբ Օծությունը հասնի ամերիկյան մեր ափերը՝ իր ներկայության և շնորհաբաշխ օրհնությանց միջոցով հաղորդակից պիտի դառնանք մեր անցյալին: Վեհափառին հանդեպ ցույց տրված հարգանքը և սերը՝ հարգանք ու սեր է հանդեպ մեր Եկեղեցվո անցյալին, Ս. Գրիգոր Լուսավորչին, Ս. Էջմիածնին, մեր սրբազան հայրապետներուն, մեր սուրբերուն, մեր նահատակ եկեղեցականներուն, մեր թարգմանիչ ու մատենագիր վարդապետներուն, հայ եկեղեցական արվեստի մշակներուն, մեր հինավուրց Հայրենիքին, մեր թագավորներուն, իշխաններուն և հանուն Քրիստոսի մարտնչող մեր զորավարներուն և անոնց զորքերուն, մեր ազատագրական պայքարին, մեր այսօրվան հայրենիքին, մեր ներկային և մեր պատմության ամբողջության:

Վեհափառ Հայրապետը մեզի համար կխորհրդանշե այս ամենը, որովհետև ան միակ անձն էր բովանդակ աշխարհի մեջ, որուն վստահեցավ հայ ժողովուրդը 1955 թվականին իր ազգային Եկեղեցվո գահը, զոր ան երեսուներկու տարիե ի վեր արժանավոր կերպով գրաված է: Երբեք մտահան պետք չէ ընել, որ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռը բովանդակ հայության թագն ու պարծանքն է, և որուն վրա կքազմի ան որպես ազգին և Աստուծո ընտրելին: Իսկ մեր բովանդակ ազգը, որ ցրված է աշխարհի չորս անկյունները, իր հավաքական կամքը կարտահայտե միայն Ընդհանրական Հայրապետներու ընտրությանց ժամանակ: Իսկ ազգին կամքը վեր է, քան բոլոր անձնական, հատվածական, կողմնակցական և կուսակցական շահերը: Անոր դեմ ոևէ հայ պետք չէ համարձակի «լրբենի երեսօք» (Առակ Է ԺԳ) արտահայտվիլ: Իսկ Վեհափառ Հայրապետը մեր ամենուն հոգևոր հայրն է. մեզի կմնա մեր որդիական սերը և հարգանքը արտահայտել իր ներկայության»:

Նույն շաբաթաթերթի նույն համարում Տ. Զենոբ քահանա Նալբանդյանը իր «Օրհնաբեր այցելություն» հոդվածում գրում է.

«Այս օրերուն, հայ ժողովուրդի զավակները ամենուրեք մեծ անձկությամբ կսպասեն դիմավորելու իրենց սիրեցյալ Ամենայն Հայոց Հայրապետը՝ Վազգեն Ա: Անոնք իրենց մեջ պիտի ողջունեն օրհնաբեր գալուստը Հոգևոր Հոր մը, որ ավելի քան երեսուն երկար տարիներ անձանձրույթ աշխատեցավ, տքնեցավ ու անսակարկորեն իր բովանդակ կյանքը ընծայաբերեց իր սուրբ Եկեղեցիին ու բազմաչարչար ազգին:

Վեհին այցը պատեհություն պիտի ստեղծե հայ ժողովուրդի բոլոր խավերուն իրենց Հայրապետը մոտեն ճանչնալու, ունկնդրելու անոր սրտա-

բուխ պատգամը և ներշնչվելու անոր ոգեշունչ ու բովանդակալից քարոզներով ու ելույթներով:

... Հայրապետական այս օրհնաբեր այցելությամբ հայ անհատներ իրենց բազմադարյան ուխտը պիտի վերանորոգեն առ Աստված և իրենց հոգևոր կապը պիտի ամրապնդեն հոգևոր կեդրոն Ս. Էջմիածնի հետ: Արդարև, հարգանքի ու սիրո կանթեղներու բոցավառման առիթ ընծայող այս նվիրական այցելությունը պիտի արտապնդե թույլ հոգիները, քաջալերե վհատյալը, խրախուսե հուսահատը, զորացնե թերահավատը, ամոքե տառապյալը, լուսավորե խավարամիտը, առաջնորդե խարխափյալը, խաղաղեցնե ալեկոծյալը և դարձի բերե կորուսյալը:

Այս շնորհաբեր այցը նաև հայ էակը վերստին հաղորդակից պիտի դարձնե իր մշակութային արժեքներուն և հոգևոր ժառանգությանը:

... Միասնականության ու համագործակցության ոգի սերմանելու պատրաստակամ Հայոց Վեհապետը պիտի գա վերազորացնելու և վերաշխուժացնելու բովանդակ հայությունը և զայն առաջնորդելու մեր եռամեծ ու սրբալույս հայրապետներու շավիղով:

... Հոգևոր կայծով ու շունչով վառված իբրև մերօրյա նոր Մովսես, Հայրապետն Հայոց, մականն ի ձեռին քալեց իր ժողովուրդին հետ, վասպուրականի Եկեղեցին Հայկական անոր առաջնորդությանն ու ուղղությանն էր կարոտ: Քալեց ան քաջաբար ու ինքնավստահորեն՝ առանց վհատելու և ընկրկելու: Մշտապես ան ապավինեցավ նախախնամության. զորություն ստացավ անկե, ու այսպիսով, շարունակելով իր եկեղեցաշեն ու ազգօգուտ սուրբ գործը, իր համեստ ու ամբողջական լուման ընծայաբերեց Հայ Եկեղեցվո պատարագասեղանին:

Հովվապետն Հայոց բորբոքող հորիզոնին նայեցավ լավատեսությամբ ու մեծ ակնկալությամբ: Իր օրով վերակենդանացավ Սուրբ Էջմիածինը: Ան լուսավորեց, պայծառացուց, շենցուց և ծաղկեցուց Մայր Աթոռը. վերականգնեց Հայոց Աշխարհի հնամենի սրբավայրերն ու անմահ կոթողները: Վերազարթոնք ապրեցավ հայ հոգևոր մշակույթը. վերականուցվեցան հայ հին մշակույթի ձեռակերտ լավագույն և չքնաղագույն նմուշները: Հայոց լքյալ տաճարները՝ այդ խնկաբույր աղոթավայրերն ու սրբազնասուրբ տեղիքը վերստին կյանքի կոչվեցան, ու անոնց երկնասլաց գմբեթները հպարտորեն վեր խոյացան: Վերածաղկեցավ նաև հոգևոր ճեմարանը՝ ապագա հայ եկեղեցականի մտքի դարբնոցը և հոգու ձուլարանը: Իր մեղուշ ու հոգատար հայացքի տակ հասակ առին ու բոլորանվեր ուրտով Ս. Խորանին ընծայվեցան շրջանավարտներու անվերջ շարքեր: Անոր ջերմիկ խոսքերով ու իմաստուն պատգամներով հմայվեցան, զմայլեցան ու թրծվեցան դեռատի ու նորաբողբոջ սերունդներ:

...Առաքինազարդ Հայրապետն Հայոց լայնախոհ է, պայծառատես ու հեռատես: Ան, իմաստուն ու կորովի սերմնացանին նման, ոսկե հատիկներ կցանե Տիրոջ բարեբեր անդաստանեն ներս: Կցանե ան գալիք սերունդներու սերմերն առատ ու Տիրոջ կհանձնե վսեմ հոգատարությունն անոնց:

...Անոր մշտական սիրո ու գուրգուրանքի կեդրոնին կգտնվին հայ երկու անբաժանելի իրականություններ՝ վերածնված Հայաստան աշխարհն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածինը»:

Նույն համարում «Վազգեն շինարար» վերնագրով արժեքավոր մի հոդված է տպագրել Մանվել Քեռեյանը։ Հոդվածագիրը գրում է.

«Լուսավորչի գահին 130-րդ գահակալը՝ Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ամեն անգամ, որ հովվապետական ուղևորությամբ կհայտնվի Սփյուռքի տարածքին, ատիկա կլլլա ճշմարտապես հայտնություն մը, միշտ և ամենուրեք, որ իր վրա կհրավիրե, կկեդրոնացնե, իր շուրջ կհամախմբե բոլորն անխտիր։

Վազգեն Վեհափառը ոգեղեն կամուրջն է ընդմեջ մրրկավ զատված իր զավակներուն և հայոց հավատքի մայրաքաղաքին։ Վազգեն Վեհափառը ոգեղեն կամուրջն է ընդմեջ հատվածներուն և ամբողջանալու ձգտող հայրենիքին, ընդմեջ համայնքներուն և զանոնք կառավարող իշխանությանց, ընդմեջ գիտության և կրոնքին։

Հստակատես անձնավորություն մըն է Վեհափառը, մեր ժամանակի լուսավորյալ հոգիներեն մեկը անտարակույս, որ վաղնջուց գիտե ու կգործե ազգային-եկեղեցական-մշակութային մակարդակի վրա՝ ի խնդիր հայ ժողովուրդի արդար իղձերուն և ուրեմն անով՝ համայն մարդկության հոգեկան կարգապահության, աշխարհի ներդաշնակության, հավասարակշռության։ Ընդգրկելով մեր բովանդակ պատմությունը, յուրացնելով մարդկային պատմության մեջ ինչ որ դարերը կտակած են լավագույն, դարերը շաղկապելով իրարու հետ, ան եղավ ուղեկից մեր պատմության և մեր պատմությունը կառուցանող լուսապայծառ հոգիներուն։

Լուսապայծառ հոգի մըն է Վեհափառը, ճակատագրված մեր ներկային, որ մեզի եկավ արյունագրված հայոց պատմութենեն՝ պատմությունը վերադարձնելու իր ճշմարիտ հունին, վերանորոգելու և վերաշինելու զայն, պետության հետ համախորհուրդ ապահովելու Հայաստանի վերածնունդը, իր ժամանակի ընձեռած հնարավորություններուն առավելագույն օգտագործումով, և որ արդեն լուսագրվեցավ պատմության մեջ, իմացական, ոգեկան, բարոյական ու կառուցողական առումներով, մեծ արվեստագետի մը՝ Կոստան Զարյանի բառերով՝ **Վազգեն Ա Շինարար** անունով։

...Բարձրանալով Լուսավորչի գահին վրա,—Լո՛ւյս,—ըսավ Վեհափառը, և եղև լույս։ —Ավելի լույս,—ըսավ Վեհափառը, և եղև ավելի լույս։

Եվ այդ լույսը կշարունակե վարդավառիլ մեր կյանքին մեջ ու հոգիներուն, այսօր և ժամանակին մեջ, շողակաթ ու պայծառաշող։

Խորհրդանշան մըն է Վազգեն Վեհափառը։

...Վեհափա՛ռ, լույսիդ հառած կմնան հուսացյալ աչքերը յոթնիցս տարագիր ժողովուրդիդ։

...Հավաքե՛ մեզ աշխարհի բոլոր ճամփաներեն, հանե՛ մեզ բոլոր նորօրինակ խոր վիրապներեն. ա՛ռ, տա՛ր, որովհետև մենք կսպասենք, մենք դեռ հավատավոր պիտի սպասենք քու մեծ մարգարեությանդ կենսագործումին.

«Պիտի գա այն օրը, երբ վերստին շեփորը պիտի հնչե, և Մենք, Մովսեսի գավազանը Մեր ձեռքին, ծովերը կտրելով, պիտի առաջնորդենք ձեզ դեպի Աղբյուրը լույսին, Երկիրն Ավետյաց, Աշխարհն Հայաստանյայց»։

Միևնույն համարում Տ. Արտեն ավագ քահանա Աշճյանը «Ընտրյալդ Աստուծո» վերնագրով հոդվածում այսպես է դիմում Հայոց Հայրապետին,

«Վեհափառ Տեր,

Ավելի քան երեք տասնամյակ է, որ Հովվապետն եք Հայաստանյայց Եկեղեցվո զավակներուն: Գաղթականի որդի՝ Ռումանիոյ թեմի առաջնորդական պաշտոնեն կոչվեցաք, Աստուծմե և հայ ժողովուրդեն ընտրված, լեցնելու թափուր մնացած գահը Ամենայն Հայոց Կաթողիկոսության ի Սուրբ Էջմիածին:

...Երեք տասնամյակե ավելի անձնդիր հետապնդումով նորոգեցիք, շինեցիք և շենցուցիք Մայր Աթոռի շրջափակին մեջ և հայրենի հողին վրա՝ հուշարձան, թանգարան, հյուրանոց, եկեղեցի և վանք: Ձեզի գործակից բրիք մեծ ու պզտիկ բարերարներ Սփյուռքեն թե Հայրենիքեն, կառավարական մարդիկ թե ճարտարապետներ:

...Բազմաչարչար Հայաստանի պատմական հողերու տարածության մեկ տասներորդը պարփակող ներկա Հայաստանի հայությունը Ձեր անձին մեջ հետզհետե ճանչցավ և հարգեց հայրենասեր, հեղինակավոր գլուխ՝ անթաց արքան հայոց...:

...Եվ Դուք եղաք, Վեհափառ Տեր, ուղևորող հովվապետը: Վասն հոգիներու շինության, վասն աշխարհի խաղաղության պահպանումին, վասն աշխարհացրիվ հայորդիներու կրոնական, ազգային-մշակութային վերազարթոնքին, Դուք կտրեցիք անհամար կիլոմետրեր թե մղոններ, ըլլա Սովետական Միութենեն ներս, ըլլա արտասահման: Ի բաց առյալ Միջին Արևելյան մի քանի երկիրներ, ուր տակավին կան մեծ թե փոքր հայկական համայնքներ, Դուք գտնվեցաք Սփյուռքի հայության ծոցին մեջ մի քանի ցամաքամասերու վրա, սիրցնելով հայորդիներուն Ս. Էջմիածինը իբր իրենց հոգևոր մայրն ու արմատը, և միաժամանակ ծանոթանալով անոր կարիքներուն և դժվարություններուն: Այս հոգնեցուցիչ այցելությունները առիթ եղան շատ վայրերու մեջ, որ ոչ-հայեր ծանոթանան հայության, մեծարեն Ձեզ, մինչև անգամ շքանշան հանձնելով Ձեզի բարձրաստիճան պաշտոնատարներու ձեռքով»:

Փասադենայում հրատարակվող «Մասիս» շաբաթաթերթը 24 հոկտեմբեր համարում «Գալուստդ բարի »վերնագրով իր խմբագրականում գրում է.

«Վեհափառ Տեր,

Կրկին անգամ ոտք կկոխեք այս մեծ հանրապետության՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներու հողին վրա, ուր կապրին մոտ մեկ միլիոնի հասնող զավակները հայ ժողովուրդին:

Դուք այս մեկ միլիոնի հասնող հայորդիներուն հոգևոր գերագույն պետն եք, ինչպես նաև հոգևոր պետը համայն հայության: Դուք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետն եք, և աշխարհի վրա ապրող բոլոր հայերը անվարան Ձեզ կընդունին իբրև իրենց հոգևոր Տերը: Անվիճելի, անառարկելի Ձեր այս հանգամանքին պատճառավ, Հայրենիքեն ներս թե արտասահմանի որևէ գաղութեն ներս, Դուք Ձեր տան մեջն եք, Ձեր հոտին հետ, Ձեր հոգևոր զավակներուն հետ, բոլոր անոնց հետ, որոնք Ձեր անձին մեջեն կտեսնեն իրենց հոգևոր գերագույն կեդրոնը՝ Ս. Էջմիածինը, հայ ժողովուրդի հոգեկան արժեքներու մարմնացումը հանդիսացող դարավոր և անսասան այդ հաստատությունը:

Վեհափառ Տեր, Դուք շրջուն Էջմիածինն եք մեզի համար՝ այդ հաստատության հետ կապված բոլոր հատկություններով, բոլոր հույսերով,

բոլոր բարեմասնություններով, բոլոր ակնկալություններով, բոլոր ապրումներով: Մենք անշուշտ ունինք այլ հոգևոր կեդրոններ, կաթողիկոսական և նվիրապետական այդ կեդրոններ, որոնք նույնպես, հայ ժողովուրդի պատմության վերիվայրումներուն ընթացքին, ստանձնած են կարևոր առաքելություն և նշարունակեն վայելել անոր համակրանքն ու գուրգուրանքը: Ս. Էջմիածինը, սակայն, տարբեր է, հիմնականն է, հավիտենականը, մնայունը, քանի որ հիմնված է Միածինի իջած վայրին վրա, հայ ժողովուրդի հավիտենական հայրենիքի սրտին վրա, հողին վրա, և ուրեմն, երբ Դուք ուղևորության կելլեք, հովվական Ձեր օրհնաբեր և շնորհաբաշխ այցելությամբ, Հայրենիքն է, որ այցելության կուգա իր զավակներուն:

...Հայրենակարոտ և դեպի Արարատ իրենց աչքերը սևեռած զանգվածներուն համար Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի այցը արտասահմանի որևէ գաղութեն ներս, այս պարագային՝ ամերիկահայ գաղութեն ներս, իրապես պատմական նշանակություն մը ունի: Դարավոր մեր չարչարանքներուն, հուսախաբություններուն, տառապանքներուն, ակնկալություններուն և սպասումներուն ստեղծած հոգեկան և ֆիզիկական տվայտտյքին համար Ձեր այս այցելությունը սփոփարար, հանգստացնող և կազդուրիչ ազդեցություն մը ունի, որուն բարերար ներդրումով, իրենց արմատներեն կտրված, աշխարհի չորս ծագերուն տարտղնված հայության բեկորները անգամ մը ևս պիտի ապրին իրենց հայ ըլլալու հպարտությունը, պատկանելիության գերագույն զգացումը և տևելու ու տոկալու անկործանելի վճռականությունը:

...Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի Ամերիկա տված այս շնորհաբաշխ այցելության առթիվ, անգամ մը ևս կհաստատենք, որ Ս. Էջմիածինը է և կմնա նախամեծար Աթոռ, համայն հայ ժողովուրդի սիրույն և գուրգուրանքին առարկան»:

Մոնրեալում հրատարակվող «Ապագա» շաբաթաթերթը «Օրհնաբեր այցելությունը, որուն կսպասենք ակնդետ» վերնագրով իր խմբագրականում (14 սեպտեմբեր 1987) Վեհափառ Հայրապետի այցելության նախօրյակին հետևյալ կերպ է շարադրում իր խորհրդածությունները.

«...Գրեթե քսան տարի առաջ էր, երբ երկրորդ անգամ ըլլալով Կանադա կայցելեր Ամենայն Հայոց Վազգեն Ա Վեհափառը, կընդունվեր պետական մեծաշուք հանդիսավորությամբ և կարժանանար իր հոտին սիրազեղ ընդունելության: Այս ցուրտ ափերուն վրա տակավին նոր հաստատված ու նոր կյանքի ելևէջներուն դիմաց անվստահ ու մտահոգ իր զավակներուն տեր կկանգներ Վեհափառ Հայրապետը իր այդ պատմական այցելությամբ: Իր հուսադրիչ պատգամներով, ան կոգեշնչեր իր հոտին անդամները ազգային նորոգված գիտակցությամբ, որպեսզի անոնք 18 դարերու մեր հոգևոր ժառանգության ամուր հենակին՝ Ս. Էջմիածնին կառչած, շարունակեին վճռականությամբ և մշտապես նորոգվող թափով աշխատիլ մեր ազգային նպատակներու իրականացման համար:

Մեզի պարտադրված դաժան ճակատագիրը շատոնց ի վեր մեզ զրկեր էր—մինչև ներկա Հայաստանի հառնումը—պետական իշխանությենե: Դարեր ամբողջ Հայ Եկեղեցին վիճակվեցավ տիրություն ընել մայր հողին վրա օտար բռնագրավիչներու կրունկին տակ հյուծող հայության, ինչպես նման աշխարհացրիվ բեկորներուն: Էջմիածնա գահակալը դարեր ամբողջ

եղավ մեր ժողովուրդի և՛ հոգևոր, և՛ ազգային-հասարակական առաջնորդը: Ամենադժնեմ ժամանակներում իսկ, երբ ճակատագիրը մեզ կհարվածեր անողորմաբար, վիճատության եզրին հասած հայությունը հաջողեցավ հույսի վերջին նշույլին կառչած՝ հարատևել և իր գոյությունը պահպանել, որովհետև հույսի վերջին այդ կաթիլը, տարբեր ժամանակներու, ան առավ Էջմիածնա պլպլացող, բայց հավերժ անմար կանթեղեն:

Ահա այդ կանթեղին ջերմացնող, հոգիները զորացնող, մեր հույսն ու հավատքը ամրացնող բոցն է, որ կբերե մեզի Ամենայն Հայոց Հայրապետը: Ս. Գրիգոր Լուսավորչի Աթոռին շնորհազարդ գահակալը իր անձով կխորհրդանշե այդ մշտարծարծ կանթեղը, որուն լույսն ու ջերմությունը իր գահակալության ավելի քան երեսուն տարիներուն հասան ամեն տեղ, Սվյուռքի տարահալած հայության:

Իրոք, անցնող երեսուն տարիներուն, Հայաստանյայց Եկեղեցին հայրենիքի ապահով սահմաններուն մեջ ապրեցավ զարթոնքի և ուռճացման աննախընթաց շրջան մը, որուն մասին կրնան վկայել տարբեր դասակարգերու և մտածողություններու պատկանող այն հազարավո՞ր, հազարավո՞ր հայ ուխտավորներն ու զբոսաշրջիկները, որոնք գեթ մեկ անգամ այցելած են Մայր Հայրենիք և երկյուղածությամբ աղոթք մը արտասանած են Ս. Էջմիածնա կամարներուն տակ: Ներկայի այս հոգեպարար գոյավիճակը, աստիճանաբար, տարիներու ընթացքին շոշափելի ու տեսանելի իրականության վերածվեցավ, որովհետև 1955-ի բախտորոշ օր մը, Վազգեն Ա բազմեցավ Լուսավորչի Աթոռին վրա: Իր գահակալության առաջին մեկ օրեն, ան ձեռնարկեց Հայաստանյայց Եկեղեցվո վերականգնումին ու վերակազմակերպման ձգտող շինարարական ու այլ ծրագիրներու իրագործման: Բազմակողմանի հատկություններ անձնավորող Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը անխորտակ հավատքով ու կամքով լծվեցավ աշխատանքի, Ս. Էջմիածնի վարկն ու հմայքը միջազգային առումով բարձրացնելով աննախընթաց բարձունքներու: Շարունակ մտահոգ աշխարհացրիվ իր զավակներուն ճակատագրով, անցնող տասնամյակներուն ան ձեռնարկեց բազմաթիվ ուղևորություններու, գրեթե բոլոր աշխարհամասերուն վրա կայք հաստատած իր զավակներուն բերելու իր օրհնությունները, զանոնք գինելու աներեր հավատքով դեպի Ս. Էջմիածինն ու վերածաղկած Մայր Հայրենիքը: Հանուն համաշխարհային խաղաղության, միջեկեղեցական հարաբերություններու բարելավման ու Հայաստանյայց Եկեղեցվո հանդեպ հարգանքի բարձրացման, իր ճիգերը լավագույնս արդյունավորվեցան իր գահակալության երեսնամյակի ընթացքին, որուն համար քանիցս պարգևատրվեցավ ան: Հայրական բարությամբ ու քրիստոնավայել ներողամտությամբ ան տքնեցավ տարիներ ամբողջ, տառապեցավ, որպեսզի Հայաստանյայց Եկեղեցվո միասնությունը խանգարող տագնապը չքանա, և հայ գաղութներու կյանքը ընթանա նվիրապետական կանոններու տրամադրությանց համաձայն:

Իր կոչումին խոր գիտակցությամբը տոգորված՝ կորովի ու անձնուրաց Ամենայն Հայոց Հայրապետը կշարունակե իր բեղմնավոր գործոն կյանքը, հակառակ բազում պատասխանատվություններու հաճախ ծանր իշխող բեռին ու մանավանդ՝ դառն վիշտերու հարվածներուն: Իր հառաջիկա այցելությունը Հյուսիսային Ամերիկայի թեմերուն անժխտելի փաստն է այն տարերային ուժին, որ անչափ կորով ու խանդ կներշնչե իրեն՝ շարունակելու իր նվիրական առաքելությունը ութսուներորդ տարեդարձի սեմին»:

Փասադենայում հրատարակվող «Հայ կյանք» շաբաթաթերթի 30 հոկտեմբեր թացառիկ համարում, նվիրված Ամենայն Հայոց կաթողիկոսին, Վարդան ավագ քահանա Տյուլկերյանը իր «Ն. Ս. Օ. Վազգեն Ա» վերնագրով հոդվածում գրում է.

«...Քանի մը օրեն պանդուխտ ամերիկահայությունն ալ սիրո ու հավատքի իր կարելիության չափանիշով պիտի մեծարե իր ժողովրդանվեր Հովվապետը:

Ոչ անշուշտ համաժողովրդային շքեղափայլ ցույցերով ու աշխարհահռչակավալ տպավորություններու հմայքով: Այլ կու գա աշխարհի նվազ ծանոթ, քրիստոնյա հինավուրց ժողովուրդի մը որպես Հայրն ու Հայրապետը՝ հայրենի հողին քույրովը սնած իր տարագիր զավակներուն անխտրաբար բաշխելու իր օրհնությունները:

Նորին Ս. Օծությունը այնքան անհամեմատորեն տարբեր է նվիրապետական վերին աստիճաններուն վրա ճառագայթող իր ստորադասներեն, որ խորաքանչ կպատկառիս ու միաժամանակ կխորհիս, թե պարզեվաշնորհ Տերը որքան վեհություն տված է անոր շնորհաշուք անձին, որ տիպարային կատարելությամբ ցոլացնե իր առաքելատիպ մեծությունը, որպես ԱԶԳԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ:

...Ամենայն Հայոց կաթողիկոսը սովորական անձ մը չէ, որուն հետ կրնանք արտահայտվիլ մեր ուզած եղանակով և արհամարհել պատշաճության սահմանները:

Ան գյուխն է ամբողջ հայության և անխոցելի պատիվը: Ամեն հայու ըմբռնումին մեջ հստակ պետք է ըլլա այս ճշմարտությունը և ցուցաբերե իր հարգանքը, անկախ իր անհատական ու հատվածական նկատումներեն:

...Ան կայցելե իր հոտին և իր օրհնություններուն հետ կբերե հայրենաբույր ողջույնները տարասփյուռ հայության, առանց հարանվանական զանազանության, որպես նահատակ ժողովուրդի մը հայրը՝ հավասարապես ոգևորելու բոլոր հայ հոգիները:

Հայոց ազգամեծար կաթողիկոսին համար չկան անջատյալ եկեղեցիներ, չկան հակադրված թեմեր, չկան գաղափարական տարակարծություններ, չկա երկկողմանի հոգևորականություն, չկան նույնիսկ հարանվանական տարբերություններ, այլ կա միայն հայ ժողովուրդը իր հայրենիքով և իր ուղղափառ հավատքով:

Հայաստանյայց Եկեղեցին, իր նվիրապետական պաշտոնյաներով, եղբայրորեն ու անխզելիորեն ՄԵԿ է:

...Եթե կրցանք հաջողիլ մեր հավատալույս հպարտությամբ՝ հաչս ամերիկյան ժողովուրդին ցույց տալ, թե հայը, որպես հավատացյալ ժողովուրդ, եղած է Քրիստոսի Ավետարանին անդրանիկ ջահակիրը և Ս. Էջմիածինն ալ նախակառույց եկեղեցին քրիստոնյա աշխարհին մեջ, ատով ազգայնորեն և բարձրորեն պատված պիտի ըլլանք մենք մեզ, որ Ավետարանի սիրույն նահատակված քրիստոնյա պատմական ժողովուրդի մը հավատավոր շառավիղներն ենք:

Պահելով մեր երկյուղած սերը Կիլիկիո Կաթողիկոսության, Պոլսո և Երուսաղեմի նվիրապետական Աթոռներուն հանդեպ, պետք է ըսեմ, թե Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով սրբակերտված հաստա-

տություն մըն է, հայության անգիր ավետարանն է, անգիր պատմությունը, հայուն ամրակուռ հավատքին և անմար հույսերուն խորհրդանիշը։

Առանց Ս. Էջմիածնի կարելի չէ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ կոչումով հայ եկեղեցի պահել երկրի վրա ոչ մեկ տեղ։

Առանց Մայր Աթոռի ազգամեծար Գահակալին կարելի չէ հոգևոր իշխանություն պահել ոչ մեկ ժամանակ։

...Այսօր Հայրենիքի ու գաղթաշխարհի հայության համար չկա առաքելատիպ սրբություն մը և արևափառ մեծություն մը, որքան ՆՈՐԻՆ Ս. ՕԹՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ, որ առաքելաշավիղ հայրապետներու վերջին ոսկի օղակն է։

Մեր ամենասուրբ Հայրապետը չի գար հատուկ նպատակներով մասնավորելու իր այցելությունը անձերու և կազմակերպություններու, այլ կու գա ողջագուրելու հայրենասեր հայությունը ամբողջության մեջ և ամեն հայ առանձնապես»։

Նույն առանձնատիպ բացառիկ համարում հոդվածագիր Հովհաննես Ամիարանյանը իր «Ողջույնի նամակ Վազգեն Ա-ին» վերնագրով հոդվածում հետևյալ խոսքերով է դիմում Նորին Սրբությանը.

«...Վեհափառ Տեր,

Մեր պատմության տխուր և պանծալի էջերուն, մեր ցավին ու արհավիրքին, մեր օրհասական օրերուն, հայ ժողովուրդը ունեցած է փրկության յաստ մը՝ Հայ Եկեղեցին, որ իբր հսկա մոմ կվառեր հսկելու հայ հոգիի ոին հավատքին և որուն տեսիլքեն, թռիչքեն ու ճգնումեն կծներ Մաշտոցը, կկերտվեր Նարեկը, կծաղկեր Շարականը։ Եվ Դուք, Վեհափառ Տեր, այս պատմական ու փառավոր Եկեղեցվո հոգևոր պետն եք, մեր վերջին դարերու եկեղեցական դասին ամենեն կարկառուն դեմքերեն մին, որ վերահաստատեն կկառավարե Հայաստանյայց Եկեղեցին։

...Վեհափառ Տեր,

Դուք նաև հոգևոր Դեսպանն եք, ներկայացուցիչն եք մեր հայ ժողովուրդին։ Ձեզ տեսնելով, մեր մեջ պիտի վերակենդանանա հավատքը նաև մեր Հայրենիքին հանդեպ։ Ձեր բարությամբ ակաղձուն աչքերուն մեջ պիտի դիտենք երազային մեր Հայրենիքը, Ձեր շունչեն պիտի լսենք հնքը մեր դաշտերու սոսիին, Ձեր օրհնութենեն պիտի ոգևորվինք չարքաշորեն հաղթահարելու Սփյուռքի տաժանքը, ու Հայկի անքուն տեգին նման մնանք արթուն այլասերման հողմերու դեմ այս հողմացիր ափերուն։

Վեհափառ Տեր,

Ձեր գալուստը բարի ըլլա։ Որքան կրնաք երկար մնացեք մեր մեջ, որքան կրնաք հաճախ մեզի այցելեցեք։ Գիտեմ, թե Ձեր գալը Ձեր տարիքին համար տաժանելի է, բայց երբ գաք, գիտենք թե բեռնավորված կուգաք Հայրենիքի հիշատակներով, աստվածային օրհնություններով»։

Մոնրեալում հրատարակվող «Բուրաստան» ամսագիրը իր հուլիս-օգոստոս միացյալ համարում Վեհափառ Հայրապետին է նվիրել «Օրհնեցեք, Վեհափառ Տեր» վերնագրով իր խմբագրականը, ուր կարդում ենք.

«...Օրհնեցեք, Վեհափառ Տեր։ Ձեր հրաշագործ սրբությամբ օծեցեք մեր մտքերն ու սրտերը, որ բաց մտքով և մաքուր սրտով արգասավորվին

եղբայրական գործակցությունը մեր միություններում միջև, որ ավելի հանդուրժող, ավելի ճանաչող ու փոխադարձ վստահության ոգիով պտղավորվին մեր գործունեությունները: Հեռու վանեցեք մեզմե, Ձերդ Սրբություն, կասկածն ու վախը, ոխն ու ատելությունը, որպեսզի կարենանք իրագործել Աստվածահաճո ծրագիրներ՝ ուրախությամբ, լավատեսությամբ և խանդավառությամբ:

...Օրհնեցեք, Վեհափառ Տեր: Ձեր լուսամիտ առաջնորդությամբ, Ձեր լուսապայծառ հմայքով լուսավորեցեք ճանապարհը դեպի Սրբություն Սրբոց Ս. Էջմիածին, Արարատի գծով՝ դեպի Լուսավորչի կանթեղը անմար, դեպի Մայր Աթոռ: Թող օտարության մերթ շլացուցիչ ու մերթ կիսախավար, վտանգավոր ուղիներու մեջ մոլորած, շփոթած Ձեր զավակները վերադտնեն ճիշտ ուղին, վերադառնան մեր գոյության արմատներուն, միանան ամբողջության, ու վերակազմակերպվինք որպես մեկ ազգ, մեկ հավատք, մեկ հայրենիք ու մեկ Եկեղեցի: Թող այս ըլլա փառապսակը Ձերդ Սրբության երեսուներկուամյա հրաշագործ գահակալության:

ՕՐՀՆԵՑԵՔ, ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ»:

Նույն համարում Մկրտիչ Ղազարյանը գրում է «Խոսք ողջույնի» վերնագրով իր հոդվածում.

«...Մեզ բոլորիս սիրելի Վեհափառ Ամենայն Հայոց: Ձեր շնորհաբույր հայրապետական յուրաքանչյուր այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ու մեր արնաշող հայրենիքից դեպի սփյուռքահայ զանգվածը ոչ միայն պատմական հանգրվանային իրադարձություն է հանդիսանում, այլ ազգապահպանման ու հայրենասիրական զգացումների հագեցման մի ազդակ: Ձեր հայրական ներկայությունը վայելելով մեր գաղութում, բոլորիս սրտերը, անկախ գաղափարական ու կրոնական համոզումներից, առավել ևս սկսում են տրոփել ազգաշեն հայրենասիրական զգացումներով, նամանավանդ անսահման հարազատ սիրով հանդեպ մեր անզուգական Հայաստանյայց Եկեղեցու, միածնահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու վերածնված հայրենիքի, որոնք դարեր շարունակ կուրծք տալով աշխարհասասան ասպատակությանց, այսօր կանգուն են մնում ու բարգավաճում Սարդարապատի ճակատամարտով հարուցյալ մայր հողի վրա ու վայելում հայրենի պետության բարոյական, նյութական աջակցությունն ու ապահովությունը:

...Հատկապես հայ ժողովրդի համար աշխարհի խաղաղության հարցը խիստ անհրաժեշտ պայման է. այդ իսկ պատճառով, նրա գլխավոր առաքելություններից մեկը միջազգային լարվածության թուլացման և տևական խաղաղության ապահովությունն է: Նա իր բոլոր ելույթներում գլխավոր շեշտը դրել է աշխարհի ժողովուրդների բարեկամության և տարբեր հասարակարգերի խաղաղ գոյակցության վրա:

Վազգեն Ա Հայրապետը Սփյուռքի որոշ գաղթօջախներում ծագած գաղափարական տարակարծությունները դիմագրավեց քրիստոնեական վարդապետության սիրո, խոնարհության, ներողամտության սկզբունքներով: Նամանավանդ այն գիտակցությամբ, թե Առաքելական Հայ Եկեղեցին ինչպես անցյալում, այսօր էլ ղեկավարվում ու գործում է ժողովրդավարական սկզբունքներով, որտեղ բացառվում է կղերապաշտությունն ու կուսակցապետությունը:

...Ամենայն Հայոց կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Վազգեն Առաջինը արժանավոր ներկայացուցիչն է Հայ Եկեղեցու առաջնորդների այն փայլուն համաստեղության, որի դերը բախտորոշ է եղել մեր ժողովրդի պատմության դժվարին քառուղիներում: Նա շարունակում է այն սրբազան գործը, որին իրենց կյանքն են նվիրել Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Սահակ Պարթևը, Ս. Ներսես Շնորհալին, Ներսես Աշտարակեցին, Խրիմյան Հայրիկը, Գարեգին Հովսեփյանցը և մեր մյուս երախտավոր կաթողիկոսները»:

Գլենդելում (Կալիֆոռնիա) հրատարակվող «Քաջ Նազար» ամսագիրը իր օգոստոս-սեպտեմբեր միացյալ համարի խմբագրականը նվիրել է Վեհափառ Հայրապետի այցին: Ահա մի հատված այդ խմբագրականից.

«Բովանդակ Ամերիկահայ գաղութը ցնծության մեջ է և սպասում է Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնաբեր այցելությանը: Հայրենի երկրից, մայր հողից կտրված սփյուռքահայ զանգվածները ամեն անգամ, երբ հյուրընկալում են հայրենիքից մի ուղևորի, ոգեշնչվում ու նոր կյանք են առնում վասն գոյատևման և ազգապահպանումի: Իսկ այսօր բացառիկ առիթ կա ոգևորության, որովհետև մեր հյուրն է Հայոց Առաքելական Ս. Եկեղեցվո իմաստուն Պետը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա-ն, որն իր արի կեցվածքով երեք տասնամյակներից ավելի է, ինչ Միածնաէջ Ս. Էջմիածնից հովանավորում ու ղեկավարում է մեր կրոնական կյանքը և մեծ Վարդապետի նման քարոզում՝ սեր, խաղաղություն, եղբայրություն և միասնականություն...

Սակայն հոգեկան բերկրալից այս օրերը մեզ խորհել են տալիս, թե ինչո՞ւ և ի՞նչ պատճառներով երկվություն առաջացավ մեր դարավոր Եկեղեցվո մեջ: Ինչպե՞ս ստեղծվեց այս անցանկալի վիճակը: Չէ՞ որ մեր դարավոր Ս. Աթոռները լրացուցիչ հանգամանք ունեն մեր կյանքում և դարերից ի վեր իրար հետ կապված են եղել եղբայրական սիրո անխախտ կապերով, միշտ գոտեպնդված քրիստոնեական անբիծ և մաքուր վարդապետության գաղափարներով: Այս նվիրական օրերը մեզ խորհել են տալիս, թե որքան ցանկալի կլիներ համայն հայ ժողովրդի համար՝ Մայր Հայաստանից մինչև Սփյուռքի ամենահեռավոր ծայրամասերը, եթե մեր երկու նվիրապետական Աթոռների միջև ստեղծվեին եղբայրական սիրո հարաբերություններ, հիմնված քրիստոնեական գաղափարաբանության ամուր հիմքերի վրա:

...«Մի է հայ ժողովուրդը, մի է Հայ Եկեղեցին», իր ժամանակին պատգամել է Ամենայն Հայոց շինարար Հայրապետը մեր հավատքի կենտրոն Ս. Էջմիածնից: Որքան հոգեպարար, որքան հուսատու խոսքեր են, որոնք հուզումով ու հպարտանքով են լցնում ամեն մի իրավ հայի սիրտն ու հոգին:

Ն. Ս. Օ. Վազգեն Ա Հայրապետի օրհնաբեր այս այցելությունը թող դառնա էլ ավելի արդյունավետ և հայանպաստ:

...Բարի գալուստ և բարի վերադարձ Ձեզ՝ ազգընտիր Հայրապետ Ամենայն Հայոց...»:

ԽՈՍՔ ՈՂՋՈՒՅՆԻ

Ամենայն Հայոց շինարար կաթողիկոս Վազգեն Ա-ին

Որքան ուրախ կզգանք մենք զմեզ,
Երբ որ կտեսնենք այսօր մեր մեջ Քեզ.
Ուլ Դու սրրացյալ հայոց հայր արի,
Կողջունենք սրտանց գալուստդ բարի:

Ծերունազարդ սուրբ, անձնվեր էակ
Էությամբդ բարի, սեր ես Դու համակ.
Վսեմ գահակալ, պաշտպան հայ գահին,
Կյանքդ մեզ համար շատ է թանկագին:

Դու մեր մեծ ազգին զավակ ոսկեծին
Ու խաղաղության անբիծ աղավնին.
Ամենայն հայոց փառքը, սիրելին,
Դու ես մեզ համար նվեր երկնային:

Լույս ես մշտավառ, կյանքի կայծ անշեջ,
Հայրենիքն ամբողջ կտեսնենք Քու մեջ.
Դու երկար ապրե և կյանք տուր հային,
Ան հույժ կարոտ է Քու ջերմ խնամքին:

Ով քաջ Հայրապետ Ամենայն Հայոց,
Վազգեն Առաջին, սրբություն սրբոց.
Կմաղթե Քեզ կյանք երկար, քաջառողջ,
Աշխարհով ցրված հայությունն ամբողջ:

ՍՈՒՔԻԱՍ ԳՈՒՄՐՈՒՅԱՆ

Մոնրեալ,
29 սեպտ. 1987 թ.

ՎԵՀԱՓԱՌՆ Է...

Վեհափա՞ռն է, ահա նորեն
Այցի կու գա աստվածակոխ սուրբ վայրերեն,
Այցի կու գա իր ցիրուցան զավակներուն,
Գորովագութ սիրտն իր, սիրո օվկիան անհուն,
Սեր մը՝ հորդուն; համապարփակ ու տարածուն...:

Վեհափա՞ռն է, կու գա նորեն,
Իր թևերը մեյ-մեկ լուսո ամպ հրեղեն...
Ժրպիտն անուշ Իր աչքերուն, ներհուն, խոհուն,
Ձայնն իր նեկտար, զերթ ջինջ, զուլալ գետ վարարուն,
Մեզ առինքնող, մեզ հրմայող ի՞նչ վեհ Անուն...:

Վեհափա՜ռն է, ահա կու գա,
Խաչն ի ձեռին, հուրն Իր սրտին, հոգեհրմա,
Սարն Արարատ, դարձած ողջույն, դարձած վեղար,
Վեհը՝ Ինքը, Արարատը մանրանըկար...
Այն ի՜նչ բարձունք, ի՜նչ պըսպըղուն, լուսեղ Կատար...:

Վեհափա՜ռը... մեր փառքն է Ան,
Լուսավորչի Լույս-Աթոռին՝ արդար, արժան,
Հայոց Հայրիկն Իրեն մենտոր, ներշընչարան...
Մեր Հայրապետ, մեր Վեհապետ, մեր Հայրիկ ջան,
Իշխան չունինք, հայոց Իշխան, հայոց Արքան...:

Վեհափա՜ռն է, Իրմով կըլլան
Մեզ երաշխիք շընքեղ ներկան ու ապագան,
Մեր սնաչվի, նազան-նոր հարս Մայր Հայաստան,
Իրմով հաստատ, Իրմով զորեղ ու անսասան,
Մայր Սուրբ Աթոռ, Մայր Հայաստան միշտ անբաժան...:

Վեհափառի երանյա՜լ Մայր,
Թե՛ պարզուկ Մայր, թե՛ Տիրամայր, թե՛ Վեհամայր...
Տըղա տիոց սահմանյալ մեծ, գանձ թանկագին,
Այն ի՜նչ զավակ պարգևեր ես հայոց ազգին,
Իմ տառապած, իմ վեհապանծ հայոց ազգին...:

Վեհափա՜ռն է, միշտ արքենի,
Վեհափա՜ռն է, պատկառելի, հույժ սիրելի,
Իր շընթներուն՝ Սեր-Միության պատգամն ունի...
Մեր ծընկաչոք համբույրն ջերմիկ ու կաթոգին,
Մյուռոնաօծ, շընորհաբաշխ Իր սուրբ Աջին...:

Վեհափա՜ռն է, այցի կու գա,
Բարի-գալո՜ւստ, բարի-գալո՜ւստ Վեհափառին...:

ՇԱՀՆԱԶԱՐ ՔԵՈԹԱՀՅԱՆ

Գլենդել,
Օգոստ.-սեպտ. 1987 թ.

«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ЯНВАРЬ-ФЕВРАЛЬ-МАРТ 1988 г.)

1. Проповедь Его Святейшества Католикоса Вазгена I на Святое Рождество в Кафедральном соборе св. Эчмиадзина, 6 января 1988 г. (стр. 3—5).

2. Обмен приветственными телеграммами и посланиями в связи с Новогодним и Рождественским праздниками между Верховным Патриархом и Католикосом Всех Армян Его Святейшеством Вазгеном I и духовными архипастырями сестер Церквей (стр. 6—8).

3. Поздравительное послание по случаю Нового Года и св. Рождества Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I к трем Преосвященным Престолам Армянской Церкви, епархиальным предводителям и церковным общинам (стр. 9).

4. Обмен телеграммами между Его Святейшеством Католикосом Всех Армян Вазгеном I и высокопоставленными государственными лицами по случаю новогодних праздеств (стр. 10—13).

5. Визит Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I председателю Совета Министров Арм. ССР Ф. Саркисяну, 8 января 1988 г. (стр. 14).

6. НЕРОМОНАХ АБРААМ МКРТЧЯН—Новогодние и святорождественские торжества в Первопрестольном св. Эчмиадзине, 1, 5—6 января 1988 г. (стр. 15—22).

7. АРХИПАСТЫРСКИЙ ВИЗИТ ЕГО СВЯТЕЙШЕСТВА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ВАЗГЕНА I В США И КАНАДУ.

а) Отъезд из Эчмиадзина, 5 октября 1987 г. (стр. 26).

б) Пребывание в Москве, 6—14 октября 1987 г. (стр. 27).

Пребывание Его Святейшества в США

а) Прибытие в Нью-Йорк, 14 октября 1987 г. (стр. 31—74).

б) Пребывание Его Святейшества в Вашингтоне, 25—26 октября 1987 г. (стр. 75—85).

в) В Нью-Йорке, 26 октября—2 ноября 1987 г. (стр. 86—124).

г) В городе Эльброне штата Нью-Джерси, 28 октября 1987 г. (стр. 88).

д) Во Фрезно, 3—5 ноября 1987 г. (стр. 125—131).

е) В Лос-Анджелосе, 5—10 ноября 1987 г (стр. 132—173).

ж) В Сан-Франциско, 11—12 ноября 1987 г. (стр. 174—180).

Пребывание Его Святейшества в Канаде

а) Отъезд в Канаду, 12 ноября 1987 г. (стр. 183—184).

б) В Торонто, 13—15 ноября 1987 г. (стр. 185—201).

в) В Монреале, 16—18 ноября 1987 г. (стр. 202—218).

г) Визит в мэрию города Сен-Лорана, 18 ноября 1987 г. (стр. 218).

Его Святейшество снова в США

а) В Бостоне, 19 ноября 1987 г. (стр. 219—221).

б) Его Святейшество в Уотертауне, 20 ноября 1987 г. (стр. 221—224).

в) В Детройте, 21—22 ноября 1987 г. (стр. 225—212).

г) В Нью-Йорке, 23 ноября 1987 г. (стр. 243—245).

8. Его Святейшество в Париже, 23—25 ноября 1987 г. (стр. 246).

9. Его Святейшество в Москве, 26—27 ноября 1987 г. (стр. 247).

10. Возвращение Его Святейшества в Первопрестольный св. Эчмиадзин, 28 ноября 1987 г. (стр. 248).

11. Пресса и печать об архипастырском визите Его Святейшества Католикоса Всех Армян Вазгена I в США и Канаду (стр. 252—263).

12. СУКИАС ГУМРУЯН—Слово приветствия (стихотворение)—(стр. 264).

13. ШАХНАЗАР КЕОТАГЯН—Его Святейшество.. (стихотворение)—(стр. 264—265).



"ETCHMIADZIN"
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(JANUARY-FEBRUARY-MARCH 1988)

1. The sermon of Holy Christmas of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians, given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, 6-th January 1988 (pp. 3—5).

2. The congratulatory cables and letters exchanged between His Holiness Vasken I, the Supreme Patriarch and Catholicos of All Armenians, and the spiritual heads of the sister Churches, on the occasion of the New Year and Holy Christmas (pp. 6—8).

3. The congratulatory letter of His Holiness written to the three hierarchical Sees of the Armenian Church, all diocesan prelates and church communities, on the occasion of the feasts of New Year and Holy Christmas (p. 9).

4. Cables exchanged between His Holiness and state high personalities of Armenian S.S.R. on the occasion of the New Year (pp. 10—13).

5. The visit of His Holiness Vasken I, the Catholicos of All Armenians to Mr. Fadey Sarkesian, the Prime Minister of the Armenian S.S.R. 8-th January 1988 (p. 14).

6. **Reverend Abraham Mgrdchian**—The feasts of New Year and Christmas in the Mother See 31-st December 1987, 1-st and 5—6-th January 1988 (pp. 15—22).

7. THE VISIT OF HIS HOLINESS VASKEN I, THE CATHOLICOS OF ALL ARMENIANS TO THE UNITED STATES OF AMERICA AND CANADA.

a) Departure from Etchmiadzin, 5-th October 1987 (p. 26).

b) In Moscow, 6—14-th October 1987 (p. 27).

His Holiness in the United States of America

a) Arrival at New York, 14-th October 1987 (pp. 31—74),

b) His Holiness in Washington, 25—26-th October 1987 (pp. 75—85).

c) In New York, 26-th October—2-nd November 1987 (pp. 86—121).

d) In the Elbron city of New Jersey state, 28-th October 1987 (p. 88).

e) In the New Rochelle city of New Jersey state, 31-st October 1987 (p. 97).

f) In Fresno, 3—5-th November 1987 (pp. 125—131).

g) In Los Angeles, 5—10-th November 1987 (pp. 132—173).

h) In San Francisco, 11—12-th November 1987 (174—180).

His Holiness in Canada

a) Departure to Canada, 12-th November 1987 (pp. 183—184).

b) In Toronto, 13—15-th November 1987 (pp. 185—201).

c) In Montreal, 16—18-th November 1987 (pp. 202—218).

d) Visit to the municipality of Saint Laurent, 18-th November 1987 (p. 218).

His Holiness again in the United States

a) In Boston, 19-th November 1987 (pp.—219—221).

b) His Holiness in Watertown, 20-th November 1987 (pp. 221—224).

c) In Detroit, 21—22-nd November 1987 (pp 225—242).

d) In New York, 21—25-nd November 1987 (pp. 243—245).

8. His Holiness in Paris, 23—25-th November 1987 (p. 246).

9. His Holiness in Moscow, 26—27-th November 1987 (p. 247).

10. The return of His Holiness to Holy Etchmiadzin, 28-th November 1987 (p. 248).

11. The echoes of the press on the occasion of His Holiness' pastoral visit to U.S.A. and Canada (pp. 252—263).

12. **Sookias Knomrooyan**—Word of greeting (poetry)—(pp. 264).

13. **Shahnazar Keotahian**—It is His Holiness... (poetry)—(pp. 264—265).

„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JANVIER-FEVRIER-MARS 1988)

1. Homélie de Sa Sainteté Vasken Ier prononcée le 6 janvier 1988 dans la cathédrale de Saint-Etchmiadzine à l'occasion de la fête de la naissance de notre Seigneur Jésus-Christ (pp. 3—5).

2. Echange de télégrammes et de lettres de félicitations entre Sa Sainteté Vasken Ier et les chefs spirituels des Eglises soeurs à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (pp. 6—8).

3. Lettres de félicitations de Sa Sainteté adressées aux chefs des trois sièges hiérarchiques, aux prélats diocésains et aux communautés religieuses de l'Eglise apostolique arménienne à l'occasion des fêtes de Noël et du Nouvel An (p. 9).

4. Echange de télégrammes entre Sa Sainteté et les hautes personnalités d'Etat de la R.S.S. d'Arménie à l'occasion de la fête du Nouvel An (pp. 10—13).

5. Visite de Sa Sainteté à M. Fadey Sarkisian, président du Conseil des Ministres de la R.S.S. d'Arménie, le 8 janvier 1988 (p. 14).

6. **Père Abraham Mekertchian**—Solennités au Saint-Siège d'Etchmiadzine consacrées au Ier janvier et à la fête de la Sainte Nativité (31 décembre 1987, 1, 5—6 janvier 1988)—(pp. 15—22).

7. VOYAGE PASTORAL DE SA SAINTETÉ VASKEN Ier AUX ETATS UNIS D'AMÉRIQUE ET AU CANADA

a) Départ de Sa Sainteté du Saint-Siège d'Etchmiadzine (5 octobre 1987)—(p. 26).

b) Sa Sainteté à Moscou (du 6 au 14 octobre 1987)—(p. 27).

Sa Sainteté aux Etats Unis d'Amérique

a) Arrivée à New York (14 octobre 1987)—(pp. 31—74).

b) Sa Sainteté à Washington (du 25 au 26 octobre 1987)—(pp. 75—85).

c) Sa Sainteté à New York (du 26 octobre au 2 novembre 1987)—(pp. 86—124).

d) Sa Sainteté à Elbron (New Jersey), 28 octobre 1987—(p. 88).

e) Sa Sainteté à New Rochelle (New Jersey), 31 octobre 1987 (p. 97).

f) Sa Sainteté à Fresno (Californie), du 3 au 5 novembre 1987 (pp. 125—131).

g) Sa Sainteté à Los Angeles (du 5 au 10 novembre 1987)—(pp. 132—173).

h) Sa Sainteté à San Francisco (du 11 au 12 novembre 1987)—(pp. 174—180).

Sa Sainteté au Canada

a) Départ (12 novembre 1987)—(pp. 183—184).

b) Sa Sainteté à Toronto (du 13 au 15 novembre 1987)—(pp. 185—201).

c) Sa Sainteté à Montréal (du 16 au 18 novembre 1987)—(pp. 202—218).

d) Visite à la Mairie de Saint Laurent (18 novembre 1987)—(p. 218).

Sa Sainteté de nouveau aux Etats Unis

a) Sa Sainteté à Boston (19 novembre 1987)—(pp. 219—221).

b) Sa Sainteté à Watertown (20 novembre 1987)—(pp. 221—224).

c) Sa Sainteté à Detroit (du 21 au 22 novembre 1987)—(pp. 225—242).

d) Sa Sainteté à New York (du 21 au 23 novembre 1987)—(pp. 243—245).

8. Sa Sainteté à Paris (du 23 au 25 novembre 1987)—(p. 246).

9. Sa Sainteté à Moscou (du 26 au 27 novembre 1987)—(p. 247).

10. Retour de Sa Sainteté au Saint-Siège d'Etchmiadzine (28 novembre 1987)—(p. 248).

11. Echos de la presse concernant le voyage pastoral de Sa Sainteté aux Etats Unis d'Amérique et au Canada (pp. 252—263).

12. **Soukias Koumrouyan**—Poème dédié à Sa Sainteté Vasken Ier (p. 264).

13. **Chahnazar Keutahian**—Poème dédié à Sa Sainteté Vasken Ier (pp. 264—265).